ՀՐԱՉԻԿ ՍԵՎՈՅԱՆ

ԿԵՆԱՑ ՍՐՏԻՍ

Ժողովածուն լույս է ընծայվում բանաստեղծի
երախտապարտ զավակների կողմից՝
Ցնդյան 70-ամյակի կապակցությամբ։

ՀՐԱՉԻԿ ՍԵՎՈՅԱՆ

ԿԵՆԱՑ ՍՐՏԻՍ

ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 891.981–1 Ս-ոյան
ԳՄԴ 84Հ7–5
Ս 417

Ս-ոյան, Հրաչիկ

Ս 417 **Կենաց սրտիս:** Բանաստեղծ./ Հրաչիկ Սևոյան.– Եր.: «Զանգակ–97», 2003:– 528 էջ:

Հեղինակի ներկա ժողովածուն ընդգրկում է նրա՝ կյանքի վերջին տարիներին գրած և նախորդ գրքերում զետեղված ստեղծագործությունները: Ժողովածուում հեղինակին հատուկ պարզ ու անպաճույճ ոճով, բանաստեղծական անկեղծությամբ ու թեմատիկ բազմազանությամբ արտացոլված են նրա մտորումներն ու խոհերը կյանքի, մարդու մաքառումների ու երազանքների մասին:

Ս $\frac{4702080202}{0003(01)–2003}$ 2003 ԳՄԴ 84Հ7–5

ISBN 99930–2–624–7

© Սևոյան Հ. Ե. (ժառանգները), 2003 թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԵՆԱՑ ՍՐՏԻՍ

Ի՞նչ կարող եմ ես քեզ ասել,
Սի՛րտ իմ, կուզեմ՝ լինես տոկուն,
Կուզեմ՝ լինես ճշմարտասեր,
Սուտը մահ է բերում հոգուն:

Եղի՛ր շիտակ, պարզ ու բարի,
Ապրի՛ր հպարտ ու անբասիր,
Բյուր գանձերից այս աշխարհի
Ազնիվ սերը գերադասիր:

Բան է, եթե վիճակվի քեզ
Արդարության համար վառվել,
Դու անվարան դարձի՛ր հրկեզ,
Լույսն այրումից է արարվել:

Կյանքին լույսն է առաջ տանում,
Դու այրվելուց չվախենաս.
Հար վառվել եմ քեզ ցանկանում,
Սի՛րտ, կենացդ… Պայծա՛ռ մնաս…

✧ ✧ ✧

Նորից թամբած խոհերիս ձին՝
Ես սլացա դեպի անհուն,
Ու աստղերը դեմս բացին
Բյուր գաղտնիքներ հազարանուն:

Եվ փռվեց իմ ոտների տակ
Աստղե ուղին այն Կաթնծիր,
Տերը դարձա անհուն, անափ
Տիեզերքին՝ ծիրերից ծի՜ր:

Ու ինձ համար երբ չմնաց
Տիեզերքում անհաս մի բան,
Խոհերիս ձին էլ չգնաց,
Անհետ կորավ մտքիս ճամփան:

Եվ ես փախա իմ խոհերից,
Նորից մտա կյանքն իրական
Ու իրական կյանքին նորից
Փառք հղեցի հազար անգամ.

— Օ՜, փա՜ռք քեզ, կյա՛նք իմ թանկագին,
Դու անհասի վսեմ կարոտ,
Հազար փա՛ռք քո տառապանքին,
Քո ճամփեքին՝ բարդ ու քարոտ…

✧ ✧ ✧

Իմ քնարի լարերը
Մետաղից չեն թանկագին,
Նրանք պողպատ են մաքուր՝
Կյանքի հրում ջրդեղված,
Իմ երգերում կերտել եմ
Վեհ խոհերի վառ բագին,
Որի ազնիվ մոխրի տակ
Անշեջ հուր կա անթեղված:

Տողերիս մեջ չեք գտնի
Կեղծ ու պատիր ոչ մի բառ,
Քանզի ունայն ձևը չէ
Նպատակը իմ տողի.
Ես երգում եմ, որ մարդկանց
Հոգում պահեմ մշտավառ
Աշխատանքի կիրքը բորբ
Եվ պաշտամունքը հողի:

Փքուն ու սին բառերով
Չեմ պաճուճի տողը ես,
Մարդկանց օգուտ չի բերել
Ճոռոմ գրված ոչ մի երգ,
Թող իմ երգը լինի պարզ
Հեքիաթի այն մանկան պես,
Որը, առանց կեղծելու,
Մերկ արքային ասաց՝ մերկ…

✧ ✧ ✧

Ա՜խ, որքան եմ ուզում այսօր
Գրել հզոր, հրաշք մի երգ
Եվ այդ երգը ամենազոր
Հղել համայն աշխարհով մեկ.

Որ նա տոկալ կոչի անվերջ,
Մինչև բարին հաղթի չարին,
Որ մարդը կույր մոլուցքի մեջ
Զոհ չդառնա իր հանճարին…

✧ ✧ ✧

Կյանքը՝ ձգտում, կյանքը՝ հույս,
Կյանքը՝ կարոտ, լույսի տենչ…
Լույսի ձգտման իմ հույսը
Սահման չունի, չունի վերջ:
Ո՞ւր է պահված հոգետուր
Այն ոգեղեն հուրն անշեջ.
Գնամ բերեմ մարդկանց տամ,
Թեկուզ այրվեմ նրա մեջ…

ԸՆԹԵՐՑՈՂԻՍ

Ազնի՛վ բարեկամ,
Եթե կտեսնես,
Որ մի հին–ծանոթ
Երգ եմ գրել ես,

Մի՛ դատապարտիր
Դու ինձ, կաղաչեմ,
Քանզի դրանում
Ես մեղավոր չեմ.

Գիտցի՛ր, այդ երգը
Գրելու պահին
Հոգիս տանջել է
Տառապանք մի հին…

✧ ✧ ✧

Ես չեմ վախենում
Նոր ջրհեղեղից,
Քանզի Նոյյան նոր տապան կճարվի,
Մի զույգ կփրկվի
Մարդկային ցեղից,
Եվ ապա կյանքը նորից կարարվի:

Ես սարսափում եմ
Ստի տարափից,
Որը հաղթ մարդուն դարձնում է անբան,
Իսկ անբանության
Հեղեղի թափից
Մարդուն չի փրկի և ոչ մի տապան…

✧ ✧ ✧

Պոետն աշխարհ է գալիս
Լույսի ծարավն հոգու մեջ,
Լույս է փնտրում, լույս տալիս
Իր ողջ կյանքում նա անվերջ:

Հրին մատնած իր հոգին՝
Որպես խիզախ փարվանա՝
Որոնումի ճամփեքին
Ողջակեզ է դառնում նա:

Բայց միշտ ապրում է զվարթ՝
Գիտենալով այդ մասին,
Ա՜խ, մարդը չէր դառնա մարդ,
Թե չձգտեր անհասին…

✧ ✧ ✧

Ես դրել եմ երգերիս մեջ
Կյանքի կարոտ, անհասի տենչ,
Լավի ձգտում, ապրելու հույս,
Սիրո սարսուռ, մաքառման լույս,
Անաչառ սեր սուրբ ծնողի,
Արևի հուր, շունչը հողի,
Հևքը ջրի՝ միշտ կենարար,
Որ իմ երգը հոգեպարար
Հար ուղեկից լինի մարդուն,
Նրա միտքը պահի արթուն,
Եվ խիղճը հար մաքուր պահի,
Որ մարդն ապրի առանց ահի,
Նույնիսկ մահից չունենա վախ
Ու միշտ ապրի հոգով խաղաղ,
Եվ սրտաբուխ գործով բարի
Վայելի կյանքն այս աշխարհի.
Ես դրել եմ երգերիս մեջ
Արարման սուրբ կրակն անշեջ…

✧ ✧ ✧

Իմ խոհերի խոլ ձին
Ինձ երկինքներ տարավ,
Մինչդեռ երկրի վրա
Ի՜նչ վայելքներ կային…
Աշխարհն անտակ ծով է,
Իսկ ես մեջը՝ ծարավ,
Բայց ինձ համար հոգ չէ
Ծարավն այդ մարդկային:

Լույս է տենչում հոգիս,
Լույսի ծարավ եմ ես.
Պիտի երգիչ դառնամ՝
Լույսի, այգաբացի,
Թեկուզ տնանկ ապրեմ
Վերջին աղքատի պես
Եվ աշխարհից գնամ՝
Կարոտ ցամաք հացի…

Ու թե հրաշք լինի,
Ես աշխարհ գամ նորից,
Բախտը ինձ տեր կարգի
Ամենամեծ գանձին,
Ես չեմ ուզի, մարդի՛կ,
Հավատացե՛ք դուք ինձ,
Ես կթամբեմ դարձյալ
Իմ խոհերի խոլ ձին…

✧ ✧ ✧

Թափառեցի
Ես երկնային ճամփեքով՝
Այս աշխարհի
Վայելքներից վերացած,
Եվ աշխարհը
Իր երկրային թովչանքով
Ինձ չգերեց,
Ես աստղերից չիջա ցած:

Միշտ ձգտեցի
Լինել ազնիվ ու շիտակ,
Որ իմ վարքով
ՄԱՐԴ անունը պահեմ վեր,
Սակայն, ավա՜ղ,
Մարդը մնաց անգիտակ,
Իր սեփական
Բախտի հանդեպ՝ անտարբեր…

✧ ✧ ✧

Օ՜, կեցցեմ ես —
Փա՛ռք ինձ, բյուր փառք,
Փա՛ռք ինձ բյուր դարեր,
Որ ես մաքուր հասա կյանքիս
Երեսուն տարուն —
Այս արնաշուրթ, այս սրբապիղծ,
Բիրտ ու մարդակեր,
Այս անարդար, այս խաբեբա,
Այս դաժան դարում…

1961 թ.

✧ ✧ ✧

Իմ ողջ կյանքում, երբ իջել եմ օրորոցից,
Ճաշակել եմ միայն կեղծիք ու դառնություն,
Դրա համար ինձ թվում է՝ չար եմ օձից,
Լեզուս խայթոց է դարձել սուր, ու թուքս՝ թույն:

Բայց իմ հոգում մշտաբորբոք մի բաղձանք կա.
Եթե կյանքը մի օր դառնա մարդավարի,
Ես այդ թույնը հետ կթքեմ, Աստված վկա,
Այն ինձ տվող պիղծ ճակատին իմ լիրբ դարի…

1961 թ.

✧ ✧ ✧

Ես բանաստեղծ եմ, ինչ էլ որ անեք,
Չեմ կարող ստել,
(Եվ Աստված չանի),
Մարդի՛կ, եթե ինձ նույնիսկ խաչ հանեք,
Արդարությանը
Չեմ դավաճանի:

Ուխտել եմ միայն լավին հավատալ
Եվ վատի առաջ
Գլուխ չթեքել,
Ճշմարտությանը խոնարհ գլուխ տալ,
Սրտաբաց խոսքով
Կեղծիքը հերքել:

Եթե իմ խոսքը ստացվի ունայն,
Նրանից կյանքը
Երբեք չի տուժի,
Իսկ թե ճիշտ լինի, հավատացե՛ք՝ այն
Գոնե ցավատանջ
Մի սիրտ կբուժի:

Ես արդարության մունետիկն եմ քաջ,
Ճիշտ պիտի խոսեմ
Գիշեր ու ցերեկ.
Թե արդարներին վիճակված է խաչ,
Ես չեմ վախենում —
Ձեր խաչը բերեք…

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

Այն մտքերը, որոնց որ դուք
Հանդիպում եք իմ երգերում,
Չկարծեք, թե հորինել եմ,
Որ ձեր աչքին թվամ խելոք:
Ո՛չ, սիրելի՛ բարեկամներ,
Դրանց կյանքն է աշխարհ բերում:
Հավատացե՛ք,
Ես նոր ծնվող այդ մտքերի
Բանբերն եմ լոկ…

✧ ✧ ✧

Որ ահեղ շնչից իմ հզոր դարի
Մարդկային խղճի կայծը չմարի,
Ես շաղ եմ տվել իմ երգերի մեջ
Վեհ ճշմարտության կրակներն անշեջ,
Որ երգս մարդկանց սրտերը թովի
Եվ ոգեղեն լույս նրանց պարգևի,
Որ նրանք իրենց աչքերը բանան
Եվ զգաստանան…

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծությո՛ւն, դու հոգու կրակ,
Դու սուտ սպանող դատաստան ահեղ,
Դու այս տառապյալ աշխարհի վրա
Կարեվեր սրտի բալասան ու դեղ:

Դու մերժվածների դրոշակ արդար,
Մոլորյալներին դարձի բերող լույս,
Ընկճված հոգու դու սյուն ու սատար,
Ըմբոստի ցասում, հուսահատի հույս:

Դու հեքիաթային անմահական ջուր,
Դու հրաշք հուռութք՝ հմայքներով լի,
Դու չարի գլխին մերկացրած սուր
Եվ արդար վճիռ անբեկանելի:

Մարդկային մտքի դու թռիչք ու թափ,
Սիրտը չար կրքից մաքրող ավազան,
Դու ստորների սև հոգու սարսափ,
Բութ իշխողներին ճաղկող խարազան:

Դու սիրո երգ ես, հավիտյան անշեջ
Եվ սիրասուն մոր օրորոցային,
Դու միշտ կշողաս մարդկանց սրտի մեջ,
Որպես կախարդանք՝ դիմադիր մահին:

Բանաստեղծությո՛ւն, դու հավատ անճառ,
Դու նվիրումի ազնիվ զոհարան,
Հույզ ու երազի սրբազան տաճար
Եվ հոգեփրկիչ սուրբ ավետարան…

✧ ✧ ✧

Թե մի օր հանկարծ ես մեկից լսեմ,
Որ երգս վշտոտ սիրտ է սատարել,
Ես հանգիստ խղճով ամենքին կասեմ՝
Կյանքում ես էլ եմ լավ գործ կատարել:

Եթե գան ասեն, որ երգն իմ գրած
Հույս է ներշնչել մի հուսահատի,
Ես, ձեռքս հանգիստ իմ խղճին դրած,
Կասեմ՝ չեմ ապրել առանց հավատի:

Ու եթե մի օր գան ու ինձ ասեն՝
Երգդ երգում էր մի ըմբոստ ջահել,
Ես հանգիստ խղճով ամենքին կասեմ՝
Դեհ, ես էլ կյանքում գլուխ չեմ պահել:

Եվ եթե լսեմ, որ երգն իմ գրած
Երգել է խիզախ մի հայրենասեր,
Ես, ձեռքս հանգիստ իմ խղճին դրած,
Կասեմ, որ ես էլ իմ խոսքն եմ ասել:

Իսկ եթե մի օր ես լսեմ մեկից,
Որ հող հերկելիս իմ երգն են երգել,
Ես հանգիստ խղճով պոետ կզգամ ինձ,
Կզգամ, որ երգով սրտեր եմ հերկել…

✧ ✧ ✧

Երգերիս կավը առել եմ կյանքից
Եվ այն հունցել եմ սրտիս արյունով,
Նրանց տողերում ես կերտել եմ ինձ
Անվերջ մաքառող հոգուս ավյունով:

Դյուրին չի եղել կյանքը ինձ համար,
Իմ ժամանակը շատ էր դժվարին,
Բայց ես, տքնելով անդուլ ու համառ,
Ապրել եմ շիտակ, պաշտել եմ բարին:

Գոյության կռվում եղել եմ տոկուն,
Ինձ չեն հմայել սնամեջ հույսեր,
Ես երգերիս մեջ անվհատ հոգուս
Վեհ տառապանքի հեքիաթն եմ հյուսել:

Եվ համոզված եմ. երբ տարիներ անց
Մարդիկ երգերս կարդան կամ լսեն,
Հոգուս հեքիաթը կդյութի նրանց
Իր լույս խոհերով՝ արդար ու վսեմ.

Քանզի իմ համեստ երգերի խորքում
Հրաշք բառեր կան, որոնք թե հնչեն,
Զորություն կտան վհատված հոգուն
Եվ հուսահատին կյանք կներշնչեն…

✧ ✧ ✧

Իմ հոգում որքա՜ն երազներ կային՝
Օծված հեքիաթի հրաշք գույներով,
Ես ուզում էի կյանքը մարդկային
Զարդարել չքնաղ իմ երազներով:

Եվ ես բաց արի դռները հոգուս,
Լույս երազներս սփռեցի չորս դին,
Որ ամենուրեք տիրեր ոգու լույս,
Ու սեր վայելեր հեգ ադամորդին:

Սակայն ամբոխը չուներ լույսի տենչ.
Նյութի ծարավ կար մարդկանց սրտերում,
Ու լուռ թոշնեցին երազներս պերճ
Նյութապաշտ կյանքի դաժան ցրտերում…

✧ ✧ ✧

Ո՞ւր է հեքիաթի հավքը հազարան,
Որը իր երգով հաղթում է չարին,
Տեղը ցո՛ւյց տվեք, գնամ անվարան,
Բերեմ նվիրեմ մեղսոտ աշխարհին:

Գնամ ու բերեմ, հուր երգով նրա
Այրեմ աշխարհի սրտերը քարե,
Որ էլ չսողան այս երկրի վրա
Ոչ մի բութ իշխող ու սուտ մարգարե:

Սրբեմ կեղծիքից հողագունդն այս հին,
Որ ճշմարտության այգին կանաչի,
Արդարությունը բարձրանա գահին,
Որ մարդն իր գործած մեղքից ամաչի…

Ես էլ՝ որպես մարդ, մարդուն հավատամ
Եվ ազնվաբար նրան ողջունեմ,
Ճամփան ցո՛ւյց տվեք, ես կյանքս կտամ,
Այսօր ես ուրիշ երազանք չունեմ…

✧ ✧ ✧

Ես լեռնային զուլալ գետ եմ,
Աղբյուրներ են ակունքներս,
Ողջ էությամբ կյանքի հետ եմ,
Արևով է թրծած սերս:

Հունս երբեք հարթ չի եղել,
Միշտ հոսել եմ տառապանքով,
Ափերս ինձ շատ են նեղել,
Բայց ապրել եմ անկոր կամքով:

Միշտ խփվելով ժայռ ու քարի՝
Զուլալվել եմ ես անդադար
Եվ դարձել եմ սրտով բարի,
Հոգով՝ ուժեղ, մտքով՝ արդար:

Անկումներից չեմ ընկճվել,
Խորթ է եղել ինձ հառաչը,
Միայն երգ եմ կյանքին տվել,
Սրտի ձայն է իմ շառաչը:

Ես պոետ եմ կարգված վերուստ,
Չի կաշկանդում ինձ ոչ մի բան,
Խոհերով եմ միայն հարուստ,
Ազատ է իմ մտքի ճամփան:

Նույնիսկ մահից չեմ վախենում,
Ունեմ հոգու անմար լույսեր,
Ազատ մտքի սերմ եմ ցանում,
Դավանանքս կոչվում է Սեր:

Մեր նյութապաշտ այս աշխարհում
Ես չեմ եղել նյութին գերի,
Վիատվածին հույս են բերում
Լույս խոհերը իմ երգերի:

Լեռնաբուխ է ջուրս վարար,
Խոր խորքերից եմ գալիս ես,
Խմե՛ք ջուրը իմ կենարար,
Մարդի՛կ, երգս ուժ կտա ձեզ…

✧ ✧ ✧

Իմ ճամփան քարոտ,
Իմ ուղին անհարթ,
Բարձրանում եմ ես
Դեպի մարդկային
Երազանքների
Կատարներն անբիծ:
Բայց չեմ ափսոսա,
Թե բան է, մի օր
Հանգչեն հուրերս,
Ու բարձրին հասնեմ՝
Ուժասպառ եղած
Հոգեմաշ ճամփից:
Քանզի լավ գիտեմ՝
Այն հոգու հուրն է
Հավիտյան անմար,
Որը վառվում է
Վեհ գործի համար՝
Վսեմ ու բարի:
Մարդը դժվարին
Ճամփա է ընտրում,
Մաքառում համառ,
Որ կյանքի համար
Իր վառած հուրը
Երբեք չմարի…

✧ ✧ ✧

Այս աշխարհում
Ոչինչ ծանր ինձ չթվաց,
Համբերությամբ տարա,
Ինչ որ ինձ էր տրված:

Քչի դիմաց
Միշտ էլ կյանքում շատ տվեցի,
Կորուստներիս
Մտքի հետ էլ հաշտվեցի:

Կյանքի ծովում
Ես գոհացա մի պուտ ջրով,
Ինձ վիճակված
Ձրկանքները տարա սիրով…

Բայց ինձ համար
Այս աշխարհում մի բան կա, որ
Շատ է ծանր,
Անտանելի ու ահավոր:

Չեմ տանում,
Երբ հարմարվելով ժամանակին՝
Առյուծը լուռ
Ենթարկվում է ավանակին…

✧ ✧ ✧

Նմանը չունի իմ ինքնությունը —
Լավ եմ, թե վատ եմ,
Այս եմ, ինչ որ կամ.
Ես հաստատ գիտեմ՝ կլինեմ նույնը,
Թե բյուր անգամ էլ
Այս աշխարհը գամ:

Էլի ես պիտի տքնանք դավանեմ,
Հող պիտի պաշտեմ
Մոլեռանդորեն,
Ողջ կյանքում պիտի վարեմ ու ցանեմ,
Վաստակս պիտի
Լինի սուրբ ցորեն:

Ես իմ էությամբ նման եմ հողին.
Չարին ոսոխ եմ,
Բարուն՝ բարեկամ,
Երբեք չեմ ների գողին, գռփողին,
Թեկուզ հրաշքով
Նորից աշխարհ գամ…

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Չէ՛, ես մոմ չեմ, ասել եմ ձեզ,
Ոչ մի քամի ինձ չի մարի,
Հնամենի անթեղ եմ ես
Եվ ապրել եմ միլիոն տարի:

Քամիներից ես վախ չունեմ,
Հակառակը՝ ուժ եմ առնում,
Նրանք ինչքան գազազում են,
Ես ավելի եմ թեժանում:

Որքան էլ ինձ հեռու վանեն
Կամ թե պահեն հոծ մոխրի տակ,
Միևնույն է, երբ ինձ հանեն,
Իսկույն կզգան իմ շունչը տաք:

Մրսողները թող տաքանան,
Անսպառ է հուրն իմ անշեջ,
Միլիոն տարի պահված է այն
Անմահության տաճարի մեջ:

Այո՛, մոմ չեմ, անթեղ եմ ես,
Ոչ մի քամի ինձ չի մարի,
Ես կենսատու արևի պես
Անմար խիղճն եմ ամեն դարի…

✧ ✧ ✧

Ես համոզված եմ ընդմիշտ ու լրիվ,
Որ մարդու կյանքը պայքար է, կռիվ:
Եվ այդ կռվի մեջ,
Սկզբից մինչև վերջ,
Ոչ թե նրանք են մարտերը շահում,
Ովքեր զենք ունեն,
Կամ նրանք, ովքեր մեծ զորք են պահում,
Այլ նրանք,
Ովքեր ելնում են մարտի
Հանուն ճշմարտի:
Միշտ արդարներն են հաղթող դուրս գալիս,
Քանզի արդարին
Ժամանակն ուժ ու կորով է տալիս:
Վա՛յ այն կռվողին,
Ով ժամանակի խոսքը չի լսում,
Նման կռվողին մահ է սպասվում:
Իսկ թե մեռնում է մեկը իսկապես,
Համոզված եմ ես՝
Նրան չեն փրկի զենքն ու բանակը,
Թեկուզ արևից զենքն հզոր լինի,
Եվ աստղերից շատ՝ զորքի քանակը.
Ես ամենահաղթ
Ուժը կդառնամ,
Թե սատար դառնա ինձ ժամանակը…

✧ ✧ ✧

Ծննդյան օրից մեր մահը մինչև
Մեզ շատ անցողիկ մի պահ է տրվում,
Ծննդյան–մահվան թվերի միջև
Շիրմաքարերին մի գիծ է դրվում:

Եթե այդ գծի գաղտնիքը բացես,
Ինչե՞ր չես գտնի նրա ընդերքում —
Ոճիր ու նախճիր, խրախճանք ու ծես,
Հաստատում ու սեր, դավեր ու հերքում:

Ահա կարդում ես երկու տարեթիվ.
Մեջտեղի գիծը երկար չի տևել,
Տիրոջը գիտես, տալիս ես պատիվ,
Մարդը լավ բան է աշխարհին տվել:

Իսկ այս մի գիծը, թեև շատ է ծեր,
Դու գիտես նաև տիրոջը նրա,
Նա կյանքում միայն չարիք է գործել,
Անջինջ նզովք կա այդ գծի վրա:

Կյանքի փոխարեն շիրմաքարերին
Դրվում է միայն մի շատ փոքրիկ գիծ,
Սակայն նրանն է փառքը դարերի,
Ում գիծը կյանքում եղել է անբիծ…

✧ ✧ ✧

Լամանչեցի ասպետի պես,
Արդարության սիրով արբած,
Այս աշխարհում ապրում եմ ես՝
Սիրտս մաքուր, ճակատս բաց:

Ես նրա պես անկոր կամքով
Այնքան պիտի վարեմ իմ ձին,
Մինչև ազնիվ տառապանքով
Սատար դառնամ տառապածին:

Թող համարեն ինձ խելագար,
Ես դրանից վախեցող չեմ,
Չէ՞ որ միշտ էլ միտքը տկար
Խիզախներին է խենթ կոչել:

Որքան էլ ինձ վար գլորեն,
Ես կկանգնեմ նորից ոտի,
Սակայն ես չեմ կրկնի նորեն
Սխալները Դոն Կիխոտի.

Թե գործերս գնան հաջող,
Նախ ես մի գործ կանեմ բարի.
Ես թույլ չեմ տա՝ իմ հեգ Սանչոն
Թեկուզ մի գյուղ կառավարի…

✧ ✧ ✧

Մարդ՝ Մեծատառով…
Այս երկու բառով
Որքան ենք մենք մեզ մղել սխրանքի
Ու տառապանքի…
Դեպի աստղերը ճամփա ենք բացել,
Սակայն մենք լրիվ դեռ չենք մարդացել.
Դեռ մարդը մարդուն քիչ է հավատում,
Նույնիսկ ավելին՝ այնքան է ատում,
Որ ստեղծում է այնպիսի զենքեր,
Որով կարող է ինքն իրեն հերքել.
Հերքել, որ ինքը լույս է արարել,
Հերքել, որ վսեմ գործեր է արել,
Որ ստեղծել է մտքի մեծ պաշար
Եվ տառապել է, որ չլինի չար,
Որ հորինել է սիրո վառ երգեր…
Մինչդեռ նա պիտի զենքերը հերքեր,
Բանակը հերքեր, որ մարդը ջահել
Ձգտեր մայր հողը միշտ ծաղկած պահել,
Որ հույսը դներ իր վաստակածին,
Աչքը չտնկեր ուրիշի հացին,
Որ ոչ թե արյուն, այլ գինի հեղեր,
Որ չլինեին նախճիր ու եղեռն,
Աշխարհը լցվեր միմիայն բարով,
Որ մարդը կոչվեր
Մարդ՝ Մեծատառով:

✧ ✧ ✧

Թեև ստորիդ չեմ կարող տանել,
Բայց նախանձում եմ
Ես քեզ մի բանում,
Դու կյանքում շատ բան կարող ես անել,
Նույնիսկ կարող ես
Վաստակել անուն:

Բայց դու էլ ինձ ես նախանձում, գիտեմ,
Տանել չես կարող
Վեհ ինքնությունս,
Հերյուրանքներ ես տարածում իմ դեմ,
Որ գեթ մրոտես
Ազնիվ անունս:

Դե՛հ, ի՞նչ, թող բախտը մեր սրտով տա մեզ.
Թող ստորությամբ
Շռայլ ապրես դու,
Թող դժվարությամբ հացս ճարեմ ես.
Ինձ համար թանկ է
Անունը մարդու…

ԴԵՐՎԻՇԻ ԵՐԳԸ

Մարդի՛կ, ես ձեր կարեկցանքին կարոտ չեմ,
Թե տխրում եմ, ես ձեզ համար եմ լալիս,
Ինձ շահ պետք չէ, ես մի անհոգ դերվիշ եմ,
Այս աշխարհի գանձերն աչքիս չեն գալիս:

Գանձեր, որոնք վայելելու փոխարեն
Դուք դարձրել եք պաշտամունքի կռարձան,
Նրանք մի օր ձեր մեջ մարդուն կմարեն
Եվ ձեզ նորից ետ կուղարկեն քարանձավ:

Եվ դուք նորից կխարխափեք խավարում՝
Դարանակալ ու ոխերիմ իրար դեմ,
Նորից ոճիր, նորից նախճիր ու արյուն,
Նորից դժոխք ու կարծեցյալ մի եդեմ…

Մինչդեռ եդեմն այս աշխարհն է երկնասույզ,
Որտեղ Արև ու Մայր հող կա կենսաբեր,
Այս աշխարհն է ձեզ պարգևում սեր ու լույս,
Հողի առաջ պիտի վառեք մոմը ձեր:

Մարդի՛կ, ես ձեր կարեկցանքին կարոտ չեմ,
Հող եմ պաշտում, և նա ինձ ուժ է տալիս,
Ինձ գանձ պետք չէ, ես մի անհոգ դերվիշ եմ.
Թե տխրում եմ, ես ձեզ համար եմ լալիս…

✧ ✧ ✧

Տիեզերքում անծայրածիր
Մարդը փոշի ու տիեզերք,
Կամքը՝ անհուն, միտքը՝ անծիր,
Մաքառումին չունի եզերք:

Սակայն ինչի նա հասել է
Իր սրտի նուրբ մի թրթիռով,
Դեռ չի հասել ու չի հասնի
Բյուրաստիճան բյուր հրթիռով…

✧ ✧ ✧

Իզուր եք համառ մեզ ապացուցում,
Որ ունեցել եք դուք կապիկ պապեր.
Օ՜, հավատացե՛ք, ես չեմ կասկածում,
Ես լավ եմ տեսնում կապկությունը ձեր:

Հենց այն է, որ ձեզ մոտ մեռած է խիղճը,
Փաստ է, որ դուք մարդ լինել չեք կարող,
Դուք անբաններ եք, իսկ Արարիչը
Մարդուն կերտել է հավերժ արարող…

✧ ✧ ✧

Թե հողի մեջ սնունդ չկա,
Նրա բրելն իմաստ չունի,
Հունդն այդ հողում արմատ չի տա,
Անվերջ ջրելն իմաստ չունի.
Մարդը պետք է բնականից
Լինի խելոք, պարզ ու շիտակ,
Թե էությամբ աննշան է,
Նշան կրելն իմաստ չունի:

Մարդ էակը անհագուրդ է,
Ինչքան էլ տաս, կասի՝ քիչ է.
Մեր կրքերի կաշկանդողը
Ճարտար ասված խրատը չէ,
Բարոյական օրենքից զուրկ
Մարդու համար խրատն ի՞նչ է,
Նրան միայն զսպել է պետք,
Երես մրելն իմաստ չունի:

Եթե զինվորն համոզված է,
Որ իր մղած կռիվն է զուր,
Նրա համար միևնույն է՝
Ձեռքին փայտ է, թե կայծակ թուր,
Որովհետև կուզես նրան
Ամենազոր զենքերը տուր,
Նա չի շահի մարտը երբեք,
Առաջ հրելն իմաստ չունի:

Այս աշխարհում իսկական մարդ
Ճշմարտախոս մարդն է, որ կա,
Չարիքը չի հաղթանակի,

Թե չդառնա սուտը վկա,
Պոետը պարզ պիտի խոսի,
Մութ խոսքերից օգուտ չկա.
Թե գրածը չի հասկացվում,
Երգ գրելը իմաստ չունի…

✧ ✧ ✧

Ի՞նչ է դարը —
Ժամանակի ընթացքի մեջ մի ակնթարթ:
Եվ այդ փոքրիկ ակնթարթը
Իր նորությամբ այնքան է բարդ,
Որ ոչ մի մարդ
(Թեկուզ տերը մեծ հանճարի)
Իր տաղանդի հզորությամբ
Դեռ երբևէ չի ընկալել
Ողջ իմաստն իր ապրած դարի…
Եվ դար կոչված
Այդ անցողիկ ակնթարթում
Սկսվում է ու վերջանում
Կյանքը մարդու:
Սակայն լավ է մարդու համար,
Որ իր ապրած դարը լավ է,
Չէ՞ որ դար կա՝ տեղով ցավ է,
Այնտեղ չարն է իշխում բարուն…
Փա՛ռք այն մարդուն,
Որ ծնվելով նման դարում,
Հանուն բարու՝ իր պայքարով
Ողջ ժամանակն է զարդարում…

✧ ✧ ✧

Եթե կյանքում դժվարության հանդիպես,
Մի՛ վհատվիր, մարդուն հեշտ կյանք չի տրված,
Հենց էն գլխից տառապանք է տրված մեզ,
Նախապես ենք մենք դրախտից վտարված…

Բայց կարծեցյալ պերճ դրախտի փոխարեն
Մարդուն վերուստ շնորհված է մտքի լույս,
Որով մարդը հրաշքներ է արարել
Եվ իր կյանքը դարձրել է ոսկեհյուս:

Մտքի լույսն է մեզ անխորտակ պահել միշտ,
Տքնանքով ենք բացել դուռը մեր բախտի,
Տառապանքով ամոքել ենք ցավ ու վիշտ,
Տանջանքով ենք հարթել ճամփան դրախտի:

Թե հանդիպես դժվարության դու կյանքում,
Մի՛ վհատվիր, միտքդ պայծա՛ռ պահիր դու,
Տառապանքն է մտքի լույսը բորբոքում,
Հպա՛րտ եղիր, որ տառապած մարդ ես դու…

ԵՐԳԸ

Դարեր ու դարեր
Մարդը դեգերեց,
Տառապեց, տքնեց, սիրտը քնքշացավ,
Բայց կյանքը իր հետ այնքան վիշտ բերեց,
Որ նրա սիրտը
Ցավատանջ դարձավ:

Եվ այդ ցավի դեմ
Նա որոնեց ճար
Ծովերի խորքում, աստղերի վրա,
Սակայն այդ ճարը չկար ու չկար,
Ու սկսեց ցավել
Եվ հոգին նրա:

Եվ նա ձեռնունայն,
Հուսահատ ու խեղճ
Սուզվեց իր հոգու խորքը ցավատանջ,
Ու լսեց նա իր ցաված հոգու մեջ
Սեր ու կարոտի
Ոգեղեն մի կանչ:

Ու երբ այդ կանչը
Առավ շուրթերին,
Ինչքան ցավ ուներ, իր սրտից վանեց,
Ապա երկնառաք հրաշքն այդ վերին,
Կանչն այդ հոգեբուխ
Նա երգ անվանեց…

✧ ✧ ✧

Խրատ չեմ կարդում…
Եթե մարդ ես դու,
Մի՛ տարվիր անէ մտքերով պատիր.
Խելք է տրված քեզ,
Որ դու աշխատես,
Եվ դու աշխատի՛ր:

Պահերը կյանքի
Լցրո՛ւ տքնանքի
Վեհ տառապանքով՝ անվհատ, համառ,
Թե գործով խորհես,
Կիմաստավորես
Կյանքը քեզ համար:

Քանի կաս, գործի՛ր
Տոկուն, անձանձիր,
Գործդ գլո՛ւխ բեր անվերջ տոկալով,
Ու դու կտեսնես,
Որ մեծ կզգաս քեզ՝
Կյանքին բան տալով:

Չէ՞ որ մենք այսօր
Հաստատ գիտենք, որ
Մարդու փրկիչը քրտինքն է իր ծով,
Եվ մարդու հոգին
Ու էությունը
Չափվում են գործով…

✧ ✧ ✧

Լույսը ծնվում է միայն այրումով,
Իսկ մարդը մարդ է լոկ արարումով,
Հանգավ կրակը՝
Լույսը կմարի,
Մարդը չարարեց՝
Չի լինի բարի…
Եվ այսօր իմ մեջ, ինձանից անկախ,
Մխում է անվերջ հեռավոր մի վախ.
Ատոմաընթաց այս հզոր դարում
Մարդը մահասփյուռ զենք է արարում,
Ինձ թվում է, թե մի ձեռք դիվային
Ձգտում է երկիրն հանձնել մահին…
Սակայն նույն պահին
Իմ հոգու խորքում
Հառնում է մի միտք
Ու վախս հերքում.
Գիտեմ, որ մարդը իր ճանապարհին
Ձգտել է բարուն, հերքել է չարին,
Կենաց ու մահու կռիվ է մղել
Չարի դեմ դաժան.
Իսկ երբ չար ուժը շատ է համառել
Ու ընդդիմացել,
Նման պահերին
Ավելի բորբոք ու թեժ է դարձել
Մարդկային հոգու կրակը անշեջ,
Եվ քանի–քանի պիղծ ու դավադիր
Ձեռք է մոխրացել
Հավերժ արարող այդ կրակի մեջ…

✧ ✧ ✧

Մեր օրերի թոհուբոհում,
Որտեղ կյանքը տառապանք էր,
Երբ մարդն ատոմ էր տրոհում,
Որ ստեղծեր մահվան սարքեր,

Որ տարածեր մահվան սարսափ,
Գեհեն դարձներ աշխարհը պերճ,
Իմ հոգում կար թռիչքի թափ,
Սեր ու կարոտ երգելու տենչ:

Ու երգեցի ես անվարան
Երգեր սիրո, աշխատանքի,
Խոհերս ինձ հեռուն տարան,
Հորձանուտը մտա կյանքի:

Վեհ ապրելով դժվար կյանքս՝
Ես հասել եմ այն բարձունքին,
Ուր ազատ է մարդու կամքը
Ու անկաշկանդ՝ միտքն ու հոգին:

Եվ այդ կյանքի ժխորում ես,
Վաստակած վեհ մարդու անուն,
Աշնան զուլալ ջրերի պես
Ընթանում եմ դեպի անհուն…

✧ ✧ ✧

«Ունայնություն ունայնության,
Եվ ամեն ինչ ընդունայն է»,—
Սա ասել է հին աշխարհի
Սողոմոն մեծ իմաստունը:
Այս ճշմարիտ իմաստության
Ամենազոր ուժը այն է,
Որ դարեր են եկել անցել,
Բայց մնում է էլի նույնը:

Տիեզերքում ամենայն ինչ
Ունի երկու հզոր բևեռ՝
Ծնունդ ու մահ, սկիզբ ու վերջ՝
Հարափոփոխ, իրարամերժ.
Ամենայն ինչ՝ մահվան գերի,
Ամենայն ինչ էլի անմեռ
Գոյամարտ է կյանք ու մահի,
Հավերժ գոյի պայքար է թեժ:

Ճիշտ է ասել դարեր առաջ
Սողոմոն մեծ իմաստունը.
«Ունայնություն ունայնության,
Եվ ամեն ինչ ընդունայն է»…
Տիեզերքը անվախճան է,
Ու հավերժ է կյանքի հունը,
Ես վախ չունեմ մարդու համար,
Քանզի բանն է ի սկզբանե…

✧ ✧ ✧

Ուրիշ պատճառ չփնտրեմ —
Իմ էս անխառն կավիս համար,
Գին չտրված լավիս համար,
Չնավարկած նավիս համար
Ես ինձ պիտի մեղադրեմ…

Ուրիշ պատճառ չփնտրեմ —
Իմ այս ըմբոստ վարքիս համար,
Օրինապահ կարգիս համար,
Չհարգված հարգիս համար
Ես ինձ պիտի մեղադրեմ…

Ուրիշ պատճառ չփնտրեմ —
Տառապանքով ելքիս համար,
Միշտ յուրովի վերքիս համար,
Չհարմարվող խելքիս համար
Ես ինձ պիտի մեղադրեմ…

Ուրիշ պատճառ չփնտրեմ —
Տառապալից ջանքիս համար,
Էժան ծախած թանկիս համար,
Չվայելած կյանքիս համար
Ես ինձ պիտի մեղադրեմ…

Ու թե պատճառ էլ փնտրեմ —
Պիտի ես ինձ մեղադրեմ,
Որ ապրելով այսքան տարի՝
Ճանաչեցի կարգն աշխարհի,
Բայց մնացի էլի բարի…
Ահա, խնդրեմ…

✧ ✧ ✧

Բանաստեղծի աչքերով եթե նայեք աշխարհին,
Այս տառապած աշխարհից կչքանան վիշտ ու ցավ,
Մարդի՛կ, եթե նրա պես ընդդիմանաք դուք չարին,
Չարը էլ չի հանդգնի այս աշխարհում նյութել դավ:

Եթե նայեք աշխարհին բանաստեղծի աչքերով,
Արդարասեր կլինեք, կմտածեք միայն ճիշտ,
Կհմայվի ձեր հոգին մշտադալար աշխարհով,
Եվ ձեր կյանքի կարճ ուղին կանցնեք ուրախ ու անվիշտ:

Բանաստեղծի աչքերով եթե նայեք աշխարհին,
Էլ չեք լինի դուք ագահ, կգոհանաք եղածով,
Երբեք գերի չեք դառնա մարդակործան կրքերին,
Կամքը ազատ կլինի, վայելումի խինդը՝ ծով:

Եթե նայեք աշխարհին բանաստեղծի աչքերով,
Ձեր սիրտը չի սողոսկի ո՛չ չարություն, ո՛չ նախանձ,
Այն կլցվի կենսատու հոգեպարար երգերով,
Եվ լոկ սերը կմնա վայելչության արժան գանձ:

Հավատացե՛ք ինձ, մարդի՛կ, պարզ սրտով եմ ասում ես,
Այս վառ արևը վկա, ցանկանում եմ ձեզ բարին,
Կյանքը ուրախ կլինի, բախտը միշտ կժպտա ձեզ,
Բանաստեղծի աչքերով եթե նայեք աշխարհին…

ԻՆՉՈ՞Ւ

Ամեն անգամ, երբ խորհում եմ ես այն մասին,
Թե ինչո՞ւ է մարդը ուզում հասնել լուսին,
Իմ էությամբ դառնում եմ ես մի մեծ «ինչո՞ւ»
Եվ ուզում եմ մարդու դեմքին ճչալ՝ ճիճու,
Դո՛ւ, որ դեռ լավ չես օգտվում հողագնդից,
Դո՛ւ, որ մերկ ես ու դեռ զուրկ ես քո սննդից,
Դո՛ւ, որ այսօր ապրում ես այս երկրի վրա,
Չես վայելում անհուն, անտակ բերքը նրա,
Դո՛ւ, որ թույն ես խառնում նրա ամեն ինչին,
Մտքով դառնում հզոր ու մեծ, հոգով՝ չնչին,
Դո՛ւ, որ անհուն այս անմեկին տիեզերքում
Դեռ սեփական քո ուղին ես արյամբ ներկում,
Դո՛ւ, որ ծարավ հենց սեփական քո արյունին,
Չես վայելում որթատունկի ընտիր գինին,
Դո՛ւ, որ լրիվ չես վայելում վարդի բույրը,
Ծովերի մեջ զրկանքով ես խմում ջուրը,
Դո՛ւ, որ այսօր զուրկ ես դեռ լույս ու արևից,
(Թեև նրանք ձրի տրվում են վերևից),
Դո՛ւ, որ սոված ես քնում դեռ՝ վաղվա հույսով,
Գիշերը դեռ չես վայելում լուսնի լույսով,
Էլ ինչո՞ւ ես դու ձգտումով այսօր քո սին
Խելագարված աճապարում դեպի լուսին…

1960 թ.

✧ ✧ ✧

Աշխարհի բոլոր մերժվածների պես
Այսօր ինքնամփոփ և զգույշ եմ ես:
Մարդկանց խոսքերին շատ չեմ վստահում,
Ինձ միշտ նրանցից հեռու եմ պահում:
Փորձում եմ լինել ո՛չ բարի, ո՛չ չար,
Ապրել հենց այնպես, միայն ինձ համար,
Բայց, ավա՜ղ, դա էլ ինձ չի հաջողվում
Մարդկային անսանձ կրքերի ծովում,
Որոնք դուրս գալով ուղուց բանական՝
Անդեմ են դարձել ու ճղճիմ այնքան,
Որ չես տարբերի վեհանձնը վատից,
Սիրո միջնորդը՝ խարդախ կավատից,
Ստոր քծնանքը՝ ազնիվ հարգելուց,
Ի սրտե վիշտը՝ կեղծավոր լալուց:
Չես կարող ջոկել՝ ով է երեսպաշտ,
Ով է քեզ հետ մոտ և ով է անհաշտ:
Բամբասանքով են գործերը վարվում,
Տեր Աստված, մեզ հետ ի՞նչ է կատարվում.
Փառք են վայելում կեղծիքն ու սուտը,
Ո՞ւր կորան խիղճը, հավատը, գութը:
Թե ուզեն, հավին կանվանեն արծիվ,
Ո՛չ արժանիք կա և ո՛չ էլ պատիվ,
Լոկ վախն է այսօր «ներշնչում» հարգանք,
Եվ այս ամենին մենք կոչում ենք կյանք:
Մենք ստեղծել ենք կյանքն այդ ատելի,
Ու դեռ մեզ մարդ ենք անվանում էլի…

30.01.1982 թ.

✧ ✧ ✧

Որքան էլ որ ես վառվեմ ծարավից,
Էլի չեմ ուզի, որ լինի հեղեղ,
Թեև, որպես ջուր, այն կփրկի ինձ,
Բայց չէ՞ որ այն միշտ աղետ է եղել:

Հեղեղը ջուր է խիստ պատահական,
Որը ծնվում է միշտ փոթորկի հետ,
Եվ քանզի չունի ակունք սեփական,
Փոթորկից հետո կորչում է անհետ:

Սիրտս ցավում է այն մարդկանց համար,
Ովքեր աղբյուրի տեղ են դնում այն
Եվ նրա հույսով շինում ջրամբար
Ու վերջում մնում խեղճ ու ձեռնունայն…

7.02.1986 թ.

✧ ✧ ✧

Ամեն ինչի մեջ ես չափ եմ փնտրել,
Ինձ խորթ է եղել անչափությունը,
Ես իմ ողջ կյանքն եմ չափի մեջ դրել,
Անխաթար չափ է իմ էությունը:

Աշխարհում սիրուց ազնիվ բան չկա,
Բայց իմ սերն էլ է եղել չափի մեջ,
Թեև այդ չափը այնքան է հսկա,
Որ արփին մոմ է նրա ափի մեջ:

Չափ ունի նաև ատելությունս,
Կարող եմ ներել ես իմ թշնամուն,
Իսկ եթե փորձի նա քանդել տունս,
Ես նրա որջը պիտի տամ քամուն:

Չափապաշտ է և իմ երգի մուսան.
— Լսի՛ր,— ասում է,— չդավե՛ս հանգին,
Չափն է աշխարհը պահում անսասան.
Սրտի ռիթմն է ուժ տալիս կյանքին:

Եվ ես, անսալով մուսայիս ձայնին,
Գիտեմ, որ գոյին միշտ չափն է սատար,
Մոխիր կդառնար հողագունդն այս հին,
Թե չափը խախտեր Արեգակն արդար…

ԱՆԹԵՂ

Մեր կյանքը հրաբորբ
Թոնիր է մշտավառ,
Եվ կրակ, և՛ մոխիր կա այնտեղ.
Թոնրի մեջ՝ մոխրի տակ,
Թաղում են չոր աթար,
Որ դառնա գալիքի վառ անթեղ:

Վառ թոնրում պարում են
Բոցերը մոլեգին.
Վարից վեր մրրկում է հուրը տաք,
Եվ կարծես չի խառնվում
Այդ հրե տարերքին
Անթեղը՝ խոր թաղված մոխրի տակ:

Բայց ոչ, նա տանջվում է
Թոնրի թեժ հատակում.
Վառվել է ուզում, բայց օդ չկա,
Եվ նա իր կրծքի տակ
Կրակ է կուտակում,
Որ վառվի օրերում ապագա:

Թոնիրն անընդհատ
Վառվում ու հանգչում է,
Անթեղն է միշտ նրան պահում վառ.
Այդպես է և կյանքը,
Թռիչք ու անկում է,
Սակայն միշտ անշեջ է ու պայծառ:

Իմ վեհ սիրտ, լուռ տոկա՛
Ընդերքում մեր կյանքի.
Մեջդ հո՛ւր կուտակիր դու այնտեղ.
Իմացի՛ր — կրակն է
Մեր հոգու տանջանքի
Միշտ դառնում գալիքի վառ անթեղ…

✧ ✧ ✧

Բյուրեղ երազներս փշուր–փշուր եղան,
Լույս խոհերս իսպառ եղան ծվեն–ծվեն,
Տե՛ր իմ Աստված, ախր, ինչո՞ւ այսպես եղավ,
Դու ինձ տվել ես շատ,
Իսկ ես քիչ եմ տվել:

Իմ հոգու մեջ այնքան խոհեր կային լուսե,
Նուրբ նվագներ կային ու հեքիաթներ զառ–վառ,
Վերուստ ինձ տրված էր պերճ հեքիաթներ հյուսել,
Որ աշխարհը մի քիչ
Հեքիաթային դառնար:

Մինչդեռ, պաղսիրտ կյանքին հեքիաթներ պետք չէին,
Նրան պետք էր աթար, որ գեթ կրակ վառեր,
Եվ նա պահանջում էր, որ բարձր հնչեին
Լոկ աթարին ձոնված
Ճոռոմ ու սին ճառեր:

Տե՛ր իմ Աստված, ախր, ինչո՞ւ այսպես եղավ,
Դու ինձ տվել ես շատ,
Իսկ ես քիչ եմ տվել…
Ախր, երազներս փշուր–փշուր եղան,
Լույս խոհերս եղան ծվե՛ն–ծվե՛ն…

ՎԵՐՀՈՒԾ

Ոտաբոբիկ մի տղա
Սառը գետափով,
Կարթաձողը պինդ բռնած,
Վազում է թափով:

Արևը դեռ չի ծագել,
Լուրթ լուսաբաց է,
Տղան թեթև է հագել,
Հագուստը թաց է:

Դեմքը լուրջ է ու լարված,
Նա ձուկ է որսում,
Որսով այնքան է տարված,
Ցուրտ է, չի մրսում…

Արևն հասավ զենիթին,
Ամռան օր է շոգ,
Տղան պառկել է խոտին,
Սուլում է անհոգ:

Մով երկնքում՝ պարզ ու ջինջ,
Ճախրում է ճայը,
Լույս է շնչում ամեն ինչ,
Դյութիչ է պահը:

«Բյուր երանի այդ ճային,
Որ ունի թևեր…»,—
Ու մտքերը տղայի
Թևածում են վեր:

Նա խորհում է անհունի
Էության մասին.
Հոգում վառ երազ ունի —
Հասնել անհասին…

Ա՜խ, մանկությո՛ւն իմ թեթև,
Ո՞ւր թռար այդպես,
Առանց երազ ու անթև
Ինչպե՞ս ապրեմ ես…

✧ ✧ ✧

Գիշերն ի լույս ցող էր իջնում կանաչներին,
Ինձ հետ էի ես մեն–մենակ գիշերն ի լույս,
Զմայլանքից քուն չէր գալիս իմ աչքերին,
Ազատակամ պարզել էի թևերն հոգուս:

Անուրջներով սուզվել էի անհունի մեջ,
Իմն էր անափ տիեզերքը ծիրերից ծիր,
Աշխարհի հետ ես չունեի կռիվ ու վեճ,
Թևածում էր միտքս ազատ ու անձանձիր:

Գիշերն ի լույս տանջահարված մեր աշխարհին
Շող ու սարսուռ էր շաղ տալիս մի զով ամառ,
Չարը չքվել, ամենուրեք տեր էր բարին,
Վախ չունեի հողագնդի բախտի համար:

Ես անկաշկանդ ու մեն–մենակ ինձ հետ էի,
Աշխարհով մեկ սփռում էի գանձերն հոգուս,
Մարդկանց հոգու լույս արարող պոետ էի.
Գիշերն ի լույս,
Գիշերն ի լույս,
Գիշերն ի լո՜ւյս…

✧ ✧ ✧

Գարուն է նորից, հողը ծոցվոր է,
Մայր բնությունը զարթնել է նորից,
Ահա կպայթի ամպրոպն ուր որ է,
Զարթոնքի շունչը համակել է ինձ:

Զարթնել են էլի երազներս հին
Աղամամութի գորշ աղջամուղջում,
Էլի դոփում է խոհերիս խոլ ձին,
Նա նոր սխրանքի վարգ է անրջում:

Երանի գալիք գարունքին այս նոր
Երկինքը կապեր հրաշք ծիածան,
Եվ նրա տակով անցնեին բոլոր
Տենչերս, որոնք չիրականացան…

12.08.1987 թ.

✧ ✧ ✧

Երբ ես մի օր աշխարհ եկա ակամա,
Եվ աշխարհը ինձ ընդունեց գրկաբաց,
Ինձ թվում էր, թե ես կապրեմ մինչև մահ
Այս աշխարհի հրաշքներով միշտ հարբած:

Ինձ գերում էր դյութիչ փայլը աստղերի,
Հարբում էի ծաղիկների տաք բույրով,
Աշխարհն աչքիս պերճ դրախտ էր անթերի՝
Օծված անմար սիրո թովիչ համբույրով:

Ինձ թվում էր, որ կնավեմ ես հաստատ
Կյանքի ծովում և կբերեմ հուրն անշեջ,
Ես ունեի հզոր կայմ ու առագաստ
Եվ երազիս ափն հասնելու կամք ու տենչ:

Ու նետվեցի հորձանուտը ես կյանքի՝
Վստահ իմ պիրկ առագաստին ու կայմին,
Բայց չհասա ափը ես իմ տենչանքի,
Քանզի, ավա՜ղ, կյանքում հողմեր չկային…

✧ ✧ ✧

Սիրտս թափուր է, երազներս՝ մերկ,
Գոռ մրրիկներ է տենչում իմ հոգին…
Լիներ բնության ահավոր տարերք,
Ու ես լինեի դժվար ճամփեքին:

Թող հորդ հեղեղը իմ ճամփան փակեր,
Կամ ինձ տոչորեր շոգը մոլեգնած,
Թող փոթորիկը դեմքիս ապտակեր,
Եվ թող մաքառեր մարմինս հոգնած:

Թող ինձ հալածեր քամին խելագար,
Եվ կուրծքս ծեծեր կատաղած բուքը,
Թող բնությունը տանջեր ինձ երկար,
Միայն թե ցրվեր այս գորշ տաղտուկը…

✧ ✧ ✧

Ասում են՝ քանզի գիտության դար է,
Կեղծ են հույզերը,
Որ իբր այսօր սրտերը քար են,
Ու սուտ է սերը:

Ասում են՝ իբրև մեր օրերում այս
Սրտով չեն դատում,
Որ ավելորդ են խոհն ու երազը.
Ես չեմ հավատում:

Թե մարդը լիներ այդքան անզգա,
Չէր լինի սերը,
Մինչդեռ սերը կա.
Վկա են ծնվող բանաստեղծները…

✧ ✧ ✧

Օ՜, ո՛չ, մարդը միշտ չէ, որ անհագ է եղել՝
Հոգու լույսը մարող,
Մութ կրքերով տարված.
Նյութի տենչը նրան այսքան շատ չի նեղել,
Խիղճը ջինջ է եղել,
Հոգին՝ չխաթարված:

Նրա սրտում այնքան լույս է եղել ու սեր,
Որ նա հագեցել է
Լոկ մի ծաղկի բույրով,
Սիրո երազից է կյանքի հեքիաթ հյուսել
Եվ կյանքից գոհացել
Սիրո մի համբույրով:

Նա Մեջնունի նման սիրուց խենթ է դառել,
Սիրո զոհ է դարձել
Հպարտ Ֆահրադի պես,
Բոլոր սրտերի մեջ սիրո հուր է վառել,
Որ իր կյանքը դառնա
Սիրո տոնահանդես:

Գիտեմ, մարդը այսպես միշտ անհագ չի մնա,
Նա չի ապրի սիրո
Լույս ճամփեքից շեղված.
Իր հանճարի լույսով դեռ կճառագի նա,
Կբորբոքի նորից
Սիրո հուրն անթեղված…

ԲԵՐԿՐԱՆՔ

Գարնան առավոտ է,
Փթթած իմ պարտեզում
Ես մեծ գորովանքով
Տնկում եմ նոր ծառեր,
Առուն խոխոջալով
Ծառից ծառ է վազում,
Ու ես հոգով, մտքով
Պատանի եմ դարձել:

Ինչ–որ քնքուշ մի խոհ,
Մի արարման կարոտ
Անհաս անհուններից
Գալիս, ինձ է գգվում,
Ու դրախտ է դառնում
Հողագունդը քարոտ,
Սրտիս խորքում անուշ
Մի լավ երգ է ծնվում:

Եվ այդ երգը հրաշք
Մի սուրբ աղոթքի պես
Լիցք է տալիս հոգուս
Բերկրանքով մի անգին.
Եվ ներշնչված այդ վեհ
Երգն եմ շշնջում ես՝
Որպես գովք ու օրհնանք՝
Ձոնված աշխատանքին…

✧ ✧ ✧

Մեռնում էր թփին
Վարդը դալկացած՝
Խոցված արևի այրող համբույրով,
Խոնարհ գլուխը
Լուռ կախել էր ցած
Եվ շուրջը լցրել իր անուշ բույրով:

Օ՜, մա՛յր բնություն,
Բյուր հազար փա՛ռք քեզ,
Որ միշտ անմահ ես դու պահում բարին.
Մեռնում էր վարդը,
Բայց արի ու տես՝
Բույր էր պարգևում արար–աշխարհին…

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Գարնանամուտ է, սակայն ցուրտ է դեռ,
Ձմեռն իր վերջին ճիգերն է անում,
Ձգտում է մնալ հավիտյան ամնեռ…
Սակայն իմ հոգում հուր է արթնանում,

Քանզի ես ձմռան այդ վերջին ճիգում
Տեսնում եմ գարնան ամպրոպ ու հեղեղ,
Փոթորկի երգ է ծնվում իմ հոգում,
Հոգիս դառնում է խենթ ու խելահեղ:

Ճխում է սիրտս գալիքի խինդով,
Սիրում եմ սրբող անձրևը վարար,
Լցվում է հոգիս ամպրոպի թինդով,
Ողջո՛ւյն քեզ, ամպրո՛պ՝ գարնան ազդարար…

✧ ✧ ✧

Հողի բույր է գալիս
Իմ հեգ մանկությունից,
Ուրցի բույր է գալիս ու դաղձի բույր,
Հեռու անդարձ մի հուշ
Գալիս գգվում է ինձ,
Մի հուշ՝ երազային, ջինջ ու մաքուր:

Տենչում էի դառնալ
Խոսքի մեծ մարգարե,
Սրտեր գերել զենքով մուսաների,
Մարդկանց հոգում
Սիրո անշեջ կրակ վառել,
Մաքրող կրակ՝ ընդդեմ մութ կրքերի:

Ու իմ խոսքը պիտի
Այնպես ծիածանվեր
Եվ կապեր այնպիսի հրաշք կամար,
Որ վեհ ճշմարտության
Անմար հրով վառվեր,
Փարոս դառնար մարդկանց բախտի համար:

Բայց տարիներն անցան,
Մանկությունս անցավ,
Ճերմակ մազեր տվեց ժամանակն ինձ,
Երազներիս հուրը
Տխուր անթեղացավ,
Սիրտս խռով մնաց ժամանակից:

Հողի բույրով օծուն
Մանկությունս անհոգ
Թռավ անցավ՝ հեծած հրեղեն ձի.
Հախուռն իմ խոհերից
Երգեր մնացին լոկ՝
Որպես հիմն ու աղոթք արդար հացի…

✧ ✧ ✧

Փոփոխուն է կյանքն ամենուր,
Աստղերն էլ չեն հավերժ անմար.
Բայց մի՛ տխրիր, սի՛րտ իմ, իզուր,
Տիեզերքի բախտի համար:

Քանզի նրա վառ հնոցում
Երբ մի աստղ է դառնում փոշի,
Նա իր հավերժ բեղուն ծոցում
Կյանք է տալիս մեկ ուրիշի:

Մշտահոլով այդ անհունը
Իր մեջ ունի հրաշք մի բան,
Նա է պահում կյանքի հունը
Հար կենսահորդ ու անխափան:

Նույն հրաշքն է մեր հոգու մեջ
Վառում մտքի ամնար լույսեր,
Կյանքը դարձնում անհասի տենչ.
Այդ հրաշքը կոչվում է Սեր:

Սի՛րտ իմ, եթե անշեջ պահես
Սիրո հուրը դու քո խորքում,
Բախտը հավերժ կժպտա մեզ
Այս մշտավառ տիեզերքում…

✧ ✧ ✧

Սիրում եմ Գեղամա
Լեռները իմ կանաչ,
Ես նրանց վեհ գրկում
Զգում եմ ինձ արծիվ,
Պաշտում եմ իմ հրաշք
Սևանը կապուտաչ,
Բայց թողեք՝ ես թամբեմ
Հեքիաթի հրաշք ձին,

Ուխտ գնամ շղթայված
Երկիրն իմ պապերի,
Անմոռաց, հարազատ
Սուրբ վայրերը շրջեմ,
Բարձրանամ լանջերը
Իմ Սիփան սեգ սարի,
Կապուտակ իմ Վանի
Զով զեփյուռը շնչեմ:

Եվ ապա տարաբախտ,
Տարագիր որդու պես
Իմ Մշո դաշտն իջնեմ,
Կարոտով ծունկի գամ,
Ծնրադիր համբուրեմ
Նրա սուրբ հողը ես,
Տունդարձի խոստում տամ
Ու երդվեմ, որ կգամ…

ՔԱՆԶԻ ՍԻՐՏՍ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է

Ես ծնվել եմ սեգ լեռներում,
Արևի բարկ հայացքի տակ,
Հոսում է իմ երակներում
Լեռնցու բորբ արյունը տաք:

Թողած լեռներն իմ սիրելի՝
Թեև վաղուց իջել եմ դաշտ,
Բայց մնում է սիրտս էլի
Լեռնական ու արևապաշտ:

Հակառակ եմ եղել չարին,
Երբեք սուտը չեմ հանդուրժել,
Պաշտպանել եմ միշտ արդարին
(Փույթ չէ, թեև շատ եմ տուժել):

Թեև հիմա հասուն այր եմ,
Բայց հեքիաթն ինձ դեռ գերում է,
Վեհորեն եմ բեռն իմ տարել,
Քանզի սիրտս լեռներում է…

✧ ✧ ✧

Ա՜խ, ինչ ազնիվ է կյանքը հեքիաթում,
Այնտեղ միշտ լավը
Հաղթում է վատին,
Այնտեղ անկեղծ են սիրում ու ատում,
Խոսքը ասում են
Ուղիղ ճակատին:

Հեքիաթում նա է հաղթանակ տանում,
Ով ճշմարիտ է
Եվ հոգով բարի,
Ով վեհորեն է կյանքն առաջ տանում,
Կամքով հզոր է
Եվ սրտով արի:

Միշտ կործանվում է հեքիաթում չարը,
Վառվում է հողը
Նրա ոտքի տակ,
Անպարտելի է այնտեղ արդարը,
Մարդը ապրում է
Ազնիվ ու շիտակ:

Ու երբ էլ մարդը հեքիաթ է հյուսում,
Նա ցանկանում է,
Որ հաղթի բարին.
Ա՜խ, այսօր սիրտս այնքա՜ն է ուզում
Մի հրաշք հեքիաթ
Պատմել աշխարհին…

✧ ✧ ✧

Այս աշխարհում հարատև է միայն բարին — բաժակդ բե՛ր,
Կյանքը միշտ էլ հատուցել է անարդարին — բաժակդ բե՛ր:

Բանն աշխարհի ես կշռել եմ ժամանակի վեհ նժարով,
Վերջին հաշվով անարգված եմ տեսել չարին — բաժակդ բե՛ր:

Ինչ էլ լինի՝ այս աշխարհը ազնվությամբ է աներեր,
Թեև հաճախ հալածել են անաչառին — բաժակդ բե՛ր:

Որքան էլ որ դաժան լինեն դավ ու ցավերն այս աշխարհի,
Ադամորդին դրանց դիմաց դեղ կճարի — բաժակդ բե՛ր:

Ատոմատենդ մեր այս դարի ջերմությունն էլ կիջնի մի օր,
Հավատում եմ մարդու մտքին ու հանճարին — բաժակդ բե՛ր…

✧ ✧ ✧

Ինձ համար ուրիշ դավանանք չկա
Մեզ ծնող հողը պաշտելուց բացի,
Եթե ինձ համար մի սուրբ երդում կա,
Դա ամենասուրբ երդումն է հացի:

Մարդը բանելով ելավ անձավից,
Հաց աշխատելով՝ նա քայլեց շիտակ.
Բայց այսօր սիրտս տնքում է ցավից,
Երբ նա նետում է հացը ոտքի տակ:

Ու եթե մարդը շուտ ուշքի չգա,
Եվ հացի համար սիրտը չցավի,
Նա մի օր նորից, սուրբ հացը վկա,
Կդառնա կենվոր մութ քարանձավի…

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ջահելությունս հրաշքով ետ գար,
Մութ գիշեր լիներ ու տեղատարափ,
Կայծակը զարկեր, ամպը որոտար,
Խոլ դղրդային լեռ, ձոր ու քարափ:

Պառկած լինեի ձորի հոլիկում՝
Ականջս պահած տարերքի խաղին,
Երազներ վառեր իմ ջահել հոգում
Ահեղ բնության հևքը կատաղի:

Եվ ես թամբեի հեքիաթիս խոլ ձին,
Արհամարհեի կայծակ ու որոտ,
Երազիս փերուն գնայի այցի՝
Սրտիս մեջ տենչանք, անհասի կարոտ:

Եվ նա գիշերով դուռն իմ դեմ բանար,
Ու վայելեինք մենք երազ ու սեր,
Եվ իմ երազը թող կիսատ մնար,
Թող տեղատարափն ինձ օրոր ասեր…

✧ ✧ ✧

Գարնանն իմ այգում ծառ էի տնկում,
Երբ ինձ մոտեցավ մի անցորդ բարի:
— Գիտե՞ս,— ասաց նա,— դեռ ոչ ոք կյանքում
Չի կերել ընկույզն իր տնկած ծառի…

— Սուտ է, բարեկա՛մ,— ես ասի նրան,—
Եթե ասածդ ճշմարիտ լիներ,
Շատ վաղուց արդեն այս երկրի վրա
Չէին լինելու ընկուզենիներ.

Չէ՞ որ լավ գիտեմ ադամորդուն ես,
Նա չէր տնկելու կյանքում ոչ մի ծառ,
Եթե համոզված լիներ իսկապես,
Որ այն տնկում է ուրիշի համար…

✧ ✧ ✧

Մարդը մասնիկն է կապույտ անհունի,
Նա լոկ մի պահ է
Ոտք դնում հողին,
Եվ նա իր հոգում այնքան լույս ունի՝
Կարող է լույսով պատել իր ուղին:

Բայց մեկ էլ, դառած կրքերի գերին,
Այնպիսի վատ բան
Նա կանի անկամ,
Որը չի սազում իր վեհ պատկերին,
Որից կխորշի չար դևը անգամ:

Նման պահերին, խոլ հորձանք տալով,
Իմ մեջ հառնում է
Մի ահեղ ցասում,
Եվ ես՝ որպես մարդ, ինձ նախատելով
Եվ ինձ ատելով՝ մի բան եմ ասում.

— Մա՛րդ, դու կարող ես դրախտ արարել,
Թե զորությունդ
Պարգևես հողին.
Ոչ ոք աշխարհից ոչինչ չի տարել,
Հերիք չէ՞ փշով պատես քո ուղին…

✧ ✧ ✧

Իմ բարեկամ նկարիչը
Ինձ հարց տվեց մի անգամ.
— Ի՞նչ նկարեմ ես քեզ համար,
Իմ բանաստեղծ բարեկամ,
Որը լինի շատ գեղեցիկ,
Կախարդական, հոգեթով,
Ծառ ու ծաղի՞կ, աստղ ու երկի՞նք,
Թե՞ կապուտակ անհուն ծով…

Ես ասացի մտերմաբար.
— Այդ ամենը մի կողմ դիր.
Թե կարող ես, դու ինձ համար
Արդարություն նկարիր:
Բարեկամս իր կտավին
Սևով «սուտ» բառը գրեց,
Սև խաչ քաշեց ստի վրա,
Ժպտալով ինձ նվիրեց…

✧ ✧ ✧

Երբ ես ոտքս հողին դրի,
Մայր հողը ինձ տվեց դասեր.
Որպեսզի ես լինեմ բարի,
Պիտի լինեմ աշխատասեր:

Եվ երբ կյանքիս ուղին անցա՝
Ճաշակելով չարն ու բարին,
Տառապանքով ես հասկացա
Էությունը այս աշխարհի:

Տեսա, որ այն կռիվ է գոռ՝
Իրարամերժ ու մշտական,
Որ մղում են գիշեր ու զօր
Չարն ու բարին ակն ընդ ական:

Տեսա նաև հրաշք մի բան.
Տեսա՝ հողի հզոր կամքով
Միշտ փակում է չարի ճամփան
Մարդն իր սիրով ու տքնանքով:

Եվ ես, հողից առած դասեր,
Ապավիած իմ քնարին,
Ներբողում եմ տքնանք ու սեր,
Որ զորանա կյանքում բարին…

✧ ✧ ✧

Երազում տեսա՝ հնձվոր էի ես,
Գերանդին առած՝
Արտ էի հնձում,
Զնգում էր վերից արևը հրկեզ,
Համերգում էին
Հավքերը ցնծուն:

Հովն էր շնկշնկում ոսկեծուփ արտում
Եվ գուրգուրում էր
Ջահել կուրծքս բաց,
Արդար վաստակի տենչը իմ սրտում՝
Աշխատում էի՝
Բերկրանքից արբած:

Բայց, ավա՜ղ, հանկարծ արթնացա քնից,
Շուրջս գիշեր էր,
Տաղտուկ էր ու տոթ,
Մի անհուն թախիծ իսկույն պատեց ինձ.
Ես զգում էի
Մայր հողի կարոտ…

✧ ✧ ✧

Գիտեմ,
Որքան էլ որ արդար լինեմ,
Բաժին կունենամ աշխարհի մեղքից,
Ուստի որպեսզի դրախտ ընկնեմ,
Քավարանում դեռ
Պիտի մաքրեն ինձ…

Ու բան է,
Եթե այնտեղ ինձ հարց տան.
— Ի՞նչ տառապանքով մաքրենք քո հոգին,
Ես նրանց հաստատ պատասխան կտամ.
— Թող հոգիս տանջի
Հմայիչ մի կին…

ԻՄ ՍՈՒՍԱՅԻՆ

Հոգսերով տարված՝ ես քեզ մոռացա
Եվ թափառեցի
Ճամփեքում մոլոր,
Ես անմտորեն քեզնից հեռացա,
Բայց չլքեցիր
Դու ինձ գեթ մի օր:

Վիշտ ու ցավերիս եղար կարեկից,
Հույս ներշնչեցիր
Դու ինձ անդադար,
Երբ դաժան բախտը հալածում էր ինձ,
Իմ ցաված սրտին
Դու եղար սատար:

Եվ այսօր, երբ դու ինձ հետ ես էլի,
Ոչ մի չար ուժից
Չեմ վախենում ես.
Սիրտս քո հանդեպ հավատով է լի,
Ի՛մ աստվածուհի,
Տա՛ր ինձ՝ ուր կուզես…

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ա՜խ, ես ի՞նչ երգով
Քեզ փառաբանեմ,
Որ արժան լինի քո տառապանքին,
Ես քո մեծ սրտի
Ո՞ր ցավը տանեմ,
Որ քեզ լավ զգաս, Հայրենի՛ք անգին:

Դարեր շարունակ
Քո հողը հերկած
Խլել է վայրագ ոսոխը դաժան,
Սուրբ սահմաններդ,
Քո արյամբ ներկած,
Դեռ մինչև օրս էլ մնում են բաժան:

Քո զավակներին
Վայրենին ցրել,
Դարձրել է պանդուխտ հայրենակարոտ,
Հուռթի դաշտերիդ
Սև թաթն է դրել
Ու քեզ թողել է մի բուռ հող քարոտ:

Բայց ժողովուրդդ՝
Հավերժ արարող,
Այսօր քարից է լույս հացը քամում,
Համոզված եմ ես՝
Նրան չի կարող
Արմատից պոկել և ոչ մի սամում:

Դարեր է ապրել
Հույսս կարեվեր

Եվ հավերժ կապրի արևի ներքո,
Դեռ որպես Փյունիկ
Դու կհառնես վեր,
Դեռ կմիանան սուրբ ափերը քո:

Կհաղթի լույսը
Բանականության,
Եվ չիք կդառնա ոսոխ վայրենին,
Հողդ կտանես
Մի նորոգ գութան,
Դու դեռ կծաղկես, հո՛ղ իմ հայրենի…

ՍԵՎԱՆ

Ծնվել եմ ափիդ
Գեղեցիկ մի օր,
Իմ օրորոցին դու ես ժպտացել,
Անուշ հովերդ են
Ինձ ասել օրոր,
Հայացքիդ տակ եմ իմ աչքը բացել:

Քո զմրուխտ ափին
Հասակ եմ առել,
Դեռ մանկուց, Սևա՛ն, քեզ կոչել եմ ծով,
Դու ես իմ հոգում
Երազներ վառել
Վճիտ ջրերիդ փիրուզյա բոցով:

Ես շատ ծովեր եմ
Տեսել իմ կյանքում,
Օվկիանոսներ եմ կտրել ու անցել,
Սակայն ինձ համար
Իմ հոգու խորքում
Դու ամենամեծ ծովն ես մնացել…

✧ ✧ ✧

Մեր Մշո դաշտը չեմ տեսել երբեք,
Ոչ էլ Սասունի սեգ լեռները մեր,
Սակայն երազում տեսնում եմ մեկ–մեկ
Ինձ անծանոթ, բայց հարազատ վայրեր:

Եվ ինձ թվում է, որ վայրերն այդ պերճ,
Որոնք տեսնում եմ իմ երազներում,
Ընդմիշտ եղել են իմ էության մեջ,
Իմ արյան մեջ են, իմ երակներում:

Դա առեղծված չէ, Մշո դաշտի մեջ
Իմ նախնիները քրտինք են թափել:
Սասնա լեռներում դարերով անվերջ
Ջրանցք են փորել, կամուրջ են կապել:

Դրա համար էլ արյունը բոսոր
Այդ սուրբ վայրերի ավիշը ունի,
Եվ իմ հոգու մեջ պահված են այսօր
Վառ պատկերները Մուշ ու Սասունի:

Ես համոզված եմ, որ իմ արյունը
Այդ պատկերները կպահի այնքան,
Մինչև որ տեսնեմ Մուշն ու Սասունը,
Մինչ երազներս դառնան իրական…

✧ ✧ ✧

Ո՞վ կհավատա,
Երբ ասում են, թե
Հրաշքներ չկան մարդկային կյանքում.
Ասացե՛ք, խնդրեմ,
Հրաշք չէ՞ր միթե
Այն, ինչ կատարվեց Նարեկա վանքում:

Նարեկա վանքում
Հեգ ճգնավոր էր՝
Մարմինը թողած նշխարի հույսին,
Հագած կոշտ–կոպիտ
Մազեղեն շորեր՝
Տառապեց հասավ հոգու պերճ լույսին:

Եվ նա այդ լույսը
Աշխարհին տվեց,
Սրբացավ–դարձավ Սուրբ Նարեկացի,
Թե հրաշք չկա,
Մարդն ինչպե՞ս փոխվեց
Հանապազօրյա հոգևոր հացի…

✧ ✧ ✧

Անմար հավատով
Այս էլ քանի դար
Երգում ենք հույսով.
«Առավոտ լուսո,
Արեգակն արդար…»:
Տեսնես, քանի՞ դար
Էսպես անդադար
Դեռ պիտի երգենք
«Առավոտ լուսո…»:
Փա՛ռք Արարողին,
Որ բաց է պահում
Միշտ դուռը հուսո…

✧ ✧ ✧

Թողնեմ գնամ այս ժխորից,
Բնության մոտ սիրտս բանամ,
Թող մանկանա հոգիս նորից,
Նայադներին ընկերանամ:

Նորից լսեմ նրանց բառը
Եվ հասկանամ նրանց լեզուն,
Լսեմ՝ ի՞նչ է շրշում ծառը,
Աղբյուրները ի՞նչ են խոսում:

Լսեմ արտի սոսափը սուրբ,
Երբ «հերանց է գնում» նազով,
Եվ առվակի կարկաչը նուրբ՝
Մարգերի մեջ կայտառ վազող:

Ըմպեմ բույրը վառ վարդերի
Եվ ջրերի հևքը շնչեմ,
Նվագի տակ նայադների
Նորից հանդ ու սարեր շրջեմ:

Գնամ ձուլվեմ բնության հետ,
Գուցե հանկարծ բախտս բերի,
Մանկությունս նորից գա ետ
Կախարդանքով նայադների…

✧ ✧ ✧

«Ծովերից այն կողմ, լեռներից անդին
Մի կույս էր ապրում շքեղ դղյակում…»,
Գերում էր հոգիս հրաշքն հեքիաթի
Ու սիրում էի ես կույսին թաքուն:

Սակայն աղջիկը սիրում էր նրան,
Ով վտանգելով իր կյանքը անգին,
Կգնար բերեր հավքը Հազարան,
Որ փրկեր դևից կախարդված այգին:

Ու «գնում էի» ես ինքնամոռաց,
Ընդդեմ դևերին՝ չար ու բազմագույն,
Ա՜խ, քանի դև եմ կոտորել ձեռաց
Եվ քանի գիշեր մնացել անքուն…

Ծովերից այն կողմ, լեռներից անդին
Շքեղ դղյակում ապրում էր մի կույս…
Ու մինչև այսօր հրաշքն հեքիաթի
Անշեջ է պահում կրակը հոգուս…

✧ ✧ ✧

Ես նվիրեցի սիրտս հրացայտ
Կովկասի սևաչ մի խենթ աղջկա,
Թեև նա սերս տրորեց անցավ,
Բայց էլի այսօր իմ սրտում սեր կա:

Ու ես հիմա եմ հասկանում միայն,
Որ սերս խորունկ, որ սերս անշեջ
Կովկասի սևաչ աղջիկը չէր այն,
Այլ սերն ապրում է իմ խենթ սրտի մեջ…

Մ-Ի ԱԼԲՈՄՈՒՄ

Ա՜խ, իզուր ես ակնարկում
Դու քո սերը հանդեպ ինձ.
Ուրիշ սեր կա իմ հոգում,
Ուրիշ կրակ ու թախիծ:

Ուրիշ տեղ է ինձ տանում
Թռչող սիրտս խենթացած.
Ա՜խ, իզուր ես դու ջանում
Նրան ուժով բերել ցած…

ԿՆՈՋԸ՝ ԱՄԱԼՅԱՅԻՆ
(Ակրոստիքոս)

Առավոտյան շողաթաթախ ալ վարդ ես,
Մատաղ կուրծքդ անուշ բույր է խնկարկում,
Արևաշող զույգ աչերդ աստղի պես
Լույս վառեցին գեղեցկատեսիլ իմ հոգում:

Յոթը կյանք էլ թե ունենամ աշխարհում,
Ամբողջ սրտով կնվիրեմ յոթն էլ քեզ,
Ի՜մ թանկագին, որ մեր ահեղ այս դարում
Սիրես, խնդաս ու ոչ մի պահ չտխրես…

ԿՆՈՋԸ՝ ԱՄԱԼՅԱՅԻՆ
(Ակրոստիքոս)

Անձրևից հետո արևը շողաց
Մուգ կանաչներին, արտերին թավիշ,
Անուշ ժպտացին ծաղիկները թաց,
Լույսն արարում էր նեկտար ու ավիշ:

Իմ պատրանքների լուսե անուրջում
Այցի եկավ ինձ երազիս փերին,
Իր նուրբ մատներով ծաղիկ էր փնջում,
Նախանձում էի ես ծաղիկներին…

✧ ✧ ✧

Լուռ տանջվեցի քեզ համար,
Արտասվեցի ես թաքուն,
Բայց մերժեցիր դու համառ,
Ու վառվեց հուրն իմ հոգու…

Եվ վարմունքից քո համառ
Հուրս այնքան շատացավ,
Որ այրվեցի քեզ համար,
Ու աշխարհը տաքացավ…

ԿՆՈՋԸ՝ ԱՍԱԼՅԱՅԻՆ
(Ակրոստիքոս)

Աստղերի նման, աստղերի պես վառ
Մեր սերը, կենաց անշեջ հրով լի,
Արևի նման, արևից պայծառ
Լուսավորում է մեր ուղին էլի:
Իմ ու քո սերը չի մարի երբեք,
Այս կյանքում լինենք, թե տիեզերքում,
Ինչ էլ որ լինենք, անբաժան ենք մենք,
Նույն լիցքը ունի հյուլեն մեր հոգու…

✧ ✧ ✧

Քսան տարի, ուսը ուսիս,
Լուծ է քաշել իմ պառավը,
Եղած ջուրը տվել է ինձ՝
Թաքցնելով իր ծարավը:

Վշտիս համար թաքուն լացել,
Ինձ նախատել լացիս համար,
Ճամփիս վառվող մոմ է դարձել,
Լույսով լցրել օրերս մառ:

Երբ սրտակեր բախտն անխնա
Փորձել է իմ սիրտը վառել,
Մոռանալով իր սիրտը՝ նա
Իմ սրիտն է սատար դառել:

Այսօր բախտից շատ գոհ եմ ես,
Որ պահում ես իմ սիրտն էլի.
Քո պահած սիրտն ընծա ի քեզ,
Ի՛մ պառավս, ի՛մ սիրելիս:

✧ ✧ ✧

Հիշո՞ւմ ես գարնան երեկոն այն տաք,
Որ ջերմ ու մեղմիկ անձրև էր մաղում,
Ծվարել էինք մենք մի ծառի տակ
Եվ մեր խենթության վրա ծիծաղում:

Երանությունից դեմքդ շողում էր,
Ինձ էիր փարվել հավատով անմար,
Երջանկությունից սիրտս դողում էր,
Արժեր աշխարհում ապրել քեզ համար:

Բայց ես քեզ աստղեր չէին խոստանում,
Մենք սիրում էինք, հարկ չկար ստել,
Մեր սերը մեզ լույս ափեր էր տանում,
Հավատով էինք մենք իրար գտել:

Շատ տարիներ են այդ օրից անցել,
Շուտով մեր թոռը քեզ կասի տատի,
Բայց դու ինձ համար նույնն ես մնացել,
Նույն լույս ակունքը սեր ու հավատի…

ԿԱՏԱԿ

Հանդիպեցինք մենք իրար
Պատահական, հենց այնպես,
Աղջիկ էիր նրբիրան,
Ժպտում էիր վարդի պես:

Երբ դու մեկեն լրջացար
Իմ մի անլուրջ կատակից,
Ես այնպես խիստ վախեցա,
Որ դու հանկարծ կատես ինձ:

Այնպես ազդեց ինձ վրա
Խռովահույզ քո հոգին,
Որ խանդեցի ես նրան,
Ում որ պիտի դառնաս կին…

Թեև օրից այդ անտես
Շատ տարիներ են անցել,
Շաղկապել է բախտը մեզ,
Մենք այր ու կին ենք դարձել,

Թեև քեզ դուր եմ եկել,
Եվ դու ինձ ես պատկանում,
Բայց լրջանում եմ մեկեն,
Հենց որ կատակ եմ անում…

ԱՐԵՎԻԿԻՍ
(Ակրոստիքոս)

Ասա՛, ի՛մ դստրիկ, ի՞նչ ցանկանամ քեզ,
Ռոպեն կյանքիդ թող փոխվի դարի,
Երջանիկ բախտի դու արժան լինես,
Վարդեր թող բացվեն քո ճանապարհին:
Իմ հե՛զ մանուշակ, իմ սիրո՛ւն բալիկ,
Կուզեմ՝ ժպիտդ մնա միշտ անմար,
Ինչքան լույսեր կան օրերում գալիք,
Սիրով թող վառվեն քո բախտի համար…

ԻՄ ԱՆՆԱՅԻՆ

Մի շաբաթ չկա՝ հյուր ես գնացել,
Իմ շատախոսս, իմ խռովկանս,
Ինձ թվում է, թե դարեր են անցել,
Ինչ քո ծիծաղը չի հնչում տանս:

Տունս նման է անլեզվակ զանգի,
Տխուր անդորը է իջել հարկիս տակ.
Շուտ վերադարձի՛ր, թռչնա՛կ իմ անգին,
Դու իմ օջախի բարի՛ հրեշտակ…

✧ ✧ ✧

Եթե ուզում ես,
Որ օջախը քո
Միշտ հաստատ լինի, ու դուռդ՝ միշտ բաց,
Անաչա՛ռ եղիր,
Ապրի՛ր պարզ հոգով
Եվ արդարությամբ վաստակի՛ր դու հաց:

Հանդուգն մի՛ եղիր,
Քաջություն չէ դա,
Բայց չարի հանդեպ մի՛ եղիր բարի,
Չարիք նյութողին
Երբեք մի՛ գթա,
Որ չխափանես գործը արդարի:

Կործանարար է
Երկդիմի խաղը,
Չորին չոր ասա և թացին էլ՝ թաց,
Եթե ուզում ես,
Որ քո օջախը
Միշտ հաստատ մնա, ու քո դուռը՝ բաց…

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Ննջի՛ր, մանկի՛կ իմ անուշ,
Աստղերը ելան,
Քնի՛ր անհոգ ու մուշ–մուշ,
Ի՛մ անմեղ, ի՛մ լավ:

Անգիտությամբ երջանիկ
Դու խոր քո՛ւն մտիր,
Բայց մինչև այդ, ի՛մ ջանիկ,
Երգիս ակա՛նջ դիր.

Այս աշխարհը ինքնաբավ
Վայելչանք չէ լոկ,
Այն քեզ կտա վիշտ ու ցավ,
Թե չեղար խելոք:

Գիտցի՛ր, եթե նույնիսկ դու
Լինես հաղթ արքա,
Պիտի լինես միշտ արքուն,
Ուրիշ ճար չկա:

Թալանում են քնածին,
Փորձով գիտեմ ես,
Այսօր քնի՛ր, ի՛մ արծիվ,
Որ էլ չքնես:

Ննջի՛ր, մանկի՛կ իմ անուշ,
Թող քունդ տանի,
Քնի՛ր անհոգ ու մուշ–մուշ,
Կողքիդ եմ քանի…

ԿՏԱԿ

Լսի՛ր, զավակս, գանձ չեմ թողնում քեզ,
Թեև քրտինքս միշտ եղել է ծով,
Սակայն քեզ համար խրատ ունեմ ես,
Որը ստույգ է՝ տանջանքիս փորձով:

Ինչ որ ասում եմ, լա՛վ միտդ պահիր,
Լավ եմ ճանաչում ես ադամորդուն,
Նա քեզ չի զիջի հին շապիկը իր,
Քոնը կհանի, թե չեղար արքուն:

Մարդու աստվածը շահն է սեփական,
Եվ նա ամեն ինչ շահով է չափում,
Շահի համար է մարդն ամեն անգամ
Զրկում ու զրկվում, քծնում ու խաբում:

Շահի ահից է հողագունդն այս հին
Այսօր օրհասի տագնապից դողում,
Չեմ կարող թվել, թե հանուն շահի
Որքան ոճիր է եղել այս հողում:

Քանզի դու էլ ես մարդ և հողածին,
Դու էլ քո շահը պիտի իմանաս,
Որ տնանկ չապրես ու կարոտ՝ հացի,
Որ կյանքի կռվում դու էլ դիմանաս:

Սակայն լա՛վ լսիր՝ ինչ եմ ասում քեզ,
Անազնիվ շահը չարիք է ծնում.
Կուզեմ, որ շահդ ազնիվ վաստակես,
Միշտ չարը կորչում, բարին է մնում…

✧ ✧ ✧

Ասի՝ նստեմ ու գոզալի գովքն անեմ,
Ինձնից վանեմ հոգսն ու ցավը աշխարհի,
Կյանքի արտում սիրո հունդեր սերմանեմ,
Որ աշխարհը գթոտ լինի ու բարի:

Նպատակս սակայն մնաց անկատար.
Ժամանակը չար էր, չեղավ ինձ սատար,
Թեև սրտանց ջանք թափեցի անդադար,
Գոզալի գովքը չստացվեց՝ ինչ արի:

Սիրո երգի իմ հունդերը չբուսան,
Ուրիշ հոգսով էր զբաղված իմ մուսան.
Գիշեր ու զօր մտածում էր անսասան,
Թե աշխարհում մի կտոր հաց ո՞նց ճարի:

Սիրո երգի համար չկար պարարտ հող.
Չկար սիրո երգեր լսել ցանկացող,
Մարդկանց սրտում կար ապրելու ահ ու դող,
Կյանքը նրանց դարձրել էր անարի:

Արի՛ գոզալ, մի՛ նեղանա ինձանից,
Որ քո գովքը չհաջողվեց անել ինձ,
Քանզի կյանքը տառապանք էր ու թախիծ,
Ցավոտ էին լարերը իմ քնարի:

20.11.1988 թ., Երևան

✧ ✧ ✧

Այսօր տղայիս տվեցի ապտակ.
Նա չարություն էր արել մեր բակում,
Ցոլացին իսկույն արցունքները տաք,
Լուռ հեկեկում էր, բայց չէր առարկում:

Նա չէր վշտացել իմ պինդ ապտակից,
Չի համարել էր այն արդարացի.
Զղջումով նայեց հոնքերի տակից,
Որպես պատասխան՝ ես զուսպ ժպտացի:

Նա հասկացավ ինձ ու ժպտաց նույնպես,
Հայացքն ասում էր. «Էլ չեմ անի, պա՛պ…».
Սիրտս հանդարտվեց, խաղաղվեցի ես,
Բայց հանկարծ հոգիս խռովվեց մի պահ.

Ա՜խ, ես հիշեցի մի տղայի չար,
Որ նույնպես ուներ ապտակի կարիք…
(Որին լքել էր հայրը ապիկար)
Նրա վարքն հետո կդառնա չարիք:

Ու մի ցանկություն համամարդկային՝
Ցասում բորբոքեց իսկույն կրծքիս տակ,
Մի հրաշքով ինձ իրավունք տային՝
Նման հայրերին ես տայի ապտակ…

ԱՐԹՈՒՐԻԿԻՍ

Դու ամեն փակ բան
Ուզում ես բանալ,
Ուզում ես քանդել ամեն խաղալիք,
Ուզում ես նրանց գաղտնիքն իմանալ.
Եվ դա շատ լավ է,
Իմ անո՛ւշ բալիկ:

Լավ է, երբ մանուկ քո հոգու խորքում
Գաղտնիք բացելու
Ցգտում կա ու տենչ,
Այդ վեհ ձգտումը քո մատաղ հոգում
Արարման հուրը
Կպահի անշեջ:

Գիտցի՛ր, այդ հուրն է
Ոգին աշխարհի,
Եվ մարդը մարդ է իր կերտածով լոկ…
Իսկ այժմ բացի՛ր ձգտումով բարի,
Ինչ անհայտ է քեզ,
Բալի՛կ իմ խելոք…

ՆԵՐԾՆՉԱՆՔ

Հով շշուկով իջավ գարնան իրիկուն,
Անդորր բերեց,
Հանգիստ բերեց ամենքին,
Հավք ու ծաղիկ մտան խաղաղ ու խոր քուն,
Բայց դեռ արթուն
Տագնապում է իմ հոգին:
Լուրթ երկինքը հմայում է տիրաբար,
Վառ աստղերը
Ոսկի հեքիաթ են ասում,
Աղջամուղջում անրջում են ծով ու սար,
Դյութված հոգիս
Հրաշքի է սպասում:
Ու գալիս է այդ հրաշքը մոգական,
Բռնկվում է
Իմ մեջ մի հույզ անմեկին,
Մա՛յր բնություն, օվսաննա՝ քեզ բյուր անգամ,
Դու աստված ես…
Երգ է ծնում իմ հոգին…

ՀՈՂԻ ԲՈՒՅՐԸ

Օրը ծնվեց աղջամուղջից,
Բարի լույս է, այգաբաց,
Լուռ մարում են աստղերը ջինջ,
Օդը ջերմ է, հողը՝ թաց:

Բացվեց գարնան երկինքը բիլ,
Թռչուններն են ճռվողում,
Հազար ու բյուր արմատ ու ծիլ
Խլրտում են տաք հողում:

Ամբողջ գիշեր երկրի վրա
Ցող է իջել ու սարսուռ,
Ցողաթաթախ կուրծքը նրա
Խնկարկում է հողի բույր:

Հողի բույրն է լիացնում
Այս աշխարհը անմեկին,
Հողն է ծնում, հողն է սնում
Ամեն մեկին, ամենքին:

Հողի բույրն է հիմնը բարու,
Նա է դառնում խիղճ ու հաց,
Առանց դրանց այս աշխարհում
Մարդը ի՞նչ է, տե՜ր Աստված…

✧ ✧ ✧

Երբ Արարիչը մարդուն արարեց,
Նախ նրան օժտեց բանական լույսով,
Ապա սրտի մեջ սեր ու խիղճ դրեց,
Հետո նվիրեց թե՛ ցամաք, թե՛ ծով:

— Ապրի՛ր,— Աստվածը պատվիրեց մարդուն,—
Պատկերիս հանգույն ես կերտեցի քեզ,
Արարքներիդ մեջ եղի՛ր միշտ արթուն,
Ճշմարի՛տ եղիր ստեղծողիդ պես:

Գնա՛, վայելի՛ր հողագունդը պերճ,
Դրա՞խտ դարձրու քո մտքով ճարտար,
Ձգտիր՝ չմարի խիղճը սրտիդ մեջ,
Աշխատիր ապրել վաստակով արդար:

Սակայն երբ մարդը երկրին տիրացավ,
Երկիրը նրան նեղ ու քիչ թվաց,
Նա իր դեմ նյութեց բյուր չարիք ու ցավ
Եվ ապա զղջաց. «Գթա՜, տե՛ր Աստված…»:

Բայց Արարիչը չխղճաց մարդուն.
Նույնիսկ զայրացավ.
— Քեզ պետք չէ գթալ,
Ես քեզ տվել եմ բանականություն,
Դրանից ավել ի՞նչ կարող եմ տալ…

✧ ✧ ✧

Ազնվությունը
Որքան էլ տուժի,
Ի վերջո նա է դրության տերը,
Ես հավատում եմ
Ճշմարտի ուժին,
Առողջ հունդից են ծնվում ծիլերը:

Կամքս կռել եմ
Ճշմարտի բոցում,
Սրբել եմ ստոր կրքերն իմ սրտից,
Հոգիս թրծել եմ
Կյանքի հնոցում,
Էլ ես վախ չունեմ տաքից ու ցրտից:

Էլ ոչ մի մրրիկ ինձ չի սասանի,
Կայմս ամուր է,
Առագաստս՝ ձիգ,
Ազնիվ հավատս ինձ ափ կհանի…
Ես խղճում եմ ձեզ,
Անհավա՛տ մարդիկ…

ԱՆԱՀԻՏ

Անահի՛տ՝ Աստվա՛ծ իմ նախնիների,
Ո՞վ զգաստության ամենազոր մայր,
Բորբոքի՛ր հուրը քո բագինների
Դու խռովահույզ մարդկության համար:

Նրան ե՛տ պահիր ճամփից չարաղետ,
Հրձիգ լինելուց դարձրո՛ւ հրապաշտ,
Թող մարդիկ խաղաղ ապրեն իրար հետ,
Արտը չդառնա արնոտ մարտի դաշտ:

Դու քո մայրական սրտի զորությամբ
Եվ քո ամոքիչ բարությամբ վերին
Թույլ մի՛ տուր իջնի ատոմի սև ամպ
Լույսի պես անմեղ օրորոցներին:

Սերը դարձրո՛ւ հավատի անթեղ,
Աշխարհը մատնի՛ր սիրո սուրբ հրին,
Սիրո անշեջ հուր վառի՛ր ամեն տեղ,
Ատելության սև խավարը ցրի՛ր:

Թող քո սուրբ կամքով սերը հուրհրա
Պարմանիների ջահել հոգու մեջ,
Թող սերը պայթի աշխարհի վրա,
Թող մարդուն այրի նրա հուրն անշեջ:

Անահի՛տ՝ Աստվա՛ծ իմ նախնիների,
Ո՞վ զգաստության ամենազոր մայր,
Դու սուրբ զորությամբ քո բագինների
Խաղաղությո՛ւն բեր մարդկության համար…

✧ ✧ ✧

Ես Ֆիրդուսի չեմ, ոչ էլ Հոմերոս,
Ես բանաստեղծ եմ մի ահեղ դարի,
Իմ դարում չկա այնպիսի հերոս,
Որ դեմ հանդիման մտնի գուպարի:

Այսօր մի վատուժ ու չնչին մարդուկ
Կարող է ելնել սեփական եսից
Եվ անհայտ հեռվից մի ակնթարթում
Քաղաքներ ջնջել երկրի երեսից:

Իմ դարի մարդը ատոմը սանձել,
Որպես մահվան զենք բռնել է ձեռին,
Տիեզերքի մեջ ճամփա է բացել,
Ձեռնոց է նետել հեռու աստղերին…

Դժվար է գրել մեր «Իլիականը»,
Գրել մեր ահեղ դարի «Շահնամեն»,
Անտես նեյտրոնի գոռ ուրվականը
Խառնել է այսօր հաշիվներն ամեն:

Ես Հոմերոս չեմ, ոչ էլ Ֆիրդուսի,
Ինձ նրանց շարքում երբեք չեմ դասել,
Բայց քանզի զուրկ չեմ բանական լույսից,
Ես էլ կարող եմ իմ խոսքը ասել.

Մարդն ինչ էլ դառնա, թե չդադարի
Խլել ուրիշի վաստակած հացը,
Նա իր տաղանդի հրով կմարի
Այս հողագնդի ջինջ լուսաբացը…

✧ ✧ ✧

Ո՛չ, ես չեմ ստում,
Ինձ էլ է գերում հմայքը փառքի՝
Այդ հզոր փայլը մարդկային կյանքի…
Ի՞նչ է, ես մարդ չե՞մ,
Ո՞վ կհավատա, եթե ես փչեմ,
Թե գիտեք՝
Փառքը ինձ համար փուչ է:
Դա ճշմարիտ չէ.
Մարդս կրում է տառապանք ու ցավ,
Որ փառք ունենա, ունենա համբավ,
Անուն ունենա,
Չէ՞ որ մարդ է նա,
Հրաշք զավակը արարիչ հողի՝
Միակ պատկերը պերճ Արարողի:
Նա, որ ապրում է «ոչ միայն հացիվ».
Որ ճակատ ունի՝ խոհուն, խելացի,
Լոկ նա է
Սիրում,
Ծիծաղում,
Լալիս,
Չարին ատում է,
Բարուն փառք տալիս
Եվ բարի փառքով իրեն ներշնչում.
Ուրեմն՝ մարդը և փառք է տենչում…
Ո՛չ, ես չեմ կեղծում,
Ես էլ եմ ձգտել վաստակած փառքի,
Բայց հանուն փառքի՝
Երբեք չեմ լծվել ուրիշի կառքին…

✧ ✧ ✧

Ես հացի համար երբեք չեմ երգել,
Բայց աղոթել եմ միշտ հանուն հացի,
Իմ նախնիները միշտ հող են հերկել,
Ապրել են ազնիվ ու արդարացի:

Ինձ ավանդել են, որ լինեմ արդար
Եվ հաց վաստակեմ ես ազնվորեն,
Որ իմ արյունը ապրի դարեդար,
Անարատ մնա որպես սուրբ ցորեն:

Ես ուրիշների հացին չեմ դավել,
Ուրիշների հետ միշտ կիսել եմ հաց,
Շատ է պատահել, ոչ ինձ չի բավել,
Բայց ես այդ քիչն էլ կիսել եմ սրտանց:

Երբեք չեմ խորշել հացից աղքատի
Եվ ցավակից եմ եղել զրկվածին,
Անեղծ է եղել ակունքն իմ կաթի,
Ես խոփ եմ պաշտում և ոչ թե կացին:

Եվ քանի դեռ այս մեր հողագնդին
Ոգի պիտի տա հացի բույրը տաք,
Ես՝ որպես հերկվոր, հավերժեմ պիտի
Հավերժ կենարար բորբ արևի տակ…

✧ ✧ ✧

Մարդակործան աղետներով հաջորդել է դարը դարին,
Ոճիրներ է գործել մարդը մարդանալու ճանապարհին:
Սակայն այսօր իր քանքարով մարդը լույս է քամում քարից.
Նրա միտքը զորացել է, հոգում տեր է դառնում բարին:
Գիտեմ, համառ իր տքնությամբ մարդը լրիվ կմարդանա,
Հավատում եմ նրա մտքին, հանուն բարու իր պայքարին:
Բայց դեռ մարդը տառապում է իր սեփական արատներից.
Դեռ նա իսպառ դուրս չի վանել իր հոգու մեջ նստած չարին:
Եվ մարդն այնքան դեռ կմնա ինքնակործան ու մեղսապարտ,
Քանի դեռ կիրքն է առաջնորդ ամենակար իր քանքարին…

✧ ✧ ✧

Ժամանակի խոտոր քայլին չգնացի համընթաց,
Հանուն բարու տառապեցի, բայց ոչ մեկը չգթաց:
Արդարություն պաշտպանելով՝ սիրտս արի ողջակեզ,
Անարդարի առաջ, սակայն, տեսա բախտի դուռը բաց:
Խղճի մասին բարբառեցի, բայց ոչ մեկը չլսեց,
Ամենուրեք վառում էին՝ իրար խառնած չոր ու թաց:
Ճշմարտություն որոնեցի, ծիծաղեցին ինձ վրա,
Ասին՝ տեսնես այս անճարը ո՞նց է ճարում ցամաք հաց:
Եվ ես հարբել փափագեցի… Գինետանն էլ տեղ չկար…
Տե՜ր իմ Աստված, այս աշխարհում որքան մարդիկ կան հարբած…

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈԼՈՎՆԵՐՈՒՄ

Հավերժի ճամփորդ եմ եղել,
Վկա են գրված քարերը,
Երբեք ինձ ճամփից չեն շեղել
Արնոտ ու դաժան դարերը:
Դեռ անճավում է ինձ գերել
Անմահ հմայքը քարերի,
Ես քարերի հետ եմ բերել
Վեհ ասքերը հին դարերի:
Բագին եմ կերտել, թե տաճար,
Դարերով հղկել եմ քարեր,
Կերտել եմ դպրոց ու կաճառ,
Կերտելով եմ ապրել դարեր:
Քարը սատար է եղել ինձ,
Երբ դիմել եմ ես քարերին,
Լույս ու հաց եմ քամել քարից,
Նոր փայլ եմ տվել դարերին:
Վեմ եմ ծաղկել ու մագաղաթ,
Մատյան եմ կերտել քարերից,
Արարման ոգիս անաղարտ
Բերել եմ հեռու դարերից:
Քանի դար է՝ քար աշխարհին
Երգ եմ ձոնել ես քարերով,
Բայց նա, միշտ տուրք տալով չարին,
Հալածել է ինձ դարերով:
Թշնամին խլել է հերկս,
Արմատ եմ նետել քարերում,
Հուսով եմ՝ հանճարի բերքս
Կաճի և գալիք դարերում…

ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻՆ

Այս հողագնդում մեր լեզուն նոր չէ,
Վաղնջական են բառերը նրա,
Մեզ Արևազուն անվամբ են կոչել,
Քանզի Արև ենք պաշտել ու կրակ:

Մեր պաշտած Հուրը մենք կոչել ենք Ար,
Եվ հանուն անմար այդ լույս հավատի՝
Սուրբ հայրենիքը մեր արևավառ
Մենք անվանել ենք Հող Արարատի:

Եվ մեր սեփական սեպագրերով
Այն դրոշմել ենք ժայռերի վրա,
Որ մեր թշնամին հրով ու սրով
Մի օր չեղծի անունը նրա…

Բայց այսօր, հանկարծ, թե ի՞նչ պատճառով
Մեր «Արարատի»–ն շրջում են, թեքում,
Մի կասկածելի լեզվով ու բառով
Ինչ–որ «Ուրարտու» ձևով են հեգում:

Եվ այդ «Ուրարտու» երկիրն էլ հսկա
Իբրև թե հանկարծ չքվել է այնպես,
Որից իբր թե ոչ մի հետք չկա,
Եվ լոկ անունն է, որ հասել է մեզ…

Ավելին՝ նրա տարածքում անծայր
Հայ ժողովուրդն է հայտնվում «հանկարծ»…
(Այ քեզ պարադոքս պատմության համար)
Պատմաբաններին պիտի տամ մի հարց.

Լսե՛ք, ձեզանից շատ բան չեմ ուզում,
Լոկ ազնվաբար պատասխանե՛ք ինձ.
Կարո՞ղ է արդյոք մի հզոր լեզու
Մեռնել կամ ծնվել հենց միանգամից:

Ես համոզված եմ՝ դուք չեք պնդի դա,
Եթե ազնիվ եք ձեր մղումներում,
Իսկ եթե կեղծեք, ձեզ չեն հավատա,
Գալիքն անցյալի սուտը չի ներում…

Պիղծ հորդաները վայրի մոլուցքով
Եկել անցել են խորշակի հանգույն,
Մենք արարողի անաղարտ ոգով
Հավերժ ապրել ենք անեղծ ու կանգուն:

Չարին չներող այս աշխարհի մեջ
Միշտ բարի գործի ջահակիր ենք մենք.
Դուք ուրիշների մասին բացեք վեճ,
Մենք եղել ենք, կանք ու պիտի լինենք…

✧ ✧ ✧

Եկեք սրտանց հպարտանանք
Սխրանքներով մեր պապերի,
Սակայն եկեք մենք չդառնանք
Հին փառքերին անմիտ գերի:

Ով չգիտի, որ շատ դարեր,
Հանուն իրենց հերկած հողի,
Մարտնչել են պապերը մեր՝
Ընդդեմ օտար նվաճողի:

Նոր սերունդը հին փորձով է
Միշտ իր գործը առաջ տարել,
Սակայն նա միշտ նոր գործով է
Հայրենիքին սատար դառել:

Խոփն անընդհատ պիտի վարի,
Որ չնստի ժանգը վրան,
Թե գործելուց նա դադարի,
Ժանգը իսկույն կուտի նրան:

Դարեր առաջ Մաշտոցը Մեծ
Իր հանճարի լույսով հզոր
Տառաբանակ մեզ պարգևեց՝
Քաջ այրուձի ամենազոր:

Բայց չէր մնա հավերժ արդի
Ամենահաղթ այդ այրուձին,
Թե չհաներ նրանց մարտի
Քերթողահայր Խորենացին:

Թե նրանցով չբարբառեր
Նարեկացին աստվածաբար,
Գուցե նրանք՝ որպես տառեր,
Չշողային այսքան պայծառ…

Խոփն անընդհատ պիտի վարի,
Որ չնստի ժանգը վրան,
Թե գործելուց նա դադարի,
Ժանգը իսկույն կուտի նրան:

Ուստի՝ եկեք լինենք խելոք,
Կյանքը կերտենք մեր իսկ ձեռքով,
Մարդն այդ ձևով կարող է լոկ
Հպարտանալ իր մեծերով…

✧ ✧ ✧

Ես սիրում եմ այն հզորին,
Որը խելքով է կորովի,
Որը ուժ է տալիս նորին
Եվ գործում է միշտ նորովի:

Այն զորեղին եմ ես ատում,
Որի ուժն է ավտոմատը,
Որի ոչ թե գանգն է դատում,
Այլ՝ անուղեղ ցուցամատը:

Քանզի վատին միշտ ատում են,
Նրա կյանքը կարճ է տևում,
Կյանքի փորձը հաստատում է,
Որ սիրվածն է հարատևում:

Եվ քանի որ բութ հզորին
Բոլորի պես ես ատում եմ,
Ամեն դեպքում խելոքների
Հաղթանակին հավատում եմ…

✧ ✧ ✧

Հին ժամանակ ամեն արքա
Պահում էր լավ մի ծաղրածու,
Սա էլ կյանքում, ինչ բաց որ կար,
Ծանակում էր խոսքով կծու:

Եվ ծաղրում էր նա բոլորին՝
Չնայելով ջահել ու ծեր,
Նույնիսկ՝ իր տեր թագավորին,
Եթե նա էլ սխալ գործեր:

Սակայն պատիժ չէր ստանում,
Որքան էլ թունդ ծաղրեր մեկին,
Քանզի, ինչ որ նա էր անում,
Օգտակար էր և ամենքին:

Նրա ծաղրած ամեն մի բաց,
Թագավորի կամքին հլու,
Վերացվում էր կամաց–կամաց
Եվ նպաստում ճիշտ ապրելու:

Հանձինս ինձ, բարեկամնե՛ր,
Այդ ծաղրածուն հիմա էլ կա,
Բայց որտեղի՞ց հեգ ծառան ձեր
Ճարի իրեն վայել արքա…

✧ ✧ ✧

Իմ հոգում կար
Տարիների տանջանք ու ցավ,
Սակայն այսօր պատահաբար
Դրանք անցան:
Հոգիս մեկեն թեթևացավ,
Էլ չի տանջի ինձ ոչ մի ցավ…
Հրաշք եղավ.
Թոթովախոս իմ թոռնիկը
Իր նկատմամբ
Մի անարդար պահանջի դեմ
Ըմբոստացավ…

✧ ✧ ✧

Օ՜, ես բարի եմ, դուք չգիտեք ինձ,
Բայց չեմ ընդունում բարին՝ հենց այնպես,
Անդեմ ու հլու, խեղճ բարությունից
Ես միշտ խորշել եմ ու զզվում եմ ես:

Բարին բարի չէ, եթե չի ջարդում
Կեղծիք հերյուրող գլուխը չարի,
Եթե չի կռվում նա հանուն մարդու
Եվ չի պաշտպանում դատը արդարի:

Մայրը բնական կերպարն է բարու,
Բայց գրոշ չարժի բարությունը մոր,
Եթե իր սնած զավակն աշխարհում
Չարիք կնյութի կյանքում գեթ մի օր:

Ես կհամբուրեմ այն ձեռքը ամուր,
Որի ապտակը միշտ դաս է վատին,
Նման ձեռքի մեջ հարկավոր է սուր,
Որ դաս տա նաև պիղծ անհավատին:

Օ՜, ես բարի եմ: Իմ բարությունից
Եթե աշխարհը մի քիչ ունենա,
(Ես ծեր դերվիշ եմ, հավատացե՛ք ինձ)
Աշխարհում մի պուտ չարիք չի մնա…

ԱՆՃՈՌԻ ՃՈՒՏԻԿԸ

Ես նոր բան չեմ ասում, սա հեքիաթ է մի հին,
Սակայն նրա միտքը շատ է կյանքին մոտիկ.
Հավաքխսի բնում կարապի ձու դրին,
Եվ լույս աշխարհ եկավ մի անճոռնի ճուտիկ:

Նա չէր կարող վազել հավի ճտերի պես,
Սագի ճտի նման հպարտ չէր շորորում,
Նա այնքան տխուր էր, այնքան համեստ ու հեզ,
Որ տեսնողը միայն գլուխն էր օրորում:

Ա՜խ, նա խորթ զավակ էր ամբողջ հավանոցում,
Ծաղրում էին նրան անվերջ աջից, ձախից,
Ստոր բամբասանքով նրա սիրտը խոցում,
Բայց նա լուռ տոկում էր՝ սրտում վիշտ ու թախիծ:

Սակայն շուտով անցան տխուր օրերն անթով,
Կյանքը տվեց նրան պիրկ ու ճկուն թևեր,
Եվ նա մի օր թռչնի վսեմ իր բնազդով
Պոկվեց հողից մեկեն ու թափով ճախրեց վեր:

Կարծես կայծակ զարկեց երկնքից պարզ ու ջինջ.
Հավանոցում տիրեց վայնասուն ու կական,
Իսկ ճուտիկն անճոռնի, մոռացած ամեն ինչ,
Ճախրում էր երկնքում հպարտ ու հաղթական…

Այդպես խիզախ միտքն է հալածվում ծնվելիս,
Հաստատ համարվելով անճոռնի կամ պարապ,
Բայց երբ ժամանակը նրան թև է տալիս,
Նա ճախրում է որպես հեքիաթային կարապ…

✧ ✧ ✧

Մանկությանս կարոտել եմ,
Թեև անցավ սոված,
Որքան լուսե կարոտ ունեմ
Ես ետևում թողած:

Այնտեղ եմ ես ապագայի
Վառ երազներ հյուսել,
Ինչքան տենչեր, խոհեր կային
Եվ երազներ լուսե:

Բայց խոհերս իզուր անցան,
Ո՞ւր եք, իմ լո՜ւյս տենչեր,
Երազներս ո՞ւր չքացան,
Երևի լույս պետք չէր…

Մանկությունը չի ստում, չէ՛,
Ես էլ սխալ չէի.
Ախր, չէ՞ որ կյանքը փուչ է
Առանց լույս տենչերի…

✧ ✧ ✧

Ի՞նչ ասեմ նրանց,
Ովքեր աշխարհից գլուխ չեն հանում,
Բայց հանձն են առնում
Ուրիշին ցույց տալ ճամփան դրախտի…
Ինձ միտք է տրված,
Որ ես մտածեմ.
Սիրտս չի տանում,
Երբ ուրիշներն են ուզում որոշել
Ուղին իմ բախտի…

Դրախտ չեմ ուզում,
Թողեք՝ ճաշակեմ համը տքնության,
Թողեք՝ արարմամբ
Գեթ քիչ նմանվեմ ինձ միտք տվողին,
Բարին գործելով՝
Վայելեմ փառքը
Հպարտ ինքնության,
Պարտքս հատուցեմ
Եվ նորից ծուլվեմ մեր սուրբ մայր հողին…

✧ ✧ ✧

Գարնանս ցրտեր եղան,
Ամառս չոր էր,
Ես իմ արյուն–քրտինքով
Արտ արի հերկս…
Աղոթում եմ երկնքին՝
Լինեն լավ օրեր,
Գեթ աշունս տաք լինի՝
Հավաքեմ բերքս…

✧ ✧ ✧

Երբ ծնվել եմ այս աշխարհում,
Մասիսը տեսել եմ գերի:
Այն փրկելու հնար չունեմ,
Ուստի թոռս ինձ կների:
Սակայն ես հույսս չեմ կտրում,
Իղձերս չեն մնա գերի,
Քանզի չարը միշտ պարտվել է.
Դա է հիմքը իմ հույսերի:
Սուրբ սարս գերի չի մնա,
Ծոռնեծոռս հետ կբերի:

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Գուշակում էր գնչուհին,
Ձեռքս առած ափի մեջ,
Մատը ափիս գծերով
Միշտ տանում էր վեր ու վար,
Մերթ նայում էր աչքերիս,
Ապա խոսում էր անվերջ,
Փայլուն բախտ ու գալիք էր
Նա խոստանում ինձ համար:

Նա պնդում էր՝ իբր ես
Լավ աստղի տակ եմ ծնվել,
Եվ այնքան լուրջ էր խոսում՝
Ուրիշը կհավատար,
Բայց ես չէի հավատում,
Կոպեկներ էի տվել,
Այդքան չնչին վճարով
Ո՞վ նման մեծ բախտ կտար…

✧ ✧ ✧

Փառաբանեց գինու գավը —
Իմաստուն էր Խայամը,
Մոռացնում է գինին ցավը —
Իմաստուն էր Խայամը,
Ժամանակին, երբ մեր կավից
Մարդիկ գինու գավ շինեն,
Չեն էլ հարցնի՝ ո՞ւմն էր կավը —
Իմաստուն էր Խայամը:

Մենք չգիտենք՝ այս աշխարհում
Ինչ է պահված մեզ համար՝
Փառքի դափնի՞, չար անարգա՞նք,
Թե՞ վայելքի օրեր վառ:
Կյանքի ծովում, որքան էլ մենք
Լինենք զգույշ ու համառ,
Բախտի հողմն է քշում նավը —
Իմաստուն էր Խայամը:

Սակայն բախտը միշտ նրան է
Լավ ապագա խոստանում,
Ով որ բռնած բախտի ղեկը
Խելքով առաջ է տանում.
Հավերժի փառքը նրանն է,
Ով բարի գործ է անում.
Անկայուն է փուչ համբավը —
Իմաստուն էր Խայամը:

Այն աշխարհի լույս–դրախտից
Դեռ չի հասել մեզ մի լուր,
Այս աշխարհի դրախտներն էլ
Միշտ եղել են սուտ ու զուր,
Կյանք կոչվածը սա է, որ կա.
Հե՜յ մատուցող, գինի տուր.
Չկա ոչինչ գինուց լավը —
Իմաստուն էր Խայամը…

ԵՐԱԾՏ

Այս ի՞նչ ամառ է,
Խեղդում է տոթը
Եվ մեղկություն է
Ներարկում մարդուն,
Մահվան թմբիր է
Տարածում օդը,
Լոկ սողուններն են
Վխտում զվարթուն:

Ո՞ւր է չքացել
Հզոր շանթերի
Խավարահալած
Հրեղեն բոցը,
Եվ անձրևածին
Մթար ամպերի
Թմբիր փարատող
Գոռ դղրդոցը:
Չէ՛, սա ամառ չէ,
Թե այսպես գնա,
Ամեն ինչ կայրի,
Կխանձի տապը,
Հնձանը աշնան
Դատարկ կմնա,
Եթե ուշանա
Տեղատարափը…

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Մեղսոտ աշխարհից «փախչում էիր» դու՝
Ատելով կամքը ստոր ամբոխի,
Անիծում էիր ծնունդը մարդու,
Որի կրքերը ակունք են ոխի:

Այն դաժան ժամին, երբ հորձանք տալով,
Ամբոխի հոգում մութ կիրքն էր եռում,
Վսեմ հանճարիդ ձայնին անսալով՝
Դու «փախչում էիր» դեպի լույս հեռուն:

Իմաստակներին բան ու գործ չկար,
Բամբասում էին քո բռնած ուղին,
Եվ քրքջում էր ամբոխը տկար՝
Փառք մատուցելով իր բութ ուղեղին:

Բայց կույր ամբոխի քրքիջի ներքո
Դու ուղիդ անցար հպարտ ու համառ,
Եվ լույս խոհերի քարավանը քո
Վեհ ճամփորդ դարձավ հավերժի համար…

ՄԵՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ

(Ակրոստիքոս նվիրված Մաշտոցի 1600–ամյակին)

Արևապաշտ ու խոհուն նախնիները մեր արի
Բագինների բոցերում արարեցին մեր հոգին,
Գոռ կռիվներ մղեցին հորդաների դեմ վայրի՝
Դարբնելով մեր լեզուն՝ որպես մտքի վառ բագին:

Եղեռններով արնաներկ հաջորդեց դարը դարին,
Ջոհ էր դառնում ազգը մեր որպես մի սուրբ նահատակ,
Էլ չէր կարող դիմանալ անհավասար պայքարին,
Ընկել էր նա մեծաթիվ ոսոխների ոտքի տակ:

Թաթը վանդալ ոսոխի չէր դադարում այդ ժամին
Ժողովրդի բերանից պոկել լեզուն մեր վսեմ,
Իր վայրենի մոլուցքով կուզեր անարգ թշնամին
Լիահնչյուն մեր լեզուն ձուլել լեզվին իր նսեմ:

Խորտակվում էր ու կորչում դյուցազնական գործը մեր,
Ծունկ էր չոքել կիսամեռ Հայաստանը ուժասպառ.
Կկորչեինք մենք հավետ, թե այդ պահին չփայլեր
Հնչյունների մեսրոպյան այբուբենը ոսկետառ:

Ձեռքով ու մեծ տքնությամբ վանքերի նեղ խուցերում
Ղեյրաթաշատ ու տոկուն մեր պապերը բազմափորձ,
Ճգնավորի կյանք մտած, ծաղկում էին ու գրում
Մեր արարման սխրանքի պատմությունը քաջագործ:

Յոթնապատիկ մոլեգնեց մեր թշնամին դիվահույս,
Նախճիր նյութեց ու ոճիր, մահ տարածեց ամենուր,

Շեկ խարույկի բոցերում այրեց գրքերը մեր լույս,
Որ այդպիսով կարենար եղծել լեզուն մեր մաքուր:

Չվիատվեց կամքը մեր՝ ընդդեմ չարին ու վատին.
Պատմությունը մեր ըմբոստ, պապերը մեր քաջարի
Ջանք ու ճիգով գրեցին սեգ ժայռերի ճակատին,
Ռազմի շեփոր հնչեցրին, ելան ահեղ պայքարի…

Սուր ու վահան բախելով՝ բյուր սերունդներ մահացան,
Վեհ կռիվներ մղեցին գալիք բազում սերունդներ,
Տարիք անցան ու դարեր, երկրից ազգեր չքացան,
Բոպե չեղավ մի դժխեմ, որ ծունկի գար ոգին մեր…

Ցրվեց հայը հալածված՝ պանդխտության ճամփեքով,
Ուրիշ հողում տուն շինեց, օտար ու խորթ երկնի տակ,
Փյունիկի պես, սակայն, նա հարյավ նորից վեհ հոգով,
Քանզի ուներ այբուբեն՝ իմաստալից ու հստակ:

Եվ թեև մեր ճոխ երկրից մեզ թողել են մի բուռ հող,
Օծված է մեր սուրբ արյամբ, հավերժ պիտի ապրի նա.
Ֆոսֆորաշող մեր լուսե այբուբենը հավերժող
Անմահ ոգին է նրա — հար կենսատու կմնա…

✧ ✧ ✧

Հոբի տառապանք
Տվեցիր ինձ, Տե՛ր,
Եվ ես այն տարա
Առանց բողոքի,
Սակայն չիմացա՝
Իմ մեղքը ի՞նչ էր,
Որ ահի մեջ ես
Պահում իմ հոգին:

Ի տարբերություն
Այլ էակների՝
Դու բանական լույս
Տվեցիր մարդուն,
Եվ, որ իր գլխին
Փորձանք չբերի,
Դու պատվիրեցիր,
Որ մնա արքուն:
Թե մարդն ինչքան է
Արքուն, չգիտեմ,
Բայց երբ տեսնում եմ՝
Նա ինչ է անում,
Ի՞նչ զենք է կռում
Մարդը հենց իր դեմ,
Տե՛ր, ինձ հավատա՛,
Քունս չի տանում…

✧ ✧ ✧

Իմաստո՛ւն, ոչինչ չես կարող անել,
Իմաստակին են այժմ տեղ տալիս,
Բայց ճոռոմ խոսքեր չեմ կարող տանել,
Այնքան եմ լսել՝ զզվանքս է գալիս:

Այո՛, չեմ սիրում սին խոսքերը մութ,
Որոնք մեր մտքին չեն տալիս թևեր,
Պոետի խոսքը պիտի լինի գյուտ,
Որ մարդուն առած՝ տանի դեպի վեր:

Կգերադասեմ ուրիշ գործ անել,
Ջրվոր կդառնամ հայրենի հանդում,
Օ՜, ես չեմ ուզում ճոռոմաբանել,
Չէ՞ որ սին խոսքը աշխարհ է քանդում…

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ

Հպարտ եմ շատ, որ հայ եմ ես, Սուրբ Մասիս սար էլ ո՞վ ունի,
Մասիսի պես անբիծ ու վեհ, հավատ արդար էլ ո՞վ ունի,
Աշխարհում կան բազմատեսակ ազգ ու ցեղեր՝ փոքրիկ ու մեծ,
Ոսկեղենիկ մեսրոպատառ գիր ու բարբառ էլ ո՞վ ունի:

Հնուց ի վեր հայն աշխատող, բանիմաց ու կիրթ է եղել,
Թեև նրան անթիվ դարեր բիրտ ցեղերը շատ են նեղել,
Բայց մարդկային պատմության մեջ նա սեփական հետք է թողել,
Խորենացու նման խոհուն Քերթողահայր էլ ո՞վ ունի:

Հայն ի ծնե հող է պաշտել, աղոթել է արդար հացին,
Նա իր օրում աչք չի դրել ուրիշների վաստակածին,
Պատահմունք չէր, որ հայ ծնվեց աստվածախոս Նարեկացին,
Նրա նման ազնիվ հոգի ու խիղճ արդար էլ ո՞վ ունի:

Մեծ էր ու լայն երկիրն Հայոց, արգավանդ էր ու բարեբեր,
Ոսոխները խլեցին այն, հային թողին ժայռ ու քարեր,
Բայց չընկճվեց հայի ոգին, նա կառուցեց դար ու դարեր,
Ամենուրեք շքեղաշուք վանք ու տաճար էլ ո՞վ ունի:

Բազում դարեր շատ ցեղեր են աշխարհ եկել ու գնացել,
Հողագնդում շատ շատերից հետք ու հուշ էլ չի մնացել,
Սակայն հայը սրբագործված գերեզման է միշտ ունեցել,
Երկրի վրա մեսրոպագիր խաչ ու խաչքար էլ ո՞վ ունի:

Հայի միտքը արարող է, այն գործում է անդուլ, անվերջ,
Նրա համար անկարելի չկա մի բան աշխարհի մեջ,
Նա կերտող է, գիտնական է, երաժիշտ է, պոետ է պերճ…
Ամեն բանում՝ հռչակավոր, անթիվ հանճար էլ ո՞վ ունի:

Հանուն լավի մարդկությունը պայքարել է հնուց ի վեր,
Եվ մարդկային այդ պայքարը ընդունել է բազում ձևեր,
Բայց պայքարող բյուր մարդկանցից նահատակն է բոլորից վեր,
Այս աշխարհում քաջ Վարդան ու Սուրբ Ավարայր էլ ո՞վ ունի:

Ադամորդին, աշխարհ գալով, կյանքին տիրեց հուր ու սրով,
Աստված նրան սեր պարգևեց, որ նա կյանքը կերտեր սիրով,
Հայն այստեղ էլ առաջ անցավ, ողջակիզվեց սիրով, հրով,
Սայաթ–Նովու պես սեր պաշտող խենթ սիրահար էլ ո՞վ ունի:

Խոսքը բացվեց սիրո մասին, գովեմ և իմ սերը անմար,
Թե պետք լինի, կյանքս կտամ այդ պաշտելի սիրո համար,
Հայրենիքի սերն է դա սուրբ, փառաբանենք սերը այդ վառ,
Հայրենիքի սիրով օծված ազնիվ քնար էլ ո՞վ ունի…

✧ ✧ ✧

Վաթսուն տարիս կլրանա շուտով, ավա՜ղ,
Բայց վաթսուն ժամ ես չեմ ապրել մարդավարի,
Ծնված օրից զգացել եմ ապրելու վախ,
Ապա նողկանք՝ հանդեպ ապրած իմ կեղծ դարի:

Բնությունը տվել էր ինձ երգելու ձիրք,
Ես բնության այդ շնորհից դժգոհ չէի
Ու ես կյանքում չձգտեցի ունենալ դիրք,
Քանզի վեհ էր իմ կոչումը՝ երգիչ էի:

Սակայն այլ էր դարիս ոգին, ու շունչը՝ այլ,
Եղբայրության կոչ էր անում մարդը մարդուն,
Բայց առերես, քանզի թաքուն, նա որպես գայլ,
Հոշոտում էր իր նմանին՝ քուն թե արթուն:

Եվ վա՜յ նրան, ով դիրք չուներ ու չուներ գահ,
Նա կորած էր ստաղավան մեր աշխարհում,
Հաղթում էր նա, ով ստոր էր, չար ու ագահ,
Ամենուրեք կուլ էր տալիս չարը բարուն:

Ամենուրեք սուտն էր իշխում, ստի դար էր,
Ստում էին մեծ ու փոքր, տեր թե ծառա,
Ես գիտեի, որ կորած էր, ով արդար էր,
Բայց և այնպես ես իմ ձեռքը քնար առա:

Թեև շուտով կլրանա վաթսուն տարիս,
Ու ես դարձյալ տանջանքով եմ վաստակում հաց,
Բայց դժգոհ չեմ ճշմարտախոս իմ քնարից,
Չի որպես մարդ՝ ես ապրում եմ ճակատս բաց…

27.11.1988 թ., Երևան

✧ ✧ ✧

Վերադարձա բանակից տուն,
Լուրը տարան մորս,
Նա կորցրել էր կռվի դաշտում
Ինձնից մեծ եղբորս:

Վազում էր նա շնչակտուր,
Դեպի ինձ էր գալիս,
Վզովս ընկավ, գրկեց ամուր.
— Թողեք՝ տեսնեմ բալիս:

Ինձ գուրգուրեց ու հեկեկաց.
— Ես քեզ տեսա, ի՛մ գառ,
Տե՛ր, փառքդ շատ, որդիս եկավ,
Հիմա իմ հոգին առ…

Արցունքն աչքից հողին կաթեց
Եվ փոշու մեջ շողաց.
Ու այդ պահին ինձ թվաց, թե…
Հողագունդը դողաց:

Օ՜, մայրական արցո՛ւնք բարի,
Դու ուժ՝ հզոր, արդար,
Ռազմատենչ մեր այս դարի
Մոլուցքին տո՛ւր դադար…

ՍՈՆԵՏ ՊԱՆԴՈՐԱՅԻՆ

Օ՜, Պանդո՛րա, դու հորինված չքնաղ կին,
Էությունդ մերկացված է մինչև վերջ,
Էլ չես կարող դու գայթակղել ոչ մեկին
Կեղծ հմայքով ու խոսքերով սնամեջ:

Լոկ ոսկեհուռ հանդերձանքով քո հագի
Դու գերեցիր մարդկանց հոգին՝ պարզ ու պերճ,
Բայց ցոփությամբ դու լլկեցիր ամենքին,
Եվ սրտերից անէացան սեր ու տենչ:

Տեսքդ շքեղ, բայց տգեղ է քո հոգին,
Ուստի շողոմ թովչանքներդ շուտ անցան,
Էլ քո տեսքով դու չես խաբի ոչ մեկին.

Դու բերեցիր հետդ բազում վիշտ ու ցավ,
Ադամորդին չի հավատա քեզ կրկին,
Օ՜, Պանդորա, դու չարագործ շվայտ կին…

ՍՈՆԵՏ

Կույր բախտը դարձյալ չեղավ մեզ սատար.
Ժամը դաժան էր, և պահը՝ պատիր,
Ձեռնոց էր նետել մեր արդար դատին
Եղեռններով լի ժամանակը չար:

Գուցե եղել է ավելի վատթար
Ժամ ու ժամանակ՝ չար ու տմարդի,
Բայց միշտ հաղթել է կամքը ճշմարտի,
Եվ չքացել է ուժը անարդար:

Ու միշտ այն միտքն է ոգևորում ինձ,
Որ կհավերժենք մենք արդար գործով,
Որը ծնվում է մեր վեհ հավատից,

Քանզի հայտնի է դարերի փորձով,
Որ ամեն մի գործ՝ լավի կամ վատի,
Դրսևորումն է նրա հավատի…

✧ ✧ ✧

Մայր բնությունը ինձ ի՞նչ է տվել,
Դուք կզարմանաք, թե փորձեմ թվել.

Նա տվել է ինձ մի շատ քնքուշ սիրտ,
Երբ դեռ աշխարհը անգութ է ու բիրտ,
Որ անվերջ կրեմ վիշտ ու տառապանք
Եվ հանգիստ խղճով դրան կոչեմ՝ կյանք:

Հոգուս մեջ ազնիվ խոհեր է դրել
Եվ ստիպում է նուրբ երգեր գրել,
Իբրև թե դրանք սրտեր են հուզում,
Մինչդեռ շատերը լսել չեն ուզում…

Գոյության կռվում մարդիկ ժամ առ ժամ
Երկիրն են պատում զենքերով դաժան,
Որոնց հաշիվը վաղուց է կորել,
Իսկ նա խոհերս է լույսով տոգորել.
Թե՝ լուսավորի՛ր ճակատը մարդու,
Քանզի քո պարտքն է,
Բանաստեղծ ես դու:

Թեև լավ գիտի բնությունը մայր,
Որ պոետները այդ բանի համար
Միշտ էլ քավության նոխազ են դառել…
Չէ՛, բնությունը ինձ ձեռ է առել…

ՏԵՆՉԱՆՔ

Ա՜խ, երանի թե ամեն գարունքին
Ծաղկունքի նման ես աշխարհ գայի,
Արևի լույսով լցվեր իմ հոգին,
Հմայքն աստղերի նորից զգայի:

Գերվեի թռվիչ մեխակի բույրով,
Հեզ մանուշակը թող ինձ սեր բերեր,
Վառվեի վարդի այրող համբույրով,
Կամ այլ անծանոթ ծաղիկ ինձ գերեր…

Ինչ կերպարանք էլ առներ իմ հոգին,
Դրախտ կլիներ կյանքը ինձ համար,
Միայն թե վերին կամքով անմեկին
Սերը իմ սրտում մնար միշտ անմար…

ԱՍՔԵՐԻ ԱՍՔԸ

Բնությունն է մեր ստնտուն,
Նա է մարդուն պարգևում կյանք,
Բայց նա ոչինչ չի տա մարդուն,
Թե վերջինս չթափի ջանք:

Եվ որպեսզի ապրի, կենա,
Մարդն անընդհատ պիտի բանի,
Պիտի անդուլ աշխատի նա,
Որ գոյությունն իր պահպանի:

Աշխատելու փորձից է հար
Մարդն ապրելու դասեր առել,
Ուղի հարթել կյանքի համար
Եվ այն հավերժ առաջ տարել:

Նա դասերն այդ ասքեր արած՝
Փոխանցել է սերունդներին,
Որ հին մտքի ջահը վառած
Փարոս դառնա նոր մտքերին:

Որքան ասքեր աշխարհում կան՝
Արժեն հավերժ դրվատանքի,
Քանզի նրանք ամեն անգամ
Նոր եռանդ են տալիս կյանքին…

Ասքերի ասքն հասել է մեզ
Նախնիներից մեր ալեզարդ,
Այն երկու բառ է պարզապես.
— Աշխատանքով է մարդը մարդ…

ՊԱՏԳԱՄ

Եթե ուզում ես ցույց տալ ամենքին
Քո հայրենիքի աննկուն ոգին՝
Որքան առնական, նույնքան երազուն,
Աշխարհին պարզի՛ր քո Հայոց լեզուն:

Եթե ուզում ես հաղթել ոսոխին
Ու սատար դառնալ հայրենի հողին,
Սասնա Դավթի պես՝ վեհ ու դյուցազուն,
Անաղա՛ղտ պահիր քո Հայոց լեզուն:

Աշխարհում չկա լեզվից հզոր զենք,
Իսկ մենք այդ զենքի փառահեղն ունենք՝
Շնորհիվ նախնյաց մեր Արևազուն,
Պաշտի՛ր անառիկ քո Հայոց լեզուն:

✧ ✧ ✧

Երազիս մեջ մի անգամ ես
Հարց տվեցի Արարատին.
— Ինչպե՞ս եղավ, որ գերվեցիր
Վայրենամիտ անհավատին.
Ո՛վ իմ նախնյաց հավատի սար
Եվ պապերիս սո՛ւրբ օրորան,
Դու մինչև ե՞րբ այդպես անկար
Պիտի գերի մնաս նրան:

Արարատը խոլ դղրդաց,
Դեմքը պատեց ամպ ու մուժով.
— Որդի՛ս,— ասաց,— պիղծ վայրենին
Ինձ գրավեց զենքի ուժով,
Որից սաստիկ խորշում էին
Քո պապերը խաղաղասեր,
Թեև նրանք կարող էին
Շատերին տալ կռվի դասեր:

Քո պապերը հնուց ի վեր
Պաշտում էին գիրք ու գութան,
Ստեղծարար աշխատանքն էր
Հիմքը հայոց վեհ գոյության,
Սակայն չար էր ժամանակը,
Վայրենին էր մեծաքանակ,
Աճում էր նա մորեխի պես՝
Ունենալով պիղծ դավանանք,
Եվ քանի որ չէր աշխատում,
Թալանում էր նա աջ ու ձախ,
Դեմ կանգնողին հոշոտում էր՝
Տարածելով սարսափ ու վախ:

Բազում դարեր քո պապերը
Խաժամուժին ընդդիմացան,
Բայց փոքր էին նրանք թվով,
Գորշ հեղեղին չդիմացան,
Մորթվում էին գիրք գրելիս,
Պատ շարելիս կամ ակոսում.
Արդարների սուրբ արյունը
Գարնան գետի պես էր հոսում:
Այդ պատճառով քո հայրենի
Շեն երկիրը ամայացավ,
Եվ այդպիսով պիղծ վայրենին
Ինձ էլ գերել կարողացավ:
Բայց մի՛ տխրիր, կազատվեմ ես
Այս տարաբախտ գերությունից,
Եթե դու էլ ինձ չփրկես,
Որդիդ, թոռդ կփրկեն ինձ:

Չէ՞ որ մի օր հողագնդից
Կչքանա բիրտ ուժը չար,
Իսկ գալիքը միշտ նրանն է,
Ով որ ունի միտք ու հանճար…

ՓՉԵՔ ԶՈՒՌՆԱՆ

Փչե՛ք զուռնան —
Այս սրտակեր նվագները
Բավ է հնչեն.
Այնպես փչեք,
Որ տների
Պատ ու առիքը ողողանջեն:

Փչե՛ք զուռնան,
Որ պարելիս
Մեջքս պահեմ ձիգ ու շիտակ,
Ես չեմ կարող
Ծամածռվել
Վայրաբարո աղմուկի տակ:

Զուռնան փչե՛ք —
Քանի դեռ մենք
Չենք խլացել ու համրացել,
Փչե՛ք թափով,
Բռնե՛ք իրար,
Ես շուրջպարի տեղ եմ բացել:

Փչե՛ք զուռնան —
Ես ուզում եմ
Մեր պապերի նման պարել,
Նրանք պարը
Սուրբ ծեսի պես
Հանդիսավոր են կատարել:

Մեր պապերը
Միշտ պարել են
Գլուխը վեր, կուրծքը՝ պրկած,
Շուրջպարի մեջ
Ասպետորեն
Սիրած կնոջ մեջքը գրկած:

Եվ պարերով
Սեր են երգել,
Հարգ մատուցել վեհ տքնության,
Որ սրբանա
Հող հայրենին,
Ու պերճ մնա պատիվը տան:

Ու քանի դեռ
Ոչ մի աղմուկ
Ազնիվ հոգիս չի խաթարել,
Փչե՛ք զուռնան —
Ես ուզում եմ
Իմ պապերի նման պարել…

ԳԱՋԵԼ ԶԱՐԹՈՆՔԻ

Շնկշնկում է հողմը հարավ — գարուն է, ջա՜ն,
Բնությունը նորից հարյավ — գարուն է, ջա՜ն:

Ջահել արփին հողագնդին ջերմ համբուրեց,
Հողի սիրտը սիրուց վառավ — գարուն է, ջա՜ն:

Մով երկինքը խանդից ամպեց ու անձրևեց,
Սեր է ըմպում հողը ծարավ — գարուն է, ջա՜ն:

Հողի գրկում խլրտացին արմատ ու ծիլ,
Հողը նորից ծոցվոր դառավ — գարուն է, ջա՜ն:

Մայր բնության զարթոնքի հետ մանուկ դառած՝
Սիրտս էլի թևեր առավ — գարուն է, ջա՜ն:

Թևին տալով, խենթանալով՝ սիրտս դարձյալ
Ինձ հեքիաթի աշխարհ տարավ — գարուն է, ջա՜ն…

ՀՈՐԴՈՐ

Մռայլվել է սիրտս այսօր
Գարնան թխպոտ ամպի պես,
Գուցե գարո՞ւնն է մեղավոր…
— Ի՞նչ է եղել, սի՛րտ իմ, քեզ…

Այս աշխարհի չարն ու բարին
Հո մենակ քեզ չի՞ տրված.
Գիտցի՛ր, որ կարգն այս աշխարհի
Լոկ քեզ համար չի գրված:

Անհո՛գ պահիր քեզ աշխարհում,
Մեր կյանքն այս է, ինչ որ կա,
Տե՛ս, եկել է նորից գարուն,
Քեզ գարնան հետ լա՛վ զգա…

Անմնացորդ տրվի՛ր կյանքին,
Ինչպես մայր հողն է անում,
Ապավինի՛ր դու տքնանքին,
Ջանքն է մեզ բախտ խոստանում…

ՄԱՂԹԱՆՔ ԱՄԱՆՈՐԻՆ

Դու բարով եկար, անգի՛ն Ամանոր,
Մեր դռները բաց՝ քեզ ենք սպասում,
Եկ, աշխատանքի հրաշքով մի նոր
Պտղավորի՛ր մեր ջանքերը բազում:

Քեզ հետ կապել ենք երջանիկ հույսեր,
Արի՛, աշխարհին բե՛ր խաղաղություն,
Մարդկությանը բե՛ր երազանք ու սեր,
Խինդո՛վ համակիր ամեն սիրտ ու տուն:

Արի՛, երկիրը բարությա՛մբ լցրու,
Բարիք արարող քրտինքն արա ծով,
Արդարությունը հզորացրո՛ւ դու
Արդար վաստակած սուրբ աղ ու հացով:

Եկ, չար ուժերի կամքին կապա՛նք դիր,
Զրկի՛ր զինվելու խելահեղ թափից
Եվ ահաբեկված աշխարհն ազատի՛ր
Աշխարհակործան զենքի սարսափից:

Արի՛, Ամանո՛ր, քո գալը բարի,
Արի՛, թեկուզ մեր հույսերի կեսով,
Արի՛, փարատի՛ր խռովքը դարի
Զինաթափումի ծես ու հանդեսով…

✧ ✧ ✧

Հին Արաբիայում շատերը կային,
Որոնք ունեին ունեցվածք անբան,
Սակայն նրանցից լոկ Հաթամ Թային
Վաստակեց պատիվ, անուն ու համբավ.

Քանզի նա հարուստ իր ունեցվածքից
Խեղճ ու տկարին օգնում էր հացով.
— Ո՞վ է,— ասում էր,— բան տարել կյանքից,
Մարդը մարդ է լոկ կյանքին տվածով:

Հոգիդ լո՛ւյս դառնա, ո՛վ բարի Հաթամ,
Ուրիշ էին քո ժամանակները,
Ես տկարներին ինչպե՞ս բաժին տամ,
Այսօր նրանք են աշխարհի տերը…

✧ ✧ ✧

Ինչքան էլ լավ լինի՝ ես ձմեռ չեմ սիրում,
Քանզի ես ապրել եմ մահաշունչ չորս ձմեռ.
Նրանք միշտ ապրում են իմ այրող հուշերում,
Որոնցից տանջահար տնքում է սիրտս դեռ:

Իմ տխուր մանկության օրերում ցրտաշունչ
Պատերազմը բերեց ձմեռներ սովալլուկ,
Որոնց մեր ուսերին մենք տարանք անմռունչ,
Մենք՝ փոքրիկ մանուկներ՝ թերսնված ու դալուկ:

Ձմեռներն այդ դժնի մեր մատաղ սրտերին
Ցրտի վախ բերեցին, ցրտի վիշտ, ցրտի ցավ,
Թեև մենք հրաշքով դիմացանք ցրտերին,
Բայց մրսած մեր հոգուց ցրտի վախը չանցավ:

Եվ ահա թե ինչու ամեն մի նոր ձմեռ
Մի ճնշող սառնությամբ իմ սիրտն է պարուրում,
Թվում է, թե հոգուս նստում է ծանր բեռ,
Ինչքան էլ լավ լինի՝ ես ձմեռ չեմ սիրում…

✧ ✧ ✧

Հուզվում եմ հիմա ամեն բանից,
Փխրուն է դարձել սիրտս այնքան,
Որ էլ չեմ կարող կաշկանդել ինձ,
Երբ որ տեսնում եմ անարդար բան:

Մուլտֆիլմում գայլ է, գիտեմ հաստատ,
Սակայն ողբում է նա էկրանում,
Քանզի նրա հետ վարվել են վատ,
Սիրտս լցվում է, չեմ դիմանում:

Զարմանալի է նաև այն, որ
Շատ է հուզում ինձ արարքն արդար.
…Ահա տանջում են մեկին անզոր,
Մի ջահել նրան դարձավ սատար…

Սա էլ դրվագ է մի կինոյից,
Միտքը ծանոթ է՝ հեքիաթ է հին,
Սակայն դա նույնպես հուզում է ինձ,
Քանզի այն գովք է՝ ձոնված գութին:

Երբ միտք եմ անում, չեմ զարմանում.
Չէ՞ որ դա իրոք բանական է,
Երբ այդ պահին ես լավ հասկանում,
Որ իմ հուզվելու պատճառն է այն:

✧ ✧ ✧

Մեր նախնիները իմաստուն էին,
Հողագործ էին և իմաստասեր,
Աղոթում էին նրանք մայր հողին,
Ապա մայր հողից ընդունում դասեր:

«Քաջերի սահմանը զենքն է յուրյանց»՝
Նրանք այս բանը գիտեին փորձով,
Բայց զենքը երբեք չէր հուզում նրանց.
Զբաղված էին նրանք այլ գործով.

Կառուցում էին վանքեր ու տաճար,
Գիր էին սիրում ու գրում գրքեր,
Բերդի փոխարեն ստեղծում կաճառ,
Հորինում էին ոգեղեն երգեր:

Եվ մեր երկիրը մաշվեց, փոքրացավ,
Այն գջլում էին, ով որ ուներ զենք,
Բայց գջլողները կորան, հուշ դարձան,
Սակայն կերտելով՝ դեռ ապրում ենք մենք:

Սխրագործ էին պապերը մեր հին,
Ընթանում էին իմաստուն հունով,
Անաղարտ արյուն մեզ կտակեցին,
Որ մենք հավերժենք այդ վեհ արյունով…

✧ ✧ ✧

Երբ ես ծնվեցի, մայր բնությունը
Ինձ թևեր տվեց ճախրանքի համար,
Արևն ինձ տվեց իր խնդությունը,
Հողն՝ իր արարման զորությունն համառ:

Այժմ ես ունեմ թևեր ճախրանքի,
Զորություն ունեմ ու կիրք արարման,
Թեև անցել է մեծ մասն իմ կյանքի,
Բայց սավառնում եմ դեռ արծվի նման:

Դաժան հողմեր են իմ գլխին շաչել,
Ես հոգ չեմ արել երբեք այդ մասին,
Քանզի ես կյանքը լավ եմ ճանաչել,
Եվ միշտ ձգտել եմ հասնել անհասին:

Անհասի տենչը ինձ պահում է վեր
Կյանքի առօրյա հոգսերից չնչին,
Ես ունեմ հզոր ու ամուր թևեր,
Բարձրից եմ նայում ես ամեն ինչին…

ԻՄ ՍԵՐՈՒՆԴԸ

Պատերազմը աշխարհավեր
Իր հետ բերեց հոգս ու ցավեր,
Ու սերունդն իմ աշխարհ մտավ՝
Ուսած բազում հոգսեր ու ցավ.
Նա իր զոհված հոր փոխարեն
Պիտի լքված արտը վարեր,
Այգի տնկեր, առու բանար,
Փոքրուց մեծի գործն հասկանար,
Սատար դառնար վշտոտ մորը,
Օգներ քրոջն ու եղբորը,
Նրանց պիտի կրթության տար,
Ինքն էլ պիտի գրեր, կարդար
Եվ ջանք թափեր գիշեր ու տիվ,
Որ վաստակեր այրի պատիվ.
Իսկ թե սրտում սեր արթնանար,
Պիտի գործից նախ աչք բանար,
Նախ սերն ուրիշ անվամբ կոչեր
(Դե սերը լուրջ մարդու գործ չէր),
Ու քրթմնջար հոնքի տակից,
Թե պետք է մի լավ լծակից,
Որ նրա հետ դատեն–բանեն,
Կյանքը ուսած՝ առաջ տանեն…
Իմ սերունդը սեր սերմանեց,
Մարդկանց սրտից վիշտը վանեց,
Տառապանքով ինքնամոռաց
Նա վաստակեց անուն ու հաց
Եվ տքնանքով հերոսացավ,
Կյանքից սրբեց հոգսեր ու ցավ,
Սակայն, ավա՜ղ, շուտ ծերացավ…

ՍԵՐԸ

Իսկական սերը սահմաններ չունի,
Ճշմարիտ սերը չունի գոհացում,
Նա կենսաղբյուրն է անմահ անհունի,
Ողջ տիեզերքը սիրով է լեցուն:

Սիրուց են ծնվում ամեն–ամեն բան՝
Հյուլեից մինչև հսկա աստղերը,
Կյանքը սիրով է հավերժ անխափան,
Կյանքի մշտավառ եռանդն է սերը:

Սերը եռանդն է նաև մեր հոգու,
Նա անշեջ հուրն է մարդկային կյանքի,
Սերն է մեր սիրտը պահում հար տոկուն
Եվ մեզ հավիտյան մղում սխրանքի:

Սերն է մեր անձը դարձնում անբասիր,
Միտքը տոգորում ազնիվ խոհերով,
Մեր սիրտը մաքրում կրքերից զազիր,
Կոփում մեր կամքը, տալիս է կորով:

Սի՛րտ իմ, հպարտ եմ, քանզի քո խորքում
Մշտավառ սեր կա բորբ արևի պես,
Ես համոզված եմ, որ տիեզերքում
Դու հավերժորեն պիտի տրոփես…

✧ ✧ ✧

Հետաքրքիր է, այն երկրներում
Ուր չկա ձմեռ
Եվ բուք ու բորան.
Գարունը մարդկանց ի՞նչ խինդ է բերում,
Ի՞նչ կարոտով են
Սպասում նրան…

Ինձ թվում է, թե այն երկրներում
Ուր ձյուն չի գալիս
Ու ձմեռ չկա,
Գարունը մարդկանց շատ էլ չի գերում,
Չեն էլ սպասում,
Թե նա երբ կգա…

ԱՂՈԹՔ՝ ՀՈՂԻՆ

Փառք ու ողջո՛ւյն քեզ, Հողագո՛ւնդ անգին,
Դու մեր գոյության մայրական սուրբ ծոց,
Տիեզերական մտքի վառ բագին,
Բանականության ոսկի օրորոց:

Մենք՝ մարդիկս, քեզ հող ենք անվանում
Եվ հպարտանում՝ որպես հողածին,
Մեզ համար անծիր կապույտ անհունում
Ուրիշ մայր չկա քեզանից բացի:

Մենք քեզ պաշտում ենք, քանզի մայր ես դու,
Դու այն մոգական կավն ես անհունի,
Որից հունցված է ճակատը մարդու,
Որն աստղերից էլ հզոր լույս ունի:

Մարդը քեզնով է դարձել բանաստեղծ,
Հորինել է երգ, բարին դավանել,
Երգով է հոգին պահել միշտ անեղծ
Եվ չար կրքերը իր սրտից վանել:

Ով որ պաշտել է քո պատկերը պերճ,
Դու նրա հոգին այնպես ես դյութել,
Որ սեր է զարթնել նրա սրտի մեջ,
Եվ կյանքում երբեք չարիք չի նյութել:

Դու քո պաշտողին անձնուրաց մոր պես
Միշտ ուժ ես տվել բարությամբ արդար,
Իմ ծնված օրից ես պաշտում եմ քեզ,
Ո՜՝վ բարեգութ մայր, եղի՛ր ինձ սատար…

✧ ✧ ✧

Դու երբեք մարդուն
Մի՛ փորձիր գործով,
Ոչ էլ՝ քաջությամբ
Կամ աղ ու հացով:

Մի՛ փորձիր նրան
Եվ աշխատանքում,
Ո՛չ վայելքի մեջ,
Ո՛չ տառապանքում:

Թե պարզել կուզես
Բնույթը մարդու,
Մեր պապերի պես
Նրան փորձիր դու.

Իշխանություն տուր՝
Փորձի՛ր հավատը,
Իսկույն կերևա
Լավը և վատը:

Քանզի իշխողն է
Իր ուզածն անում
Եվ ցույց տալիս, թե
Ինչ է դավանում…

✧ ✧ ✧

Բաց է հոգիս ամենքի դեմ,
Գաղտնիք չունեմ ես ոչ մեկից,
Ինչ ասում եմ — փորձով գիտեմ,
Դրա համար լավ լսեք ինձ:

Ասե՞մ՝ ինչու այս աշխարհում
Մեկն ուզում է ապրել արդար,
Իսկ մյուսը դեմ է բարուն,
Անազնիվ է ու հոգով չար:

Ինչո՞ւ մեկը դատում է հաց,
Կյանքը ուսած՝ տանում է վեր,
Իսկ մյուսը դարան մտած՝
Նյութում է դավ, ցավ ու ավեր:

Ինչո՞ւ մեկի վաստակը սուրբ
Մեկ ուրիշն է խլում–ուտում,
Ինչո՞ւ մեկը սիրտ ունի նուրբ,
Իսկ մյուսը՝ դաժանություն:

Ինչո՞ւ մեկը պաշտում է հող,
Երջանիկ է աշխատանքով,
Իսկ մյուսը դառնում է գող
Եվ ապրում է գայլի կյանքով:

Ինչո՞ւ մեկի վարքը վսեմ
Դուր չի գալիս մեկ ուրիշին…
Հիմա լսե՛ք, պատճառն ասեմ,
Եվ լսողը թող լա՛վ հիշի.

Մայր բնությունն է մեղավորը
Իմ կարծիքով, այս բոլորի,
Չկասկածե՛ք, բանն այն է, որ
Նա է կյանքը կերտել թերի,

Քանզի մեկին նա տալով կյանք՝
Տվել է և միտք ու հանճար,
Իսկ մյուսին՝ ամուլ մի գանգ
Եվ մի ենգ սիրտ՝ նախանձ ու չար…

✧ ✧ ✧

Օ՜, երանի թե կյանքը լիներ բարդ,
Այն լիներ պայքար
Ու ճակատամարտ.
Ես կդառնայի հասարակ մարտիկ
Եվ կկռվեի հանուն ճշմարտի.
Փույթ չէր, եթե ես ընկնեի մարտում,
Միայն թե կյանքը
Ոգի տար մարդուն…

Բայց, ավա՜ղ, կյանքը այնքան է ճղճիմ,
Այնքան է անզարդ
Ու այնքան չնչին,
Որ մեզ մնում է միմիայն սնվել,
Կարծես լոկ դրա համար ենք ծնվել,
Երկրպագում ենք միայն սնդղին,
Թե այսպես գնա,
Վա՛յ հողագնդին…

✧ ✧ ✧

Շատ դաժան բախտ մեզ վիճակվեց՝
Պատերազմնե՛ր, ավա՛ր, ավե՛ր,
Բայց մեր կամքը ճաք չտվեց —
Մենք անկոտրում բարձրացանք վեր:

Հին դարերի մտքերը հին
Եվ մութ մտքերը մեր դարի
Միահամուռ գրոհ տվին,
Որ կատարվի կամքը չարի:

Որ մարդն ապրի առանց հոգի,
Մոռանա սեր, հավատ ու գութ,
Ճշմարտությունն հողից պոկի
Եվ սերմանի կեղծիք ու սուտ:

Չարը մնա միշտ անհատույց,
Օրենք դառնա կամքը վատի,
Մարդը ծնվի ոչ թե սիրուց,
Այլ գործարքից պիղծ կավատի:

Բայց մենք կամքով ճշմարտակուռ
Տուրք չտվինք կավատ չարին,
Եվ անմռունչ, համառ ու լուռ
Ճգնեցինք, որ ապրի բարին:

Եվ արդ կամքով իմ սերնդի
Նա ապրում է մարդկանց հոգում
Եվ ի փառս հողագնդի՝
Դառնում է հաղթ, դառնում տոկուն:

Թեև խիստ բախտ մեզ վիճակվեց՝
Պատերազմնե՜ր, ավե՜ր, ավա՜ր,
Բայց մեր կամքը պտուղ տվեց,
Նահանջում է միտքը խավար…

ՄԻ ՊՈՎԵՏԻ

Քո երգերում տեսա ծովեր,
Տեսա երկինք արևավառ,
Տեսա լեռներ՝ խոյացած վեր,
Գետեր տեսա, տեսա անտառ:

Տեսա դաշտեր՝ հուռթի ու պերճ,
Վարդեր տեսա, աստղեր անհաս,
Տիեզերքը տեսա անվերջ՝
Արեգակից մինչև ավազ:

Բայց նրանցում չտեսա քեզ՝
Ես չտեսա այնտեղ մարդուն.
Էլ քո ինչի՞ն հավատամ ես,
Ողորմելի՛, երբ չկաս դու…

✧ ✧ ✧

Ասում են, թե
Աստղերի խիտ
Բույլքաշար է Ծիր կաթինը,
Եվ ասում են՝
Դժվար է խիստ
Ճիշտ որոշել նրանց թիվը:

Ասում են, որ
Տիեզերքի
Չնչին մասն է Կաթնծիրը,
Որի հանդեպ
Մի հուլունքի
Չափ էլ չկա մեր երկիրը:

Եվ ասում են՝
Մարդն ուզում է,
Որ տեր դառնա տիեզերքին,
Եվ իրեն էլ
Համոզում է,
Թե հասել է իբր ելքին…

Ես ի՞նչ ասեմ
Մարդու խելքին…

ԸՍՏ ԱՐԺԱՆԿՈՒՅՆ

Ինչ լավ է, որ ես չեմ հավատացել
Փառքիդ ու խոսքիդ՝ կեղծավոր ու սին,
Ինչ լավ է, որ ես ճիշտ եմ հասկացել,
Ճիշտ եմ մտածել միշտ էլ քո մասին:

Կրակ էիր թեժ, և այդ բանը դու
Ընդունեցիր քեզ՝ անմահության փաստ…
Բայց ո՞ր կրակն է դիմացել մարդուն,
Նա միշտ մարում է կրակն անիմաստ:

Մարդը կրակը՝ իբրև սուրբ անթեղ,
Սիրով պահել է միշտ իր հարկի տակ,
Բայց նզովել է հրդեհը ահեղ,
Որը ծնվում է խիստ աննպատակ:

Սկիզբ ու վերջդ արդեն պարզ է ինձ.
Դու քո ծնունդով անթեղ թվացիր,
Բայց հրդեհ էիր, ծնված փոթորկից,
Եվ մարդուն դու շատ վնաս տվեցիր:

Իսկ թե քեզ դիտեմ՝ որպես կենդանի,
Դու հրեշ էիր մարդու դիմակով.
Հազար սրբության դժոխք կտանի
Պիշծ ու ապական մի կեղծիքը քո…

Եվ քեզնից երբեք չեմ վախենում ես,
Քանզի չես խաբի ինձ քո գալիքով,
Դու սերունդ չունես, դու ներքինի ես՝
Արդեն մաշված, կեղծ բեղ ու մորուքով…

1961, Երևան

ՏՐԻՊԼԵՏՆԵՐ

✧ ✧ ✧

Էլ մարդկանց չեմ սիրում —
Զրկվել են երազից,
Ինչ կուզեք՝ ասեք ինձ,
Էլ մարդկանց չեմ սիրում:
Աշխարհն այս սիրուն
Կախել են մի մազից,
Էլ մարդկանց չեմ սիրում —
Զրկվել են երազից…

✧ ✧ ✧

Ճեղքում են ատոմը —
Տագնապ է ու սոսկում,
Էլ ոչ ոք չի հսկում,
Ճեղքում են ատոմը.
Խելագար այդ վազքում
Կմարեն և մոմը,
Ճեղքում են ատոմը —
Տագնապ է ու սոսկում…

✧ ✧ ✧

Խելագար վազքի մեջ
Չեք նայում ձեր շուրջ,
Ցնդում է անուրջը
Խելագար վազքի մեջ:
Ամեն ինչ ունի վերջ —
Կմարի և շունչը.
Խելագար վազքի մեջ
Չեք նայում ձեր շուրջը…

✧ ✧ ✧

Հոգու մեջ ձեր տարտամ
Չկա խինդ, չկա ցավ,
Ամեն ինչ չքացավ
Հոգու մեջ ձեր տարտամ:
Սիրո վարդը փարթամ
Ձեր շնչից չորացավ.
Հոգու մեջ ձեր տարտամ
Չկա խինդ, չկա ցավ:

✧ ✧ ✧

Նյութապաշտ սրտերում
Չի ծաղկի էլ սերը,
Կմարեն լույսերը
Նյութապաշտ սրտերում:
Կսառչեն ցրտերում
Մարդկային հույզերը,
Նյութապաշտ սրտերում
Չի ծաղկի էլ սերը…

✧ ✧ ✧

Արև կա երկնքում,
Կա երկինք կապտաջինջ —
Չեք տեսնում դուք ոչինչ,
Արև կա երկնքում.
Կմտնեք մի օր քուն,
Կկորցնեք ամեն ինչ —
Արև կա երկնքում,
Կա երկինք կապտաջինջ…

✧ ✧ ✧

Կգան նոր սերունդներ,
Կհերքեն ձեր բարքը,
Կծաղրեն ձեր վարքը —
Կգան նոր սերունդներ:
Աշխարհն այս սիրուն էր,
Չիմացաք դուք հարգը.
Կգան նոր սերունդներ,
Կհերքեն ձեր բարքը…

ԷԼԻՅԱԿՆԵՐ

✧ ✧ ✧

Ծեր պարտիզպանին հարցրի մի անգամ,
Թե ծաղիկներից ո՞րն է բուրավետ,
— Ա՜խ,— ասավ,— ծաղկանց բույրերը հանգան
Իմ ջահելության խենթ օրերի հետ…

✧ ✧ ✧

Բախտագուշակ գնչուհին նայեց ձեռքիս ափի մեջ, ասաց.
— Բախտիդ նժույգը հրաշք է իր թափի մեջ,
Սակայն նա քեզ կգետնի, կտրորի ոտքի տակ,
Եթե նրա սլացքը դու չդնես չափի մեջ…

✧ ✧ ✧

Լսի՛ր, որդի՛ս, այս խրատը, որը փորձով գիտեմ ես,
Խիղճ ունեցիր, բայց թույլ մի՛ տուր ուրիշները խղճան քեզ.
Որ քո տունը միշտ ապահով, ու քո դուռը բաց լինի,
Դու վատ մտքով կյանքում երբեք ուրիշի դուռ չթակես…

✧ ✧ ✧

Ես մի անգամ սիրտս բացի սոխակին, ասի.
— Հոգիս Ծիր կաթին է երգերի:
— Ո՛վ մարդ,— ասաց,— տիեզերք է քո հոգին,
Բայց ափսոս, որ դեռ գերի է կրքերի…

✧ ✧ ✧

Մի՛ ծանրացիր աշխարհին, եղի՛ր թեթև, սի՛րտ իմ,
Հրեշտակի պես բարի՝ ունեցիր թև, սի՛րտ իմ,
Իսկ թե բան է, չստացվի, որ հրեշտակ դու դառնաս,
Գոնե ջանք դիր՝ չդառնաս հրեշ ու դև, սի՛րտ իմ…

✧ ✧ ✧

Սի՛րտ իմ, ոչինչ քեզ հոգս ու ցավ մի՛ շինիր.
Արի՝ սիրենք, արի՝ խմենք թունդ գինի,
Ինչ էլ անես՝ կյանքն իր հունով կընթանա,
Քեզ մի՛ տանջիր — ինչ որ լինի, կլինի…

✧ ✧ ✧

Ա՜խ, հայրենի՛ք, դու իմ սերն ես, հավատը,
Քո սիրով է լցված հույսիս գավաթը,
Ինչ էլ լինի, եՆկ մեր սերը վառ պահենք,
Անսեր սրտին է տիրանում կավատը…

✧ ✧ ✧

Ասում են, թե կյանքը միշտ էլ չար է եղել,
Ճշմարտության ուղին միշտ էլ քար է եղել,
Չեմ վախենում, չէ՞ որ կյանքը հարատև է,
Ուրեմն՝ միշտ ելք գտնելու ճար է եղել…

✧ ✧ ✧

Կյանքը շատ է ինձ տրորել, դիմացել եմ տված ցավին,
Դիմացել եմ նույնիսկ մոտիկ ընկերոջս նյութած դավին,
Սակայն մարդկանց մի չար արարք համարյա թե մաշում է ինձ,
Չեմ դիմանում, երբ որ արժվի իրավունք են տալիս հավին…

✧ ✧ ✧

Սուտ է, մեր կյանքում չկա այլ բարի,
Դաժան բարին է միայն իսկական.
Այն դաժան բարին, որն ընդդեմ չարի
Ընդմիշտ գործում է լոկ ակն ընդ ական…

✧ ✧ ✧

Մարդկանց կյանքը աշխատանք է, մաքառում է ու պայքար,
Հողից բարիք չի ստացվի, թե չմաքրեն փուշ ու քար,
Բայց կենարար աշխատանքը վերածվում է տանջանքի,
Երբ բարիքին տեր են դառնում ինչ–որ մարդիկ անքանքար…

✧ ✧ ✧

Մեզ խաչեցին, չարչարեցին թե՛ չոր և թե՛ թացի համար.
Քանի՞ ազնիվ սրտեր կորան միայն անկեղծ լացի համար,
Ո՛վ սերունդներ, մեզ ներեցե՛ք, որ մենք լավ բան քիչ թողեցինք,
Մեր ջանքերը կորչում էին մի պատառ չոր հացի համար:

✧ ✧ ✧

Քանի դեռ դու չես մարդացել, հողածի՛ն,
Չեմ հավատում քո ծիծաղին, քո լացին,
Ախր, ինչպե՞ս ես հավատամ, երբ դու դեռ
Քո արյունն ես խառնում կերած քո հացին…

✧ ✧ ✧

Ա՛զգ իմ, բախտը քո նկատմամբ միշտ եղել է անարդար,
Մեծաքանակ են միշտ եղել ոսոխներդ անկատար,
Եթե ցայսօր քեզ չեն խժռել հորդաները վայրենի,
Այսուհետև քեզ մահ չկա — դու հասել ես մտքի դար…

✧ ✧ ✧

Թե ինձ կանչեն Աստծու ատյան, ես իմ դարին կտամ դատի.
Հավատում եմ արդարության, նա իմ վիշտը կփարատի,
Դարս պիտի պատասխան տա և իր մեղքը պիտի քավի,
Հանուն ինչի՞ է նա փոխել հայրենիքը Արարատի…

✧ ✧ ✧

Ժամանակի ոսկե մատյանը բացի,
Տեսա այնտեղ անուն ուներ ամեն դար,
Եվ մեր դարի դիմացը ես կարդացի
Մրով գրված մի հատիկ բառ՝ անարդար…

✧ ✧ ✧

Հաստատ գիտեմ, թե ինչու է մարդը աշխարհ գալիս լացով,
Տառապալից այս աշխարհը մեղքի ծով է, վշտերի ծով.
Սակայն սիրո օվկիանի դեմ դրանք չնչին կաթիլներ են,
Թե չէ՝ մարդը այս աշխարհից չէր հեռանա լացուկոծով…

✧ ✧ ✧

Հազար անգամ սրտիս ասի՝ ի՞նչ ես տանջում քեզ անդադար,
Ո՞վ է ասել, թե աշխարհի հոգս ու ցավը ուսերիդ տար.
Այսքան տարի տառապեցիր, բայց էլի քեզ խրատ չեղավ,
Դու չե՞ս տեսնում, որ աշխարհը վայելում են սրտերը քար…

✧ ✧ ✧

Զարմանալի, զարմանալի, զարմանալի այս աշխարհը,
Տառապանքով ու տքնանքով, տանջանքով լի այս աշխարհը
Սիրտս մաշեց, կյանքս կերավ, հոգիս հանեց իր հոգսերով,
Ու մնում է դեռ ցանկալի, դեռ սիրելի այս աշխարհը…

✧ ✧ ✧

Այս աշխարհում կան անհամար վայելչության անգին գանձեր,
Իմ ողջ կյանքում գանձի համար ես ոչ մեկին չեմ նախանձել.
Սակայն միշտ էլ երազել եմ անբավ ու մեծ գանձ ունենալ,
Որ կարենամ կյանքն աղարտող օրինազանց չարին սանձել…

✧ ✧ ✧

Ինչ մարդու էլ որ հարցնես, կողմնակից է միայն բարուն,
Բայց չի խորշում ինչքի համար ստախոսել, թափել արյուն.
Չէ՛, քանի դեռ ադամորդին ընչաքաղց է ու ստաբան,
Նրա համար արդարություն չի լինելու այս աշխարհում…

✧ ✧ ✧

Չկա աշխարհում մեզանից «արդար»
Ու «ճշմարտախոս» մեզանից բացի.
Մենք հորն ասում ենք՝ ներքինի ու չար,
Բայց որդուն՝ հզոր, հաղթ ու առնացի…

✧ ✧ ✧

Բնությունը մարդու համար հազար ու մի վարդ է բացել,
Մարդու համար այդ վարդերը կախարդական շաղով թացել,
Բայց բյուր ափսոս, որ դեռ մարդը այս աշխարհի թոհուբոհում,
Տարված մոլի իր կրքերով, վարդի բույրը չի զգացել:

✧ ✧ ✧

Կյանքում ամեն ոք ունի կոչում՝
Բեռնակրից մինչև արքան անպարտ,
Բայց նա է անմահ ու չի կորչում,
Ով իր կոչման մեջ մնում է *մարդ*…

✧ ✧ ✧

Չեմ հավատում, երբ ասում են, որ իբր թե չարք չկա,
Թե որ չկա, հապա ինչո՞ւ այս աշխարհում կարգ չկա,
Չարքը սուտն է, որ գնալով՝ արդեն հրեշ է դառնում,
Մարդի՛կ, նրան գլխատեցե՛ք, հապաղելու հարկ չկա…

✧ ✧ ✧

Փա՛ռք քեզ, Արարի՛չ, որ դու իմ հոգում
Դրել ես այնքան հեքիաթ ու երազ,
Որ մեզ վիճակված այս կյանք–դժոխքում
Իշխող կեղծիքը չի ազդում վրաս…

✧ ✧ ✧

Եթե հանկարծ քավարանում ինձ տան մի հարց,
Թե՝ ինչ դաժան տանջանքներ է կրել կյանքս,
Ես անվարան այնտեղ պիտի պատմեմ նրանց
Իշխող ստին հարմարվելու տառապանքս…

✧ ✧ ✧

Օրորոցից սկսած, լույս–երազի հմայքով,
Հոգուն թռիչք պարգևող աստղերն են ինձ հմայել,
Սակայն տարիք են անցնում, ու ինձ, բախտի չար կամքով,
Չի հաջողվում գեթ մի պահ գոնե դեպի վեր նայել…

✧ ✧ ✧

Կյանքիս ճամփան լուռ ու խաբված եմ գալիս,
Արծիվ–սրտիս թևը կապված եմ գալիս,
Զարմանում եմ՝ չնայած այս ամենին,
Ինչպե՞ս է, որ գոնե սրտանց չեմ լալիս…

✧ ✧ ✧

Մի՛ վշտանա, դու իմ քնքուշ, դու իմ ազնի՛վ սիրտ,
Որ չեն հարգվում այս աշխարհում խոհերդ հարուստ.
Արհամարհի՛ր այս աշխարհի օրենքները բիրտ,
Քչերին է ազնիվ խոհեր շնորհվում վերուստ…

ԷՊԻԳՐԱՄՆԵՐ

✧ ✧ ✧

(Ըստ Բյոռնսի)

Նա մատով երկար ծեծեց ճակատը,
Որպեսզի հիշեր վեպի անունը,
Բայց ինչու ծեծել դուռը կամ պատը,
Երբ ոչ ոք չկա, դատարկ է տունը:

✧ ✧ ✧

Ավանակի հետ վիճում էր հանգիստ
Եվ հպարտ քայլում մեկ՝ առաջ, մեկ՝ ետ,
Իսկ ավանակը դառնացած էր խիստ,
Որ վեճ էր բացել նման մեկի հետ:

✧ ✧ ✧

Մահը հանկարծ նայեց նրա դագաղին
Ու սարսափեց, սահման չկար իր վախին.
Մտածում էր. «Ի՜նչ միջոցներ ձեռնարկեմ,
Որ չտանեմ ինձ մոտ ես այս խարդախին…»:

Տապանագիր

Այստեղ հանգչում է այն մեծ գրողը,
Որ տեսավ մահը իր ողջ գործերի,
Ինքը մեղք չուներ, մուսան էր փողը.
Թող տերը նրա մեղքերը ների…

Տապանագիր

Աստ հանգչի խաղաղ մի հայտնի գործիչ,
Որ չէր հավատում ինքն իր արածին.
Նա այս աշխարհին չտվեց ոչինչ,
Ողորմի տվեք նրա տարածին…

✧ ✧ ✧

Նա մեծ դիրք ուներ, երբ հանդիպեցի,
— Ո՞նց ես,— հարց տվի: Բուքը տնկեց վեր,
Անակնկալից մի պահ շշմեցի,
Իր բուք լինելը նա արդեն գիտեր…

✧ ✧ ✧

Շատ գովեցին մեծ վաստակը հոբելյարի,
Ասացին, որ ընկել է ոգին դարի,
Եվ միաձայն գլուխգործոց համարեցին
Հսկա չափը… նրա կորզած հոնորարի:

✧ ✧ ✧

Առաջ գնալու շատ մեծ «ձիրք» ուներ,
Պետերի համար հնազանդ շուն էր,
Սակայն ոչ մի պետ նրա կծելուց
Ապահովության երաշխիք չուներ…

✧ ✧ ✧

Բնությունը տեսավ նրան, սակայն՝ շատ ուշ
Ու զայրացավ. «Էլ չե՛մ կարող մարդկանց հարգել,
Ես այս մարդուն ծնել էի որպես ապուշ,
Ինչպե՞ս է, որ մարդիկ նրան պետ են կարգել…»:

✧ ✧ ✧

Մեկին գիտեմ՝ կյանքի ծովում լող է տալիս հանգիստ,
Դրա համար ծանոթները նախանձում են, հուզվում,
Ինձ էլ նրանց այդ արարքն է զարմացնում շատ խիստ,
Մարդն ի՞նչ անի, բնատուր է, ո՞ր դատարկն է սուզվում…

✧ ✧ ✧

Ուտում, քնում է հանգիստ, զարթնում է ուտում,
Կյանքի չարին ու բարուն ոչ դեմ է, ոչ՝ կողմ.
Իմ կարծիքով, իզուր են նրան նախատում,
Խեղճը առագաստ չունի, ինչի՞ն է պետք հողմ…

✧ ✧ ✧

Աչառու մի դատավորի
Հոգին դիտմամբ դրախտ տարան,
Սակայն հոգին այդ ստորի
Հառաչում էր. «Ա՜խ, դատարան…»:

✧ ✧ ✧

Քուռակ ժամանակ շատ մեծամիտ էր,
Իր էշ դառնալը նա դեռ չգիտեր,
Բայց երբ մեծացավ ու փալան կրեց,
Դեմքին անընդհատ հիմար ժպիտ էր…

✧ ✧ ✧

Իր խելքով ոչինչ չի կարող անել,
Միշտ ուրիշների խելքով է գործում,
Մի անգամ նրան էշ են անվանել,
Եվ նա համոզված՝ զռալ է փորձում…

✧ ✧ ✧

Շատ էր սիրում փող,
Ուզեց դառնալ գող,
Վախեցավ բռնեն,
Դարձավ ստուգող…

✧ ✧ ✧

Սարսափելի է նա իր ոհմակում,
Ունի տկարին խժռելու քանքար,
Բայց ինքն էլ ահից աչքը չի փակում,
Որ հանկարծ իրեն չկարծեն տկար…

✧ ✧ ✧

Նա իր սիրո էակին նվիրել էր մի ներբող,
Այտերը վարդ էր կոչել, արտասուքը՝ վարդի ցող,
Բայց որպեսզի չտուժեր հանգ ու վանկը ներբողի,
Շուշան շուրթերը նրա անվանել էր քաղցր սոխ…

Տապանագիր

Սա շիրիմն է կաշառակեր այն գռփողի,
Որը բազում չարիք գործեց հանուն փողի,
Անցո՛ղդ, զգույշ, չմոտենաս դու այս շիրմին,
Մահացու է նույնիսկ տեսքը նրա հողի…

Տապանագիր

Աստ խաղաղ հանգչի մի հայտնի տգետ,
Նա իր ողջ կյանքում եղավ միայն պետ,
Թեև քառորդ դար ղեկավար եղավ,
Բայց կյանքը չորս դար մղեց դեպի ետ…

✧ ✧ ✧

Մեկին գիտեմ՝ հրեշ է, հրեշտակ է ձևանում,
Ամենուրեք բացահայտ բարության կոչ է անում,
Սակայն մարդիկ չգիտեն, որ այդ ստոր նախանձը
Կյանքի արտում ծածկաբար լոկ չարիք է սերմանում…

Տապանագիր

Սա է տապանը այն ղեկավարի,
Որը լցնում էր միայն իր տունը,
Նա կոմունիստ էր քառասուն տարի,
Բայց Մարքսից գիտեր միայն… անունը…

✧ ✧ ✧

Երբ առյուծի դիրք ստացավ,
Համբավ ուներ ավանակի,
Սակայն ոչ ոք չզարմացավ.
Դա պահանջն էր ժամանակի…

✧ ✧ ✧

Դեմոկրատիան այդ օրերին այնքան էր լայն,
Որ սոխակին ձայնակցում էր ավանակը,
Եվ առյուծը մկան օգտին տալիս էր ձայն,
Բայց ամոթից կարմրել էր ժամանակը…

✧ ✧ ✧

Մեծ գումար տվեց, դատավոր դարձավ,
Միայն մի դատից տվածն ետ առավ,
Երազում տեսավ՝ դատվողներ չկան,
Հենց նույն գիշերը ինֆարկտից մեռավ…

Տապանագիր

Աստ խաղաղ հանգչի նորեկ մի քանքար,
Գրածի մեջը հանգ ու միտք չկար,
Բայց ինչ գրում էր, տպագրում էր,
Նորը մոդա էր, դեմն առնող չկար…

✧ ✧ ✧

Նրա «տաղանդը» ժառանգական էր,
Հոր բարձր դիրքով ամեն ինչ կաներ,
Լավ է՝ էությամբ նապաստակ էր նա,
Թե չէ աշխարհի հոգին կհաներ…

Էպիգրամ Ֆ–ին

Ո՞վ չէր ճանաչում մեր այս «գրողին»,
Վերջերս նրան հանձնեցին հողին,
Որ տաղանդ չուներ, գիտեին հաստատ,
Չունեցավ նաև գրական վաստակ:
Սակայն որպեսզի գեթ փող վաստակեր,
Կազմում էր արդեն կազմած շատ գրքեր…
Ինչ որ է՝ նա էլ ըստ կարգի թաղվեց,
Հանձնաժողովն էլ շատ լավ զբաղվեց,
Մեծ նիստ գումարեց, ապա միաձայն
Որոշեց նրան դնել հուշարձան՝
Սոսնձի հսկա մի դատարկ տակառ,
Որ հիշատակը հավերժ մնա վառ…

1985 թ.

ՅՈԹԸ ԳՈՎՔ ԲԹՈՒԹՅԱՆ

✧ ✧ ✧

Ինֆարկտ են ծնում կեղծիքն ու սուտը,
Բութն անտեղյակ է՝ ապրում է բութը…

✧ ✧ ✧

Պետի համար դա ուղղակի գյուտ էր,
Նոր տեղակալը իրենից բութ էր…

✧ ✧ ✧

Երբ բթությունը դեմքին «շողում էր»,
Ենթակաների սիրտը դողում էր…

✧ ✧ ✧

Թե բութ ձևանաս քո ղեկավարից,
Ազատ կօգտվես նրա «ավարից»…

✧ ✧ ✧

Ձգտիր ցույց տալ, որ միշտ բութ կմնաս,
Համոզված եղիր՝ առաջ կգնաս…

✧ ✧ ✧

Բութինն է ամբողջ կյանքի վայելքը,
Նրան չի տանջում հոգեմաշ խելքը…

✧ ✧ ✧

Մի՛ վախենա, թե որ բութ ես,
Հացն անտեր է՝ դու էլ կուտես…

ԼՈՒԿՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՍԱՑԱՌՆ ՈՒ ԲԱՐԴԻՆ

Լեռան կատարին
Բուսած մի մացառ
Ձայն տվեց ձորում
Աճած մի բարդու.
— Լսի՛ր, ինչո՞ւ են
Քեզ համարում ծառ,
Երբ հազար անգամ
Ինձնից ցածր ես դու:

— Քեզնից չեմ ցածր,
Ով անգիտակից,—
Հնչեց ներքևից
Բարդու ձայնը հեզ,—
Ես ցածր եմ, ավաղ,
Քո այն լեռ–դիրքից,
Որ բախտի բերմամբ
Վիճակված է քեզ…

ՄԵԾՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

Փոքրիկ փայտե իր վանդակում
Լուռ նստել էր վայրի կատուն,
Մեկ էլ հանկարծ առաջ նայեց,
Տեսավ վագրին ու ծիծաղեց.

— Է՛յ, ցեղակի՛ց, ո՞նց է տեղդ,
Էլ ցասկոտ չես ցնցում բեղդ,
Ողջունում եմ հեզությունդ,
Չի երևում մեծությունդ:

— Ո՛վ մտակույր, հիմա՛ր կատու,—
Պատասխանեց վագրը հատու,—
Իմ պողպատե վանդակն հսկա
Մեծությանս չափն է, որ կա…

ԽՐԱՏ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Նոր թագադրված պատանի արքան
Առաջին անգամ պիտի ճամփորդեր,
Ուզում էր տեսնել՝ կյանքում ինչեր կան,
Որոնց մասին դեռ ինքը չգիտեր…
Ծեր ու բազմափորձ վեզիրն իմաստուն
Ձեռքը դրել էր ոսկեհուռ գահին,
Ինչպես հարազատ հայրը իր որդուն՝
Խրատ էր տալիս անփորձ արքային.
— Ո՛վ իմ տիրակալ, Ձեր ճանապարհին
Թե Ձեզ հարկավոր մի բան ձեռք բերեք,
Իմ խորհուրդն այն է, որ լինեք բարի
Եվ ձեռք բերածի գինը վճարեք:
Նույնիսկ անտառում եթե կտրեք փայտ,
Հատուցե՛ք գինը ձեր կտրած ծառի,
Իմացե՛ք, որ դուք Ձեր վարմունքով այդ
Ընդմիշտ կկանխեք կորուստն անտառի:
— Մի ծառը ի՞նչ է,— զարմացավ արքան,—
Որ ես այն պիտի կտրեմ վճարով,
Չէ՞ որ անտառում անթիվ ծառեր կան,
Անտառը պիտի հատնի՞ մի ծառով:
— Խոսքը մի հատիկ ծառի մասին չէ,—
Ասաց վեզիրը ժպտալով բարի,—
Ուզում եմ, որ Դուք իմանաք՝ ի՞նչ է
Եվ ինչպիսի՞ն է կարգը աշխարհի:
Իմացե՛ք, տե՛ր իմ, թե արքան ձրի
Խարույկի համար կտրի գեթ մի ծառ,
Իր ծառաները կմատնեն հրի,
Կմոխրացնեն անտառը անծայր…

ԱՆՁՈՐ ՊԻՏԱԿԸ

Ինչեր չեն լինում այս արևի տակ.
Անմիտ դեպքերի անթիվ փաստեր կան,
Էշին տվեցին առյուծի պիտակ
Եվ հռչակեցին անտառում արքա:
Նա իսկույն հագավ առյուծի դիմակ,
Ու փորձեց վարվել առյուծավարի,
Ցույց էր տալիս, թե ուտում է դմակ,
Բայց գաղտագողի ուտում էր գարի:

Ամեն ինչի մեջ խաբում էր, կեղծում,
Կեղծ էր պալատի ողջ վերուդիրը,
Նա իր կեղծ բաշը այնպես էր ցնցում,
Որ սարսափում էր ամբողջ երկիրը:
Բայց մի բանի դեմ նա չէր գտնում ճար,
Բախտը չէր բերում այդ բանում միայն,
Երբ նա փորձում էր մռնչալ մի ճառ՝
Իսկույն հնչում էր էշային «ի՜–ա՜»–ն…

✧ ✧ ✧

Առակիս միտքը պարզ է ու շիտակ.
Ով որ ծնվել է ապիկար ու գեշ,
Նրան չեն փոխի տիտղոս ու պիտակ,
Առյուծ չի դառնա կյանքում ոչ մի էշ…

ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ՕՁԸ

Արագիլը
Օձին ասաց.
— Արի՛ դառնանք սաներ–քավոր,
Եվ իրար հետ
Ճարենք մեզ հաց,
Ապրենք ուրախ ու բախտավոր:

— Լողլո՛ղ հիմար,—
Ֆշշաց օձը,—
Բնությունդ շատ լավ գիտեմ,
Թե մոռանամ
Կյանքի փորձը,
Ուրեմն ես բթամիտ եմ:
Քանի դեռ դու
Ինձ ես ուտում,
Ես էլ քեզ եմ խայթում ահից,
Անհնար է,
Որ ես ու դու
Լինենք ընկեր ու սրտակից:

ԲՈՍՏԱՆ ՄԻՐՈՒՔԸ

Տերտերը մի օր երազում տեսավ,
Որ իր միրուքում մի կանաչ բուսավ,
Ու երբ առավոտ նա քնից զարթնեց,
Հրաշք–երազը կնոջը պատմեց:
Կինը երազը դարձրեց իրական
Եվ իսկույն պատմեց դրացու կնկան.
— Իմացել ե՞ս ինչ, խնամի Մարի,
Էս մեր տերտերը էնքան է բարի,
Որ միրուքի մեջ կանաչ է բուսել…
Այդպիսի հրաշք ոչ ոք չէր տեսել:
Դրացու կինն էլ բակից բակ մտավ,
Պատմեց բոլորին՝ ում որտեղ գտավ:
Լսողն էլ խոսքին տվեց մի նոր ձև,
Ավելացրեց նոր թուփ ու տերև…
Ու մինչ տերտերը նախաճաշն արավ,
Գյուղում մորուքը մի բոստան դառավ:

ԳՈՐՏԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

Բախտի չար խաղ էր,
Թե ուներ պատճառ,
Ճահիճը դարձավ
Գիտության կաճառ:
Գորտերին տրվեց գիտական կոչում.
Տառ ճանաչողը գրիչ էր ճոճում:
Ծնվեց գորտերի մի հսկա բանակ,
Որը գրքեր էր գրում անքանակ
Եվ ապացուցում արար աշխարհին,
Թե նրա վերջը կլինի բարին,
Եթե հաջողվի
Կյանքում ամեն ինչ
Խառնել ու շինել
Համասեռ ճահիճ…

ԵՐԲ ԼՈՒՆ Է ԱՐՔԱՆ

Դոկտոր Մոծակը մի մեծ գիրք գրեց,
Ծավալով՝ ուղիղ հարյուր հազար տող,
Եվ իր այդ գրքով նա ազդարարեց,
Թե՝ փիղ է ամեն կնճիթ ունեցող:

Երբ գիրքը տվին
Թագավոր լվին,
Նա թերթեց գիրքը,
Ուղղեց դիրքը,

Վեր ձգեց ճիտը,
Ցցեց կնճիթը,
Ակնոցը դրեց
Ու մակագրեց.

«Հանճարեղ գործ է, կնճիթս վկա,
Սա սերունդներ է դաստիարակելու.
Տալ փղի տիտղոս, ում որ կնճիթ կա…
Հրամայում եմ՝ Մամոնտազն Լու»:

✧ ✧ ✧

Առակիս միտքը խրթին չէ այնքան,
Մոծակը փիղ է, երբ լուն է արքան…

ԱՐՋՆ ՈՒ ՔՈԹՈԹՆԵՐԸ

Բրդոտ արջը բացատում
Լնգլնգում էր դեսուդեն
Եվ ճագերին նախատում,
Որ լավ քայլել չգիտեն.
— Չէ՛, ձեր ձեռքից կվառվեմ,
Մինչև որ դուք խելքի գաք,
Ախր, ես էլ ո՞նց վարվեմ,
Որ քայլելիս չլնգաք:
Խրատել եմ բյուր անգամ,
Խորհուրդ տվել ամեն օր…
Ավագ քոթոթը, սակայն
Այստեղ կտրեց խոսքը մոր.
— Մայրի՛կ, զուր ես այդքան շատ
Քեզ չարչարում շարունակ,
Հազար խորհուրդ ու խրատ
Չարժեն գեթ մի օրինակ,
Փոխանակ դու մեզ այդքան
Խորհուրդ տաս ու խրատես,
Ուղիղ քայլիր մի անգամ
Եվ օրինակ ցույց տուր մեզ…

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԸ ՓՈՂՈՑՈՒՄ

Բյուրոկրատը, զինված ակնոցով,
Հանգիստ ճեմում էր «Նոր կյանք» փողոցով.
Նա լուռ խորհում էր ու քայլում հանդարտ,
Երբ նրա խոհերն ընդհատեց մի մարդ.
— Ներեցե՛ք, ընկե՛ր,
Մարդ եմ անծանոթ,
Քաղաք եմ եկել՝
Բարեկամիս մոտ,
Ապրում է «Նոր կյանք»
Փողոցի վրա,
Խնդրում եմ՝ ցույց տաք
Փողոցը նրա…
Բյուրոկրատը կանգնեց, թույլ հազաց,
Շատ հանդիսավոր ակնոցն առավ ցած,
Ապա լուրջ տոնով պատասխան տվեց.
— Երկու, զրո–յոթ, զրո, զրո–վեց,
Գրի՛ր, համարն է
Իմ հեռախոսի,
Վաղը, անպայման,
Դու ինձ հետ խոսիր,
Ես իսկույն կասեմ
Քեզ հեռախոսով…
Ասավ ու ճեմեց
Հենց նույն փողոցով:

ԳՆՉՈՒՀԻՆ՝ ԹԱԳՈՒՀԻ

Ջահել արքան սիրահարվեց
Մի գնչուհու նրբիրան
Ու մի օր էլ երդում տվեց,
Որ խիստ սիրում է նրան:

Ապա նրանք ամուսնացան,
Ճոխ հարսանիք արեցին,
Մարդիկ յոթ օր ուրախացան,
Երգեցին ու պարեցին:

Սակայն, երբ որ նրանց ուրախ
Հարսանիքը վերջացավ,
Հարսը հանկարծ քաշեց խոր՝ ա՜խ,
Այլայլվեց ու լրջացավ:

Սև ամպ իջավ սրտի վրա,
Թախիծը դեմքը պատեց,
Արքա փեսան իսկույն նրա
Տխրությունը նկատեց:

— Ի՛մ թագուհի,— ասաց նրան,—
Ի՞նչն է հուզում քեզ այդքան,
Հրամայի՛ր, և ուզածդ
Կկատարի քո արքան:

— Ա՜խ, սիրելի՛ս, ես մոռացա
Իմ մախաղը վերցնել,
Մերոնց սայլում թողեցի այն,
Վայ թե հանկարծ կորցնեն…

ՍՈԿՐԱՏԵՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Թեոդոր կայսրի կինը ցանկասեր
Մի օր հեգնանքով Սոկրատին դիմեց.
— Շատ եմ զարմանում, ո՛վ իմաստասեր,
Մարդիկ ինչո՞ւ են քեզ համարում մեծ.
Չէ՞ որ սաներիդ՝ ամեն հասակի,
Որոնց կրթել ես տարիներ համառ,
Եթե ցանկանամ, ես լոկ՝ որպես կին,
Կստիպեմ նրանց մեռնել ինձ համար…

— Ես չեմ զարմանում,— Սոկրատեսն ասաց,—
Քանզի լավ գիտեմ կարգն այս աշխարհի.
Մարդն ավելի հեշտ գլորվում է ցած,
Քան թե բարձրանում կատարը սարի…

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ
(Ըստ Եզոպոսի)

Երկունքի մեջ էր առյուծը ահեղ,
Այդ լուրը իսկույն հասավ ամեն տեղ,
Եվ հավաքվեցին,
Եկան նրան տես՝
Վագր, գայլ ու ցիռ,
Լուսան ու աղվես:
Բայց երբ առյուծը ծննդաբերեց,
Եվ նորածինն էլ շատերին գերեց,
Աղվեսը գայլին թաքուն փսփսաց.
— Սանամե՛ր, գիտե՞ս, ճշմարիտն ասած,
Մեր կյանքում ոչ մի արդար բան չկա,
Այ, քեզ օրինակ, առյուծը հսկա
Մնում է, մնում,
Մի ձագ է ծնում,
Սակայն մենք նրան պատիվ ենք տալիս,
Ասա՛, այդ բանը քեզ դո՞ւր է գալիս:
Մինչդեռ, ես թեև փոքր եմ ու նվազ,
Ձագեր եմ ծնում հինգից ոչ պակաս…
Սակայն երբ խոսքը
Առյուծին հասավ,
Առյուծը ժպտաց
Եվ այսպես ասավ.
— Չար բամբասանքին ականջ չեմ դնում,
Չէ՞ որ ես հզոր կորյուն եմ ծնում,
Եվ ոչ թե վախկոտ ու անհամարձակ
Աղվեսի ստոր ու խարդախ մի ձագ…

ՈՒՂՏԸ ԴՐԱԽՏՈՒՄ

Միշտ անբասիր, հեզ ու բարի,
Բեռ էր կրել հիսուն տարի.
Տվել էին ուզած թուղթը՝
Դրախտ պիտի գնար ուղտը:
Ու երբ ուղտը դրախտ հասավ,
Այնտեղ հրաշք բաներ տեսավ,
Ծառաստաններ տեսավ շատ լայն,
Շատրվաններ կարկաչածայն
Եվ պարտեզներ դրախտային,
Որտեղ շքնաղ վարդեր կային՝
Վառ գույներով, բույրով անուշ,
Սակայն ուղտը սիրում էր փուշ:
Փուշը նրա համար հաց էր,
Ինքն էլ այդօր շատ քաղցած էր,
Ուստի ուտել մտքովն անցավ,
Եվ փուշ ուտել նա ցանկացավ…
Բայց նա դեռ չէր բացել բերան,
Երբ խստությամբ ասին նրան.
— Ո՛ւղտ, իմացի՛ր, կարգ ես խախտում,
Ո՞վ է տեսել փուշ՝ դրախտում…
Թե նման բան փորձես ուզել,
Մենք կաշխատենք պոչդ խուզել:
Այստեղ պետք չէ նաև սապատ,
Սա դրա՞խտ է, թե՞ անապատ…
Թեև ուղտը լռեց վախից,
Սակայն սրտում նստեց թախիծ,
Ու մի օր էլ հոգուն հասավ,
Չհամբերեց, թքեց, ասավ.
— Թող կործանվի՛ այն դրախտը,
Որտեղ պիտի լամ իմ բախտը:

ԷՇԱՅԻՆ ՀՐՃՎԱՆՔ

Գայլի ոհմակը,
Ընդունված կարգով,
Հոշոտեց իր պետ Տռուզ–Փորոյին,
Նրա փոխարեն,
Առքով ու փառքով,
Կարգեց ուրիշի՝ Մռութ–Զոռոյին:

Էշը երբ լսեց,
Հրճվանքից զռաց,
Եվ ապա դիմեց իր կողքի շանը.
— Լսե՞լ ես, Բողա՛ր,
Կերել են ձեռաց,
Էլ չկա Փորոն, պրծել է բանը:

Սրանից հետո
Կխոսենք շիտակ,
Չէ՞ որ ասում են, թե Զոռոն այլ է…
Սակայն Բողարը
Մռռաց բեղի տակ.
— Իշո՛ւկ, մի՛ հրճվիր, նա նույնպես գայլ է…

ՏՂԱՆ ՈՒ ԽԱՆԸ

Թե ինչ առիթով, օրերից մի օր,
Մի շատ բանիմաց ու կիրթ պատանի՝
Որպես հայերից քաջ պատգամավոր,
Ներկայանում է Թավրիզի խանին:

Խանը չափում է նրան վերից–վար,
Ապա հեգնանքով հարցնում է քինոտ.
— Ի՞նչ է, ձեր երկրում մի լուրջ մարդ չկա՞ր,
Որ քեզ են գտել, ուղարկել ինձ մոտ:

Թավրիզի խանի այդ խայթող հարցին
Պատասխանում է համարձակ տղան.
— Կար, մարդուն մարդկանց մոտ ուղարկեցին,
Իսկ ինձ էլ քեզ մոտ ուղարկեցին, խա՜ն…

ԱՆՀԻՄՆ ՔԱՐՈԶ

Մի թափառական
Ու աղքատ դերվիշ
Մարդկանց քարոզ էր կարդում անդադար.
— Մարդի՛նկ, դուք կապրեք
Հարուստ ու անվիշտ,
Եթե ձեր կյանքում լինեք միշտ արդար:

Բայց մարդիկ նրան
Չհավատացին.
— Ո՛վ դերվիշ,— ասին,— հերիք է փչես,
Ինչպե՞ս հավատանք
Մենք քո ասածին,
Չէ՞ որ տեսնում ենք՝ ինքդ հարուստ չես…

ԾՈՎԱՀԵՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ասում են՝ հզոր Մակեդոնացին
Մի խումբ ծովահեն գերի վերցրեց,
Եվ նա այդ խմբի համարձակ մեծին
Պատժելուց առաջ շատ լուրջ հարցրեց.

— Լսի՛ր, դու ինձ մոտ գերի ես արդեն,
Բայց քեզ կներեմ, եթե ճիշտն ասես.
Ի՞նչը ստիպեց, որ դու դառնաս հեն
Եվ ամբողջ ծովը ահի մեջ պահես:

— Արքա՛,— ծովահենն ասաց անտարբեր,—
Ես ճիշտը կասեմ, գլուխը քարը,
Այդ նույն պատճառով մեծությունը ձեր
Սարսափի մեջ է պահում աշխարհը…

ՀԱՄԲԱԼ ԱՐՔԱՆ

Եղել է, թե չէ, չեմ կարող ասել,
Ես էլ ուրիշի պատմածն եմ լսել:
Իբրև եղել է հնում մի երկիր՝
Ուրույն կարգերով ու բարքերով իր,
Որտեղ օրենքով մի ավանդական
Այն մարդն էր դառնում այդ երկրին արքա,
Ում ուսի վրա երջանիկ մի օր
Իջնում էր բախտի հավքը թևավոր:
Դեհ, բախտը կյանքում ինչեր չի անում.
Մի օր այս հավքը վեր է բարձրանում,
Իջնում է համբալ մի մարդու ուսին,
Ամբոխն էլ իսկույն, իր օրենքով հին,
Նրան առնում ու պալատ է տանում,
Ու մեր համբալը գահ է բարձրանում,
Դառնում է արքա մի ողջ աշխարհի
Եվ թագավորում շուրջ քսան տարի…
Բայց թե ինչպե՞ս է նա կառավարել
Կամ երկրի համար ինչե՞ր է արել,
Ոչինչ չի հասել պատմությունից մեզ,
Միայն մի դեպք է պատահել այսպես.
Բազում դարեր անց, երբ հող են հերկել,
Հողից մի հղկված քար է դուրս եկել,
Ու երբ սրբել են երեսի հողը,
Պարզ կարդացել են այս երկու տողը.
«Համբալ արքայի օրոք մեր երկրում
Ողջ ժողովուրդը փալան էր կրում…»:

ՄՈՂԵՍՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ

Մողեսը, կպած ժայռին շիկացած,
Լուռ տաքանում էր,
Ու ինչ–որ ձայներ լսելով հանկարծ՝
Նայեց դեպի վեր:

Եվ տեսավ այնտեղ՝ կապույտ լազուրում,
Ծիծեռնակը վես,
Թևերը պարզած, առաջ էր սուրում
Թռչող նետի պես:

Մողեսն սկսեց նախանձից դողալ
Ու ասաց նրան.
— Կարո՞ղ ես ինձ պես դու արագ սողալ
Ժայռերի վրա:

— Ո՛չ, ինձ թևեր կան,— հնչեց անվարան
Ձայնը թռչունի,—
Սողալը միայն սազում է նրան,
Ով թևեր չունի…

ՄԵՂՔԻ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ

Ծեր աղվեսը հավանոցում
Կարդաց այսպես մի զեկուցում.
— Հե՜յ, ինձ լսե՛ք, աքլոր ու հա՛վ,
Ինչ մեղք արի՝ հերիք եղավ.
Որոշել եմ, որ այսուհետ
Անկեղծ լինեմ ձեր ցեղի հետ.
Էլ չլինեմ անգութ ու չար,
Եվ աղոթեմ հոգուս համար:
Հավատացե՛ք դուք բառերիս,
Ներքև իջեք ձեր թառերից,
Ես խոնարհեմ գլուխն իմ ծեր
Եվ համբուրեմ ոտները ձեր,
Որ Աստվածը խղճա, գթա
Եվ մեղքերիս թողություն տա…
Լսելով այդ՝ մի տարեց հավ
Զայրանալով նրան ասավ.
— Մեղավորին ի՞նչ թողություն,
Նրան պետք է թակարդ ու թույն
Կամ թեժ գնդակ մի հրածին,
Որ էլ ոչ ոք մեղք չգործի…

ԱՐԵՎՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

Լուսինն արևին
Ասաց մի անգամ.
— Քեզնից խռով եմ,
Ազնի՛վ բարեկամ.
Լսել եմ, որ դու
Ինձ բամբասել ես՝
Իբր սեփական
Լույսից զուրկ եմ ես:

Արևը լսեց,
Ասաց ժպտադեմ.
— Անկրա՜նկ լուսին,
Ամենքը գիտեն,
Որ կրակից է
Լույս ծնվում միայն,
Երբ դու չես վառվում,
Քեզ որտեղի՞ց այն…

ԽՐՏՎԻԼԱԿԸ

Խրտվիլակը լալահառաչ
Սիրտը բացեց քամու առաջ.
— Ա՜խ, բարեկա՛մ, դու ինձ ասա՝
Ի՞նչ երկնային պատիժ է սա:
Երբ ինձ սարքեց արտատերը,
Արտ ավերող թռչունները
Ինձ որ տեսան, լեղապատառ
Փախան ընկան ձոր ու անտառ.
Սակայն երբ որ օրեր անցան,
Նրանք նորից վերադարձան,
Մեկ ուտում են, հազար՝ թափում,
Էլ ինձանից չեն սարսափում:
Չեմ հասկանում՝ ի՞նչ պատահեց,
Ո՞ւր չքացավ իմ ուժը մեծ…
— Դե, ի՞նչ ասեմ, գաղտնիք չէ դա,—
Ասաց քամին,— ինձ հավատա՛.
Թեև տեսքով շատ ես ազդու,
Բայց ով տեսնի՝ անշարժ ես դու,
Կհասկանա անմիջապես,
Որ դու անկար և անուժ ես…

ԳՈՐՏԵՐԻ ԱՐՔԱՆ

Ամռան մի օր տաքուկ ճահճում
Գումարվել էր գորտաժողով.
Գորտերն էին կռռում, ճչում.
— Բավ է ապրենք ահ ու դողով,

Եկեք մեզ մի արքա կարգենք,
Որը լինի հզոր ու խիստ.
Նրա դրած կարգը հարգենք
Եվ մեզ համար ապրենք հանգիստ:

— Բերեք գահը տանք առյուծին,—
Առաջարկեց մի տարեց գորտ,
Սակայն շատերն առարկեցին.
— Արքան պիտի լինի լողորդ…

— Դե լա՛վ,— ասաց մեկ ուրիշը,—
Եկեք ընտրենք կետին հսկա…
— Ի՞նչ է խոսում ցանցառ գիժը,
Կետը մեզ հետ ցամաք կգա՞…

Շատ երկարեց վեճը համառ,
Նույնիսկ հորը ծեծեց որդին,
Սակայն վերջում գտան հարմար՝
Արքա կարգել մի ծեր գորտի:

Զարմանալու ոչինչ չկա,
Գորտը արքա կընտրի գորտին,
Չէ՞ որ միշտ էլ ամեն արքա
Արժան է իր ժողովրդին…

ԱԳՌԱՎԻ ՃՈՒՏԸ

Ագռավն ասաց իր սև ճուտին.
— Չհավատա՛ս դու արտույտին,
Որը զվարթ օր ու գիշեր
Ճռվողելով ճախրում է վեր
Եվ պնդում է, թե աշխարհում
Նա է միայն լավ կյանք վարում,
Ով ուտում է չափավոր կեր
Ու երգում է ուրախ երգեր:
Չէ՛, ձագո՛ւկս, չհավատաս,
Թե չէ կյանքդ տանուլ կտաս:
Քանզի նա է տերն աշխարհի,
Ով միշտ առատ կեր կճարի:
— Գիտեմ,— վստահ ասաց ճուտը,—
Ես քո ձագն եմ, ինձ մի՛ վարժիր,
Ինձ համար մի աղբակույտը,
Դու լավ գիտես, աշխարհ արժի….

ԿԱՔԱՎԻ ԽՐԱՏԸ

Կաքավը մի օր ցորենի արտում
Իր ճուտիկներին խրատ էր կարդում.
— Իմ լա՛վ բալիկներ, կեր հայթայթելիս,
Երբ կնկատեք, որ մարդ է գալիս,
Իսկույն հեռացե՛ք. հենց նա կռանա՝
Ձեզ հարվածելու քար է վերցնում նա…
— Մեզ թույլ տուր, մայրի՛կ,—
Ձագերը ասին,—
Մենք արդեն շատ ենք
Լսել այդ մասին:
Քո այդ խրատը
Չափազանց հին է,
Իսկ եթե քարը
Մարդու ձեռքի՞ն է,
Եվ կարիք չունի
Նա կռանալու,
Ինչպե՞ս որոշենք
Պահն հեռանալու…
— Այ, դուք շա՛տ ապրեք,—
Կանչեց կաքավը,—
Ինձ այդ հարցն էր պետք,
Տանեմ ձեր ցավը,
Դուք մտածում եք
Արդեն ինքնուրույն.
Թռե՛ք, ձեզ համար
Կառուցե՛ք նոր բույն:
Թռե՛ք ու ասե՛ք ամեն թռչունի՝
Կյանքը քարացած կանոններ չունի…

ՈՒՂՏԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ

Ուղտի ծռված վզի վրա
Էշը խնդաց ու զռռաց.
— Հապա նայե՞ք վզին սրա,
Ի՞նչ «սիրուն» է ծռմռած…

Բայց երբ ուղտի ականջի տակ
Ձին փսփսաց առանձին.
— Տեղդ լինեմ, այնպե՞ս կտամ,
Որ չար լեզուն պապանձվի:

Ուղտը ասաց.— Բթամիտ է
Այդ իշուկը պարզապես,
Թե չէ, եղբա՛յր, ով չգիտե,
Որ ուղիղ տեղ չունեմ ես:

Ուստի պետք չէ աղմուկ ու ծեծ,
Այստեղ լռելն է բարին,
Քանզի նա է հիմարը մեծ,
Ով կառարկի հիմարին…

ՀԱՎԵՐԻ ԶԱՐՄԱՆՔԸ

Շատ էր պարծենում գոռոզ աքլորը
Հավերի առաջ իրենց նեղ բակի,
Որ իր կանչով է միշտ բացվում օրը,
Որ առանց իրեն արև չի ծագի:

Եվ այնպես եղավ, որ մի իրիկուն
Տերը աքլորին մորթեց սուսուփուս,
Հավերը լացին ողջ գիշերն անքուն,
Թե էլ չի լինի լուսաբաց ու լույս:

Սակայն մեծ եղավ զարմանքն հավերի,
Տարակուսանքը նրանց համակեց,
Երբ առավոտյան, առանց աքլորի,
Ամեն օրվա պես արևը ծագեց…

ԽՈՍՔԻ ՁԵՎԸ

Երազ տեսավ ահեղ արքան՝
Չարագուշակ մի երազ,
Խուզել էին արքայական
Իր մորուքը թավամազ:

Առավոտյան իր մոտ կանչեց
Ծեր գուշակին մեկնաբան,
Պատմեց երազն ու պահանջեց,
Որ գուշակը մեկնի այն:

— Արքա՛,— տխուր կմկմաց նա,—
Քո երազը շատ է չար,
Քեզանից շուտ կմահանա
Քո քաջ որդին միևուճար:

— Դու մեկնիչ չես, ծե՛ր ավանակ,—
Գոռաց արքան, կատաղեց,—
Կտամ կես ժամ քեզ ժամանակ,
Ճիշտ չասացիր՝ կսատկես:

Լուռ մտածեց գուշակը ծեր
Ու ձայն խնդրեց՝ սրտում ահ.
— Դու ների՛ր ինձ, ի՛մ գլխի տեր,
Շփոթվեցի ես մի պահ:

Խոսքս իրավ ստացվեց վատ,
Ձեր երազն այն է ասում,
Որ դուք կապրեք ավելի շատ,
Քան ձեր որդին դյուցազուն…

— Այ, տեսնո՞ւմ ես, չարալեզո՛ւ,—
Ասաց արքան ժպտադեմ,—
Թեև դու նույն բանն ես ասում,
Բայց դա ուրիշ է արդեն…

✧ ✧ ✧

Թե ասածիդ միտքը ինչ է՝
Կարևոր է անկասկած,
Սակայն միտքը դեռ ոչինչ է,
Եթե այն լավ չի ասված:

ԼՈՒՍՆԱՀԱՉԸ

Լիալուսինը փայլում էր վերից,
Ու անուշ լույսը մեղմ ծորում էր ցած,
Սակայն շները աղբոտ բակերից
Կաղկանձում էին՝ դնչները ցցած:

Մի տարեց գամփռ պառկել էր փորին
Եվ շուրջն էր նայում սաստիկ ալարկոտ,
Մտքում ծաղրում էր թունդ հաչողներին,
Երբ նրան հարցով դիմեց մի լակոտ.

— Ինչո՞ւ ենք հաչում, ասա՛ ինձ, պապի՛,
Եվ ձգում կապը մեր չերկարող,
Չէ՞ որ եթե մեզ ոչ ոք չկապի,
Էլի մենք լուսնին կծել չենք կարող:

— Իմ անմի՛տ թուլա,— գամփռը խոսեց,—
Մենք կեր ենք ճարում հաչոցով համառ.
Գիտցի՛ր, լուսինը թշնամի չէ մեզ,
Այլ նա առիթ է հաչելու համար…

ՇՎԱՔԻ ՏԱԿ

Երբ ամռան շոգը գլուխ էր ծակում,
Շունը նստել էր ծառի շվաքում
Ու փառք էր հղում հզոր Արարչին,
Որ մեծ շնորհք է տվել իր պոչին…
— Օ՜, առանց պոչի
Չէի դիմանա,—
Այսպես ինքնիրեն
Մտածում էր նա,—
Պոչիս շվաքն է
Ինձ պահում այսպես,
Թե այն չլիներ,
Կորած էի ես…

✧ ✧ ✧

Այսօր կան մարդիկ մեր շրջապատում,
Որ այս կենդանու նման են դատում.
Ապրում են հանգիստ, ապահով ու գոհ,
Ազդեցիկ մեկի հովանու ներքո:

Իսկ թե նմանին
Հարցնես առանձին,
Կվերագրի բոլորն
Իր անձին:

ԱՌՅՈՒԾԻ ՎԱԽԸ

Ամեհի վագրը անտառում մի օր
Տեսավ առյուծին լուռ արտասվելիս,
Ու հարցրեց նրան. «Ասա՛ ինձ, քավո՛ր,
Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես լալիս»:

— Սարսափի մեջ եմ, ազնի՛վ սանահեր,—
Ողբաց առյուծը,— գործերս վատ են,
Երեկ լսեցի, որ անտառում մեր
Հավասարություն պիտի հաստատեն:

Վագրը զարմանքից հոնքերը կիտեց.
— Է՜, դրանից քեզ ի՞նչ վնաս, քավո՛ր:
— Օ՜, սանահե՛ր ջան, մի՞թե չգիտես,
Որ դա աղետ է՝ չար ու ահավոր:

Թե հանկարծ կյանքում նման բան անեն,
Հսկա կկտրի ամեն մի թզուկ,
Մկները իրենց առյուծ կանվանեն
Եվ առյուծներիս կհամարեն մուկ…

ԱՂԵՏ

Բախտի չար խաղով, օրերից մի օր,
Անխելքի մեկը դարձավ թագավոր,
Ու նրա օրով, մի դժբախտ տարի,
Երաշտը եկավ տիրեց աշխարհին:
Եվ իր ողջ երկրից եկան նրա մոտ
Մարդիկ՝ հոգնատանջ, չարքաշ ու փոշոտ,
Ասացին՝ երկար ապրի մեր տերը,
Բամբակ ենք ցանում մենք մեր դաշտերը,
Այն բրդի պես չէ, օգուտ չի տալիս,
Երբ ջուր չի լինում, անձրև չի գալիս…
Հիմա, տե՛ր արքա,
Թե որ ուժ ունես,
Թե որ հնար կա,
Մի կերպ փրկի՛ր մեզ:
Արքան լրջացավ, մի քիչ մտորեց,
Ճակատը շփեց, ծոծրակը քորեց,
Ապա խստություն տալով իր դեմքին՝
Հրամայաբար դարձավ ամենքին.
— Լսե՛ք, թե ինչ է ասում ձեր տերը.
Գնացե՛ք և բուրդ ցանե՛ք դաշտերը:
Նման խորհուրդը
Վատ էր երաշտից,
Եվ ժողովուրդը
Քարացավ վշտից:

ԾԱՆՐԱԿՇԻՈ ԹԵԿՆԱԾՈՒՆ

Սուրհանդակ վիթը, թե ինչ առիթով,
Չէր կարողացել արագ ու փութով
Անտառում եղած լուրը հրատապ
Առյուծ արքային հասցնել շտապ:
Այդ բանն արքային
Շատ էր վրդովել,
Եվ նա նույն պահին
Ցուցում էր տվել.
«Հրավիրե՛լ նիստ, վիթին ազատե՛լ,
Ու տեղն այնպիսի մեկին հաստատել,
Որն ամբողջությամբ վարք ու կարգով իր
Լինի լրջախոհ ու ծանրակշիռ»:
Գազաններն իսկույն նիստ գումարեցին,
Վիթի ազատման հարցը դրեցին:
Եվ ամեն գազան
Խոսեց իր հերթին.
Մեկը՝ ձանձրալի,
Մյուսը՝ խրթին.
Սակայն ով խոսեց, պահանջեց մի բան,
Որ «ծանրակշիռ» մի թեկնածու տան:
Ձայն առավ կրիան՝ խորամանկը ծեր.
— Այժմ ի՛նձ լսեք, ազնի՛վ պարոններ,
Արքայի կամքը կամքն է Աստծու,
Ես ունեմ նրա սրտով թեկնածու՝
Խիստ ծանրակշիռ և հարմար տեղին,
Առաջարկում եմ հաստատել փղին:
Նա «ծանրակշիռ»
Բառը ընդգծեց
Ու խրոխտաբար
Մատը վեր ցցեց:

Վագրը գողունի արձակեց քրքիջ,
Աղվեսը ժպտաց… բայց դրանով ի՞նչ…
Թեկնածությունը քվեարկման դրվեց,
Եվ առանց «դեմ»–ի փիղը ընտրվեց,
Բայց թե փիղն հետո
Ինչպե՞ս կաշխատի,
Այդ էլ լսողը՝
Թող ինքը դատի…

ԼԱՎԱՏԵՍ ԳՈՐՏԸ

Գորտը նստել էր մամռապատ քարին,
Ներբող էր ձոնում գորշ ճահճաշխարհին.
— Կյանքը դրախտ է, աշխարհը՝ ազատ,
Բոլորն են այսօր իրար հարազատ,
Թշնամի չունեն այժմ գորտերը,
Դարձել են իրենց լույս–բախտի տերը…
Դեռ չէր ավարտել
Իր ներբողը նա,
Երբ արագիլը
Իջավ, անխնա
Նրան իր ամուր
Կտուցը առավ
Ու դեպի լազուր
Երկինքը տարավ:
Գորտն իր կողերին թեև զգաց ցավ,
Բայց ցույց չտվեց, մի կերպ դիմացավ
Եվ, հազիվ զսպած տագնապն ու դողը,
Շարունակեց իր կիսատ ներբողը.
— Օ՜, գոհ եմ կյանքից,
Ես ճախրում եմ վեր,
Կյանքն է տվել ինձ
Թռիչք ու թևեր…
Բայց նրա երգը երկար չտևեց,
Ծեր արագիլը նրան կուլ տվեց:

ԾԱՆՐ ՊԱՏԻՎ

Ծանր բեռի տակ ուղտը տրտնջաց.
— Հոգիս դուրս եկավ, էլ ուժ չմնաց,
Այսքան ծանր բեռ ես ինչպե՞ս տանեմ,
Տերս խիղճ չունի, ես ինչպե՞ս անեմ…
Երբ տերը լսեց,
Մոտեցավ նրան,
Ուժեղ մտրակեց
Ու գոռաց վրան.
— Հիմա՛ր, մի՞թե ես
Այդքան անխիղճ եմ,
Արդյոք դու գիտե՞ս,
Թե բեռդ ինչ է,
Ջիուն ու ջորուն
Բարձել եմ կտավ,
Իսկ քեզ՝ զարդարուն,
Նրբաթել ու թավ
Կերպասներ պես–պես,
Թավիշ ու բեհեզ…
Թե խելոք դատես,
Դա պատիվ է քեզ:
— Ա՜խ,— գոչեց ուղտը,— թե հարգում ես ինձ,
Արի ինձ փրկի՛ր այդ ծանր պատվից,
Դու ինձ էլ բարձիր կտավ կոշտաթել,
Միայն թե բեռս թող լինի թեթև…

ԽՈՆԱՐՀ ԳԼՈՒԽԸ
(Ըստ Այգեկցու)

Ահեղ փոթորկից ջարդված եղևնին
Փոթորկից հետո ասաց եղեգին.
— Զարմանում եմ ես՝
Ի՞նչ ուժի տեր ես,
Որ թեև բարակ՝ մնացիր կանգուն,
Երբ կոտրվեցին ծառերն հաստաբուն:
Եղեգը խորհեց,
Գլուխն օրորեց
Եվ ասաց այսպես.
— Որովհետև ես
Գլուխ եմ տալիս ամեն մի քամու,
Դա լինի զեփյուռ, թե հզոր սամում.
Իսկ ամեն անգամ,
Տուժա՛ծ բարեկամ,
Երբ կյանք ու մահի խնդիր է դրվում,
Խոնարհ գլուխը քիչ է կոտրվում…

ՊԱՐԾԵՆԿՈՏ ԷԾԸ

Պարծենում էր
Էշն ամեն տեղ.
— Հավատացե՛ք, քարավանում
Չկա մեկը
Ինձնից ուժեղ,
Ես ուղտի չափ բեռ եմ տանում:

Բայց մի օր էլ,
Բախտից նրա,
Քարավանում ուղտը սատկեց,
Տերն էլ բարձեց
Էշի վրա
Սատկած ուղտի հակերը մեծ:

Էշը նման
Բեռ չէր տարել,
Ծանրությունից մեջքը ծռվեց.
Նա երկու քայլ
Դեռ չէր արել,
Երբ ուժասպառ գետին փռվեց:

— Ա՛յ, քեզ տեղն է,—
Ծիծաղեց ձին,—
Որ այլևս լեզվիդ չտաս,
Քո նման բութ
Սնապարծին
Միշտ էլ պետք է այդպիսի դաս:

ՉՈՐԱՑԱԾ ԿԱՂՆԻՆ

Կաղնին ապրել էր
Շուրջ հազար տարի
Եվ չորացել էր արմատի վրա:
Տխուր «ա՜խ» քաշեց
Ոգին անտառի,
Երբ պատահաբար հանդիպեց նրան:

— Իմ լա՛վ բարեկամ,
Մի՛ տխրիր այդպես,—
Ասաց չոր կաղնին անտառի ոգուն,—
Ճիշտ է, այլևս
Չեմ կանաչի ես,
Բայց առաջվա պես կմնամ կանգուն:

— Չէ՛, բարեկա՛մս,—
Ոգին հառաչեց,—
Այժմ հողմերը քեզ շուտ կջարդեն,
Քանզի երբ ծառը
Դադարեց աճել,
Իմացի՛ր, որ նա փտում է արդեն…

ԿՈՌՆԿՆԵՐՆ ՈՒ ՀԱՎԵՐԸ

Հավերն ասին կռունկներին.
— Դուք ինչո՞ւ եք չվում հարավ,
Ապավինե՛ք մեր բներին,
Էլ չեք մնա սոված–ծարավ:

— Գիտե՞ք՝ ինչու մենք չենք մնում,—
Կռունկները ասին վերից,—
Եթե ապրենք հավաքնում,
Մենք կզրկվենք մեր թևերից…

ՍԱՌՈՒՅՑԻ ՈՒԺԸ

Ձմեռ էր ցուրտ ու ճքճքան,
Երբ սառույցը քարին սեղմեց.
— Հը, ինպե՞ս ես, քա՛ր բարեկամ,
Ո՞վ է ամուր, ո՞ւմ ուժն է մեծ:

Քարը ասաց. «Մի՛ մրցիր զուր,
Սեփական չէ ուժը ձեռիդ.
Չէ՞ որ իսկույն կդառնաս ջուր,
Երբ չքանա ձմեռ քեռիդ…»

ՊԱԼԱՏԱԿԱՆ ԷՇԸ

Մի անգամ էշը իր ապրած գյուղից
Անտառը փախավ բեռի երկյուղից:
Առյուծ արքան էլ որպես հին ծանոթ
Բարեկամ էշին տեղ տվեց իր մոտ:
Սակայն անտառի գազանները բիրտ
Սկսեցին ծաղրել իշուկին անկիրթ,
Ու թեև էշը չէր սիրում հանաք,
Բայց լուռ տանում էր ամեն մի ծանակ,
Կմեռներ իսկույն, ով ասեր՝ մեռի,
Նույնիսկ շլդիկին ասում էր՝ քեռի:
Այս բանն առյուծին շատ չվրդովեց,
Նա ավանակին պաշտոններ տվեց,
Եվ այդպես, չանցած մի երկու տարի,
Էշին շնորհեց պաշտոն վեզիրի:
Դրանից հետո արի ու տես՝ ի՞նչ,
Նախկին իշուկից «չմնաց» ոչինչ.
Առաջվա անմիտ զռոցը նրա
Սարսափ էր դարձել անտառի վրա:
Թե վագրի մոտով լիներ անցնելիս՝
Հզոր գազանը գլուխ էր տալիս…
Բայց այստեղ ո՞ւմն էր գլխավոր դերը,
Էշը նույն էշն էր, հզոր էր տերը…

ԱՌԱԿ ԷՇԵՐԻ ՄԱՍԻՆ

Առակ գրեցի
Էշերի մասին,
Այն շատ հաջող էր և տպագրվեց,
Բայց հաջորդ օրը
Եկան ինձ ասին,
Թե՝ Իքսը կարդաց ու վիրավորվեց:

Երդվում եմ անկեղծ.
Ես այն գրելիս
Նույնիսկ մի վայրկյան Իքսին չեմ հիշել,
Բայց հանգամանքը
Առիթ է տալիս
Նրա հասցեին մի թեթև նշել.

Եթե Իքսին էլ
Այնպես է թվում,
Որ ինքը իրոք նման է էշի,
Էլ ինչո՞ւ է նա
Խիստ վիրավորվում
Այդ մասին ասված խոսքից ուրիշի…

ԱՆՏԱՌՆ ՈՒ ՔԱՄԻՆ

Անտառ ներխուժեց
Քամին սրընթաց,
Կատաղած թափով ծայրից ծայր անցավ,
Գետին տապալեց
Ծառերը փտած,
Եվ, ինքն իր ուժով հպարտ, պարծեցավ.

— Կջարդեմ բոլոր
Ծառերին մեկ–մեկ,
Ինչպես ջարդեցի այսօր շատերին,
Թող չմտածի
Անտառը երբեք,
Որ կդիմանա իմ հարվածներին:

— Անմի՜տ,—
Անտառը հպարտ շառաչեց,—
Փտած ծառերն են լոկ քեզ զոհ գնում,
Գիտցի՛ր, որքան էլ
Ոռնաս ու շաչես,
Կանաչ անտառը կանգուն է մնում…

ԹՈՒՅԼԵՐԻ ՁԵՆՔԸ

Հայտնի չէ՝ գիտե՞ր,
Թե ուզեց փորձի,
Կարիճը մի օր
Հարց տվեց օձին.
— Իմաստո՛ւն եղբայր, չեմ հասկանում ես,
Ինձ համար պարզ չէ, խնդրում եմ ասես,
Փղերը ունեն ժանիքներ հսկա,
Նրանցում ինչքա՞ն մահացու թույն կա:

Օձը գալարից
Գլուխը հանեց,
Ֆշշաց զայրալից
Ու պատասխանեց.

— Հիմա՛ր, չգիտե՞ս, որ կամքով վերին
Թույնը տրված է միայն թույլերին,
Թույլ էակները թույն ունեն միայն,
Հզոր մեծերի ինչի՞ն է պետք այն…

ԿԱՂՆԻՆ ՈՒ ՍՈՒՆԿԸ

Փոթորկից հետո՝ մի զով առավոտ,
Դարավոր կաղնու մամռոտ բնի մոտ,
Թաց հողում փափուկ
Գոյացավ մի սունկ,
Եվ ապա դիմեց
Կաղնուն խիստ ազդու.
— Է՛յ, քանի՞ օր է,
Որ այստեղ ես դու:
— Ինչ օր,— շշնջաց կաղնին աներեր,—
Իմ ծնված օրից անցել են դարեր:
— Օ՜, որքան մեղք ես,
Ես խղճում եմ քեզ:
Մի տարուց հետո,
Քեզ ասեմ շիտակ,
Մնալու ես դու
Իմ ստվերի տակ:
Ես գրազ կգամ,
Առանց խաբելու,
Ով կուզի՝ թող գա
Աճս չափելու:

Կաղնին հառաչեց
Ու խուլ շառաչեց.
— Ո՛վ սունկ, որպեսզի իրար չխաբենք,
Արի՛ ձմռանը մեր աճը չափենք,
Երբ որ կշաչի ցրտաշունչ քամին.
Կյանքը չափում են փորձության ժամին…

ՋՐԱՂԱՑՆԵՐԸ

Երկու ջրաղաց տարիներ անվերջ
Աշխատում էին մի խոր ձորի մեջ:
Մեկի լայն առուն
Ջուր շատ էր տանում,
Այդ իսկ պատճառով
Նա լավ էր բանում:
Մյուսի առուն
Նեղ էր ու բարակ,
Չէր կարողանում
Աշխատել արագ:
Ուստի նա, ով շատ ջուր ուներ առվում,
Քչի տիրոջը միշտ ձեռ էր առնում.
— Երնեկ քեզ, քավո՛ր,
Արևս վկա,
Քեզնից բախտավոր
Ջրաղաց չկա.
Դու երբեք ինձ պես
Աղուն չես աղում,
Բայց միշտ երգում ես
Ու գոհ ծիծաղում:
— Այո՛, սանահե՛ր, ես չեմ ուրանում,
Դու միշտ ինձանից շատ գործ ես անում:
Իսկ դու փորձե՞լ ես մի օր միտք անել,
Որ ես էլ քեզ պես կարող եմ բանել,
Գուցե մի բան էլ քեզնից առավել,
Եթե ինձ ջուր տան քո ջրից ավել…

ՊԱՊԻ ԽՐԱՏԸ

Դաժան թշնամին նոր դավ էր դնում,
Հնչել էր փողը ահեղ տագնապի,
Ջահել թոռնիկը բանակ էր գնում,
Մեկնելուց առաջ դիմեց ծեր պապին.
— Պապի՛ ջան,
Թեև շատ ես խրատել,
Բայց դեռ ջահել եմ,
Շատ բան չգիտեմ,
Թշնամին նորից
Մեր հողն է մտել,
Ասա՛, ի՞նչ զենքով
Գնամ նրա դեմ:
— Լսի՛ր, զավա՛կս, իմ անո՛ւշ անուն,
Ինչպիսի հզոր զենք էլ ունենաս,
Եթե չես ատում դու քո թշնամուն,
Լավ է՝ նրա դեմ երբեք չգնաս:
Դու նախ վրեժի ատելությամբ վառ
Տոգորի՛ր հոգիդ քո թշնամու դեմ,
Դրանից հետո ինչ զենք կուզես՝ ա՛ռ,
Գիտցի՛ր, որ մարտը շահել ես արդեն:
Եվ միշտ ականջիդ
Օ՛ղ արա, որդի՛,
Իմաստուն խոսքը
Քո ժողովրդի՝
«Ով իր թշնամուն հոգով չի ատում,
Նա տանուլ կտա ճակատամարտում…»:

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋԸ

Այնպես պատահեց, որ անտառում հին
Թագ էին տալիս ծեր քամելեոնին:
Ամեն առիթով նա գույնը փոխել,
Թեև կեղծ, բայց լավ համբավ էր թողել:
Եվ թագադրման
Փառահեղ ծեսը
Ղեկավարում էր
Պոչատ աղվեսը:
Հզոր առյուծը ներկա էր ծեսին,
Մի պահ զզվանքով նայեց աղվեսին:
Աղվեսի սիրտը ահից ճմլվեց,
Ուստի մոտեցավ և բարև տվեց:
Ու երբ պատասխան ողջույնը լսեց,
Տխուր ա՜խ քաշեց, ապա սկսեց.
— Անկեղծ եմ ասում, արևս վկա,
Մեր գազանների գլխում խելք չկա,
Արքա կարգեցին այնպիսի մեկին,
Որ ոչ ուժ ունի, ոչ էլ խելք կարգին:
Ախր, դուք էիք արժանի թագին՝
Ձեր ձիրքը, քաշը, ձեր ուժն ահագին…
— Դե վե՛րջ տուր, աղվե՛ս,—
Առյուծը գոռաց,—
Թե չպապանձվես,
Կխեղդեմ ձեռաց:
Քո մեղքը քիչ է, դու զուր ես քծնում,
Ժամանակն է իր պահանջը ծնում,
Այսօր, երբ տեր են գույնն ու կաշին.
Էլ ո՞վ է նայում ձիրքին ու բաշին…

ԽՈՓՆ ՈՒ ՍՈՒՐԸ

Մի ջլապինդ հաղթ գյուղացի
Բացեց դուռը դարբնոցի,
Բարի մաղթեց դարբնին տարեց,
Ապա զամբյուղը բաց արեց
Եվ այնտեղից հանեց հատ–հատ
Երկու կտոր ընտիր պողպատ:
— Քավո՛ր,— ասաց տղան դարբնին,—
Սա պողպատ է՝ ընտիր ու հին,
Շատ եմ խնդրում, դու սրանցից
Մի զույգ լավ խոփ կոփի՛ր, տո՛ւր ինձ:
Փորձված ծերը
Աչքով չափեց,
Մետաղները
Լուռ շոշափեց:
— Լավ պողպատ է,— դարձավ ասաց,—
Եկ ինձ լսի՛ր կամ, ճիշտն ասած,
Եկ ինձ թո՛ւյլ տուր,
Այս պողպատից պինդ ու մաքուր
Ես քեզ համար կոփեմ և սուր:
— Չէ՛, միայն խոփ կոփի՛ր, քավո՛ր,
Սուրն իմ ինչի՞ն է հարկավոր,
Ես վար ու ցանք անող մարդ եմ,
Սրով ես ո՞ւմ պիտի ջարդեմ,—
Ասավ գեղջուկն ու ծիծաղեց:
Ծեր դարբինը
Հոնքը կախեց,
Ապա ասաց խիստ ու ազդու.
—Հե՜յ վախ, տղա՛ս, դեռ խակ ես դու,
Իմ տարիքին երբ որ հասնես,
Կյանքի փորձով դու կտեսնես,

Որ աշխարհում
Այս հակընդդեմ,
Որտեղ բարուն
Միշտ չարն է դեմ,
Ով խոփի հետ սուր չկոփի,
Հազար խոփ էլ որ ունենա,
Ի վերջո նա
Մնալու է առանց խոփի…

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ուսուցչին խիստ սպառնալով,
Քիթն ու բերանը արնոտ՝
Թագավորի որդին լալով
Ուղիղ գնաց իր հոր մոտ:
— Հայրի՛կ,— ասաց,— ամեն անգամ,
Երբ սխալ եմ անում ես,
Ուսուցիչը իմ անզգամ
Միշտ ծեծում է ինձ այսպես:
Մինչդեռ երբ մեր հովվի տղան
Նման սխալ է անում,
Չար մարդուկը այդ ճղճղան
Նույնիսկ չի էլ բարկանում:

Արքա հայրը խիստ զայրացավ,
Իր մոտ կանչեց ուսուցչին.
— Պատասխա՛ն տուր,— նրան ասավ,—
Ադամորդի՛ դու չնչին:
Ասա՛, ինչո՞ւ տղայիս դու
Ծեծում, գցում ես հալից,
Երբ հասարակ հովվի որդուն
Նույնիսկ պատիժ չես տալիս:

— Ապրա՛ծ կենաք, ո՛վ տեր արքա,—
Ուսուցիչը խոսեց հեզ,—
Վարմունքիս մեջ մեծ իմաստ կա,
Հիմա լսեք՝ ասեմ ձեզ.
Վաղը, տե՛ր իմ, հովվի որդին
Ինչ սխալ էլ որ գործի,
Այդ սխալից ամենաշատ
Մի հոտ ոչխար կկորչի:

Մինչդեռ եթե սխալ անի
Ձեր ժառանգը թագակիր,
Իր սխալից (Աստված չանի)
Կկործանվի մի երկիր…

ԱՆԿԵՂԾ ՎԻՃՏԸ

Մի քարավանում հիվանդացավ ձին,
Էլ սահման չկար խեղճ ուղտի լացին.
Գիշեր ու ցերեկ աղոթում էր նա,
Որ մահամերձը կենդանի մնա:
Սակայն ով լսում՝
Մի բան էր ասում.
Որ իբր ուղտը՝ կեղծավոր, խարդախ,
Դիտավորյալ է քաշում ա՜խ ու վա՜խ…
Բամբասողները երբ որ այդ մասին
Չարախնդալով՝ հիվանդին ասին,
Նա խռպոտ հազաց
Ու տխուր ասաց.
— Ո՛չ, ի՞նչ եք ասում, ուղտը անկեղծ է,
Նրա վիշտն այսօր իսկապես մեծ է.
Չէ՞ որ թե մեռա, ու ձի չգտան,
Իմ բեռն էլ ուղտի շալակը կտան…

ԻՐ ԳՈՐԾԻ ԱՐՔԱՆ

Թատրոնում արքան
Տեսավ մի անգամ
Մի լավ դերասան՝ աշխույժ ու արի,
Դեր էր կատարում քաջ զորավարի:
Նա այնքան լավ էր կատարում դերը,
Որ թունդ էր հանում մարդկանց սրտերը:
Արքամ մտածեց.
«Թե տաղանդն այս մեծ
Դառնա իմ զորքի զորավարը քաջ,
Աշխարհը ծունկի կգա իմ առաջ…»:
Բայց դերասանը, երբ ներկայացավ
Ու թագավորի միտքը իմացավ,
Խոր գլուխ տվեց
Եվ հրաժարվեց.
— Արքա՛,— ասաց նա,— Ձեզնից ի՞նչ պահեմ.
Ես իմ գործի մեջ հզոր արքա եմ,
Քանզի այդ գործում ունեմ մեծ հանճար,
Իսկ կռվում, արքա՛, ես շատ եմ անճար,
Ինչո՞ւ իմ ազատ գահից իջնեմ վար,
Դառնամ Ձեր գահին հլու զորավար:
Տե՛ր իմ, չեմ կարող,
Ներեցե՛ք դուք ինձ,
Ո՞ր արքան կամով
Կիջնի իր գահից…

ԱՄԵՆԱՊԱՏԻԺ

Հզոր Աստվածը շատ էր զայրացել
Անհնազանդ մի ժողովրդի դեմ
Եվ քավարանում դատ էր բացել,
Որ հրեշտակները նրանց դատեն:

Բայց մեղքին հարմար պատիժ չէր ճարվում,
Ու հրեշտակները վիճում էին,
Նույնիսկ ժանտախտը մեղմ էր համարվում,
Իսկ ավելի խիստ պատիժ չունեին:

Հանկարծ Գաբրիելը եկավ հանդես՝
Մահվան հրեշտակը այն ահավոր.
— Տե՛ր,— ասաց,— մի ժանտ պատիժ գիտեմ ես՝
Տվե՛ք նրանց ապուշ մի թագավոր…

ՍՈԽԱԿՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ

Ագռավը մի օր հարցրեց սոխակին.
— Խնդրում եմ, ասես, քույրիկ թանկագին.
Ես էլ քեզ նման հավք ու թռչուն եմ,
Բայց ինչո՞ւ քեզ պես բարի բախտ չունեմ,
Մարդիկ քո հանդեպ
Հարգանք են տածում,
Իսկ ինձ ատում են
Ու միշտ հալածում:
— Պատճառը պարզ է, քույրիկ կռկռան,—
Պատասխան տվեց սոխակը նրան,—
Ես մարդկանց համար հյուսում եմ երգեր,
Իսկ դու նրանցից գողանում ես կեր…

ԳԵՏՆ ՈՒ ԱՌՈՒՆ

Ամռան արփին վառում էր խիստ,
Առուն տոթից չուներ հանգիստ,
Ուստի իր մեջ խորհեց այսպես.
— Վա՜յ թե շոգից չորանամ ես:
Եթե գետին ապավինեմ,
Ես վտանգից զերծ կլինեմ:
Եվ նա մի օր
Ոլոր–մոլոր
Գնաց գետին
Ընկեր դառավ,
Գետն էլ նրան
Իր գիրկն առավ…
Մինչև առուն ուրախ ծափեց,
Գետը նրան իսկույն լափեց,
Փորձեց գոռալ
Առուն տկար,
Սակայն ուշ էր,
Ինքը չկար…
Ահա ձեզ մի փոքրիկ առակ—
Թող իմանա ամեն առվակ,
Եթե առուն
Թափվում է գետ,
Նա կորչում է
Հար ու հավետ…

ՀՈՎԱԶՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Հովազը ընկած
Անել կիրճի մեջ,
Դունչը վեր տնկած՝
Ողբում էր անվերջ:
Լալիս էր տխուր,
Մազերն էր պոկում,
Եվ իր չար ու կույր
Բախտից բողոքում…
Սակայն մի մրջյուն
Վազում էր, շրջում
Իր համար անծայր,
Անսահման կիրճում,
Ու զարմանում էր
Հովազի վրա,—
Թե՝ ինչի՞ դեմ է
Բողոքը նրա…

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ

Անտառում կար ճոխ դիմակահանդես,
Գայլի դիմակ էր հագել մի աղվես
Եվ, հավատալով իր շինծու անվան,
Շրջում էր գոռոզ ու ամբարտավան:
Իսկ հաղթ առյուծը,
Այդ մեծահոգին,
Որ չահաբեկեր
Այնտեղ ոչ մեկին,
Հագել էր համեստ
Դիմակը գառան,
Աղվեսը իսկույն նրան ձեռ առավ.
— Է՛յ, դու փսլնքո՛ն, հապա մո՛ն արի:
Նրան մոտեցավ
«Գառնուկը» բարի:
— Հապա մի պպզի՛ր այս կոճղի վրա:
Առյուծ «գառնուկը»
Չառարկեց նրան:
— Ա՛յ, դու շատ ապրես, հիմա խոնարհվի՛ր:
«Գառնուկը» թեքեց
Հեզ գլուխը իր:
— Դե շուտ ցա՛ծ թռիր,— «գայլը» հոխորտաց:
«Գառնուկը» հլու
Կոճղից թռավ ցած:
— Հիմա կդառնաս դու ինձ համար ձի,—
Ասավ ու ցատկեց
Մեջքին առյուծի,
Ապա սկսեց ուժգին խթանել:
Առյուծն այլևս
Չէր կարող տանել:

Նա իսկույն նետեց դիմակը գառան
Ու սնապարծին թաթի տակ առավ…

Որքան էլ լինի դիմակներով լի՝
Կյանքը ճշմարիտ ուժինն է էլի,
Ուստի զգույշ կաց քո արարքներում.
Ամբարտավանին կյանքը չի ներում…

ՁՆԾԱՂԻԿԸ

Մեռնող ձմեռը
Դեռ ցուրտ էր անում,
Հողը նոր էր դեռ
Տեղ–տեղ սևանում:
Նոր էր կյանք զգում նա իր կրծքի տակ,
Երբ ձնծաղիկը՝ սիրուն սպիտակ,
Բաց արեց նախշուն աչիկները թաց
Ու մերկ մանկան պես ցրտից սրթսրթաց:
Արմատի վրա
Չարացած մի փուշ,
Երբ տեսավ նրան,
Շշնջաց զգույշ.
— Օ՜, հիմա՛ր ծաղիկ, ե՛տ գնա փութով,
Թե չէ չար հողմը կփչի շուտով,
Եվ դու կմեռնես, իզուր է ջանքդ,
Մի՞թե չես տեսնում, որ կարճ է կյանքդ:
— Այո՛, չեմ ժխտում,
Կյանքս շատ կարճ է,
Բայց իմացի՛ր դու՝
Ինձ համար ցավ չէ,
Քանզի իմ հոգում՝ արևից էլ տաք,
Կա անմարելի մի վեհ նպատակ,
Ես եմ ամենքին ավետիս տալիս,
Թե՝ հե՜յ, արթնացե՛ք, գարուն է գալիս…
Իսկ ավետաբեր
Լինելու համար
Պիտի միշտ լինել
Ըմբոստ ու համառ:

ԷՇԻ ԴՐԱԽՏԸ

Մի կիրակի՝ լուսաբացին,
Էշը մտավ եկեղեցի.
Տեսավ այնտեղ մարդկանց բազում
Եվ տերտերին, որ քարոզում
Ու պահանջում էր ամբոխից
Հեռու մնալ քեն ու ոխից,
Չըմբոստանալ ընդդեմ չարի,
Ամեն անգամ գործեն բարի,
Այս աշխարհում տանջված մնան,
Որ մեռնելիս դրախտ գնան,
Որտեղ կյանքն է միշտ ապահով,
Կամքը՝ ազատ, ապրուստը՝ ծով,
Չկան մաշող ցավ ու հոգսեր,
Կա լոկ վայելք, գգվանք ու սեր…
Երբ տեր հայրը ոգևորված,
Դրախտի ճոխ փառքով տարված,
Օրհներգի մեջ առաջ անցավ,
Դրախտն էշին
Պատկերացավ
Անծայրածիր մի արտ գարու,
Ու կողքին էլ՝ մի զով առու…

ԱՆՆԵՐԵԼԻ ԱՐԱՐՔ

Ծեր ուղտապանը ծանր հիվանդ էր,
Նայում էր ուղտին և հոգոց հանում:
Ուղտը նկատեց, ասաց տխրադեմ.
— Տե՛ր իմ, դուք ինչ–որ բա՞ն եք ցանկանում:

— Այո՛, սիրելի՛ս,— հիվանդը տնքաց,—
Վատ արարքներս չմտաբերես.
Քեզ միշտ պահել եմ բեռի տակ կքած,
Եվ շատ եմ ծեծել… Խնդրում եմ՝ ներես:

— Բոլոր մեղքերդ կներեմ, ի՛մ տեր,
Չեմ հիշի նաև, որ ծեծ եմ կերել,
Սակայն նողկալի մի արարքը Ձեր,
Ես քանի ողջ եմ, չեմ կարող ներել:

Ձեր այդ արարքը սպանում էր ինձ,
Տե՜ր Աստված, դա ինչ սոսկալի բան էր,
Դուք կապում էիք ինձ ավանակից,
Որպեսզի նա ինձ տիրություն աներ…

ԳՈՂԻ ԸՆԿԵՐԸ

Ագռավը արծվին խնդրեց մի անգամ.
— Թո՛ւյլ տուր՝ հզորիդ դառնամ բարեկամ,
Դառնամ քեզ ընկեր՝ ազնիվ ու շիտակ,
Ինձ հպարտ զգամ քո հովանու տակ:
Մեծամիտ արծվին այդ էր հարկավոր:
— Շատ լավ,— ասաց նա,— դարձի՛ր, ինչ կա որ…
Հենց որ այդ մասին
Բոլորն իմացան,
Մեր ագռավ ազին
Իր գործին անցավ.
Ուրիշ բներից ձու էր «թռցնում»
(Արծվին այդ մասին չէր էլ հարցնում):
Սակայն շատ շուտով գաղտնիքը բացվեց,
Ու աշխարհով մեկ լուրը տարածվեց,
Թե՝ գող ագռավն է ձվերը տանում,
Ընկեր արծվին էլ բաժին է հանում:
Արծիվը լսեց, բայց ուշ էր արդեն,
Իզուր էր իրեն խփում դեսուդեն.
Չէր կարողանում
Նա ապացուցել,
Որ ինքն այդ բանում
Մեղք չի ունեցել,
Քանզի ով լսում, ասում էր ազդու.
— Ընկերդ գող է, գող ես նաև դու…

✧ ✧ ✧

Լավ ականջ դրեք իմ այս խրատին,
Խելոք մարդն ընկեր չի դառնա վատին…

ՍՈԽԱԿԻ ՑԱՎԸ

Սոխակը, տխուր նստած վանդակում,
Մտքով ճախրում էր նոր ծաղկած այգում,
Հիշում էր ազատ
Օրերն իր անցած,
Բույնը հարազատ,
Վարդը նորաբաց,
Երեկոները՝
Երգի ու խաղի,
Ապա արցունք էր
Թափում դառնաղի:

Մոտիկ վանդակից կաչաղակը ծեր
Ասաց,— իզուր է ողբ ու լացը Ձեր,
Դուք ոչ մի բանի չեք հասնի լալով,
Այստեղ բոլորս ենք ապրում նույն հալով.
Այն օրից, երբ ինձ այստեղ են բերել,
Ես ոչ մի անգամ դեռ կուշտ չեմ կերել,
Դիմացի՛ր, եղբա՛յր,
Պետք է համբերել:
Սոխակն ընդհատեց իր հեկեկոցը.
— Կորի՛ր,— ասաց,— դու գրողի ծոցը,
Այսօր ոչ մի կեր աչքիս չի գալիս,
Ես ուրիշ բանի համար եմ լալիս,
Ինձ մարդկանց այն չար արարքն է տանջում,
Որ վանդակելով՝ երգ են պահանջում…

ԷՇՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Էշը շալակած
Մի բեռ լավաշ հաց,
Շանն ընկերացած,
Անահ, աներկյուղ
Գնում էին գյուղ:

Իշուկը ճամփին չէր սովածանում,
Նա ճամփեզրերին արոտ էր անում,
Իսկ շանը, որին խորթ էր արոտը,
Տանջում էր լավաշ հացի կարոտը:
— Իշո՛ւկ,— ասաց նա,— մեռնում եմ սովից,
Չէ՞ որ ընկեր ենք, մի քիչ հա՛ց տուր ինձ:
— Ո՛չ,— իշուկն ասաց,— ես քեզ ի՞նչ ընկեր,
Թե որ ընկեր ես, ինձ նման խոտ կեր:
Շունը վրդովվեց,
Բայց ցույց չտվեց:

Սակայն քիչ հետո, երբ մթնեց օրը,
Եվ ճամփան թեքվեց ու մտավ ձորը,
Ձորում երկու գայլ
Լուռ ու համրաքայլ
«Դիմավորեցին» ճամփորդներին մեր.
Շունը տեսնելով՝ ելավ սարն ի վեր:
Իսկ էշը, վախից աչքերը չռած,
Նրա հետևից ողբաձայն զռաց:
Սակայն իշուկը
Ձուր էր աղաչում,
Վրդովված շունը
Նույնիսկ չէր հաչում.
Նա բարձրանում էր

Կատարը լեռան,
Եվ գայլերն հանգիստ
Իշուկին կերան:

✧ ✧ ✧

Ընկերոջ հանդեպ եղիր անբասիր,
Որ հետո ասես՝ օգնությա՛ն հասիր:

ՑԱԽԱՔԼՈՐՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Թաթը դրած սոված փորին՝
Աղվեսն ասաց ցախաքլորին.
— Սանահե՛ր ջան, կյանքս վկա,
Հենց լսեցի՝ քեզ մոտ եկա.
Եկա պատմեմ՝ ուրախանաս,
Դու էլ քո փակ սիրտը բանաս:
Հրաման է տրված վերից,
Որով, սկսած հենց այս օրից,
Գազանները ողջ աշխարհի,
Լինեն նրանք չար, թե բարի,
Պիտի ազատ ասեն–խոսեն
Ու մեկմեկու չվնասեն…
Բա՜հ, դեռ ինչեր պիտի լսենք,
Դե ցա՛ծ թռիր, մի քիչ խոսենք:
Աքլորն ասաց. «Չեմ հավատում,
Որքան որ իմ խելքն է դատում,
Այդ հրամանն անիմաստ է,
Որովհետև վաղուց փաստ է,
Որ բնության կամքով վերին՝
Թույլը կեր է ուժեղներին»:

ԱՂԲՅՈՒՐՆ ՈՒ ՍԵԼԱՎԸ

Սև ամպերից մթնեց օրը,
Թուխպը եկավ լցվեց ձորը,
Ամպը գոռաց, շանթը շողաց,
Դղրդոցից ժայռը դողաց.
Սկսվեց հորդ տեղատարափ,
Ջուրը բռնեց կիրճ ու քարափ,
Ամեն փոսից առու ելավ,
Տեղից պոկվեց մի գիժ սելավ.
Բերնին՝ փրփուր, հորձանք տալով,
Ահազարհուր հոխորտալով՝
Ջորը խուժեց նա սրընթաց
Եվ ողջ ուժով ահեղ թնդաց.
— Ես արքան եմ ողջ ջրերի,
Հզոր եմ ես ու անթերի.
Հրաման է, որ այսուհետ
Ինձ ենթարկվեն աղբյուր ու գետ,
Եվ վա՜յ նրան, ով փորձ կանի
Կամքիս ընդդեմ ծպտուն հանի…
— Մի՛ հոխորտա, ո՛վ սնապարծ,—
Սարալանջից աղբյուրն ասաց,—
Քեզպեսներին ծանոթ եմ ես,
Դուք ձեզ ծնող փոթորկի պես
Մի պահ գալիս, գոռում, գոչում
Եվ գնում եք, անհետ կորչում.
Մինչդեռ ես կամ ու կլինեմ,
Քանզի ուրույն ակունք ունեմ,
Իսկ ով ունի ուրույն ակունք,
Նրա հանդեպ անզոր եք դուք…

ՓԾԻ ԱՐՏԵՐԸ

Շատ էր խառնակ ժամանակը,
Արքա դարձավ ավանակը:
Հենց որ բազմեց հզոր գահին,
Ողջ զորությամբ իր էշային
Մի հրաման իսկույն գրեց.
«Թող իմանան մանուկ ու մեծ,
Որ հիմնական խնդիրն է մեր՝
Ամեն մեկին տալ առատ կեր:
Կերի մեջ է մեր ողջ ուժը,
Իսկ լավ կեր է միայն փուշը,
Որը անչափ սիրում եմ ես,
Կբազմանա՝ ինչքան ուզես:
Հարկավոր է ցանել միայն,
Եվ գետի պես կհորդի այն,
Ու մենք փշով սննդարար
Կնվաճենք աշխարհն արար:
Ուստի այս է պատգամը մեր՝
Փուշ ցանեցեք արտերը ձեր:
Ով իր արտը փուշ չցանի,
Կարժանանա դատաստանի»:
Նման պատգամ
Ոչ մի անգամ
Ոչ մի արքա դեռ չէր տվել:
Սկսեցին խիստ հետևել.
Ով որ դեմ էր, իսկույն դատվեց,
Ու երկիրը փշապատվեց:

✧ ✧ ✧

Ես առակի պատմողն եմ լոկ,
Այն լսել եմ մի ծերուկից,
Շատ բան տեսած ծերն այդ խելոք
Այսպես ասաց մի անգամ ինձ.
— Դուք ցո՛ւյց տվեք ինձ արտերը,
Ասեմ՝ ով է հողի տերը…

ՊԱՌԱՎԻ ԱՅԾԸ

Պառավն ուներ մի հատիկ այծ՝
Բաժին դառավ գայլի փորին,
Բայց պառավը գայլին թողած՝
Անիծում էր թագավորին:

Լուրը թռավ բերնեբերան
Ու շատ շուտով պալատ հասավ,
Երբ պառավին պալատ տարան,
Թագավորը նրան ասավ.

— Թե ճիշտն ասես, պառա՛վ ջադու,
Խոսք եմ տալիս՝ մեղքդ ներել,
Ինչո՞ւ ես ինձ անիծում դու,
Երբ քո այծը գայլն է կերել:

— Ճիշտը կասեմ, ինձ ինչ կա որ,
Հենց հիմա էլ գլուխս զարկ,
Թե լինեիր լավ թագավոր,
Կլիներ լավ օրենք ու կարգ:

Եվ մեր գյուղն էլ՝ կարգին հլու,
Կունենար լավ հովիվ ու տեր,
Լավ հովիվը չէր թողնելու,
Որ իմ այծին գայլը ուտեր…

ԽԼՈՒՐԴԻ ՉԱՓԱՆԻՇԸ

Բարձր թռիչքի համար հաղթ արծվին
Ամենաբարձր պարգևը տվին,
Փառաբանեցին նաև ամենուր
Նրա հայացքը՝ թափանցող ու սուր:
Բայց երբ այդ մասին խլուրդին ասին,
Նա լսեց հանգիստ ու… զայրացավ խիստ.
— Չէ՛, արդարություն չկա ոչ մի տեղ,
Թե չէ արծիվը ինչո՞վ է ուժեղ,
Ինչի՞ համար է կյանքում ոգորել,
Նա դեռ, իր օրում, մի անցք չի փորել…

ԽԻԿԱՐԻ[1] ԴԱՍԸ

Հարուստի մեկը դիմեց Խիկարին.
— Ինչքան փող ուզես՝ ես կարող եմ տալ,
Միայն ինձ դաս տուր մի քանի տարի,
Ես էլ եմ ուզում
Այլոց մտքերը քեզ նման կարդալ:
— Դե ինչ, փող է պետք, համաձայն եմ ես,—
Ասաց Խիկարը,— ես կտամ քեզ դաս,
Բայց, գիտցի՛ր, եթե ինքդ միտք չունես,
Լոկ սովորելով՝
Այլոց մտքերը դժվար թե կարդաս…

1. Խիկար — Արևելքի ավանդական իմաստուն:

ՀԱՎԱՏԸ

Գայլը որջում գտավ արջին
Ու հաղորդեց լուրը վերջին.
— Լսի՛ր, ապե՛ր, ձի եմ գտել,
Բայց չեմ կարող մենակ ուտել,
Արի մեկտեղ դաշն կապենք,
Գնանք ձիու փորը թափենք:
— Գա՛յլ բարեկամ,— արջը ասաց,—
Կասկածում եմ, անկեղծ ասած,
Այնքան էլ չեմ հավատում քեզ,
Սակայն սովից սատկում եմ ես,
Պետք է սնվեմ ինչ–որ բանով,
Ուստի կգամ մի պայմանով՝
Պիտի կապեմ քեզ ինձանից,
Որ դու հանկարծ չլքես ինձ,
Թե ձախողվի մեր այս քայլը:
— Համաձայն եմ,— ոռնաց գայլը…
Նրանք ձիուն դեռ չհասած՝
Ձին նկատեց, մտքում ասաց.
«Որքան որ իմ խելքն է դատում,
Արջը գայլին չի հավատում,
Դրա համար է պինդ կապել.
Հարկավոր է արջին խաբել»:
Ապա որքան իր մեջ ուժ կար,
Նա վրնջաց զիլ ու երկար.
— Է՜յ, սրիկա՛ գայլ սրականջ,
Դու ինձ պարտք ես քառասուն արջ,
Սակայն այսօր մեկն ես բերել,
Երբ ես վաղուց արջ չեմ կերել,
Երևի քեզ շատ եմ ներել…
Արջն այս բանը հենց իմացավ,

Ահաբեկվեց, չդիմացավ,
Այնպես փախավ ու ձիգ տվեց,
Որ նույն պահին գայլը խեղդվեց:

✧ ✧ ✧

Սա առակ է մի հնավանդ,
Թե գործի մեջ չկա հավատ,
Գործի վերջը լինում է վատ…

ՊԱՏԳԱՐԱԿԻ ՃԱՌԸ

Գործիքների մեծ հանդես էր
(Նման դեպքեր շատ եմ տեսել),
Խրախուսված մի պատգարակ
Ճառ էր ասում երկար–բարակ.
— Հանդիսավոր այս վեհ պահին,
Երբ հիշում եմ մեր կյանքը հին
Մութ խորշերում հին քաղաքի,
Քիչ է մնում սիրտս ճաքի,
Սոսկալի է նույնիսկ հիշել,
Բանում էինք օր ու գիշեր:
Ա՛յ, վկա են մուրճն ու բահը,
Մեր ապրելուց լավ էր մահը.
Փորում էինք, կրում, սարքում,
Սակայն ոչ ոք մեզ չէր հարգում:
Մինչդեռ այսօր ունենք անուն,
Ու թե դարձյալ շատ ենք բանում,
Բայց դա արդեն սիրտ չի խոցում,
Մենք պալատներ ենք կառուցում:
Հապա նայե՛ք դուք ձեր շուրջը…
— Վե՛րջ տուր,— տեղից գոռաց մուրճը,—
Բավական է գլուխ տանես,
Լավ իմացիր՝ ինչ էլ անես,
Պալատ շինես դու, թե մարագ,
Մնալու ես միշտ պատգարակ,
Եվ քո տեղը նկուղն է մութ,
Անօգուտ է քո ճառը սուտ…

ԱՆԱՊԱՏՆ ՈՒ ԱՐԵՎԸ

Արևին ասին՝ անապատը չոր
Քեզնից դժգոհ է, բամբասում է քեզ,
Ասում է՝ նրա շոգն է մեղավոր,
Որ տատասկոտ եմ ու չոր եմ այսպես:
Ժպտաց արևը տիեզերական ժպիտով իր մեծ
Ու պատասխանեց.
— Իմ շոգից վարդն է փթթում պարտեզում,
Հովտում աճում է փարթամ խոտ ու ծառ,
Ես ի՞նչ մեղք ունեմ, որ իր ավազում
Աճում են միայն փշեր ու մացառ…

ԱՐԾՎԻ ՎԻՃՏԸ

Վատ ժամանակ էր, կչկչան հավին
Արծվի մեծ տիտղոս ու պատիվ տվին:

Սակայն, երբ լուրը ծեր արծվին հասավ,
Արծիվը տխրեց և այսպես ասավ.

— Դրանով արծիվ չդարձավ հավը,
Լոկ նսեմացավ մեծի համբավը…

ԴԱՍԸ
(Աղվեսագրքից)

Առած գայլին ու աղվեսին՝
Առյուծ արքան ելավ որսի,
Բայց դեռ չէին մտել անտառ,
Երբ ճանկեցին մի ամլիկ գառ.
Եվ դիմեցին գայլին այսպես.
Թե՝ ի ծնե մսագործ ես,
Վերցրո՛ւ, ավարը բաժանի՛ր՝
Դիրքի վայել ու արժանի:
— Առյո՛ւծ արքա,— գայլը խոսեց,—
Մեր հովանի՛, մեր տե՛ր ու մեծ,
Դու քանի որ մեր գլուխն ես,
Մեր ավարի գլուխը քեզ:
Դեհ, աղվեսը՝ ոտքերդ է նա,
Ուստի ոտքերը կստանա.
Իսկ ավարի մնացորդը
Թող ստանա քո խեղճ ճորտը…
Երբ բաժանումն այսպես պրծավ,
Հզոր արքան խիստ բարկացավ,
Ապա գայլին խեղդեց ձեռաց
Ու աղվեսի վրա գոռաց.
— Նա ստացավ բաժինը իր,
Այժմ վերցրո՛ւ, դու բաժանի՛ր:
Ու աղվեսը սկսեց այսպես.
— Դեհ, խոսք չկա, գլուխը Քեզ,
Եվ որպես մեր մեծն ու տերը՝
Քերն են դմակն ու մսերը,
Ու ձմեռն էլ որ ապրեք տաք,
Մորթին առեք՝ իբրև մուշտակ,
Թե ցանկանա մեր մեծ տերը,

Ես էլ կառնեմ լոկ ոտքերը…
— Ա՛յ, ապրես դու,— գոչեց արքան,—
Եվ չէր լինի խելոք այդքան
Հարյուրամյա մի մսագործ…
Քեզ որտեղի՞ց այդքան մեծ փորձ:
— Հզո՛ր արքա, ապրած կենաս,
Գայլի բախտը եղավ ինձ դաս…

ԳԱԶԱՆԸ

Փախչում էր մուկը՝
Սարսափը հոգում,
Եվ անտառով մեկ
Ահազանգ տալիս.
— Փախե՞ք, ազատվե՞ք,
Ով կա մոտերքում,
Հզոր գազանը
Այստեղ է գալիս:

Վախից քոթոթի
Սիրտը փորն ընկավ,
Եվ նա դողալով
Իր մորը դիմեց,
— Մայրի՛կ, շուտ փախչենք,
Թե չէ, որ եկավ,
Մեզ կհոշոտի
Այդ գազանը մեծ:
— Որդի՛ս,— արջն ասաց,—
Դու մի՛ վախենա,
Երբ որ մկնիկն է
Սարսափած կանչում.
Անշուշտ կատվին է
Հեռվում տեսել նա,
Կատվից մեծ գազան
Նա չի ճանաչում…

ՈՉԽԱՐՆԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԵՐԸ

Գայլն ու իր ձագը, սաստիկ անոթի,
Հետևում էին ոչխարի հոտին:
Դարանել էին խիտ թփերի մեջ,
Հարմար պահ էին որոնում անվերջ,
Որ վրա պրծնեն ու մի գառ թռցնեն:
Բայց չէր հաջողվում նրանց այդ բանը,
Հոտին հսկում էր զինված չոբանը:
Երբ իզուր անցավ ձախողակ օրը,
Ձագը զայրացած դիմեց իր մորը.
— Մայրի՛կ,— ասաց նա,— չեմ հասկանում ես.
Ամեն առիթով դու ինձ ասել ես,
Որ ոչխարները մեզանից թույլ են,
Հիմար են, վախկոտ, չափազանց ծույլ են,
Որտեղ որ թողնես, այնտեղ են մնում,
Ամեն անգամ լոկ մի գառ են ծնում.
Մինչդեռ գայլերս քաջ ենք, համարձակ,
Մեկեն ծնում ենք հինգ, անգամ վեց ձագ:
Հապա ինչպե՞ս է, որ նրանք շատ են,
Իսկ գայլը քիչ է, պատճառը ի՞նչ է:
— Ճիշտ հարց տվեցիր, գայլո՛ւկ իմ խելոք,
Ասեմ՝ իմացի՛ր, պատճառն այն է լոկ,
Որ ոչխարները ունեն հզոր տեր,
Իսկ անպաշտպան է հզոր ցեղը մեր…

ԲՈՒԻ ՈՂԲԸ

— Ու–հո՜ւ, հու–հո՜ւ,
Ու–հո՜ւ, հո՜ւ–հո՜ւն,—
Ավերակում լալիս էր բուն:
— Սանամե՛ր բու, ի՞նչ է եղել,
Ի՞նչ նոր վիշտ է սիրտդ նեղել,
Թե՞ հիշել ես վշտերդ հին,—
Չղջիկն ասաց լացող բուին:
— Օ՜, ի՞նչ հին վիշտ,— բուն եղերգեց,—
Կատարվել է աղետ մի մեծ.
Երեկ մեռավ թագավորը,
Ա՜խ, սևացավ մեր լավ օրը:
— Զարմանում եմ, սանամե՛ր բու,
Որ շատ խորն ես վշտացած դու:
Նա մեռել է, իր որդին կա,
Հո չենք մնա առանց արքա:
— Չէ, քավո՛ր ջան, դու չգիտես,
Հանգուցյալին լավ գիտեմ ես,
Ես թաղել եմ վեց թագավոր,
Բայց սա ուրիշ մարդ էր, քավո՛ր,
Քանի դեռ նա թագավոր չէր,
Գիտե՞ս մեր ու ձեր օրն ինչ էր,
Չկար գեթ մի ավերակ տուն,
Որ մենք այնտեղ դնեինք բույն.
Բայց հենց որ նա տիրեց թագին,
Փոխվեց երկիրն ավերակի…
Ապրում էինք հեշտ ու անվախ,
Իսկ նա այսօր չկա, ավա՜ղ…
Այստեղ նորից փղձկաց բուն
Եվ սկսեց իր ու–հու–հուն:

ՄՈԼԱԽՈՏԸ

Իր ուշիմ թոռին
Պապը խրատեց.
— Զավա՛նս, հացը սուրբ է մեզ համար,
Երբեք ցորենի
Ծիլը չպոկես.
Ով այդ բանն անի՝ անիծված է հար:

Բայց մի վատ տարի
Գազար էր ցանել
Պապը իր նախկին ցորենի արտում.
Թափված ցորենը
Ծիլեր էր հանել,
Որոնց պոկում էր ծերուկը տրտում:

Ու հանկարծ թոռը
Սարսափով տեսավ՝
Պապը ցորենի ծիլ էր քաղհանում.
Սաստիկ զարմացած
Նա պապին ասաց.
— Պապի՛, ախր դու… Այդ ի՞նչ ես անում:

— Այո՛, զավա՛նս,—
Ծերուկն հառաչեց,—
Ցորենի ծիլը ես էլ եմ պաշտում,
Սակայն այս դեպքում
Չեն անիծի մեզ՝
Այն մոլախոտ է գազարի դաշտում…

ԳԼՈՒԽՆ ՈՒ ՈՏՔԵՐԸ

Անուս–անգետ մի գյուղացի՝
Հանուն օրվա ցամաք հացի,
Խեղճ ու կրակ, մտամոլոր,
Բեռ էր կրում տարին բոլոր:
Սակայն անվերջ կրած բեռից
Վերջը ընկավ ոտ ու ձեռից,
Ոտքերի մեջ սողոսկեց ցավ,
Անբուժելի հիվանդացավ:
Եվ այդ օրից խեղճը սոված,
Դռներն ընկած՝ մուրում էր հաց:
Մի օր էլ, երբ հոգուն հասավ,
Նա գլուխը զարկեց քարին,
— Թողե՛ք,— ասավ,—
Ես ջախջախեմ էս հիմարին,
Չէ՞ որ եթե սա աշխատեր,
Չէին լինի էսքան անտեր,
Էսքան թշվառ, խեղճ ու անճար
Իմ ոտքերը բազմաչարչար…

✧ ✧ ✧

Այս առակի միտքը այն է
(Եվ դա վաղուց հայտնի բան է),
Երբ գլուխը չի աշխատում,
Ոտքերին է ցավը պատում…

ԱՐԴԱՐ ՍԱՀԱԿԸ

Սրերով զինված երեք ավազակ,
Մի ամառային ամպամած գիշեր,
Չի զողանալու ցանկությամբ անհագ՝
Սարից ծպտված գյուղ էին իջել:

Բայց ձիանոցի պահակը պարթև,
Գործի դնելով մահակն իր ձեռի,
Ավազակներին ոչ միայն ջարդել,
Այլև կապոտել, վերցրել էր գերի:

Երբ առավոտյան լուրը տեղ հասավ,
Եվ մարդիկ փութով եկան դեպքի վայր,
Մեկը զարմանքով պահակին ասավ.
— Որ քեզ չեն մորթել, հրաշք է, եղբա՛յր:

— Ո՛չ, չէին կարող նրանք ինձ մորթել,—
Համոզված ու խիստ ասաց պահակը,—
Ես գիտեի, որ անարդար սրից
Միշտ էլ հզոր է արդար մահակը…

ԿԱՏՎԻ ԵԼՈՒՅԹԸ

Համաժողով էր գումարել
Իր պալատում առյուծ արքան,
Որ իմանար՝ ինչ են արել
Գազանները պալատական:

Ձայնը տվեցին կատվին մռռան,
— Ո՛վ պարոններ,— ասավ կատուն,—
Ես եմ հսկում տուն ու մառան
Իմ կնոջ հետ խանում–խաթուն:

Բայց իմացեք՝ մենք երկուսով
Քիչ ենք այդ գործի համար,
Եթե մնաք լոկ մեր հույսով,
Ձեզ կխեղդեն մկները չար:

Որս անելը գործ չէ թեթև,
Դա հայտնի է ձեր բոլորին,
Հանձնարարե՛ք, այսուհետև
Թող մուկ որսան ուղտն ու ջորին:

Ուղտը անզոր շուրջը նայեց,
Ջորին գոռաց. «Վա՜յ մեր պատվին»,
Ուստի արքան հրամայեց.
— Գործը դարձյալ թողնել կատվին…

Երբ տուն դարձան, տիկին կատուն
Իսկույն բռնեց խոսքի տուտը,
— Ա՛յ մարդ, հիմա ինձ ասա դու,
Ի՞նչ միտք ուներ քո ելույթը,

Չէ՞ որ եթե մենք երկուսով
Լոկ մի տարի գործենք համառ,
Կտարածենք մկան մեծ սով,
Մուկ չի մնա դեղի համար:

— Լռի՛ր, հիմա՛ր,— փշտաց կատուն,—
Թե քեզ լսի արքան ինքը,
Էլ չի պահի մեզ պալատում,
Կկրճատի մեր հաստիքը…

ԱՐՋԻ ԴԱՏԸ

Այնպես եղավ, որ մի տարի
Դատավոր էր արջը բարի:
Կուղբը եկավ, նրան դիմեց.
— Ո՛վ անաչառ դատավոր մեծ,
Տզզան ճանճը՝ հարևանս,
Ինձ կործանեց, բուրդ է բանս.
Գոռ արքայի ականջի տակ,
Թարսելով իմ խոսքը շիտակ,
Զրպարտել է նա ինձ այնքան,
Որ զայրացած առյուծ արքան
Ինձ տեղնուտեղ ամբաստանել,
Որոշել է մորթիս հանել:
Ես ո՞նց ապրեմ առանց մորթու,
Ինձ փրկողը մնում ես դու:
Աղաչում եմ՝ արդար դատես,
Ճանճի թունոտ լեզուն հատես
Եվ կորստից ինձ ազատես:
— Չէ՛, բարեկա՛մ,— տնքաց արջը,—
Անիմաստ է քո պահանջը:
Ես կարող եմ ճանճին դատել,
Կանչել ատյան, լեզուն հատել,
Կարող եմ և կյանքից զրկել,
Բայց չեմ կարող ես քեզ փրկել,
Քանզի որքան գիտեմ գործից
Եվ դատական իմ ողջ փորձից,
Քանի դեռ կա ճանճին լսող հզոր ականջ,
Չի պակասի զրպարտիչ ճանճ…

ՆԱՊԱՍՏԱԿՆ՝ ԱՐՔԱ

Չգիտեմ՝ ո՞ւր և ո՞ր տարին
Գազանները ժողով արին,
Որ անտառում իրենց համար
Մի թագավոր կարգեն հարմար:
Պահանջվում էր լավ թեկնածու,
Սկսվեց մեծ իրարանցում…
Երբ խոսք բացվեց փղի մասին.
— Դանդաղկոտ է փիղը,— ասին:
— Իսկ առյո՞ւծը, ի՞նչ եք կարծում…
— Համաձայն չենք մենք այդ հարցում.
— Ի՞նչ է, պիտի կյանքում անվերջ
Ապրենք ահ ու սարսափի մե՞ջ…
— Ընտրենք վագրին կամ հովազին…
— Ձայնդ կտրի՛ր, հիմա՛ր թազի,
Ձե՞ռ ես առել դու մեզ, ի՞նչ է,
Դրանք ստոր ու անխիղճ են…
— Ախր, ինչո՞ւ գայլին թողնել…
— Էլ մի՛ խոսիր, գայլը գող է,
Իմ կարծիքով արջն է հարմար,
— Ի՞նչ ես խոսում, շատ է հիմար.
Ուղտին ընտրենք, ուղտը ո՞ւր է…
— Ուղտը բիրտ ու ծուռումուռ է.
Գահը դոկտոր աղվեսին տանք…
— Չէ՛, նա կեղծ է ու խորամանկ…
— Դե՛հ, ինձ լսեք, ո՛վ պարոններ,—
Առաջ եկավ աղվեսը ծեր,—
Թե որ կուզեք, որ նոր արքան
Լինի ազնիվ ու պատվական,
Լինի համեստ, անկեղծ ու պարզ,
Բարեհոգի և անվնաս,

Եվ գործերն էլ այնպես տանի,
Որ ամեն ոք… ուզածն անի,
Այդպիսի մի թեկնածու կա,
Մեր հարգարժան շլդիկն է դա:
Իմ կարծիքով, նրա օրով
Էլ չենք ապրի սոված փորով…
— Կեցցե՜ արքան՝ մեր նոր տերը,—
Ձիլ ոռնացին գազանները:

Ու շլդիկը արքա դարձավ,
Առոք–փառոք գահ բարձրացավ…

✧ ✧ ✧

Չգիտեմ, թե նրա օրով
Ո՞վ էր ապրում սոված փորով,
Կամ կյանքն ո՞ւմ էր դրախտ թվում,
Սակայն մի միտք էր պտտվում
Ու անցնում էր բերնեբերան,
Թե՝ անտառում իրար կերան…

ԱՐԺԱՆԻ ՊԱՐԳԵՎ

Ձին խրտնել էր և արքային վար կգցեր,
Թե չփրկեր դեմը ելած հովիվը ծեր:
— Կեցցե՛ս, հովիվ,— ասաց արքան,—
Փրկված եմ ես. ընդունված է,
Որ քո քաշով ոսկի տամ քեզ:
Եվ ես կտամ, արքան տեր է տված խոսքին,
Միայն, ասա՛, դու ի՞նչ կանես այդքան ոսկին:
— Ապրած կենաք, ո՛վ թագավոր, մեր գլխի՛ տեր,—
Ասաց հովիվն ու խոնարհեց գլուխը ծեր,—
Հոտ եմ պահել այս սարերում հիսուն տարի,
Խեղճ ոտներս շատ եմ խփել կոշտ ու քարի,
Ուստի կյանքում ես լոկ մի միտք եմ փայփայել՝
Ձի ունենալ և այն հեծած՝ հոտը պահել:
Միշտ խորհել եմ, թե տիրանամ հանկարծ գանձի,
Ես դրանով պիտի գնեմ ինձ համար ձի:
— Տվե՛ք նրան մի ընտիր ձի,— գոչեց արքան,—
Նրա համար գանձարանիս ամենամեծ
Գոհարն անգամ չարժե այդքան…

ՔԱՄՈՒ ԲԵՐԱԾԸ

Մի օր քամին,
Սուլելով սուր,
Բերան առած՝ քշեց–բերեց
Սիրամարգի
Մի լավ փետուր
Եվ ագռավի թևը խրեց:

Այնքան փքվեց
Ագռավը սև,
Որ կատարյալ փորձանք դարձավ,
Սակայն մի օր
Քամին թեթև
Այդ փետուրը պոկեց տարավ:

Դրա համար
Նա ամեն օր
Լաց էր լինում՝ գլխին տալով,
Իսկ երբ մի օր
Իր վիշտը խոր
Սիրամարգին պատմեց լալով՝

Սիրամարգը
Ասաց նրան.
— Կարիք չկա այդքան լալու,
Քամու բերած
Ամեն մի բան
Դարձյալ քամին է տանելու…

ՅՈԹ ԴԱՅԱԿ

Մի անժառանգ
Իշխան մարդու
Ծնվեց մի օր արու զավակ,
Նա էլ հանուն
Իր մեկ որդու
Վարձեց յոթը հմուտ դայակ:

Դայակները
Մի շաբաթով
Հավաքվեցին լուրջ խորհրդի,
Որ որոշեն,
Թե ինչ կաթով
Պետք է սնվի նրա որդին:

Սակայն անցավ
Մի շաբաթը,
Դեռ խորհուրդը նիստ էր անում,
Քանզի մեկի
Նշած կաթը
Մեկ ուրիշը չէր հավանում:

ԽԱՂԱՂԱՍԵՐ ԳԱՅԼԸ

Գայլն անտառում տեր էր դարձել
Եվ այնքան էր չափը անցել,
Որ խժռում էր՝ ում պատահեր,
Հանդիպողի համար մահ էր:
Ո՛չ քաշվում էր, ո՛չ ամաչում,
Ո՛չ էլ օրենք էր ճանաչում:
Չկար մեկը գազաններից,
Որ չէր տուժել նրա ձեռից,
Ուստի նրանք ընկերացան
Եվ ճարեցին մի հրացան:
Երբ այդ մասին գայլն իմացավ,
Ահաբեկված գործի անցավ,
Նա սոսկալով հայտարարեց,
Թե այդ զենքը աղետ է մեծ:
— Օ՜, եղբայրնե՛ր,— ոռնում էր նա,—
Եթե բանը այսպես գնա,
Էլ անտառում շունչ չի մնա.
Կկործանվենք բոլորս, ավաղ,
Եկե՛ք ապրենք հաշտ ու խաղաղ,
Եկե՛ք այդ չար զենքը թաղենք,
Ուշ կլինի, թե հապաղենք…
Արջ ապերը չհամբերեց,
Ծուռտիկ թաթը տարավ–բերեց,
Գայլի դնչին տվեց ապտակ
Ու որոտաց ականջի տակ.
— Գա՛յլ, եթե դու խաղաղ մնաս,
Անշունչ զենքից քեզ ի՞նչ վնաս…

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Կյանքից ձանձրացած մի ծեր ծովահեն
Կամովին եկել մտել էր պալատ
Եվ պահանջել էր, որ իրեն դատեն,
Ու թագավորը բացել էր մեծ դատ:

Վեզիրը՝ նման խրոխտ աքլորի,
Վարում էր դատը՝ թափ տալով թևը.
— Ահա կանգնած է, ի ցույց բոլորի,
Քառասուն տարվա մարդակեր դևը…

Ապա արքան է խոսքն առաջ տանում.
— Կախե՛լ, փրկության արժանի չէ սա,
Հապա, ոճրագո՛րծ, ի՞նչ ես ցանկանում,
Մեռնելուց առաջ վերջին խոսքդ ասա:

— Կուզեմ, որ ինձ հետ կախեն նաև քեզ,—
Պատասխանում է հենը արքային,—
Քանզի, երբ երկրում գողեր կան ինձ պես,
Էլ դու ինչո՞ւ ես բազմել քո գահին…

ՓՈՒՉ ԿԱՐԾԻՔ

Բարդին ասաց սալորենուն.
— Իմ կարծիքով փուչ ծառ ես դու՝
Պտուղներդ շատ են թթու:

Սալորենին ասաց բարդուն.
— Քո կարծիքը լրիվ փուչ է,
Դու ի՞նչ գիտես՝ պտուղն ի՞նչ է…

ԿԱՏՎԻ ԿՈԴԵՔՍԸ

Առյուծ արքայի հզոր պալատում
Կուսակալ դարձավ մլավան կատուն.
Իր ողջ ուժերը նա գործի դրեց
Եվ կարճ ժամկետում մի կոդեքս գրեց.
Հարյուր հոդվածից այդ նոր կոդեքսի՝
Ութսունը գրվեց մկների մասին…

ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

Երբ որ տեղակալ
Կարգեցին Սեթին,
Նա շատ անսխալ
Քծնում էր պետին:
Թե նրա մասին բան լսեր դրսում,
Գալիս էր, ծածուկ ականջին ասում:
Նվեր էր տանում նրա կնոջը,
Խոստանում քավոր դառնալ քրոջը,
Նրա այդ վարքը դուր չեկավ պետին,
Նա պահանջ դրեց ազատել Սեթին,
Երբ պետի կինը այս բանն իմացավ,
Ամուսնու վրա սաստիկ բարկացավ.
— Ա՛յ մարդ, գժվե՞լ ես,
Ի՞նչ է արել քեզ…
Քո լավն է ուզում,
Քեզ չի բամբասում,
Առանց նվերի չի մտնում տունդ,
Ինչի՞ համար է այդ վատությունդ…
— Կնի՛կ, հասկացի՛ր,— զայրացավ պետը,—
Պաշտոնիս վրա աչք ունի Սեթը,
Ես էլ եմ «նվեր» տարել իմ պետին,
Երբ հիշում եմ ինձ, ո՞նց ներեմ Սեթին…

ՏԱԿԱՌԻ ԼՈՂԸ

Հսկա գետում հոսանքն ի վար
Քշվում էր մի դատարկ տակառ
Եվ մեծամիտ ձայն էր տալիս.
— Ճամփա՛ տվեք, ես եմ գալիս՝
Իմ մեծ լողով հաղթ ու անշեղ,
Նավերն իմ դեմ ի՞նչ են՝ տաշեղ:
Սակայն դեմից եկող մի նավ
Քմծիծաղով նրան ասավ.
— Ո՛վ բթամիտ, դատա՛րկ տակառ,
Կյանքը գործ է և ոչ թե՝ ճառ,
Դու որպեսզի ապացուցես,
Որ իսկապես լողալ գիտես
Եվ հզոր ես՝ մեծ ուժի տեր,
Պիտի լողաս հոսանքն ի վեր…

ՀԻՆ ԱՌԱԿ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՑ

Երբ Քրիստոսը իր քարոզի մեջ
Ճշմարտություն էր դավանում մարդկանց,
Մի հակառակորդ ուզեց բացել վեճ
Ու դիտավորյալ նրան տվեց հարց.

— Քարոզի՛չ, եթե իմաստուն ես դու,
Մարդկանց տալիս ես ճշմարիտ դասեր,
Ինչո՞ւ շատերը քեզ չեն հավատում.
Դրդապատճառը կարո՞ղ ես ասել:

— Կարող եմ,— ասաց նա համեստորեն,—
Այսպես է ասված մի հին առակում,
Երբ սերմնացանը ցանում է ցորեն,
Միշտ չէ, որ հունդը ծիլ է արձակում:

Այն ժամանակ է հունդը բողբոջում,
Երբ որ ընկնում է հողի մեջ պարարտ,
Հունդերն հողից են սնվում ու աճում,
Հողով է հունդը դառնում հասուն արտ:

Սակայն երբ հունդը (որքան էլ բեղուն)
Ընկնում է բաց տեղ կամ թե ժեռ քարի,
Հազար տարի էլ մնա նույն տեղում՝
Ո՛չ արմատ կտա, ո՛չ կդալարի…

ՀԱՄՈԶԻՉ ՓԱՍՏԱՐԿ

Երկու շատախոս՝ Սոկրատեսի մոտ
Բամբասում էին մի իմաստունի,
Ասում էին, թե նա մարդ է վախկոտ
Եվ առանձնապես մեծ տաղանդ չունի:

Երբ էլի նման շատ բաներ ասին,
Սոկրատը վերջում նրանց ասաց լոկ.
— Իմ կարծիքն այլ է այդ մարդու մասին,
Նա համեստ մարդ է, այն էլ՝ շատ խելոք:

Շատախոսները նայեցին իրար,
Ապա Սոկրատին հարց տվին մեկեն.
— Սոկրատե՛ս, իրո՞ք դու գիտես նրան,
Եվ իսկապե՞ս նա քեզ դուր է եկել:

— Օ՜, ո՛չ, այդ մարդուն ծանոթ չեմ բնավ,—
Պատասխան տվեց Սոկրատը այսպես,—
Ձեզնից իմացա, թե ինչ մարդ է նա,
Չէ՞ որ ես շատ լավ ճանաչում եմ ձեզ…

ՀԱՐԲԱԾՆԵՐՆ ՈՒ ԾՈՎԸ

Երկու ընկերներ, չափազանց հարբած,
Եկան ու ծովին դեմ առան հանկարծ,
Մեկը մյուսին զարմանքով ասավ.
— Պահո՜, էս գետը որտեղի՞ց բուսավ:

Մյուսը, որ քիչ ավել էր կոնծել,
Ասաց.— Ծնկահաս առվակ է, ի՞նչ գետ,
Այս առուն ես միշտ մենակ եմ անցել,
Ձեռքդ տո՛ւր, հիմա անցնենք իրար հետ:

Սակայն երբ նրանք մտան «առվակը»,
Փրկության հույսը մնաց ետևում…
Հենց այդ մասին է ասված առակը—
Ծովը հարբածին ծնկից է թվում:

ՔՆԱԾ ԹԱԳԱՎՈՐԸ

Մի գյուղացի, ջորուն բարձած
Տանձ ու խնձոր, մի օրվա հաց,
Քաղաք գնաց,
Որ դատածը տանի շուկա,
Ծախի, բերի, իր գործն հոգա:
Բայց կեսօրին ամռան արփին,
Երբ զոռ տվեց շոգ ու տապին,
Առնտուրը դադար առավ,
Ծեր գյուղացու քունը տարավ,
Ուզեց մի քիչ հանգստանա…
Բայց երբ քնից արթնացավ նա,
Տեսավ՝ ջորին չկար արդեն:
Խեղճը իսկույն ընկավ դես–դեն,
Հարցմունք արեց սրան–նրան,
Իսկ ով լսեց՝ խնդաց վրան…
Վերջը թողած նա բոլորին,
Գնաց–դիմեց թագավորին.
— Տե՛ր իմ,— ասաց,— էսպես–էսպես,
Էսօր մի քիչ ննջեցի ես,
Եվ գողերը ջորիս տարան,
Աղաչում եմ, մի ճա՛ր արա…
— Ա՜յ գյուղացի,— խնդաց արքան,—
Չգիտեի՞ր, որ գողեր կան
Եվ քնածին կթալանեն…
Հիմա, ասա՛, ես ի՞նչ անեմ.
Հարկավոր էր լինել զգույշ,
Ինչո՞ւ էիր քնել մուշ–մուշ:
Գեղջուկը նախ հոգոց հանեց,
Ապա դիպուկ պատասխանեց.
— Ապրած կենաս, ո՛վ տեր արքա,

Ես գիտեի, որ զողեր կան,
Բայց գիտեի՝ դու արքուն ես,
Եվ այդ հույսով քնեցի ես:
Բա եթե ինձ հայտնի լիներ,
Ո՞վ մեր երկրի պաշտպան ու տեր,
Որ քնած ես դու քո գահին,
Կքնեի՞ ես այդ պահին…

ԴԻՎԱՅԻՆ ՄԻՋՈՑ

Տարտարոսում կար մեծ ժողով,
Վայնասուն էր տարտարոսում.
Շուրջը լցրած ահուդողով՝
Սադայելը ինքն էր խոսում.

— Ո՜վ եղբայրներ,— ճչում էր նա,—
Սատանանե՛ր իմ դժնատես,
Եթե բանը այսպես գնա,
Կործանում է սպասվում մեզ:

Լսել եմ, որ երկրի վրա
Բարին առատ բերք է տալիս,
Թե չխանձենք սերմը նրա,
Իմացեք՝ մեր վերջն է գալիս:

Պետք է երկիր ճամփել փութով
Խարդախամիտ դև Իլյարին,
Որպեսզի նա այնտեղ շուտով
Արմատախիլ անի բարին:

— Ո՜ւ–ռ՜ւ,— ոռնացին չարքերը զիլ՝
Իբրև նշան հավանության,—
Բարին անել արմատախիլ՝
Ի երաշխիք մեր գոյության:

— Ո՛վ դժոխքի անխառն ծնունդ,—
Իլյարն ասաց պատրաստակամ,—
Չարքեր տվեք ինձ տասը գունդ,
Գնամ երկիրն ավերեմ, գամ:

— Ի՞նչ ես խոսում, ի՞նչ չարք, ի՞նչ բան,—
Սադայելը ոռնաց, թքեց,—
Իսկույն բռնի՛ր երկրի ճամփան,
Ինչի՞ են պետք չարքերը քեզ.

Այնտեղ շատ բան չես անի դու,
Լոկ ուժ կտաս անարդարին
Եվ կտեսնես՝ հողագնդում
Էլ չի մնա քարը քարին…

ՀԱՆԴՈՒԳՆԻ ՎԵՐՋԸ

Վագրը մի օր տեսավ կատվին
Ու մռլտաց.
— Վա՜յ մեր պատվին,
Ի՜նչ եմ տեսնում, սա ի՜նչ բան է,
Այս կենդանին մեզ նման է,
Մեր ցեղից է սա իսկական,
Բայց ինչո՞ւ է փոքրիկ այսքան,
Եվ ձայն տվեց.
— Հե՜յ, ո՞վ ես դու:
— Ես փիսոն եմ,— ասաց կատուն,—
Ապե՛ր, մարդն է ինձ հալածել,
Որ ես ձեր չափ չեմ մեծացել:
— Մարդը ո՞վ է,— վագրը գոռաց,—
Տեղը ցույց տուր՝ խեղդեմ ձեռաց:
— Նա անտառի խոր թավուտում
Իր սուր կացնով ծառ է հատում,—
Աղիողորմ ողբաց կատուն:
— Այդքան մոտի՞կ… Վա՜յ, ես դրա…
Գնանք այնպես ջարդեմ նրան,
Որ մոռանա ծառ ու կացին,—
Հայհոյեցին ու գնացին:
Երբ տեղ հասան,
Մարդուն տեսան,
Վագրը թնդաց ահեղագոչ.
— Մարդը դո՞ւ ես, ա՛յ ոչուփուչ,
Կատվի կյանքը դո՞ւ ես կերել,
Պատրաստվի՛ր, քեզ մահ եմ բերել:
— Ա՜յ քեզ փորձանք,— մարդը ասաց,—
Գիշերվա չար երազ է սա,
Ա՛յ վագր, ախր չգիտես դու,

Թե ինչ բան է ուժը մարդու,
Տե՛ս, այս սեպը ես եմ սրել
Ու գերանի ճեղքը խրել,
Դու չես կարող սեպն այս հանել,
Ո՞նց կարող ես ինձ սպանել…
Վագրը դավը չկռահեց,
Գործի անցավ անմիջապես,
Բայց հենց ճեղքը խրեց թաթը,
Սեպը քաշեց փայտահատը
Եվ գազանին ճեղքին գամեց,
Ապա կտրեց մահակ մի մեծ
Ու սկսեց վագրին ծեծել:
Վագրին մնում էր հեծեծել.
— Կատո՛ւ, գոնե մի բան ասա.
Ինձ գեթ քո չափ կթողնի՞ սա…
— Չէ՛, հորեղբա՛յր,— ասաց կատուն,—
Ես ի ծնե գիտեմ մարդուն,
Երբ այդպես է սկսել նա,
Քեզնից վա՜յ թե մորթիդ մնա…

ՊՈՒՂԻՆ ՈՒ ԱՄԲՈԽԸ

Մի անգամ Պուղին գնացել էր հյուր,
Գողերն այդ մասին իմացել էին,
Ջարդելով նրա դռները ամուր,
Տունը կողոպտել, գնացել էին:

Երբ առավոտյան Պուղին դարձավ տուն,
Մի հոծ բազմություն իր բակում տեսավ,
Լսեց, թե իրեն ոնց են նախատում.
— Պուղին իր խելքից այս օրին հասավ…

— Տունն անտեր թողած՝ ո՞վ հյուր կգնար…
— Դե՛, Պուղին ե՞րբ է զգոն եղել, որ…
— Ա՛յ, եթե նա մի լավ շուն ունենար…
— Իհարկե, Պուղին շատ է մեղավոր…

— Ժողովո՛ւրդ,— Պուղին իսկույն սրտնեղեց,—
Ընդունենք, որ ես արատներ ունեմ,
Ընդունենք, որ ես անփույթ եմ եղել…
Բա էդ գողերը ոչ մի մեղք չունե՞ն…

ՀԻՄՆԱՎՈՐ ՀԱՄՈԶՄՈՒՆՔ

Մի տարի խիստ ցրտեր արեց,
Եվ ձմեռը շատ երկարեց,
Պակասեցին խոտն ու գարին,
Սովը նեղեց խեղճ տավարին,
Ու սովատանջ տավարի մեջ
Բորբոքվեց սուր զրույց ու վեճ.
Պարզել էին նրանք ջանում՝
Սովն ինչի՞ց է առաջանում…
Եվ քանի որ
Տեր գյուղացին
Գնել էր նոր,
Ընտիր մի ձի,
Ու չէր խառնվում ձին վեճերին,
Բամբասում էր նրան ջորին.
— Հիմա ինչ էլ որ ինձ անեն,
Նույնիսկ եթե էշ անվանեն,
Ես համոզված
Կասեմ մարդկանց,
Որ մեր կերը ձին է կերել,
Եվ այս սովը նա է բերել.
Թե չէ՝ ինչո՞ւ
Այսքան տարի
Չէր պակասում
Խոտն ու գարին:
— Կեցցե՜ս, որդի՛ս,— էշը գոչեց,—
Համոզեցիր, որ դու էշ ես.
Հիացած եմ ես քո խելքով,
Չէր կռահի դա ոչ մի կով…

ԱՐԺԱՆԻ ՔԵԼԵԽ

Թե ինչի համար, օրերից մի օր,
Առյուծին մի խուրձ խոտ էր հարկավոր,
Որի համար նա գնաց էշի մոտ,
Էշը նվիրեց նրան մի խուրձ խոտ:
Առյուծն էլ նրան բարեկամ կոչեց
Ու բարձր գոչեց.
— Ով բարեկամիս թթու խոսք ասի,
Թող որ ինձանից ներում չսպասի…
Դեհ, բարեկամն էլ, հո գիտեք, էշ էր,
Գլուխը՝ դատարկ, բնույթը գեշ էր,
Հենց որ առյուծի խոսքը իմացավ,
Անտառի գլխին մեծ փորձանք դարձավ,
Էլ չէր ճանաչում դրկից–դրացի,
Սրան ու նրան տալիս էր քացի:
Թեև նման բան
Ոչ ոք չէր տանում,
Բայց ոչ մի գազան
Ծպտուն չէր հանում,
Սակայն լցվում էր ոխով վրեժի,
Որ երբ պահը գա, հատուցի էշին:
Եվ մի օր հարկավ,
Այդ օրը եկավ.
Հզոր առյուծը ավանդեց հոգին:
Երբ թաղման հոգսը պատեց ամենքին,
Ու միս պահանջվեց քելեխի համար,
Ելան գայլերը, բնականաբար,
Ըստ իրենց փորձի՝
Լուռ անցան գործի,

Թեժացնելով օջախի բոցը՝
Իսկույն հանեցին էշի զռոցը…

Ով ավանակ չէ, թող խելոք դատի.
Միշտ պատժվում է արարքը վատի…

ՉԳՐՎԱԾ ՕՐԵՆՔ

Գյուղացու մեկը մի անգամ լսեց,
Որ վաճառական իր եղբայրը մեծ
Վաշխով ու շահով դիզել է շատ փող,
Ապրում է հանգիստ, ապահով ու ճոխ:
Վեր կացավ մի օր նրա մոտ գնաց,
Երկու–երեք օր այնտեղ հյուր մնաց:
Մի իրիկուն էլ խոսք բացեց մեկեն,
Թե՝ գիտե՞ս, եղբա՛յր, ինչո՞ւ եմ եկել.
Մի քսան ոսկի տուր դու ինձ պարտքով,
Հետո կստանաս ընդունված կարգով:
— Իսկ դու, եղբա՛յրս, ի՞նչ ապրուստ ունես:
— Մի օրավար հող, երկու ընտիր եզ,
Տուն ու տեղ ունեմ, ոչխարներ ու կով…
— Եվ ի՞նչ կարժենան դրանք զուտ ոսկով.
— Լավ գնող լինի, առանց մի խոսքի,
Բոլորին կտա շուրջ տասը ոսկի:
— Դեհ, եթե ես քո խոսքին հավատամ,
Քեզ միայն տասը ոսկի պարտք կտամ.
Այսինքն, ես քեզ այնքան պարտք կտամ,
Որքան հույս ունեմ, որ հետ կստանամ.
Գիտեմ՝ անպայման ինձ կնախատես,
Բայց թող այս բանը խրատ լինի քեզ:
Եվ այն ականջիդ օղ արա, հիշի՛ր՝
Ինչքանով ինքդ կօգնես ուրիշին,
Ուրիշից նույնքան օգնություն հուսա
(Կյանքի չգրված խիստ օրենք է սա)…

ՎԱՏԻ ԱՐՄԱՏԸ

Ֆիլհարմոնիայում, բոլորին ի ցավ,
Տգետ ագռավը դիրեկտոր դարձավ,
Նա էլ, համաձայն իր ողջ ճաշակի,
Իրեն բարեկամ մի կաչաղակի
Դիմումը հարգեց, դիրիժոր կարգեց:

Բայց նրան թողած՝ հավքերն անողոք
Կաչաղակի դեմ գրեցին բողոք,
Թե՝ նա նվագից գաղափար չունի,
Դիրիժոր կարգեք մի այլ թռչունի,
Ով երաժիշտ է: Պահանջը ճիշտ էր:

Վերևում իսկույն նիստ հրավիրվեց,
Եվ անվերապահ որոշում գրվեց.
Թե՝ լոկ դիրիժոր պիտի լինի նա,
Որ երաժշտի կոչում կունենա:
Երբ այն ստացվեց, ի կատար ածվեց.

Կաչաղակն իսկույն թխեց մի կանտատ,
Թե միտքը ի՞նչ էր, չիմացվեց հաստատ,
Բայց երաժշտի կոչում ստացավ,
Մնաց դիրիժոր, սակայն խստացավ:
Այսպես հին ցավին նորն ավելացավ:

Խրատ.— Որպեսզի իսպառ ազատվել վատից,
Պետք է քաղհանել նրան արմատից…

ՀԻՄԱՐ ԱՔԼՈՐԸ

Ամեն անգամ ցայգալույսին, երբ աքլորը
Իր զիլ կանչով ավետում էր բացվող օրը,
Տերը իսկույն բացում էր դուռն հավանոցի
Եվ շաղ տալիս առատ կուտը իր գոգնոցի:
Եվ աքլորին թվում էր, թե իրենց տերը՝
Իր կանչով է միշտ շաղ տալիս առատ կերը:
Ուստի մի օր, երբ ողջ գյուղը մտել էր քուն,
Կես գիշերին նա ձգեց իր զիլ ծուղրուղուն:
Սակայն տերը՝ սնահավատ մի պառավ կին,
Չար համարեց նրա կանչը գիշերային,
Եվ որպեսզի ազատ մնար չար փորձանքից,
Նա աքլորին իսկույն բռնեց, զրկեց կյանքից:

✧ ✧ ✧

Խոստովանեմ,
Թե առակիս միտքը ինչ է.
Անժամանակ կանչը միշտ էլ
Հիմար ճիչ է…

ՓՈԽԸՄԲՈՆՈՒՄ

Երաշտ տարի էր.
Մի ջրառատ լիճ,
Լուռ ցամաքելով,
Դառնում էր ճահիճ:
Լճի կորստյան
Թախիծն իր հոգում,
Ծանծաղող լճի
Պղտոր հատակում՝
Պարզ ջրի սովոր իշխանաձուկը,
Հազիվ շնչելով, մաքրում էր բուկը:
Այդ պահին հանկարծ
Գորտերն իջան ցած
Եվ սկսեցին
Նրան բամբասել.
— Այսպիսի գազան երբեք չեմ տեսել…
— Թե ոտներ չունի, ինչպե՞ս է քայլում…
— Զզվելին ինչ էլ տգեղ է փայլում…
— Սա դև է,—
Հանկարծ ճչաց մի ծեր գորտ,—
— Ղորդ է…, ղորդ…
— Ղորդ…, ղորդ…
Իշխանաձուկը ծպտուն չէր հանում,
Լսում էր նրանց ու միտք էր անում.
«Ավա՜ղ, թե լիճը չփոխվեր ճահճի,
Գորտերի ցեղը այնտեղ չէր աճի…»:

ՈՍԿԵ ԼՈՒԾԸ

Խիստ հաճելի էր թարմ օդը դրսի,
Նժույգի տերը գնում էր որսի,
Ուստի դուրս քաշեց գոմից նժույգին,
Հարդարեց բաշը, մազերն ու ագին,
Հոգատարությամբ մեջքը շոշափեց
Եվ մի շքեղ թամբ դրեց ու կապեց:
Թամբած նժույգը կանգնել էր տրտում,
Հուզված դոփում էր ու կեր չէր ուտում:
Նրա մոտ կանգնած պառաված մի եզ.
— Ա՛յ նժույգ,— ասաց,— զարմանում եմ ես,
Իմ ամբողջ կյանքում ես լուծ եմ քաշել,
Ու ծանր լուծն է իմ կյանքը մաշել…
Սակայն ինձ պարզ չէ՝ քո ցավը ի՞նչ է,
Մեր տերը միշտ էլ քեզ լավ է նայում,
Տալիս է լավ կեր, մաքրում, փայփայում.
Դեռ չեմ ասում, որ իմ վաստակով էլ
Քեզ համար մի նոր, լավ թամբ է գնել…
— Հենց այդ թամբից եմ դժգոհ,— ասաց ձին,—
Նա էլ իմ լուծն է՝ նման քո լծին,
Իսկ լուծը, եղբա՛յր, միշտ մնում է լուծ,
Թեկուզ պատրաստված լինի զուտ ոսկուց…

ԱՋՆՎԱՑԵՂ ԱՎԱՆԱԿԸ

Ավանակի խելքին քամի էր փչել,
Որ իբր թե իրենց ցեղը ազնիվ չէ:
Եվ նա այնքան ամուր փարվեց այդ մտքին,
Որ որոշեց ձիուն առնել որպես կին:
Ու մի օր էլ նա կատարեց իր կամքը,
Սակայն, ավա՜ղ, զուր էր նրա այդ ջանքը,
Քանզի նրա սպասածին հակառակ՝
Նա չունեցավ գեթ մի առողջ էշ քուռակ.
Քուռակները ծնվում էին ջորիներ…
Միայն շատ ուշ գլխի ընկավ էշը ծեր,
Որ ոչ միայն ազնվացեղ չդարձավ,
Այլ դրանով իր ցեղն իսպառ վերջացավ…

ԺԼԱՏԻ ՔՈՒՆԸ

Ասում են՝ իբրև ժլատը քնել
Ու մի երազ է տեսել «չարաղետ»՝
Իբրև իր հաշվից ուտեստ է գնել
Եվ քեֆ է անում ընկերների հետ…

Թեև սարսափով քնից արթնանում
Եվ համոզվում է, որ դա երազ էր,
Բայց ասում են՝ նա այլևս չի քնում,
Որ էլ չտեսնի նման երազներ…

ԱՆԵԾՔ ՎԱՏԻՆ

Մի թռչնապահ՝ բախտի պես կույր,
Նույն վանդակում անհրապույր,
Ի՞նչ մտածեց,
Փակեց, բանտեց
Սիրամարգին ու ագռավին,
Բայց նեղում էր վատը լավին,
Ագռավը չար՝
Խիստ անարդար
Բողոքում էր, կուրծքը ծեծում,
Լաց էր լինում ու անիծում.
— Փրկեցե՛ք ինձ
Սիրամարգից,
Ինչպե՞ս ապրեմ ես նրա հետ,
Նա տգեղ է, խայտաբղետ,
Նրա պոչը,
Պոչի ոճը
Ցույց են տալիս, որ նա կեղծ է.
Չէ՞ որ պարզ է՝ ով անկեղծ է,
Ինձ նման մի գույն կունենա,
Տեսեք՝ քանի՞ գույն ունի նա:
Չեմ բամբասում,
Ճիշտ եմ ասում.
Նույնիսկ ինքը շատ լավ գիտե,
Որ ասածս ճշմարիտ է,
Թե չէ՝ ինքն էլ կբողոքեր
Եվ չէր ուզի ինձ պես ընկեր,
Եթե իրոք լինեի վատ,
Ճիշտ չեմ ասո՞ւմ, ա՛յ անհավատ…
— Ո՛չ, սևաշո՛ր,
Ես գիտեմ, որ

Դու քսուն և չարախոս ես,
Բայց այդ մասին լռում եմ ես,
Քանզի գիտեմ,
Ա՛յ սևադեմ,
Որ այս բանում մեղք չունես դու,
Անեծք լինի թող այն մարդուն,
Ով չի ջոկել վատը լավից,
Քեզ ընկեր է դարձրել ինձ…

ԼԻԲԵՐԱԼԸ

Ինչքան էլ վատ վարվեն հետը,
Չի բարկանա Նազարեթը.
Թեկուզ գլխին կոտրեն գերան,
Չի բողոքի նա մի բերան:
Որպեսզի դուք հավատաք ինձ,
Մի դեպք պատմեմ նրա կյանքից.
Ասում են, որ մի անգամ նա,
Թե ի՞նչ գործով, ո՞վ իմանա,
Գնում է իր պետի տունը,
Պետի արձակ թողած շունը
Հենց տեսնում է Նազարեթին,
Հարձակվում է, փռում գետին:
Բայց երբ մարդիկ են հավաքվում,
Շանը քշում, անկեղծ ցավում
Ու գթալով՝ ասում նրան.
— Շան տիրոջը տո՛ւր դատարան…
Ու երբ մարդիկ պնդում են խիստ,
Նա ասում է լուրջ ու հանգիստ.
— Ա՛յ ժողովուրդ, ի՞նչ դատարան…
Ասենք՝ պետիս բռնին տարան,
Ի՞նչ շահ ունեմ ես դրանից,
Հետո պետս ի՞նչ կասի ինձ…
Ախր, շունը կով չէ կամ ձի,
Շան արհեստն է, որ մարդ կծի,
Մեկ էլ, գիտեք՝ իմ մեղքն էր սա,
Շունն արձակ էր, ես չտեսա…

ԱՄԲՈԽԻ ԱՐՔԱՆ

Մի հին երկրում բարձիթողի,
Ուր իշխում էր կամքն ամբոխի,
Ավանակը դարձավ արքա,
Առոք–փառոք բարձրացավ գահ:
Բայց նոր արքան երկարականջ
Չէր հանդուրժում մժեղ ու ճանճ,
Զի միջատներն այդ աներես
(Դու ընթերցող ինձ կներես)
Կծում էին (խոսքն էլ վատ է)
Նոր արքայի տեղն անպատեհ:
Եվ ակամա, երբ որ արքան
Քոր զգալով ամեն անգամ
Պոչն էր ուժգին թափահարում,
Ամբոխն էր զիլ ծափահարում.
— Ապրի արքան, ուռա՜, կեցցե՜,
Մեր նոր արքան անչափ մեծ է,
Նա հզոր է, հոգով ուժեղ,
Ի չիք կանի ճանճ ու մժեղ:
Հապա նայե՛ք նրա պոչին,
Պոչի շարժման արդի ոճին.
Դա շարժում չէ մի անօգուտ,
Այլ նոր միտք է՝ հանճարեղ գյուտ…
Մինչդեռ, այնտեղ, նույն այդ պահին,
Երբ գովում էր նոր արքային
Ամբոխն՝ անդեմ ու հացկատակ,
Նոր արքայի հին պոչի տակ,
Նախկինից էլ գորշ ու տհաճ,
Աճում էին մժեղ ու ճանճ…

ԽԻԿԱՐՆ ՈՒ ԱՐՔԱՆ

Խիկարին դիմեց արքան մի անգամ.
— Ինձ մի խորհո՛ւրդ տուր, խելո՛ք բարեկամ,
Դրանիկներս, ավագից կրտսեր,
Ինձ մինչև օրս ճիշտ խոսք չեն ասել.
Խաբում են, ստում ու շողոքորթում,
Չեն խորշում՝ ուտել նաև սուտ երդում:
Ես ինչպե՞ս մաքրեմ պալատը ստից,
Եթե կարող ես, մի կերպ օգնի՛ր ինձ…
Խիկարը մի պահ նայեց արքային,
Որը սնապարծ բազմել էր գահին,
Ապա խոնարհվեց և ասաց այսպես.
— Այդ հարցում արդեն շատ անզոր եմ ես,
Քանզի այդ բանում դու ես մեղավոր,
Իմացի՛ր, արքա՛, բանը այն է, որ
Քանի դեռ դու ես պալատում տերը,
Պալատում անվերջ կաճեն ստերը:
Թե դու սիրեիր երգ ու մեղեդի,
Դրանիկներդ բոլորն անխտիր
Կուզեին երգել, նվագել այնպես,
Որ կամենային հաճոյանալ քեզ…
Մինչդեռ հնավանդ մի իսկություն կա,
Որը դու պիտի գիտենաս, արքա՛,
Հպատակները միշտ անում են այն,
Ինչը տիրոջն է դուր գալիս միայն…

ՍԱՅԼՆ ՈՒ ՃԱՄՓԱՆ

Մի գյուղացի ամռան մի օր
Սարի ճամփով ոլոր–մոլոր,
Սայլը խոտով ծանր բարձած՝
Զգուշորեն իջնում էր ցած,
Բայց շուռ եկավ
Սայլը հանկարծ…
Խեղճ գյուղացին խոտը թափեց,
Ջարդած սայլը իրար կապեց,
Քշեց, մի կերպ գյուղը հասավ,
Տարավ հյուսնին ու լուրջ ասավ.
— Սայլը էլի ջարդվեց, վարպե՛տ,
Բերել եմ, որ խոսեմ քեզ հետ,
Ասա՝ ինչքա՞ն ես փող տամ քեզ,
Որ դու սայլս այնպես սարքես,
Որ ինչքան էլ գործի դրվի,
Ոչ մի անգամ չկոտրվի:
— Ճանապարհդ ո՞նց է, եղբա՛յր,—
Հյուսնը ասաց մտերմաբար,—
Դու ա՛յդ մասին պիտի ասես,
Որ անելիքս իմանամ ես…
— Է՜, վարպե՛տ ջան,— գեղջուկն ասաց,—
Ճամփա չկա, անկեղծ ասած,
Եղածը մի աղուր է նեղ,
Խորդուբորդ է, անանց՝ տեղ–տեղ,
Անցնում է թեք սարի լանջով,
Արահետ է մի անհաջող,
Ունի հազար քար ու կապան,
Աստված կտրի էդպես ճամփան…
— Դեհ, հե՛ր օրհնած, էդպես ասա,—
Ծիծաղելով հյուսնը ասաց,—

Եթե ճամփան այդպիսին է,
Խիստ անհարթ ու լեռնային է,
Ես որքան էլ որ քեզ հարգեմ
Ու քո սայլը ամուր սարքեմ,
Կկոտրվի այն վաղ թե ուշ,
Որքան էլ որ լինես զգույշ…
Ուստի արի՛, ինձ ականջ դի՛ր,
Նախ դու գնա՛, ճամփան հարթի՛ր:
Ես ծեր մարդ եմ, հավատա՛ ինձ,
Քանզի գիտեմ կյանքի փորձից՝
Մինչև ճամփան չհարթվի,
Սայլը, մեկ է, կջարդվի…

ԿՅԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԸ
(Ըստ Ռումիի)

Մի փիլիսոփա փոքրիկ մակույկով
Լուռ զբոսնում էր մեծ ծովի վրա,
Անծայր մտքերը, ինչպես անափ ծով,
Պաշարել էին ուղեղը նրա:
Ու երբ սթափվեց մտքերից անծայր,
Մակույկավարին հարց տվեց այսպես.
— Խնդրում եմ՝ ասես, ո՛վ ազնիվ եղբայր,
Գիտություններից ո՞րն է ծանոթ քեզ:
— Գիտությունները ինձ անծանոթ են,—
Մակույկավարը տվեց պատասխան.
— Է՜հ, կյանքիդ կեսը կորած է արդեն,—
Երկար ծոր տվեց ծեր փիլիսոփան…
Բայց հանկարծ սկսվեց ահեղ փոթորիկ՝
Անզուսպ ցասումը հզոր բնության,
Մակույկը դարձավ չնչին խաղալիք,
Ու կորավ հույսը կյանքի փրկության:
Կռիվ մղելով գոռ տարերքի հետ՝
Մակույկավարը հարցրեց այս անգամ
Փիլիսոփային այն ամենագետ.
— Է՜յ, լողալ գիտե՞ս, ազնի՛վ բարեկամ:
— Ո՛չ,— պատասխանեց խեղճը սոսկահար՝
Տեսնելով ծովի փոթորկապարը:
— Է՜հ, ամբողջ կյանքդ կորած է, եղբա՛յր,—
Փիլիսոփայեց մակույկավարը…

ԱՆՄԵՂ ՔԵՌԻՆ

Գարնանային մի գեղեցիկ առավոտ
Կարոն գնաց իր նախագահ քեռու մոտ:
— Քեռի՛,— ասավ,— տո՛ւր ինձ մի լավ աշխատանք,
Որն ինձանից չպահանջի ճիգ ու ջանք,
Լինի պաշտոն՝ անունը մեծ, գործը՝ սուտ,
Ապահովի ըստ պահանջի եկամուտ:
— Լսի՛ր, Կարո՛,— ասավ քեռին,— շա՛ն լակոտ,
Բախտդ բերեց, որ եկել ես քեռուդ մոտ,
Դու չփորձես քեռուդ վրա ծիծաղել,
Դե շուտ չքվի՛ր, քանի դեռ չեմ կատաղել…
Երբ այդ մասին Կարոն պատմեց իր մորը,
Մայրը իսկույն արդարացրեց եղբորը.
— Ա՜խ, Կարո՛ ջան, մի՛ մեղադրիր քո քեռուն,
Մեղքը քոնն է, որ չես տեսնում դու հեռուն,
Գիտե՞ս՝ ինչն է քեռուդ այդքան խիստ հուզել,
Դու նրանից հենց իր պաշտոնն ես ուզել…

ՏԱԿԱՆՔԸ

Երբ որ ուներ պաշտոն ու դիրք
Եվ գողացավ անքանակ փող,
(Ուներ նաև իշխելու «ձիրք»)
Ապրում էր գոհ, հանգիստ ու ճոխ:

— Զարմանում եմ,— ասում էր նա,—
Մարդ կա՝ կյանքից գոհ չի մթամ,
Կյանքս վկա, թե ինձ մնա,
Այդպիսինին կախել կտամ…

Սակայն երբ նա կորցրեց դիրքը,
Փող չմնաց գրպաններում,
(Էլ չէր գործում նաև «ձիրքը»)
Փսփսում էր անկյուններում:

— Կյանքը մեզ մոտ շատ է չնչին,
Թե որ թույլ տան, կյանքս վկա,
Ես կթքեմ ամեն ինչին
Եվ կգնամ Ամերիկա…

Ու մի օր էլ իմ հերոսին
Ասին՝ ով դու գրաստագանգ,
Մի՛ փայփայիր երազներ սին՝
Ոչ մի երկրի պետք չի տականք…

ԱՆՍՓՈՓ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ
(Առակ)

Եղնիկը ձորում ելավ գայլի դեմ,
Փորձեց ետ փախչել, գայլը դեմն առավ:
Անգղն այդ բանը վաղուց էր դիտել,
Ժայռից վար սուրաց, եղնիկին տարավ:

Երբ նա եղնիկին մի ժայռի դրեց,
Եղնիկը վախից սոսկաց իսկապես,
Անգղը խոժոռ նրան հարցրեց,
— Ի՞նչ է, դու գոհ չե՞ս, որ փրկեցի քեզ:

— Ինչի՞ց գոհ լինեմ,— ողբաց եղնիկը,—
Դու ինձ փրկեցիր գիշատիչ գայլից,
Բայց գիշատիչ ես նաև դու ինքդ.
Նման փրկությունը չի սփոփում ինձ…

ԸՄԲՈՍՏԱՑԱԾ ՄԵՂՈՒՆԵՐԸ

Մեղունները չդիմացան,
Շատ էր զրկում ագահ տերը,
Ուստի նրանք ըմբոստացան
Ու թողեցին փեթակները:

— Տո՛, ապերախտ տզզա՛ն ճանճեր,—
Ասաց տերը խիստ աչքածակ,—
Ձեր հանդեպ իմ մեղքը ի՞նչ է,
Որ խնամքս շուտ մոռացաք:
Չէ՞ որ դուք եք միշտ խայթել ինձ,
Իսկ ես ձեզ հետ լավ եմ վարվել:
Կեր եմ տվել, փրկել մահից,
Ձեզ համար եմ միշտ չարչարվել:

— Լսի՛ր, լավ է, որ կարճ կապես,—
Մեղունները ասին մարդուն,—
Չկարծես, որ մեզ կխաբես,
Մենք լավ գիտենք, թե ով ես դու.
Մարդն ուրիշի մի փուշ չի տա՝
Առանց շահի և օգուտի,
Մենք սին խոսքի չենք հավատա,
Գնա՛, ուրիշ հիմար գտի՛ր…

ԼԵՂԵՆԴՆԵՐ ԵՎ ՊՈԵՄՆԵՐ

ՀԱՏՈՒՑՈՒՄ

Հեղափոխության ահեղ զարկերից
Փարիզյան գահն էր օրհասից դողում,
Ամբոխը զզված իշխող կարգերից՝
Փողոց էր նետվել, արյուն էր հեղում:
Հեղափոխության զինվոր էր արի
Եվ Բեռնադոտը՝ տակավին ջահել,
Նա մեծ կրքով էր ելել պայքարի
Եվ մարտնչում էր ըմբոստին վայել:
Որ ատելության հուրը չհանգչեր,
Եվ բորբոք մնար ցասումն ամեն պահ,
Իր մատաղ կրծքին նա տվեց դաջել
Մի դաժան պատգամ՝ «Արքաներին՝ մահ»:
Իսկ հետո գնդեր տարավ նա մարտի,
Ճակատամարտեր տվեց ահավոր,
Դրոշի ներքո գոռ Բոնապարտի
Նախ մարշալ դարձավ, ապա թագավոր:
Եվ արքա դարձավ ոչ թե մի գահի,
Այլ երկու գահի եղավ տեր ու մեծ.
Նա միանգամից և՛ Շվեդիայի,
Ե՛վ Նորվեգիայի գահերին բազմեց:
Բայց ուրախ չապրեց արքան ոչ մի ժամ,
Քանզի սրտում կար ամոթալի ահ.
Սեփական կրծքի դաջվածքը դաժան
Միշտ կոչ էր անում. «Արքաներին՝ մահ»:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԳԱՆՁԵՐԸ

Էշխի ծովի մեջեն հանած լալ ու ոհար է բիռըս
Սայաթ–Նովա

Վրաստանի արքայական պալատում
Բերնեբերան լուր տարածվեց սրընթաց,
Թեև լուրին շատերը չեն հավատում,
Սակայն շուտով ամբողջ պալատը թնդաց…

Ահա արքան, մռայլ բազմել է գահին,
Ծափ է տալիս, մանկլավիկն է ներս սողում.
— Իսկույն կանչի՛ր Սայաթ–Նովա գուսանին,—
Եվ հուզմունքից արքայի ձայնն է դողում…

Ներս է մտնում գուսանն հպարտ ու ջահել
Ու կանգնում է գոռ արքայի հանդիման,
Ձեռքը՝ կրծքին, գլուխը վեր է պահել,
Սպասում է, որ արքան տա հրաման:

Արքան լուռ է, զննում է, չի խոսում,
Նա արտաքուստ թվում է խիստ ու դաժան,
Սակայն գլխում ուրիշ մտքեր են հոսում.
«Օ՜, տե՛ր Աստված, նա ինչո՞վ է անարժան…»:

Եվ նայում է աչքերի մեջ գուսանի,
Բայց նրանցում նա տագնապ չի նկատում.
Ու խորհում է. «Նախանձն ինչեր չի անի,
Լուրը սուտ է… Տեսնես ինչո՞ւ են ատում…»:

— Սայաթ–Նովա՛, վատ լուրեր են պտտվում,
Քեզ սիրում եմ, ամբողջ պալատն է վկա,

Ժխտի՛ր լուրը, ինձ էլ այն ճիշտ չի թվում…
— Դուն էն գլխեն իմաստուն ես, տե՛ր արքա…

— Ուրեմն ես ճի՞շտ եմ, Սայա՛թ, դե խոսի՛ր,
Չուզողներդ քեզ իզո՞ւր են բամբասում:
— Տե՛ր իմ, ինձնից սուտ խոսել մի՛ սպասիր,
Լուրը սուտ չէ, սիրում եմ, ճիշտ են ասում…

— Սայաթ–Նովա՛,— հանդիմանում է արքան,—
Հասկանո՞ւմ ես, թե ինչ բան ես անում դու,
Ո՞վ է տեսել ազնվազարմ աղջկան
Կնության տան նվագածու մի մարդու:

Իշխանները այդ արարքդ չեն ների.
Դու քեզ տված պատիվը չպահեցիր,
Նրանք տեր են զենքի, զորքի, գանձերի,
Ինչի՞ տեր ես, խեղճ ես, մահից վախեցի՛ր…

— Խեղճ չեմ, արքա՛, ես գանձերի բեռ ունեմ
Ու ոչ մեկից, նույնիսկ մահից չունեմ ահ,
Իմ գանձի պես չեն ունեցել ու չունեն
Ո՛չ մի իշխան, ո՛չ մի արքա, ո՛չ մի շահ…

Ներկաների հոգիներում՝ սև ու մութ,
Սողոսկում է մի դիվային չար նախանձ.
Քիչ է մնում աղաղակեն՝ սուտ է, սուտ,
Ո՞վ է տվել այդ գուսանին բեռ ու գանձ:

Ու հարցնում է արքան նրան.— Ասա՛ ինձ,
Միայն՝ ճիշտը, քեզ կներեմ, սուտ չկա,
Գանձդ ի՞նչ է, կամ թե նա քեզ որտեղի՞ց:
— Գանձս սերն ու սիրո երգն է, տե՛ր արքա…

— Սայաթ–Նովա՛,— ասաց արքան,— ինձ ների՛ր,
Քո գանձերին հազիվ տան մի պատառ հաց:

— Ժամանակը գին կտա իմ գանձերին,—
Ասաց գուսանն ու պալատից դուրս գնաց…

✧ ✧ ✧

Այդ օրվանից եկել–անցել են դարեր,
Ժամանակը մաշել է շատ գանձ ու գահ.
Սայաթ–Նովան երգերի հետ իր անմեռ
Ապրում է դեռ ու կմնա հար անմահ…

ՊԱՀԱՆՋԻ ՉԱՓԸ

1

Ամեհի վագրը որսի թեժ պահին
Ժայռից ցատկելով՝ ճանկեց արքային
Եվ ցած գլորեց մի ակնթարթում.
Հզոր գազանը կխեղդեր մարդուն,
Եթե մոտ վազող ջահել ասպետը
Վագրի կրծքի մեջ չմխեր նետը:
Վագրը երերաց ու փռվեց գետին,
Արքան վեր կացավ, կանչեց ասպետին,
Նախ մտերմաբար ձեռքն ուսին դրեց,
Ապա գիրկն առավ ճակատն համբուրեց:
— Ո՛վ իմ քաջ,— ասաց,— քո զարկով հատու
Մահվան երախից ինձ փրկեցիր դու,
Այն էլ, երբ մահը մոտիկ էր այնքան.
Երդվում եմ պատվով իմ արքայական՝
Քեզ նվեր կտամ, ինչ որ պահանջես,
Ինչ սիրտդ կուզի՝ ասա՛, չամաչես:
Ես քեզ ժամանակ կտամ երկու օր,
Վաղը մենք խնջույք կանենք փառավոր,
Իսկ մյուս օրը ուզածդ ստացիր.
Դեհ, բարեկա՛մս, գնա՛, մտածի՛ր…

2

Արքան պալատում խնջույք է սարքել,
Ուտում–խմում են մարդիկ անարգել,
Փառաբանում են օրվա հերոսին,
Ասում–խոսում են լոկ նրա մասին:
Հոսում է գինին՝ հին ու պատվական,
Ցնծության մեջ է և ինքը արքան.
Ամեն ինչ ճոխ է, ամեն ինչ՝ շռայլ…

Միայն վեզիրն է նստել լուռ, մռայլ,
Նա բոլորել է իր ութսուն տարին,
Մտքով նժարել կարգը աշխարհի,
Կյանքի բազմափորձ ճամփա է անցել,
Ամեն ինչ քննել ու իմաստնացել…
Եվ հանկարծ արքան նկատեց մի պահ,
Որ նա մռայլ է, սիրտը ընկավ ահ,
Մտքովը անցավ հազար ու մի բան,
Ուստի շատ զգույշ հարց տվեց նրան.
— Ի՞նչ կա, մե՛ծ վեզիր, ի՞նչ է պատահել,
Խնդության մեջ են ահել ու ջահել,
Մարդիկ ի սրտե ողջունում են ինձ,
Որ ես հրաշքով փրկվել եմ մահից,
Եվ քեֆ են անում, մի՞թե վատ է սա,
Թե վատ է իրավ, խնդրում եմ՝ ասա՛:
— Չէ, ինչո՞ւ, արքա՛, ես էլ եմ ուրախ,
Սակայն մի բան կա՝ ինձ բերում է վախ,
Դուք Ձեզ փրկողին խոստում եք տվել
(Հասկանում եմ ձեզ, մահից եք փրկվել),
Որ նրան կտաք՝ ինչ որ պահանջի,
Կներեք, արքա՛, խելքի մոտ բան չի,
Որ կհաջողվի ձեզ այն կատարել,
Ինձ թվում է, որ ճիշտ բան չեք արել…
— Ինձ չհաջողվի՞,— արքան ծիծաղեց,—
Չէ, ծերացել ես, իմաստո՛ւն իմ մեծ,
Թե չէ նման բան չէիր ասի դու:
Ի՞նչ է պահանջը մի հատիկ մարդու,
Որ քո կարծիքով, չի հաջողվի ինձ՝
Բավարարել իմ անբավ գանձերից,
Չեմ կարող զսպել ես իմ ծիծաղը…
— Լա՛վ,— վեզիրն ասաց,— կտեսնենք վաղը…

3

Բազմել է արքան գահին ոսկեհուռ,
Կողքին նստել է Մեծ վեզիրը լուռ,

Գահասենյակում զարդերով հարգի
Դրանիկներն են շարվել ըստ կարգի:
Եվ ահա արքան նշան է տալիս,
Գահասենյակ է ասպետը գալիս
Եվ խոնարհ կանգնում արքայի առաջ:
— Ի՞նչ ես ցանկանում, դե ասա՛, ի՛մ քաջ,—
Խոսում է արքան,— ուզի՛ր, չամաչես,
Երդվել եմ՝ կտամ, ինչ որ պահանջես:
— Արքա՛, Ձեր խոսքը մեծ է երդումից,
Ես հող եմ ուզում, Դուք հող տվեք ինձ:
— Կեցցե՛ս, ի՛մ ասպետ, լավ ես մտածել,
Հողով է մարդը աճել, ամրացել,
Ես քո մեծագործ սխրանքի համար
Նվեր եմ տալիս երկու մեծ գավառ՝
Իր շեն գյուղերով, դաշտերով բերրի,
Ուր անսպառ է բերքը արտերի:
— Երկու գավառը, արքա՛, շատ քիչ է,—
Ասաց ասպետը,— աղքա՞տ եմ, ի՞նչ է:
— Դե լավ, ես կտամ քեզ չորսը գավառ,
Միայն այլևս չասես նման բառ:
— Թող ապրած կենա մեր հզոր արքան,
Մի՞թե ձեր կյանքը արժի լոկ այդքան,
Չէ՞ որ փրկել եմ, արքա՛, ձեր կյանքը,
Որպես վարձ՝ նույնիսկ քիչ է նահանգը…
— Ա՛յ քեզ չար փորձանք,— արքան է հուզվում,—
Վեզի՛ր, դու գիտե՞ս՝ նա ինչ է ուզում:
— Իհարկե, գիտեմ, ո՛վ մեր գլխի տեր,—
Խորամանկ ժպտաց մեծ վեզիրը ծեր,—
Դուք խոստացել եք, ինչ որ ուզի նա,
Ինչ որ պահանջի, պիտի ստանա,
Դե նա էլ կանգնել և հող է ուզում,
Դուք էլ պիտի տաք, ի՞նչն է Ձեզ հուզում…
— Բայց չա՞փը, վեզի՛ր,— զայրացավ արքան,—
Կտա՛մ, միայն թե ինձ ասեք՝ որքա՞ն:
— Ինչքան որ ուզի, այնքան պիտի տաք,—

Ասաց վեզիրն ու խնդաց քթի տակ:
Արքան վեզիրից այդ չէր սպասում,
Ուստի հոգու մեջ ծովացավ ցասում:
— Շատ լավ,— ասաց նա,— ուրեմն, այդպես,
Վեզի՛ր, դե լսի՛ր, թե ինչ կասեմ քեզ,
Որպես ամեն ինչ լավ հասկացողի՝
Դու կսահմանես չափը այն հողի,
Որ պահանջում է ասպետն ինձանից,
Բայց չպաշտպանես ոչ նրան, ոչ ինձ,
Եվ մեկնումեկիս թե այն ձեռ չտա,
Հաստատ իմացի՛ր, որ քո վերջն է դա…
— Ինձ լսի՛ր, ասպե՛տ,— ասաց վեզիրը,—
Անծայրածիր է մեր մեծ երկիրը,
Այն ամենքիս էլ կբավարարի,
Դու հող ես ուզում, կտանք, շատ բարի,
Միայն թե այս է տալու պայմանը,
Դու պիտի դնես հողիդ սահմանը:
— Վեզի՛ր, պայմանիդ համաձայն եմ ես,—
Ասաց ասպետը,— բայց ասա՝ ինչպե՞ս:
— Գնա՛ դու այսօր մի լավ ձի գնիր,
Գիշերը հանգիստ, անվրդով քնի՛ր,
Վաղն առավոտից մինչև մայրամուտ
(Մանավանդ գիտես ձին վարել հմուտ)
Քո պահանջի չափ մեր երկրով անցիր.
Ինչքան որ անցար, քոնն է, ստացի՛ր…
— Ես համաձայն չեմ,— արքան է գոռում,—
Նա յոթը նահանգ կանցնի մեկ օրում…
Արքան երևի համը կհաներ,
Եթե վեզիրը լուռ աչքով չաներ…

4

Քրտնաթաթախ ձին ծանր է շնչում,
Անընդհատ վազքից հևում է, փնչում,
Երկու ժամ վարգով ճամփա է անցել,
Սակայն գեթ մի պահ չի հանգստացել,

Բերանից արդեն փրփուր է կաթում,
Սիրտը խփում է, հաճախ է գայթում,
Ասպետն է մեջքին ծանրացել քանց լեռ,
Այնինչ նա ձիուն խթանում է դեռ,
Վարգը դանդաղ է թվում ասպետին,
Սակայն հանկարծ ձին տապալվեց գետին,
Ասպետը սանձից ճգեց դեսուդեն,
Բայց իզուր, հեգ ձին սատկել էր արդեն:
Օրը անցնում էր, պետք չէր սպասել.
Ասպետն սկսեց հևիհև վազել…
Թե որքան վազեց կամ ինչքան անցավ,
Վերջում այդ մասին ինքն էլ չիմացավ,
Որովհետև հենց կեսօրվա շոգին
Նա ուժասպառված՝ ավանդեց հոգին:
Երբ որ այդ լուրը արքային բերին,
Նա խիստ զարմացած՝ կանչեց վեզիրին:
— Իմաստո՛ւն ծերուկ,— ասաց,— դու կեցցե՛ս,
Քո խելքի վրա հիացած եմ ես:
Միայն խնդրում եմ, ինձ անկեղծ ասա՛,
Այս ինչպե՞ս եղավ, ի՞նչ հրաշք էր սա:
— Ի՞նչ հրաշք, տե՛ր իմ, հասարակ բան է,
Արածիս միտքը պարզապես այն է,
Որ պահանջը մեր՝ կարիքն այդ դաժան,
Կյանքի խթանն է՝ հավերժ անբաժան,
Ուստի, քանի մարդն ապրում է ու կա,
Նրա պահանջը չափ չունի, արքա՛:
Կենդանի մարդուն նա միշտ կտանջի,
Մահն է սահմանը մարդու պահանջի:
Երբ ես ասպետին տվի պայմանը,
Նկատի առա հենց այդ սահմանը,
Եվ ինչպես այսօր ամեն ոք տեսավ,
Անփորձ ասպետը դրան շուտ հասավ…

ՍԱՐԴԸ

(Հայկական ժողովրդական ավանդություն)

Թե ե՞րբ է եղել, չեմ կարող ասել,
Հին դարերից է եկել մեզ հասել
Այս հին զրույցը շատ իմաստավոր,
Որի խոր միտքը մնում է միշտ նոր:

Գեղջուկ մի մարդ է ապրել աշխարհում,
Միշտ հետևել է լավին ու բարուն,
Եղել է արդար ու աշխատասեր,
Երբեք ոչ մեկին վատ խոսք չի հասել:

Իր ամբողջ կյանքում միշտ աշխատել է
Եվ ծուլությունը սաստիկ ատել է:
Սակայն երբեմն լինում է այնպես,
Որ ինչ չենք սիրում, հանդիպում է մեզ:

Այդ աշխատասեր ու լավ գյուղացին
Այլ ժառանգ չուներ մի որդուց բացի,
Որի նման ծույլ աշխարհում չկար,
Ծույլերից ծույլը հենց ինքն էր, որ կար:

Գեղջուկը որդուն թեև չէր ատում,
Բայց կշտամբում էր ու միշտ նախատում:
Ու շարունակ, երբ զայրանում էր նա.
— Տղա՛ս,— ասում էր,— դու մարդ չես դառնա:

Մի օր էլ հայրը շատ է պահանջում,
Որ որդին կանուխ արթնանա քնից:
— Չէ՛, տեսնում եմ՝ դու ինձ շատ ես տանջում,—
Ասում է որդին ու կորչում տնից:

Հեգ ծնողները շատ են վշտանում,
Երբ տղան գնում կորչում է անհետ,
Բայց տարիներ անց լուր են ստանում,
Որ նա դարձել է ավազակապետ:

Այդ տարիներին հենց այդ նույն երկրում
Մի ապաշնորհ արքա էր տիրում,
Եվ նրա մասին ամեն ոք գիտեր,
Որ տիրակալը շատ բթամիտ էր:

Աղքատանում էր երկիրն օրավուր,
Թշվառությունն էր իշխում ամենուր.
Մարդիկ չունեին ապրելու հնար,
Ոչ ոք չէր ուզում էլ տանը մնար:

Որևէ տեղից զենք էին գտնում,
Գնում տղայի խումբն էին մտնում…
Անցնում է այսպես միառժամանակ,
Տղայի խումբը դառնում է բանակ:

Տղան էլ արդեն, վստահ իր ուժին,
Առաջ է մղում այդ խաժամուժին
Եվ տապալում է անմիտ արքային,
Նրա փոխարեն բազմում է գահին:

Երբ որ դառնում է տղան թագավոր,
Մտաբերում է խոսքը իր ծեր հոր
Եվ որոշում է գնալ հորն այցի,
Որ իմանա, թե այժմ ի՞նչ կասի…

Ելնում է մի օր առքով ու փառքով,
Մեծ շքախմբով, ոսկեզօծ կառքով
Հայրենի գյուղն է գալիս մեր արքան
Եվ այցելում է խրճիթն հայրական:

Խեղճ ծնողները առաջ են վազում,
Մայրը կարոտի խոսքեր է ասում,
Թեև ծեր հայրը զսպում է իրեն,
Բայց չի կարենում իր սրտին տիրել,

Աչքերից անզուսպ արցունք է հորդում,
Ուզում է գրկել, համբուրել որդուն,
Բայց հապաղում է, որ սկզբում նա
Ջղջման խոսքերով հորը մոտենա…

Բայց որդին նույնիսկ առաջ չի գալիս,
Նա, կառքին բազմած, հորն հարց է տալիս.
— Ծերո՛ւկ, տեսնում ես՝ թագավորն եմ ես,
Կուզեի լսել՝ հիմա ի՞նչ կասես…

— Որդի՛ս, իզուր ես դու աճապարում,
Ես հիմա էլ քեզ մարդ չեմ համարում:
Թեկուզ աշխարհն էլ գա, խոնարհվի քեզ,
Եթե ծնողիդ դու չխոնարհվես,
Հաստա՛տ իմացիր՝ մարդ չես դառնա դու
Եվ չես կրի թանկ անունը մարդու…

ԻՆՔՆԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՂԹԱ

1

Ես իմ ճակատի քրտինքով արդար
Պատիվս տարա բարձունքը կյանքի,
Մի օր չապրեցի առանց տքնանքի,
Կյանքում լոկ ինքս եղա ինձ սատար:

Թեթև չէր թեև կյանքը ինձ համար,
Սակայն իմ ուղին ես թեթև անցա,
Աշխարհի վրա ես չծանրացա,
Խինդով պատեցի իմ օրերը մառ:

Եվ արդ քայլում եմ ես ճակատս բաց,
Շատ բան պետք չէ ինձ աշխարհի գանձից,
Դուք ինձ կտեսնեք մի ծաղկով արբած.

Կյանքում միշտ հպարտ կտեսնեք դուք ինձ,
Քանզի տքնելով ես գիշեր ու տիվ՝
Հաց վաստակեցի և այրի պատիվ…

2

Հաց վաստակեցի և այրի պատիվ,
Տուրք չտվեցի ես չարին երբեք
Եվ դուրս վանեցի իմ սրտից մեկ–մեկ
Մարդկային ցեղի մեղքերը անթիվ:

Արդ զերծ է հոգիս չար ախտերից այն,
Որոնք ծնվում են մեր կրքերից մութ,
Մեր մեջ մարում են և՛ հավատ, և՛ գութ
Եվ մեզ նետում են վիհը կորստյան:

Ես իրավունքով իմ վաստակածի՝
Կարող եմ ասել աշխարհին ի լուր,
Որ հավատում եմ սուրբ ուժին հացի.

Եվ այդ հավատը չի եղել իզուր,
Քանզի շնորհիվ այդ մեծ հավատի՝
Չհանդուրժեցի արարքը վատի…

3

Չհանդուրժեցի արարքը վատի,
Վատին առավել չհանդուրժեցի,
Թեև դրանից ես շատ տուժեցի,
Բայց չդավեցի իմ արդար կաթին:

Հարգեցի մարդու միտքը արարող,
Եվ հավատացի նրա հավատին,
Բայց քանի դեռ նա ներում է վատին,
Ես էլ դեռ նրան ներել չեմ կարող:

Այսօր էլ մարդուն քիչ եմ հավատում,
Քանզի ստեր է դեռ հորինում նա,
Իսկ ես կեղծիքը հոգով եմ ատում.

Եվ որպեսզի նա հավերժ չմնա
Ինքն իրեն դավող, հոգով անկատար,
Բարու սերմնացան եղա անդադար…

4

Բարու սերմնացան եղա անդադար,
Սրտեր ամոքող երգեր գրեցի,
Իմ երգերի մեջ սիրտս դրեցի,
Որ մարդու հոգին պահեմ անխաթար:

Մարդը ապրում է ոչ միայն հացիվ,
Նրան պետք է և սնունդ հոգևոր,

Այդ հրաշագործ սուրբ հացով է, որ
Մենք ընկալում ենք տիեզերքն անծիր:

Եվ այդ սուրբ հացը մեր միտքն է լուսե,
Որ զորանալով այս հողագնդում՝
Մեր ձգտումները դարձնում է վսեմ.

Հույզեր է վառում մեր հողե սրտում,
Հզորացնում է հոգու աշխարհը՝
Հանապազօրյա հացի նշխարը…

5

Հանապազօրյա հացի նշխարը
Արարումի սուրբ հուր է բորբոքում
Հողակերտ մարդու դեռ դաժան հոգում
Եվ հաստատ պահում բարու նժարը:

Իմ նախնիները՝ դեռ արևապաշտ,
Ուժ էին առնում հոգևոր հացից,
Որը արյան հետ փոխանցեցին ինձ,
Եվ ես ծնվեցի վատի հետ անհաշտ:

Ատեցի մարդու արարքները չար՝
Իմ տառապածի անողոք հոգով,
Եվ ճշմարտապաշտ իմ մտքով արդար

Եղա անաչառ մտքի ջատագով,
Եվ ինչ որ մտքին տալիս էր թևեր,
Ես ամեն ինչից միշտ դասեցի վեր…

6

Ես ամեն ինչից միշտ դասեցի վեր
Բանականություն կոչված հրաշքը,
Ջի նրանով է խելոք մեր աչքը,
Խոսուն՝ մեր լեզուն. նա ոգին է մեր:

Նա է մեզ տալիս սիրո իրավունք
Եվ ստեղծողի անզուգական ձիրք,
Թե նա չլիներ, մեր ամեն մի կիրք
Կդառնար անլուր չարիքի ակունք:

Եվ փա՛ռք Արարչին, որ երկրի վրա
Միտքը օրեցօր հասակ է առնում,
Ու մեծանում է վեհ ուժը նրա.

Գնալով՝ մարդը հզոր է դառնում,
Եվ ինձ էլ իր հետ տանում դեպի վեր.
Բախտը տվել է ինձ մտքի թևեր…

7

Բախտը տվել է ինձ մտքի թևեր,
Ես դրա համար գոհ եմ իմ բախտից,
Ազատ եմ ստոր կրքերի ախտից,
Որոնք մեր հոգում ծնում են դևեր:

Վայելքների մեջ շռայլ չեմ եղել,
Ոչինչ չեմ հայցել կյանքում վատերից,
Ուստի ուժեղ եմ ես շատ–շատերից,
Սակայն թույլերին երբեք չեմ նեղել:

Ծանոթանալով դարերի հոսքին՝
Աշխարհի բանը լավ եմ հասկացել,
Թեև քաջ գիտեմ, որ ուժ է ոսկին,

Բայց իմ գոյության վեհ ուժն է դարձել
Քրտինքով ցողված փոքրիկ պաշարը.
Ինձ չի գայթակղել նյութի աշխարհը…

8

Ինձ չի գայթակղել նյութի աշխարհը,
Սակայն ես նրան լավ եմ ճանաչում.
Նա ունևորի առաջ կանաչում,
Կտրում է խեղճի վերջին պաշարը:

Բայց ես նրա դեմ գլուխ չեմ թեքել,
Քանզի հարուստ եմ, ես անչափ հարուստ,
Անկապուտ գանձ է տրված ինձ վերուստ,
Լույս խոհերով եմ ես աշխարհ եկել:

Ես իմ խոհերին տալիս եմ թևեր,
Երգեր եմ հյուսում, նվիրում կյանքին,
Որ մարդն ավելի ելնի դեպի վեր.

Որ կյանքը դառնա ավելի կարգին,
Որ չար չծնվի հոգու ընդերքում.
Ես սիրտս եմ դրել իմ ամեն երգում…

9

Ես սիրտս եմ դրել իմ ամեն երգում,
Որ երգս լինի սրտիս պես անկեղծ,
Որ ինչքան ապրի, մնա միշտ անեղծ,
Եվ նրա միտքը չունենա հերքում:

Գիտեմ՝ կլինի կյանքում և այնպես,
Որ իմ երգերը ոմանց դուր չեն գա,
Ես կուրախանամ, արևս վկա,
Քանզի նրանց եմ երգով ծաղրել ես:

Ես միշտ ծաղրել եմ կյանքում վատերին
Ազնիվ ծիծաղի մտրակով այրող.
Իմ դեմ եմ հանել ես շատ–շատերին,

Որոնք ինձ ոչինչ անել չեն կարող.
Ո՞վ կարող է ինձ զրկել ծիծաղից.
Չեմ նսեմացել ապրելու վախից…

10

Չեմ նսեմացել ապրելու վախից,
Ազնիվ եմ ապրել կյանքը ինձ տրված,
Իմ արմատները շատ խորն են խրված,
Ոչ ոք չի կարող ինձ պոկել հողից:

Երբեք ստորին չեմ ապավինել,
Արհամարհել եմ ուժեղներին բուք,
Հոգով եմ ատում ես կեղծիք ու սուտ,
Ուխտել եմ միայն ճշմարիտ լինել:

Ճշմարտությամբ է աշխարհը կանգուն,
Նա հենարանն է նաև անհունի,
Նրա զինվորն եմ ես ամբողջ կյանքում.

Մոռացման ժանգից հոգիս վախ չունի.
Ես անմահության վեհ գովքն եմ երգում,
Չի ակոս ունեմ հայրենի հերկում…

11

Չի ակոս ունեմ հայրենի հերկում,
Խիղճս մաքուր է, և ճակատս՝ բաց,
Ցանած հունդերս դառնում են սուրբ հաց,
Իմ բաժինն ունեմ գալիքի բերքում:

Քրտինք եմ թափել ցրտին ու շոգին,
Արդար վաստակով սեղան եմ բացել,
Կյանքում ոչ մեկին պարտք չեմ մնացել,
Ու չեմ վշտացրել երբեք ոչ մեկին:

Իմ հանդեպ ես գութ չեմ շարժել լացով,
Այր մարդու լացը չեմ կարող տանել,
Չարին հաղթել եմ սուրբ աղուհացով,

Ես ուրախության աղբյուր եմ հանել
Արդար վաստակած հացից ու աղից.
Ձգտել եմ կյանքս ապրել անթախիծ…

12

Ձգտել եմ կյանքս ապրել անթախիծ,
Չէ՞ որ ինձ միայն մի կյանք է տրված,
Ոչ մի տեղ չկա ասված կամ գրված,
Թե ինչ–որ մեկը փրկվել է մահից:

Ուստի՝ քանի դեռ ես շնչում եմ, կամ,
Պիտի պատիվս վաստակեմ ջանքով,
Պատվովս եմ երդվում, կապրեմ նույն կյանքով,
Եթե հրաշքով նորից աշխարհ գամ:

Դժվարությամբ եմ հացս վաստակել,
Կյանքը ինձ համար չի եղել շռայլ,
Բայց երբեք վախից դուռս չեմ փակել:

Ինձ խորթ են եղել մտքերը մռայլ.
Մեծ հավատով եմ ես կռել ինձ կամք,
Արհամարհել եմ կարիք ու զրկանք…

13

Արհամարհել եմ կարիք ու զրկանք,
Երբեք չեմ եղել կրքերին գերի,
Ես չեմ խնայել ուժն իմ թևերի,
Աշխատանքով եմ վաստակել հարգանք:

Ինձ չեն գրավել փառքերը էժան,
Տառապանքով եմ միշտ ձգտել լավի,

Շատ եմ հանդիպել տանջանք ու ցավի,
Բայց չեմ վիատվել կյանքում ոչ մի ժամ:

Հպարտ եմ, որ ես իզուր չեմ ծնվել.
Ես երկրի վրա կառուցել եմ տուն,
Իմ տնկած այգին պտուղ է տվել,

Իմ լուման ունեմ այս հողագնդում,
Եվ փույթ չէ, եթե կրել եմ տանջանք.
Փա՛ռք քեզ, տառապած իմ գեղեցի՛կ կյանք…

14

Փա՛ռք քեզ, տառապած իմ գեղեցի՛կ կյանք,
Խոնարհվում եմ քո վեհության առաջ,
Դու չարձակեցիր գեթ մի թույլ հառաչ,
Թեև կրեցիր բազմաթիվ զրկանք:

Ցուրտ հողմերի դեմ իմ ահեղ դարի
Դու միշտ ծաղկավառ գարուն մնացիր,
Եվ արդարության ճամփով գնացիր՝
Հերքելով ունայն համբավը չարի:

Իսկ ես՝ զինվորդ՝ ուխտյալ, անվեհեր,
Վեհ ճշմարտության դրոշի ներքո
Քեզ մաքառումով տարա դեպի վեր.

Ու երդվյալի աննկուն ոգով
Բարին գործեցի անդուլ–անդադար
Ես իմ ճակատի քրտինքով արդար…

15

Ես իմ ճակատի քրտինքով արդար
Հաց վաստակեցի և այրի պատիվ,
Չհանդուրժեցի արարքը վատի,
Բարու սերմնացան եղա անդադար:

Հանապազօրյա հացի նշխարը
Ես ամեն ինչից միշտ դասեցի վեր,
Բախտը տվել է ինձ մտքի թևեր,
Ինձ չի գայթակղել նյութի աշխարհը:

Ես սիրտս եմ դրել իմ ամեն երգում,
Չեմ նսեմացել ապրելու վախից,
Չի ակոս ունեմ հայրենի հերկում.

Չգտել եմ կյանքս ապրել անթախիծ,
Արհամարհել եմ կարիք ու զրկանք.
Փա՛ռք քեզ, տառապած իմ գեղեցի՛կ կյանք…

ԱՋՆՎՈՒԹՅԱՆ ՎԿԱՆ

1

Սովորույթ ուներ Շահ–Աբաս արքան՝
Ծպտվել դերվիշի շորերի մեջ հին,
Շրջել շեները, իմանալ ի՞նչ կա,
Ինչե՞ր են խոսում մարդիկ իր մասին:

Մի անգամ այսպես նա մտավ մի շեն,
Տնից տուն անցավ իրիկնապահին.
— Թո՛ւյլ տվեք,— ասաց,— մնամ մի գիշեր,
Եթե սիրում եք արևը շահի:

Սակայն ոչ մեկը նրան ներս չառավ,
Բացի պատանի հովվից միամոր,
Որը ապրում էր իր մոր հետ պառավ
Մի խուլ խրճիթում՝ մութ ու գետնափոր:

Երբ երեկոյան նստեցին հացի,
«Դերվիշը» հարցրեց հովիվ պատանուն.
— Ինչո՞ւ ոչ մեկը, քեզանից բացի,
Ինձ տեղ չտվեց, ես չեմ հասկանում…

— Է՜հ, դերվի՛շ բաբա, հանգիստ հացդ կեր,—
Ասաց պատանին չափազանց զգույշ,—
Շահին ուղղված քո մաղթանքներով
Դու դառնում էիր մարդկանց աչքին փուշ:

— Բայց ինչո՞ւ մարդիկ շահին չեն սիրում,—
Հարցրեց «դերվիշը», ասես՝ հենց այնպես:
— Ասում են՝ շահը դաժան է տիրում,
Իբրև չի թողնում՝ ուզածդ անես,

Բայց իմ կարծիքով սխալ միտք է դա,
Եթե ամեն մարդ իր ուզածն անի,
Ուժեղը թույլին անվերջ կուլ կտա,—
Իր միտքն ամփոփեց հովիվ պատանին:

— Իսկ դու երևի սիրո՞ւմ ես շահին,—
Ասաց «դերվիշը» դարձյալ հենց այնպես,—
Որ ինձ օգնեցիր կարիքի պահին,
Չէ՞ որ նույն ձևով ես դիմեցի քեզ…

— Դեհ, իմ սիրելուց շահին ի՞նչ օգուտ,—
Ասաց պատանին ու բարի ժպտաց,—
Աստվածը մարդուն պարգևել է գութ,
Որ կարոտյալին օգնություն ցույց տա:

Ես էլ շատ բանի կարոտ եմ կյանքում.
Մայրս ծեր կին է, ես՝ դեռ պատանի,
Հազիվ եմ օրվա հացը վաստակում,
Ի՞նչ գիտեմ՝ բախտը ինձ ո՞ւր կտանի:

Բայց մի բան գիտեմ ես հաստատ ու ճիշտ՝
Ազնվությունը չարիք չի ծնում,
Ու որոշել եմ ազնիվ լինել միշտ,
Երբ մարդն ազնիվ է, հանգիստ է քնում…

— Անունդ ի՞նչ է, զավա՛կս, չասիր,—
Հարցրեց «դերվիշը»՝ նման գթոտ հոր,—
Միտքդ պայծառ է, սիրտդ՝ անբասիր,
Քեզ պես մարդիկ են շահին հարկավոր:

Ի՞նչ կասես, եթե քեզ պալատ կանչեն
Եվ առաջարկեն շահին ծառայել,
Կկարողանա՞ս, թեև դա հեշտ չէ,
Ազնվությունդ մինչև վերջ պահել…

— Է՜, դերվի՛շ բաբա,— տղան ծիծաղեց,—
Ազնիվն ազնիվ է մնում ամենուր,
Քնենք, հերիք է վրաս ծիծաղես,
Թե չէ՝ հովիվն ո՜ւր, շահի պալատն ո՜ւր…

Եթե անունս իմանալ կուզես,
Մայրս ինձ մանկուց Լալա է կանչել,
Այժմ բոլորն են ինձ կոչում այդպես,
Ընտելացել եմ և, կարծես, վատ չէ:

2

Նստել է շահը գահին ոսկեհուռ,
Դեմը Լալան է կծկվել վախից,
Երկու ֆառաշներ՝ զինավառ ու լուռ,
Հսկում են նրան աջից ու ձախից:

Նայում է տղան իր տրեխներին,
Իր հին շորերին բազմակարկատան
Ու մտածում է. «Ինձ ինչո՞ւ բերին…
Ի՞նչ մեղք եմ գործել… Ի՞նչ պատիժ կտան…»:

Տարի է թվում ամեն մի պահը,
Սիրտը մարում է շահի հայացքից,
Բայց հանկարծ շատ մեղմ խոսում է շահը.
— Հովի՛վ, լա՛վ նայիր, չե՞ս ճանաչում ինձ:

Լալան նայում է շահին ակնապիշ
Եվ ճանաչում է իր հյուրին ծպտյալ,
Մտքում ասում է. «Ա՜յ քեզ խեղճ դերվիշ»,
Ու տարակուսած՝ փորձում է ժպտալ:

Տեսնելով, որ նա իրեն ճանաչեց՝
Շահը հարցնում է հարազատի պես.

— Այժմ հասկացա՞ր՝ ինչու եմ կանչել,
Կմնաս ինձ մոտ և կծառայես:

— Շահն ապրած կենա, թո՛ւյլ տվեք գնամ,—
Խնդրում է Լալան խիստ թախանձագին,—
Հավատացե՛ք ինձ, եթե ես մնամ,
Մի օր չի ապրի մայրիկն իմ անգին:

— Մայրիկիդ համար մի՛ տխրիր, Լալա՛,
Մենք հոգ ենք տարել արդեն այդ մասին,
Բերել ենք նաև մայրիկին քո լավ,
Նա ընդմիշտ կապրի քեզ հետ միասին…

3

Գալիս անցնում են տարիներ պես–պես,
Լալան պալատում հասակ է առնում
Եվ գործերի մեջ վարժվում է այնպես,
Որ Շահ–Աբասի աջ թևն է դառնում:

Մի օր էլ շահը իր մոտ է կանչում
Ու ծառայության համար անբասիր
Լալային որպես խան է ճանաչում
Եվ արքունիքում կարգում է վեզիր:

Բայց ե՞րբ են մարդիկ լավը հանդուրժել,
Նախանձը ախտ է և չար հոգու թույն,
Այդ ախտը երբեք չի եղել ուժեղ,
Սոսկ դավ է նյութել և ատելություն:

Շատերն են արդեն Լալային ատում,
Բանսարկությունը սկսում է աճել,
Շուտով մի չար լուր շրջեց պալատում.
«Լալան ձգտում է գահը նվաճել…»:

Երբ լուրը շահի ականջին հասավ,
Շահը ցանկացավ իսկույն հավաստել,
Ստուգեց, թեև փաստեր չգտավ,
Սակայն լուրն արդեն ինքը չար փաստ էր…

Եվ, այնուհանդերձ, շահն հրամայեց
Լալային զրկել իր ամբողջ կայքից,
Չեղյալ համարել պատվանունը մեծ,
Ապա վտարել մայրաքաղաքից:

Երբ որ կայքն էին բռնագրավում,
Լալան նայում էր զուսպ ու անշշուկ,
Կարծես թե նրան դա չէր վրդովում,
Կեցվածքն հպարտ էր, տեսքը՝ վեհաշուք:

Սակայն նկուղում, կողպեքը վրան,
Մի ոսկեդրվագ սիրուն սնդուկ կար,
Երբ հերթը եկավ ու հասավ դրան,
Լալան արգելեց լուրջ ու վճռաբար.

— Այն ինչ վերցնում է շահը ինձանից,
Ինքն է պարգևել, թող ինքն էլ տանի,
Բայց այս սնդուկը պատկանում է ինձ,
Ես շահին չեմ տա, ինչ էլ որ անի…

Երբ դա իմացավ Շահ–Աբաս արքան,
Զարմանքը նրան այնպես պատեց, որ
Ցանկացավ անձամբ տեսնել, թե ինչ կա
Պահած սնդուկում այդ խորհրդավոր:

4

Ահա Լալայի տան սրահը լայն,
Նստած է շահը խիստ մռայլատես,
Նրա դեմ խոնարհ կանգնել է Լալան՝
Առաջվա նման հարգալից ու հեզ:

— Այդ ի՞նչ սնդուկ է,— հարցրեց շահը,—
Որ համարում ես քոնը՝ սեփական,
Ուզում եմ տեսնել, վկա ալլահը,
Եթե համոզվեմ, քեզ կթողնեմ այն:

Գնում է Լալան, սնդուկը բերում,
Դնում է շահի ոտքերի դիմաց,
Գրգռված շահը էլ չի համբերում.
— Դե շուտ,— ասում է,— կափարիչը բա՛ց:

Լալան ժպտում է բարեկամաբար
Եվ կափարիչը բացում է վստահ…
Շահն ավելի քիչ գուցե զարմանար,
Եթե ջին տեսներ սնդուկում նստած:

Բայց նա սնդուկում նկատեց միայն
Հովվական շորեր՝ կարկատած ու հին,
Խոժոռ հայացքով մի պահ դիտեց այն,
Ապա վարանոտ դիմեց Լալային.

— Այն օրից քսան տարի է անցել,
Երբ ծառայության բերի քեզ ինձ մոտ,
Դու մեծահարուստ բեկ էիր դարձել,
Ինչո՞ւ ես պահել շորերն այդ քրջոտ…

— Ո՛վ մեծ շահ, դրանք պահում էի, որ
Միշտ տեսնեի ու մնայի բարի,
Որ եթե բախտն ինձ երես տար մի օր,
Ես չդավեի իմ բարերարին…

Ասում են՝ այնքան դուր եկավ շահին
Այդ պատասխանը, որ խիստ զղջաց նա,
Ներում շնորհեց իսկույն Լալային
Եվ քսուներին պատժեց անխնա…

ԱՊՐԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

1

Շահ–Ջահանին պատել էր շատ ծանր վիշտ,
Խենթանում էր նա այդ վշտից անամոք,
Նա, որ կյանքում գոռ հաղթող էր եղել միշտ,
Այդ վշտի դեմ դարձել էր խեղճ և անօգ:

Հնդկաստանի անպարտելի այդ շահին
Դաժան բախտը չար հարված էր հասցրել.
Մահանում էր նրա չքնաղ թագուհին,
Հնար չկար մահվան սև ամպը ցրել:

Ծունկ էր չոքել սիրած կնոջ մահճի մոտ,
Որը մահճում լուռ շնչում էր հազիվհազ,
Նրան հառած իր աչքերը արցունքոտ՝
Շահը հաճախ հառաչում էր. «Ա՜խ, Մումթա՜զ»:

Չնայած իր երիտասարդ հասակին
(Դեռ տարիքը քառասունին չէր հասել)՝
Հռչակված էր Մումթազ–Մահալ թագուհին
Որպես դշխո՝ իմաստուն ու մարդասեր:

Նա զրկողին ու գռփողին չէր ներում,
Սատարում էր աշխատավոր հեզ մարդուն,
Ժողովուրդն էլ իր սրտաբուխ երգերում
Մեծարում էր նրա վարքը իմաստուն:

Եվ ամեն ոք Հնդկաստանում քաջ գիտեր,
Որ Ջահանը՝ Հնդկաստանի մեծ արքան,
Եթե այսօր անվանի ու անհաղթ էր,
Դրա համար Մումթազին էր պարտական…

Իսկ նա հիմա գիշեր–ցերեկ չի քնում,
Նրա սիրտը կեղեքում է մի խոր վիշտ.
Իր թագուհուն հաշված ժամեր են մնում,
Նա աշխարհից հեռանում է մեկընդմիշտ:

— Մումթա՛զ,— հանկարծ շահը խոսեց գլխահակ,
Ու թագուհին բացեց աչքերը մարող,
— Մումթ՛ազ,— ասաց,— ես չեմ թողնի քեզ մենակ,
Ես առանց քեզ կյանքում ապրել չեմ կարող:

Ասաց, ապա ընդոստ ելավ նա ոտքի,
Գնաց և իր գահին նստեց կսկծագին,
Իր մոտ կանչեց ավագանուն պալատի.
— Լսե՛ք,— ասաց,— բարեկամնե՛ր իմ անգին,

Էլ գաղտնիք չէ, որ շատ շուտով մեզանից
Մեր պաշտելին կհեռանա առհավետ,
Մենք երդվել ենք, ես՝ թագուհուն, նա էլ՝ ինձ,
Որ հավիտյան պիտի լինենք իրար հետ…

Ձեզ կանչել եմ, որ դուք էլ ինձ տաք երդում,
Որ եթե ես հեռանամ այս աշխարհից,
Դուք գահս տաք դեռ պատանի իմ որդուն
Եվ ծառայեք նրան արդար ու բարի:

Ես կսպասեմ մինչև վերջին պահն այն չար,
Երբ թագուհին իր վերջին խոսքը կասի…
Եվ նրա հետ ես կմեկնեմ անպատճառ…
Աղաչում եմ, կթաղե՛ք մեզ միասին:

Ներկաների հայացքները սոսկահար
Ուղղվեցին վեզիրի կողմն այդ պահին,
Իսկ վեզիրը (շատ բան տեսած մի ծեր այր)
Խոսեց հանդարտ՝ խոնարհվելով արքային.

— Շահ, քո կամքը միշտ օրենք է եղել մեզ,
Ո՞ր հանդուգնը քո կամքին դեմ կգնա,
Սակայն, տե՛ր իմ, կուզեմ, որ դու արտոնես՝
Ցանկությունդ լույս թագուհին իմանա:

— Թող իմանա, չեմ արգելում, ի՛մ վեզիր,
Միևնույն է, իմ վճիռը անխախտ է.
Շահ–Ջահանը ետ չի կանգնի վճռից իր,
Թեև, ավա՜ղ, այսօր նա խիստ անբախտ է…

2

Մեծ վեզիրը զգուշորեն նստավ ներս
Եվ հիվանդի մահճի դիմաց հայտնվեց:
— Ի՞նչ կա, վեզի՛ր, ինձ ասելու բա՞ն ունես,
Ես լսում եմ,— թագուհին մեղմ հարց տվեց:

— Ի՛մ տիրուհի, անբուժ ցավ է մեզ պատել,
Չար բախտն անվերջ հարվածում է մեր գահին…
— Ժամանակը շատ ցավեր է փարատել,
Մերն էլ կանցնի,— փորձեց ժպտալ թագուհին:

— Ա՜խ, տիրուհի՛ս,— խոսեց վեզիրը նորից,—
Արքան այսօր դաժան վճիռ արձակեց,
Առավոտյան կանչեց, ասաց բոլորիս,
Որ կմեռնի, որ չի ապրի առանց քեզ…

— Ես թույլ չեմ տա, վեզի՛ր, որ նա մահանա,
Քանզի կյանքին նա բան ունի դեռ տալու,
Գնա՛, հայտնի՛ր, իսկույն այստեղ թող նա գա,
Նրան կասեմ ես գաղտնիքը ապրելու…

Մեծ վեզիրը վարանոտ դուրս շտապեց,
Եվ քիչ հետո շահը մտավ վշտահար.

— Ասա՛, հոգի՛ս, ես քեզ հետ եմ մշտապես,
Ի՞նչ ես ուզում, որ ես անեմ քեզ համար:

— Երդվի՛ր, անգի՛ն,— թագուհին թույլ շշնջաց,—
Որ խնդրանքս սրբությամբ կկատարես…
— Ի՛մ հրեշտակ,— ասաց շահը ծունկ իջած,—
Կյանքս ուզես՝ անմիջապես կտամ ես:

— Հավատում եմ, կյանքդ կտաս անվարան,
Բայց ես ուրիշ բան եմ ուզում այս ժամին,
Խոստացի՛ր ինձ՝ կառուցել տաս դամբարան,
Որը լինի մեր մեծ սիրուն արժանի:

Շահ–Ջահանը մի պահ մտքի ծովն ընկավ,
Ապա ասաց. «Երդվում եմ քեզ մեր սիրով…»:
Երբ թագուհու ննջարանից դուրս եկավ,
Ամբողջովին վերափոխված էր իրոք:

Նույնիսկ կանչեց մեծ վեզիրին, իմացավ,
Թե պալատում ի՞նչ գործեր կան դեռ թերի,
Անմիջապես գահասենյակը անցավ,
Ընթացք տվեց շատ անավարտ գործերի:

Մեծ վեզիրը ապշահար էր մնացել.
Նա թագուհուն ծառայել էր միշտ հլու,
Նրանից շատ գաղտնիքներ էր իմացել,
Բայց չէր լսել նա գաղտնիքը ապրելու:

Ուստի իսկույն մի պատրվակ հնարեց
Եվ թագուհուն այցի գնաց նա թաքուն.
— Ո՞վ դիցուհի,— ասաց,— մարդ եմ ես տարեց,
Բայց նման բան տեսած չկամ իմ կյանքում:

Դու ի՞նչ գաղտնիք հաղորդեցիր մեծ շահին,
Որ հեշտությամբ հրաժարվեց իր մտքից,

Ես ողջ կյանքս նվիրել եմ ձեր գահին,
Չէի՞ք հայտնի այդ գաղտնիքը նաև ինձ:

Երբ թագուհին մի պահ ժպտաց ցավագին,
Ապա հազիվ շարժեց շուրթերն իր անկյանք.
— Գաղտնիք չկա, ո՛վ բարեկամ իմ անգին,
Ես, պարզապես, նրան տվի աշխատանք…

3

Երբ մեծ շուքով թաղեց սիրած թագուհուն,
Շահ–Ջահանը՝ սրտում վշտի խոր խարան,
Մասնագետներ հրավիրեց մեծանուն
Եվ պատվիրեց շինել շքեղ դամբարան:

Կառուցումին ինքն էր անձամբ հետևում,
Աշխատանքը տևեց քսան ձիգ տարի,
Վիշտը վաղուց մնացել էր հետևում,
Երբ նա տվեց Թաջ–Մահալը[1] աշխարհին:

Պատմում են, որ դրանից էլ հետո դեռ
Շահը ապրեց, դարձավ ծերուկ մի անթով,
Բայց մահանալ չէր ցանկանում նա արդեն՝
Հոգին լիքն էր Թաջ–Մահալի կարոտով…

1. Թաջ–Մահալ — աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը, տաճար–դամբարան՝ կառուցված Հնդկաստանի թագուհի Մումթազ–Մահալի գերեզմանին:

ԸՄԲՈՍՏՆ ՈՒ ՄԱՀԸ

Պրոմեթևսը երկնքից խլեց
Հուրը սրբազան,
Տարավ երկիրը,
Մարդկանց պարգևեց,
Երբ դա իմացվեց, ու լուրը Զևսի
Ականջին հասավ,
Զևսը ըմբոստին
Խիստ պատիժ տվեց:

Նա հրամայեց ըմբոստին տանել
Եվ շղթայել հար
Կովկասյան բարձր
Ժայռերի վրա,
Ապա պատվիրեց մի ահեղ արծվի՝
Գիշատիչ ու չար,
Որ անվերջ կտցի
Հաղթ կուրծքը նրա:

Շղթայված գերին հպարտ կրում էր
Տանջանքն ահավոր՝
Արհամարհելով
Տառապանք ու ցավ,
Այդպես անմռունչ դիմանում էր նա,
Երբ մահը մի օր
Քսու ժպիտով
Նրա դեմ ելավ:

— Ողջո՛ւյն,— ասաց նա,— եկել եմ օգնեմ,
Ո՞վ Պրոմեթևս,
Գիտեմ, զզվել ես

Այդ դժխեմ կյանքից,
Քանզի փրկության ուրիշ ելք չկա,
Արի՛, տանեմ քեզ
Եվ շուտ ազատեմ
Այս տառապանքից:

— Հա՜–հա՜–հա՜,— խնդաց ըմբոստը
Երեսին մահի,—
Մա՛հ, իմ մեջ այնքան
Ապրելու տենչ կա,
Որ եթե նույնիսկ ինձ ավելի ժանտ
Չարչարանք տային,
Թշվա՛ռ, ես դարձյալ
Քեզ հետ չէի գա:

Չէ՞ որ եղել եմ ես բարի գործի
Ըմբոստ արարող,
Ոչ ոք չի կարող
Ինձ ահաբեկել
Եվ ոչ ոք կյանքին պարգևած լույսը
Մարել չի կարող,
Չքվի՛ր աչքիցս,
Իզուր ես եկել…

Մահը հեռացավ, նա խիստ ապշել էր
Անակնկալից,
Եռում, պայթում էր
Նրա գանգը սին,
Նա չգիտեր, որ ով բարի գործ է
Աշխարհին տալիս,
Կարող է խնդալ
Մահվան երեսին…

ՀԱՎԵՐԺՈՂ ԶԻՆԱՆՇԱՆ

Հզոր արքա Արգիշտին
Հպարտ բազմել էր գահին,
Նա հաղթել էր իր երկրի
Ոսոխներին բազմաթիվ,
Որպես անպարտ դյուցազուն՝
Փառք է բերել նա հային,
Իր երկրում և երկրից դուրս
Ունի հռչակ ու պատիվ:

Ահա իր մոտ է կանչել
Իշխաններին իր հարգի,
Բդեշխներին մեծազոր
Եվ այրերին խորագետ,
Գահի առաջ նրանք լուռ
Սպասում են ըստ կարգի,
Մինչև արքան տիրաբար
Զրույց բացի իրենց հետ:

— Ո՞վ քաջ այրեր իմ երկրի,—
Խոսեց արքան,— այսօր մենք
Հավաքվել ենք խորհրդի,
Քանզի գործ կա կարևոր.
Բանն այն է, որ Առյուծը՝
Զինանշանը մեր սեգ,
Այսօր շատ է հնացել
Եվ մեզ նորն է հարկավոր…

Ժամանակին Առյուծը
Իրոք մեզ փառք էր բերում,
Սակայն նրա ուժն այսօր

Շատ հասարակ է դարձել.
Նա չի կարող արծվի պես
Հպարտ ճախրել եթերում
Եվ իմաստուն մարդու պես
Բերդ ու պալատ կառուցել…

— Տե՛ր իմ,— ասաց վեզիրը՝
Առաջ գալով երկու քայլ,—
Մեզ համար սուրբ օրենք է
Աստվածային կամքը Ձեր,
Որպեսզի գոռ Առյուծը
Ունենա նոր տեսք ու փայլ,
Հարկավոր է նրան տալ
Արծվի գլուխ ու թևեր:

— Հիասքանչ է,— գոչեցին
Ներկաները հիացած,—
Արծվառյուծը շատ ազդու
Զինանշան է ճշտիվ…
Եվ նրանք այս նոր միտքը
Կպնդեին անկասկած,
Եթե նրանց չառարկեր
Ամենակալ Արգիշտին.

— Արծվառյուծը իսկապես
Զինանշան է ազդու,—
Ասաց արքան,— բայց նա էլ
Անպատեհ է մեր գահին,
Ես նրանում չեմ տեսնում
Իմաստությունը մարդու,
Գտեք մի բան, որ լինի
Ե՛վ հզոր, և՛ մարդկային…

Տիրեց ծանր լռություն,
Կարծես ոչ ոք չէր շնչում,

Մտածում են բոլորը,
Քանզի հարցը շատ է բարդ,
Եվ այդ պահին մի մեղմ ձայն
Հնչեց արձակ դահլիճում,
Ձեռքը կրծքին՝ բարբառեց
Քրմապետը ալեզարդ.

— Ո՜վ քաջ այրեր, ամեն ուժ,
Ինչպիսին էլ լինի նա,
Իր էությամբ կմնա
Վաղանցուկ ու անկատար,
Կչքանա վաղ թե ուշ,
Նրանից հետք չի մնա,
Եթե ուժն այդ չլինի
Ճշմարտացի և արդար:

Ոչ մի ամրոց չի լինի
Ամրակուռ ու հաստատուն,
Նրա բարձր պատերում
Չի ամրանա ոչ մի քար,
Եթե հմուտ ու ճարտար
Որմնադիրը իմաստուն
Այդ քարերը դնելիս
Չգործածի ուղղալար:

Ուղղալարը թեև թույլ
Մի նժար է ձեռակերտ,
Բայց նրա մեջ անխորտակ
Ճշմարտության ուժը կա,
Առանց նրա ժեռ քարից
Չի կառուցվի ոչ մի բերդ՝
Որքան էլ մարդը լինի
Հաղթաբազուկ ու հսկա:

Ուստի, այրե՛ր իմաստուն,
Եթե խորհուրդն իմ լսեք,
Ամենազոր կդարձնենք
Արծվագլուխ առյուծին,
Որպես հզոր ճշմարտի
Խորհրդանիշ մի վսեմ,
Եկեք այդ լարը կախենք
Արծվառյուծի կտուցին…

— Կեցցե՜ս, ո՜վ ծեր իմաստուն,—
Գոչեց արքան ժպտադեմ,—
Իսկապես որ դու հարցի
Պատասխանը ճիշտ գտար…
Ապա տվեց հրաման՝
Բերել հղկել մի մեծ վեմ
Եվ արծվառյուծ քանդակել՝
Կտուցից կախ ուղղալար…

✧ ✧ ✧

Այդ օրերից անցել են
Դարեր՝ մռայլ կամ շենշող,
Ոսոխներից մեր վայրագ
Այսօր շատերը չկան,
Սակայն որպես անխորտակ
Ջինանշան հավերժող՝
Ճշմարտությունը մնաց
Մեր գոյության լուռ վկան…

ԴԵՐՎԻՇԸ

Արքայական երկու պահնորդ
Մի դերվիշի կալանեցին,
Տարան պալատ՝ արքայի մոտ,
Եվ արքային զեկուցեցին.

— Ապրած կենաս, թագավո՛ր տեր,
Թափառական դերվիշն այս չար
Շրջում է ողջ երկիրը մեր,
Մարդկանց անում խուճապահար:

Տարածում է նա ամենուր,
Որ այս տարի սով կլինի,
Ժողովուրդն էլ հուսակտուր
Թաքցնում է ինչ որ ունի:

Հարկերը չեն գանձվում հանգիստ,
Գանձարանդ է սնանկանում,
Սրան պետք է պատժել շատ խիստ,
Սա գժտության սերմ է ցանում:

— Հը՞, ի՞նչ կասես, ծե՛ր խառնակիչ,—
Ասաց արքան մռայլադեմ,—
Անմիջապես կանչե՞մ դահիճ,
Թե՞ պահանջեմ, որ քեզ դատեն:

— Կամքը քոնն է, տե՛ր թագավոր,—
Դերվիշն ասաց համեստ ու հեզ,—
Կուզես՝ կախի՛ր, բայց գիտցիր, որ
Խիղճդ հետո կտանջի քեզ:

Արքան մի պահ լուռ մտածեց,
Ապա դարձավ վեզիրին, թե՝
Անմիջապես ատյան բացեք,
Թող օրենքով սրան դատեն:

Չլինի, թե պատժեն թեթև,
Եթե իրոք մեղքը մեծ է,
Որ ոչ մեկը այսուհետև
Չկատարի նման փորձեր:

Հայցատերը թագավորն էր,
Իսկույնևեթ բացվեց ատյան,
Եկան երեք դատավորներ,
Որ դերվիշին պատժաչափ տան:

Ոտքի ելավ, խոսեց ազդու
Դատավորը առաջադաս.
— Պետք է մորթել այս չար մարդուն
Եվ շներին գցել մաս–մաս:

Դերվիշն հանգիստ խոսք պահանջեց,
Ոտքի կանգնեց, ժպտաց բարի,
Ապա զվարթ բացականչեց.
— Կեցցե՜ ցեղը դատավորի:

Ասաց ու խոր գլուխ տվեց
Թագավորին ու ատյանին,
Ապա նստեց ու սպասեց
Մինչև մի նոր պատիժ տային:

Թագավորը նշան տվեց
Դատավորին երկրորդադաս,
Նա էլ ելավ տեղում ցցվեց
Եվ այսպիսի վճիռ կարդաց.

— Գործընկերը իմ հարգարժան
Շատ մեղմ վարվեց, թող ինձ ների,
Մինչդեռ պիտի դատել դաժան,
Որ դաս լինի ուրիշներին:

Այս դերվիշին մորթենք եթե,
Նա ցավ կզգա միայն մի պահ,
Էլ ո՞ւմն է պետք մահն այդ թեթև,
Պիտի արվի նա տանջամահ:

Դերվիշն էլի խոսք պահանջեց,
Նորից կանգնեց, ժպտաց բարի,
Դարձյալ ուրախ բացականչեց.
— Կեցցե՜ ցեղը դատավորի…

Այս անգամ էլ շեշտեց ցեղը,
Ու քթի տակ մեղմ ժպտալով՝
Հանգիստ ու լուռ նստեց տեղը՝
Ներկաներին գլուխ տալով:

Ապա ելավ ոտքի կանգնեց
Դատավորը երրորդադաս.
— Արքա՛,— ասաց,— մեր տե՛ր ու մե՛ծ,
Գահիդ հավերժ հաստատ մնաս,

Մեղավորին պետք է պատժել,
Դա պնդում է և օրենքը,
Բայց նախօրոք պիտի պարզել՝
Ինչպիսի՞ն է նրա մեղքը:

Այս դերվիշը խառնակի՞չ է,
Թե՞ իսկապես ճիշտ է ասել,
Իսկությունը մեզ հայտնի չէ,
Ուստի պետք է քիչ սպասել:

Ժամանակը գարուն է դեռ,
Սովը հետո հայտնի կանի,
Եկեք պահենք մինչև ձմեռ,
Ապա պատժենք հույժ արժանի:

Դերվիշն էլի խոսք պահանջեց,
Էլի կանգնեց ժպտաց բարի,
Այս անգամ էլ բացականչեց.
— Կեցցե՜ ցեղը դատավորի…

Ծեր դերվիշի արարքն այնքան
Ներկաներին զարմացրեց,
Որ մեջ մտավ ինքը՝ արքան,
Դատն ընդհատեց ու հարցրեց.

— Դերվի՛շ, այստեղ քեզ դատեցին
Դատավորներն իմ աջակից,
Նրանք վճիռ արձակեցին
Խիստ զանազան մեկը մեկից:

Բայց քո կողմից նրանց տրված
Պատասխանը միևնույնն էր.
Եվ, ի վերջո, ինձ մութ մնաց,
Թե նրանց ցեղն ի՞նչ կապ ուներ…

— Օ՜, ինչպե՞ս թե, թագավո՛ր տեր,—
Դերվիշն ասաց մտորելով,—
Իմաստնանում է միտքը մեր՝
Տեսնելով ու սովորելով:

Իսկ ամեն ինչ մենք չափում ենք
Իմացությամբ մեր սեփական,
Որը այլ կերպ կոչվում է խելք,
Եվ խելքով ենք դատում, արքա՛:

Մարդուս խելքը ամենից շատ
Ելնում է իր ցեղի փորձից,
Մորթել կտա, թե անի դատ
Ժառանգորդը մսագործի:

Դատավորը քո գլխավոր,
Երբ որոշեց ինձ մորթել տա,
Անմիջապես զգացի, որ
Մսագործի զավակ է նա:

Երբ հաջորդը վճռեց, որ ինձ
Տաժանամահ պիտի անել,
Կռահեցի միանգամից,
Որ չար դահճի զարմ է նա էլ:

Իսկ երրորդը երբ բարբառեց
(Աստված նրան թող պահպանի),
Ուրախություն ինձ պատճառեց՝
Նա զավակ է սերմնացանի:

Իմ դեմ հառնեց ցեղը նրա՝
Հողագործը համբերատար,
Այս տանջահար երկրի վրա
Նա է հավերժ դատում արդար:

Երբ նրանք ինձ դատում էին՝
Իրենց փորձը գործի դրած,
Հաճելի էր ինձ այդ պահին
Հիշատակել ցեղը նրանց…

Արքան մի պահ ժպտաց թեթև.
Դերվիշն իրոք ճիշտ էր ասում,
Ու հարց տվեց այնուհետև.
— Դերվի՛շ, ի՞նչ է մեզ սպասվում:

— Վատ բան չկա, տե՛ր թագավոր,
Սովն աղետ է սովորական,
Բայց կդառնա այն ահավոր,
Եթե բութ է երկրի արքան:

Եթե արքան (Աստված չանի)
Անազնիվ է, խարդախ ու չար,
Ինչքան էլ որ զորեղ լինի,
Կկործանվի նա անպատճառ:

Իսկ եթե նա, ասեմ ի դեպ,
Տեր է եղել արդարադատ,
Ժողովուրդը նրա հանդեպ
Տածել է միշտ սեր ու հավատ,

Ուզել է, որ հարատևի
Ու զորանա նրա ցեղը,
Թեկուզ աշխարհն էլ հրդեհվի,
Չի այրվելու նրա ծեղը…

— Ազատեցե՛ք այս դերվիշին,—
Հրամայեց իսկույն արքան,—
Եվ ամեն ոք թող լավ հիշի,
Որ արդարինն է ապագան…

Հենց այդ պահին երկնքից խոր
Երեք թռչուն՝ ներքև բերին
Անմահական երեք խնձոր
Ու բաշխեցին արդարներին…

ՇԱՀՍԱՐԸ

1

Եկեք պատմեմ անիրական,
Բայց իմաստուն զրույց մի հին,
Որի միտքը խորն է այնքան,
Որ դուր կգա լսողներին:

Աշխարհում կար մի աղքատ մարդ՝
Տարին բոլոր հացի կարոտ,
Ուներ–չուներ՝ մի փոքրիկ արտ՝
Խիստ անջրդի ու քարքարոտ:

Չարչարվում էր նա քրտնաքամ,
Մշակում էր արտը բահով,
Սակայն խեղճը ոչ մի անգամ
Չէր հավաքում բերքն ապահով:

Մերթ մորեխն էր ապականում,
Կամ երաշտն էր այրում անվերջ,
Մերթ հեղեղն էր սրբում–տանում,
Մարդուն թողնում կարիքի մեջ:

Մի տարի էլ կարկուտը չար
Խփեց–խառնեց արտը հողին…
Անիծում էր գեղջուկն անճար
Անարդար բախտ բաժանողին:

Բայց նա հանկարծ լսեց մի ձայն
Եվ ուշադիր նայեց չորս դին,
Մունետիկն էր արքայական
Ազդարարում ժողովրդին.

— Հե՜յ, ժողովո՛ւրդ, երազի մեջ
Թագավորը արեգնափայլ
Տեսել է, որ երկնքից պերճ
Ցած են թափվում հովազ ու գայլ:

Ով որ մեկնել կարողանա
Այս երազի իմաստը մութ,
Մի պարկ ոսկի նա կստանա
Թագավորից մեր բարեգութ:

Լսեց գեղջուկն ու մտածեց՝
Երանի թե ինքն իմանար…
Եվ նորից իր բախտը կոծեց,
Որ չի գտնում ոչ մի հնար…

Մեկ էլ հանկարծ իր խոր բնից
Գլուխն հանեց մի Շահմար[1] օձ.
— Ա՛յ գյուղացի, ակա՛նջ դիր ինձ,
Ի՞նչ ես դրել դու լաց ու կոծ,

Եթե ես քեզ գաղտնիքն ասեմ
Եվ պարկ ոսկին դու ստանաս,
Ես էլ այստեղ քեզ սպասեմ,
Ոսկու կեսը դու ինձ կտա՞ս:

— Բա դա խո՞սք է, օ՛ձ բարեկամ,—
Գեղջուկն ասաց,— բա մա՞րդ չեմ ես,
Գաղտնիքն ասա՛, գնամ — ետ գամ,
Ոսկու շատը բերեմ տամ քեզ:

1. Հեքիաթներում՝ օձերի թագավոր:

— Որ այդպես է,— օձը ասաց,—
Գնա՛, հայտնի՛ր դու արքային,
Որ իր երկրի մեծերն անսանձ
Դավ են նյութում ընդդեմ գահին…

2

Մեկնությունը լսեց արքան,
Իրոք դավեր բացահայտեց
Եվ, ինչքան որ դավադիր կար,
Իսկույն բռնեց ու գլխատեց:

Հավատարիմ տված խոսքին՝
Արքան պալատ կանչեց մարդուն,
Նրան տվեց մի պարկ ոսկին,
Առոք–փառոք ուղարկեց տուն:

Բայց գյուղացին ոսկին տարավ
Խոր թաքցրեց իր հյուղակում
Եվ չարանենգ մի միտք արավ.
Գնալ օձին վերջ տալ թաքուն

Եվ տիրանալ ամբողջ պարկին,
Գնել տներ ու ագարակ,
Հարստանալ, ապրել կարգին…
Ապա տնից ելավ արագ:

Մի ահագին մահակ առած՝
Գնաց գտավ օձի բույնը,
Որտեղ օձը օրեր առաջ
Արել էր իր լավությունը:

— Օ՛ձ, դո՛ւրս արի,— մարդը կանչեց,
Դագանակը պահած հարմար,—

Մի պարկ ոսկին բերել եմ ես,
Դո՛ւրս արի, քո բաժինը տա՛ր:

Բայց իզուր էր նա ձայն տալիս,
Օձը չկար, չհայտնվեց.
Տեսավ՝ օձը դուրս չի գալիս,
Էլ այլևս ձայն չտվեց:

Դագանակը նետեց մի կողմ
Եվ ուրախ տուն վերադարձավ,
Նա իր բախտից մնաց շատ գոհ,
Որ այդպես հեշտ օձից պրծավ:

3

Անցան օրեր ու ամիսներ,
Գեղջուկն ապրում էր ապահով,
Մի լուսավոր տուն էր գնել,
Առել էր ձի, ոչխար ու կով:

Նա լքել էր իր արտը հին,
Մի նոր արտ էր գնել հաջող,
Մոռացել էր նույնիսկ օձին,
Կյանք էր վարում հանգիստ ու ճոխ:

Սակայն մի օր՝ առավոտ վաղ,
Եկան, նրան տարան պալատ,
Թագավորը գիշերն, ավա՜ղ,
Նոր երազ էր տեսել շատ վատ:

Նա տեսել էր, որ երազում
Լուրթ երկնքից թափվում են վար
Աղվեսների հոտեր բազում
Եվ թափառում խուճապահար:

— Դե՛, բարեկամ,— ասաց արքան,—
Այս երազն էլ թե որ մեկնես,
Խոստանում եմ և ա՛յս անգամ
Մի պարկ ոսկի նվիրել քեզ:

Իսկ թե փորձես դու ինձ խաբել
Կամ երազս չմեկնես ճիշտ,
Ձեռ ու ոտդ կտամ կապել
Եվ զնդանում պահել ընդմիշտ:

Խեղճ գյուղացու սիրտը մարեց,
Քիչ էր մնում ուշքը գնար,
Նա սոսկահար ուժը լարեց,
Որ գեթ ոտքի վրա մնար:

Ապա վիատ, մի կերպ ասաց.
— Արքա՛, երկու օր տվեք ինձ…
Արքան նայեց տարակուսած.
— Դե լավ, կգաս երկու օրից…

Հաջորդ օրը մեր գյուղացին
Գնաց արտը ու ձայն տվեց,
Թախանձագին կանչեց օձին,
Եվ, ո՜վ զարմանք, օձն հայտնվեց:

— Հը՞,— ասաց նա,— գեղջուկ, ի՞նչ կա,
Էլի՞ բան է պատահել քեզ…
— Ինչպե՞ս ասեմ, օ՛ձ բարեկամ,—
Չքմեղացավ գեղջուկն այսպես,—

Չգիտեմ ո՞նց արդարանամ,
Արքան արեց ինձ սևերես,
Քանզի ոսկին չտվեց նա,
Երբ երազը մեկնեցի ես:

Իսկ երեկ էլ կանչել է ինձ,
Թե՝ երազ եմ տեսել, մեկնի՛ր,
Այս անգամ էլ, իբրև, վերից
Աղվեսներ են իջել երկիր…

— Փույթ չէ,— ասաց օձն անտարբեր,—
Պատահում է նաև այդպես,
Երբ որ կտա, բաժինս բեր…
Իսկ երազը մեկնիր այսպես.

Նրան ասա՝ երբ երկրով մեկ
Զոռբաներին կոտորեցիր,
Նրանք վախից ամենուրեք
Խարդախների վերածվեցին:

Հիմա նենգում ու քծնում են,
Եղծում, շորթում ու գողանում,
Կեղծ վաճառում ու գնում են,
Խաբում են և սուտ սերմանում…

4

Մեկնությունը լսեց արքան,
Անմիջապես փաստը ճշտեց,
Տեսավ, իրոք, խարդախներ կան,
Նա բոլորին բանտը նետեց:

Ապա նորից նա գեղջուկին
Մի պարկ ոսկով վարձատրեց,
Իսկ գեղջուկը տարավ ոսկին
Էլի մի տեղ խոր թաքցրեց:

Գնաց օձին հանեց բնից,
Ապա ասաց արտասվաձայն.
— Արքան ոսկի չտվեց ինձ,
Նորից քո դեմ ես խաղք դարձա…

— Փույթ չէ,— ասաց օձն անտարբեր,—
Մի օր նա իր պարտքը կտա,
Երբ որ կտա, բաժինս բեր…—
Ապա դարձավ բույնը մտավ:

5

Անցան օրեր ու ամիսներ,
Արքան երազ տեսավ մի նոր,
Տեսավ ծաղկած հանդ ու սարեր,
Տեսավ երկինք՝ ջինջ ու անդորր,

Եվ երկնքից՝ պայծառ ու պերճ,
Ցած են իջնում գառներ բազում,
Արածում են ծաղկունքի մեջ,
Ինքն էլ հովիվ է երազում…

Երբ գյուղացուն արքան կանչեց,
Որ երազի միտքը բացի,
Գեղջուկն էլի օր պահանջեց,
Նորից գնաց օձին այցի:

Օձը եկավ և այս անգամ
Եկավ կանգնեց գեղջուկի դեմ,
Ապա ասաց պատրաստակամ.
— Ես ամեն ինչ գիտեմ արդեն.

Գնա՛, ասա՛ արքային դու,
Որ երազիդ միտքն է բարի,
Որ իջել է արդարություն
Ողջ տարածքում քո աշխարհի…

6

Արքան լսեց ու շատ հրճվեց,
Նրա հոգին ցնծաց այնքան,

Որ երկու պարկ ոսկի տվեց
Խեղճ գյուղացուն նա այս անգամ:

Երբ գեղջուկը՝ պարկերն ուսին,
Լուռ քայլում էր ճանապարհով
Եվ խորհում էր օձի մասին,
Հանկարծ սիրտը լցվեց բարով:

«Ի՞նչ մարդ եմ ես,— մտածեց նա,—
Օձի այսքան լավության դեմ
Ես չար եղա ու անխնա,
Ինձ քավություն չկա, գիտեմ:

Արի, ես այս ոսկին տանեմ
Եվ օձին տամ երկու պարկն էլ,
Չարությունն իմ սրտից վանեմ,
Գնամ ապրեմ՝ ինչպես հարկն է…»:

Մտածեց ու ճամփան թեքեց,
Հասավ արտը, կանչեց օձին.
— Օ՛ձ, դո՛ւրս արի, բերել եմ քեզ
Իմ պարտքերը թե՛ նոր, թե՛ հին:

Օձը հենց որ ոսկին տեսավ,
Իսկույն փոխվեց դարձավ կախարդ
Եվ ժպտալով՝ մարդուն ասավ.
— Ի՞նչ եմ անում ոսկին, ո՛վ մարդ,

Այս աշխարհի գանձերը ծով
Դարձյալ մնում են աշխարհին,
Փա՛ռք նրան, ով բարի գործով
Դեմ կկանգնի նենգ ու չարին:

Չէ՞ որ մարդու միտքը ճարտար
Ժամանակին է հպատակ,

Ժամանակն էլ հո անդադար
Փոփոխվում է արևի տակ:

Մերթ բարով է լցվում անվերջ,
Մերթ էլ չարն է տիրում նրան…
Երբ առնում է մարդուն իր մեջ,
Իր կնիքն է դնում վրան:

Հիշո՞ւմ ես, մա՛րդ, առաջին հեղ,
Երբ գայլի էր ժամանակը,
Դու էլ դարձար գայլ մի ահեղ,
Ձեռքդ առած դագանակը,

Եկար, որ ինձ դուրս կանչեիր,
Ձայն տվեցիր, չելա քո դեմ,
Քանզի դու էլ բարի չէիր,
Ես գիտեի միտքդ արդեն…

Եվ երբ փոխվեց ժամանակը,
Ամբողջովին խարդախացավ,
Դու էլ թողիր դագանակը
Ու ստախոս, խարդախ դարձար:

Եկար ու ինձ ասիր, ի դեպ,
Որ չի տվել արքան ոսկին,
Ես էլ հանգիստ ձևացա, թե
Հավատում եմ քո սուտ խոսքին:

Իսկ այսօր, երբ վերափոխվել,
Ժամանակն է դարձել բարի,
Արդարությամբ են ողողվել
Չորս ծագերը մեր աշխարհի,

Դու ինքդ էլ ես բարիացել,
Ինձ ես բերել ամբողջ ոսկին,

(Որ ոչ մեկին չի մնացել…),
Ուստի, ակա՛նջ դիր իմ խոսքին.

Գնա՛, ասա՛ բոլոր մարդկանց՝
Անցողիկ են գանձերն անհուն,
Անանց է լոկ մի վսեմ գանձ,
Այն կոչվում է Բարի անուն…

Ասաց կախարդն ու չքացավ,
Ինչպես տապից ցնդող մի ցող:
Եվ մեր զրույցը վերջացավ,
Մնաս բարով, ի՛մ ընթերցող…

ԱՎԱԶԱԿՆԵՐԸ

1

Մի շատ հարուստ մարդ օրհասի պահին,
Մտաբերելով իր մեղքերը հին,
Իր երկու որդուն մահճի մոտ կանչեց,
Խրատներ կարդաց, հետո պահանջեց.
— Լսե՛ք, զավակնե՛ր դուք իմ թանկագին,
Ես թողնում եմ ձեզ ոսկի ահագին,
Որի կշիռը կազմում է յոթ փութ,
Ես այն դիզելիս եղել եմ անգութ.
Մեկին զրկել եմ, մյուսին խաբել,
Պատահել է, որ արյուն եմ թափել…
Մի խոսքով, ինչե՞ր չեմ արել կյանքում,
Իսկ ահա մահը իմ դուռն է թակում,
Շուտով կգնամ մի ուրիշ աշխարհ,
Որտեղ տանջում են մեղքերի համար:
Որպեսզի այնտեղ չչարչարեն ինձ,
Լսե՛ք, թե ինչ եմ պահանջում ձեզնից.
Յոթը փութ ոսկուց հինգը ձեզ առեք,
Ձեզ է պատկանում, ինչ կուզեք՝ արեք:
Բայց երկու փութը՝ լրիվ, անթերի,
Անպայման տվեք ավազակներին:
Ավազակները մեղքից վախ չունեն,
Թող իմ մեղքերն էլ նրանք ընդունեն:
Ասաց ու տխուր նայեց ամենքին,
Ապա ավանդեց մեղավոր հոգին:

2

Մեր եղբայրները շատ էին ջահել,
Իսկ հայրը նրանց շատ լավ էր պահել,
Ուստի, երբ փառքով թաղեցին պրծան,

Հաջորդ օրն ելան ձիերը հեծան
Եվ, հավատարիմ հայրական խոսքին,
Իրենց հետ առան երկու փութ ոսկին,
Քշեցին հասան սարերը մթար,
Ուր ամեն ձորում ավազակը կար…
Դեռ չէին անցել մի խոր ձորակից,
Երբ մեկ էլ հանկարծ թփերի տակից
Չորսը զինավառ մարդիկ դուրս պրծան,
Մեկեն դեմ արին չորսը հրացան:
— Կանգնեցե՛ք,— գոռաց մեկը նրանցից,
Որը բեղ ուներ ոլորուն ու ցից,—
Այս խուլ սարերում դուք ի՞նչ եք անում,
Ձեր բեռը ի՞նչ է, և ո՞ւր եք տանում,
Միայն թե չասեք՝ լավ բաներ չկան,—
Մատը թափ տվեց բեղավոր հսկան:
Եղբայրներն իսկույն իրար նայեցին,
«Հենց սա է, որ կա»,— լուռ մտածեցին,
Ապա ավագը մոտեցավ մի քիչ,
Ավազակներին պատմեց ամեն ինչ
Ու վերջում խոսքը ավարտեց այսպես.
— Ահա այս ոսկին պատկանում է ձեզ,
Որից, կարծում եմ, դուք գոհ կմնաք,
Ձեր ոսկին առեք, մեզ թողեք՝ գնանք:
— Օ՜, ո՛չ, սպասե՛ք, դա չեղավ արդեն,—
Բեղավորն ասաց խիստ խոժոռադեմ,—
Շուրջ քսան տարի ավազակ եմ ես,
Բայց դեռ իմ կյանքում չի եղել այնպես,
Որ մենք թալանենք մեկին անարդար,
Մենք վատ մարդկանց ենք տույժ տվել արդար,
Մենք թալանել ենք կյանքի ցեցերին՝
Գողին, գռփողին և այն մեծերին,
Որոնք պետական պաշտոնների մեջ
Մարդկանց զարկում ու զրկում են անվերջ,
Մի խոսքով՝ բոլոր մեղսագործներին,
Որ մեր մեղքերն էլ ինչ–որ տեղ ներվի…

Մինչդեռ դուք եկել ու պահանջում եք,
Որ ձեր հոր մեղքն էլ մեզ վրա առնենք:
Այնպես որ, տղե՛րք, մեզ հավատացե՛ք,
Մենք ձեր որոնած ավազակը չենք…

3

Եղբայրներն էլի նայեցին իրար,
Իրենց լսածից մնացին շվար,
Չէին իմանում՝ արդյոք ի՞նչ անեն,
Իսկ եթե ոսկին նորից հետ տանե՞ն.
Ախր մեջտեղը հոր կտակը կար,
Հնարավոր չէր հապաղել երկար,
Հայրը շատ խիստ էր կտակը արել,
Բայց խնդիրն այն էր, թե ո՞նց կատարել,
Ուստի այդ հարցով իսկույն դիմեցին
Ավազակների բեղավոր մեծին:
Իսկ բեղավորը երբ նրանց լսեց,
Քահ–քահ ծիծաղեց ու բարձր խոսեց.
— Դուք դրա համար իզուր եք եկել,
Խեղճ ու մոլորված սար ու ձոր ընկել,
Ձեր ուզած մարդը սարերում չկա,
Հավատացե՛ք ինձ, պատիվս վկա:
Թե կուզեք գտնել ձեր ուզած մարդուն,
Այժմ անհապաղ վերադարձեք տուն:
Վաղն առավոտյան, հենց այգաբացին,
Գավառապետին գնացեք այցի
Եվ պատմեք նրան՝ ինչ պատմեցիք մեզ.
Համոզվա՛ծ եղեք, որ նա կօգնի ձեզ
Ու ձեր հոր կամքը նա կկատարի,
Այն էլ՝ օրենքով, քաղաքավարի…

4

Գավառապետը ընդունարանում,
Սեղանին թեքված, լուռ գիր էր անում,
Երբ այդ միջոցին սպասավորը

Դռնից ներս հրեց երկու եղբորը,
Ինքն էլ ներս մտավ նրանց ետևից.
— Աղա՛,— ասաց նա,— ներեցե՛ք դուք ինձ,
Ես չէի կարող նրանց շատ պահել,
Քանզի վիշտ ունեն ու շատ են ջահել,
Ես այդ զգալով՝ չհամբերեցի
Ու անմիջապես ձեզ մոտ բերեցի,
Գիտեմ, որ նրանք հեշտ բան չեն հայցում,
Բայց որ դուք կօգնեք, ես չեմ կասկածում,—
Ասաց ու թաքուն ձախ աչքը ճպեց
Եվ ցուցամատը բուռ մատով շփեց…
Գավառապետը իսկույն հասկացավ
Ու անմիջապես տեղից բարձրացավ,
Ժպիտը դեմքին՝ ընդառաջ գնաց,
Ջերմորեն սեղմեց ձեռքերը նրանց,
Տեղ առաջարկեց, նրանք նստեցին,
Ապա սիրալիր հարց տվեց մեծին.
— Դե՛, երիտասա՛րդ, ես լսում եմ քեզ,
Հիմա ինձ պատմի՛ր, ի՞նչ խնդրանք ունես,
Դուք ձեր գաղտնիքը ինձ վստահեցե՛ք,
Անպայման կօգնեմ, հաստատ իմացե՛ք:
— Տե՛ր գավառապետ, ինչպե՞ս ասեմ Ձեզ.
Մեր հայրը մեռավ… էսպես ու էսպես…
Եվ ավագ որդին պատմեց մեկ առ մեկ,
Հետո էլ ասաց՝ մեզ պիտի օգնեք:
Գավառապետը մի քիչ մտածեց,
Նախ լուսամուտի փեղկերը բացեց,
Հայացքը հառեց դիմացի սարին,
Որի գագաթին ձյուն կար ողջ տարին,
Ապա լուռ քայլեց նա առաջ ու հետ
Եվ հանգիստ խոսեց տղաների հետ.
— Շատ լավ կտակ է թողել հայրը ձեր,
Սակայն ձեր գործը բարդ է, տղանե՛ր,
Չեմ կարող ոսկին վերցնել հենց այնպես,
Պետք է օրենքով ձևակերպեմ ես,

Իսկ դրա համար… բանը այն է, որ…
Դե ինչպե՞ս ասեմ… փող է հարկավոր…
— Թե մի փութ ոսկով դա գլուխ կգա,
Դուք ձևակերպե՛ք, տանը ոսկի կա,—
Իսկույն խեղճացավ ավագ եղբայրը,—
Միայն թե հանգիստ հանգչի մեր հայրը:
— Եթե այդպես է, հիմա լսեք ինձ,—
Գավառապետը բարձրացավ տեղից,
Ապա մոտեցավ լուսամուտին բաց
Եվ ցուցամատով մոտ կանչեց նրանց.
— Տեսնո՞ւմ եք,— ասաց,— ձյունը այն սարի,
Ձեզ եմ վաճառում բոլորն այս տարի:
Դուք այն գնում եք երեք փութ ոսկով,
Այն էլ ոչ թե սոսկ բանավոր խոսքով,
Այլ կնքում եք լուրջ մի պայմանագիր.
Թե համաձայն եք, կանչեմ գրագիր…
Համաձայն էին: Գործարքը արվեց,
Ու եղբայրների իղձը կատարվեց,
Նրանք գոհ սրտով թողին–հեռացան,
Իրենց առօրյա գործերին անցան…

5

Ամառն անցել էր, արդեն աշուն էր,
Երբ մի օր հանկարծ եղբայրները մեր
Փոստով ստացան շատ հետաքրքիր
Անսպասելի մի ծանուցագիր:
Գավառապետն էր անձամբ հղել այն,
Պահանջել էր, որ շուտ ներկայանան…
Ու եղբայրները՝ սաստիկ վարանոտ,
Երբ հաջորդ օրը եղան նրա մոտ,
Նա տղաներին նախ լուրջ բարևեց
Ու նույն լրջությամբ նրանց հարց տվեց.
— Հը՞, բարեկամնե՛ր, ի՞նչ եք մտածում,
Չե՞ք ասում՝ շուտով գալու է նոր ձյուն,
Գալիս է նստի այն սարի վրա,

Երբ դուք գնել եք հին ձյունը նրա…
Եկե՛ք, ձեր ձյունը հավաքե՛ք, տարե՛ք,
Չէ՞ որ նոր ձյունն էլ պիտի վաճառենք,
Իսկ եթե նորին խառնվի հինը,
Մեզ ոչ ոք չի տա մեր ուզած գինը…
— Բայց, գավառապե՛տ, դա անհնար է,—
Եղբայրներն ասին,— չէ՞ որ դա սար է,
Մենք ինչպե՞ս մաքրենք ձյունը ողջ սարի,
Նման աշխատանք ո՞վ կկատարի…
— Այդպես մի խոսեք, ի սեր Աստծո,—
Գավառապետը վրդովվեց շինծու,—
Եթե այս տարի ձյունը չծախեմ,
Հաստատ իմացե՛ք, որ ինձ կկախեն:
Ճիշտ է, այդ սարը ինձ է պատկանում,
Բայց եկամուտը արքան է տանում,
Արքայի տուրքը բա ո՞նց վճարեմ,
Այդքան մեծ գումար որտեղի՞ց ճարեմ:
Իսկ եթե գործը հասնի դատարան,
Մեզ մահապատիժ կտան անվարան…
— Դատարան պետք չէ,— եղբայրներն ասին,—
Բերեք այդ հարցը լուծենք միասին.
Այս տարվա ձյունն էլ դուք վաճառեք մեզ:
— Եթե այդպես է, համաձայն եմ ես,—
Գավառապետը «մի կերպ» հոժարեց,
Եվ գործարքն էլի օրենքով արվեց…

6

Ձմեռն այդ տարի տևեց շատ երկար,
Սակայն, ինչպես միշտ, գարունը եկավ,
Եվ հենց ցրտաշունչ ձմեռը անցավ,
Եղբայրներն էլի երկտող ստացան.
«Անհապաղ եկե՛ք, ձեր ձյունը տարե՛ք,
Գարուն է, սարը մենք պիտի վարենք»:
Եղբայրներն էլի ելան–գնացին
Գավառապետին նորից խնդրեցին,

Ընկան ոտները, աղաչանք արին,
Որ կվճարեն նաև այս տարի…
Այսպես շարունակ գարուն ու ձմեռ
Ձյունը գնելով՝ եղբայրները մեր
Մուրացիկ դարձան մի քանի տարում,
Ու մի տարի էլ, երբ եկավ գարուն,
Եվ նրանք երկտող ստացան կրկին,
Տեսան էլ ոչինչ իրենց չի փրկի,
Ձենքերը առած՝ սարեր բարձրացան
Եվ ճարահատյալ ավազակ դարձան…

✧ ✧ ✧

Ասում են՝ նրանք մինչ այսօր էլ դեռ
Շրջում են թափառ՝ ընկած ձոր ու լեռ,
Ու գիշեր–ցերեկ մի միտք են անում՝
Ինչո՞ւ են մարդիկ իրենց անվանում
Գող ու ավազակ, երբ երկրում այնքան
Մեծ ու պատվական ավազակներ կան…

ԽՈՍՔԻ ՁԵՎԸ

Երազ տեսավ ահեղ արքան,
Չարագուշակ մի երազ՝
Խուզել էին արքայական
Իր մորուքը թավամազ:

Առավոտյան իր մոտ կանչեց
Ծեր գուշակին մեկնաբան,
Պատմեց երազն ու պահանջեց,
Որ գուշակը մեկնի այն:

Արքա՛,— տխուր կմկմաց նա,—
Քո երազը շատ է չար,
Քեզանից շուտ կմահանա
Քո քաջ որդին մինուճար:

— Դու մեկնիչ չես, ծե՛ր ավանակ,—
Գոռաց արքան, կատաղեց,—
Կտամ կես ժամ քեզ ժամանակ,
Ճիշտ չասեցիր՝ կսատկես:

Լուռ մտածեց գուշակը ծեր
Ու ձայն խնդրեց՝ սրտում ահ.
— Դու ների՛ր ինձ, ի՛մ գլխի տեր,
Շփոթվեցի ես մի պահ:

Խոսքս իրավ ստացվեց վատ,
Ձեր երազն այն է ասում,
Որ դուք կապրեք ավելի շատ,
Քան ձեր որդին դյուցազուն…

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, չարալեզո՛ւ,—
Ասաց արքան ժպտադեմ,—
Թեև դու նույն բանն ես ասում,
Բայց դա ուրիշ է արդեն…

✧ ✧ ✧

Թե ասածիդ միտքը ինչ է՝
Կարևոր է անկասկած,
Սակայն միտքը դեռ ոչինչ է,
Եթե այն լավ չի ասված:

ԿԱԽԱՐԴՎԱԾ ԱՅԳԻՆ

1

Թե ե՞րբ է եղել, ոչ ոք չի ասում,
Կամ թե ո՞ր երկրում, չգիտի ոչ ոք,
Բայց ժողովուրդը այնպես է խոսում,
Որ նման մի դեպք եղել է իրոք:

Եղել է իբրև մի արքա հնում,
Որը տիրել է մի շատ մեծ երկրի,
Եվ նրա մասին զրույց է մնում,
Որ նա իշխում էր զորությամբ սրի:

Դաժան էր արքան, չար ու ապիկար,
Խորթ էին նրան գորովն ու գութը,
Երկրում իրավունք ու օրենք չկար,
Անդ ծաղկում էին կեղծիքն ու սուտը:

Պատմում են նաև, որ մեծ վիշտ ուներ,
Անփարատելի ցավ ուներ արքան,
Բանն այն է, որ նա մի զավակ չուներ,
Որ հետո նստեր գահին հայրական…

Գնալով վիշտը այնքան խորացավ,
Արքայի հոգին այնպես համակեց,
Որ մի օր էլ նա լուրջ հիվանդացավ,
Անկողին ընկավ ու անհույս պառկեց:

Պալատում ինչքան գիտուններ կային,
Խորհուրդ արեցին, որ գտնեն մի ճար՝
Օրեցօր մաշվող իրենց արքային
Վշտի ճանկերից փրկելու համար:

Եվ միտք հղացան նրանք միասին,
Որ աշխատանքն է ճարն այդ մոգական,
Ու երբ այդ մասին արքային ասին,
Միտքը հավանեց և ինքը՝ արքան…

Ու արքան հիմնեց մի հրաշք այգի,
Որի հոգսերը անձամբ էր հոգում,
Շուտով հաճույքը ազնիվ տքնանքի
Արքայի սրտին բերեց ամոքում:

Նա այգին գիտեր հինգը մատի պես,
Գիտեր՝ որ ծառն ինչ սաղարթ է տալիս,
Ծառ ու թփի հետ կապվել էր այնպես,
Որ էլ ոչ մի բան աչքին չէր գալիս:

Բայց այդ բերկրանքը երկար չտևեց,
Արքայի հոգում բացվեց մի նոր վերք.
Չար բախտը նրան նոր հարված տվեց,
Այգին չէր ծաղկում ու չէր տալիս բերք:

Որ չարագուշակ բան կար դրանում,
Արքան այդ մասին չուներ կասկածանք.
Ու գիշեր–ցերեկ նա միտք էր անում՝
Գտնել մի հնար և այգուն տալ կյանք:

Եվ աշխարհով մեկ, ի լուր ամենքին,
Թագավորական պատգամ հղեց նա՝
Թե՝ ով գա, փրկի կախարդված այգին,
Իր քաշովը մեկ ոսկի կստանա…

Բայց ժամանակը հոսում էր դանդաղ,
Ու ոչ մի տեղից չկար ոչ մի լուր,
Հուսահատվում էր թագավորն, ավա՜ղ,
Դառնում էր թախծոտ, մտազբաղ ու լուռ:

Մի օր էլ, երբ նա՝ սրտում խորը վիշտ,
Շրջում էր այգում լուռ ու տխրադեմ,
Հանկարծ հայտնվեց մի ծերուկ դերվիշ
Ու ողջունելով կանգնեց նրա դեմ:

— Ո՞վ ես,— հարցրեց թագավորը խիստ,
Ինչո՞ւ ես եկել… Ո՞վ է թույլ տվել…
— Կախարդ եմ,— ասաց դերվիշը հանգիստ,—
Ես քո կամքով եմ այստեղ հայտնվել:

Չէ՞ որ դու ծանր վիշտ ունես, արքա՛,
Եվ մտածում ես գտնել վշտիդ ճար.
Դե, ես էլ հենց որ իմացա, եկա,
Ասի՝ գուցե քեզ լինեմ օգտակար…

— Ի՞նչ է, դու մարդկանց մտքե՞ր ես կարդում,—
Հարցրեց արքան՝ ոչ առանց ահի,—
— Միանգամայն ճիշտ կռահեցիր դու,
Թե չէ ես այստեղ ինչպե՞ս կգայի:

— Եթե դու իրոք ամեն ինչ գիտես,—
Հարցրեց արքան խիստ թախանձագին,—
Ինձ ասա՝ ինչո՞ւ զավակ չունեմ ես,
Ինչո՞ւ չի ծաղկում իմ տնկած այգին:

— Արքա՛, կարգերիդ ձեռից ահավոր
Քո ժողովուրդը ընկել է հալից,
Գործած մեղքերիդ պատճառով է, որ
Ցանած հանդերդ պտուղ չեն տալիս…

— Հիմա ի՞նչ անեմ,— խեղճացավ արքան,—
Դերվի՛շ, օգնի՛ր ինձ, եթե կարող ես.
Երդվում եմ՝ քանի ես աշխարհում կամ,
Հոգով ու մարմնով պարտական եմ քեզ:

— Արքա՛, երդումդ ինչի՞ համար է,—
Ասաց դերվիշը անողորմ ձայնով,—
Քո ցանկությունը ես կկատարեմ,
Բայց դա կլինի ծանր պայմանով:

— Ես համաձայն եմ, պայմանդ ասա՛,—
Արքայի ձայնը դողաց հուզմունքից,—
Կյանքս էլ պահանջվի՝ ես չեմ ափսոսա,
Դերվի՛շ, միայն թե զավակ ծնվի ինձ:

— Դե որ այդպես է,— դերվիշը ասաց,—
Ես այս խնձորը քեզ եմ նվիրում,
Քո թագուհու հետ կճաշակեք սա,
Եվ ձեզ կծնվի մի աղջիկ սիրուն:

Բայց ձեր դստրիկը, երբ դառնա հասուն,
Ոչ մեկին պիտի սեր չխոստանա,
Քանզի չարիք է նրան սպասվում՝
Սիրո համբույրից քար կկտրի նա…

Ու երբ խնձորը արքան ստացավ,
Դերվիշը իսկույն դարձավ ծուխ ու չիք…
Դրանից հետո ինն ամիս անցավ,
Թագուհին աշխարհ բերեց մի աղջիկ:

2

Աղջիկը որքան հասակ էր առնում
Եվ փարթամանում, դառնում կուսական,
Այնքան մտահոգ ու լուռ էր դառնում
Երբեմնի անահ ու ահեղ արքան:

Փեսացուների թվի աճի հետ
Վախը աճում էր էլի ու էլի,
Եվ օրըստօրե դառնում էր աղետ
Ճակատագիրը անխուսափելի:

Ելք էր որոնում հուսահատ արքան,
Ուստի, ստիպված, կանչեց խորհրդի
Իմաստուններին իր պալատական
Եվ նրանց պատմեց գաղտնիքն իր սրտի:

Ի թիվս բազում այրերի խելոք՝
Խոսեց վեզիրը՝ իմաստուն մի ծեր.
— Տե՛ր արքա,— ասաց,— մի հնար կա լոկ՝
Ամենքին հայտնե՛ք այդ գաղտնիքը Ձեր:

Դրանից հետո (դե ինչո՞ւ խաբել…)
Ոչ մի պայազատ ու ոչ մի ասպետ
Չի համարձակվի իր բախտը կապել
Ձերդ մեծության դստեր բախտի հետ:

3

Լուրը շատ արագ երկրով մեկ անցավ,
Ով լսեց՝ խղճաց դստերն արքայի,
Փեսացուների հետքը չքացավ,
Ո՞վ հոժարակամ կգնար մահի…

Աղջկա սիրտն էլ լցվեց թախիծով,
Էլ նրա աչքին ոչինչ չէր գալիս,
Որպեսզի մեղմեր նա իր վիշտը ծով,
Այգի էր մտնում ու թաքուն լալիս:

Բայց երբ միայնակ շրջում էր այգում,
Նրան շարունակ թվում էր այնպես,
Թե ինչ–որ մեկը, բոլորից թաքուն,
Հսկում է իրեն հարազատի պես:

Մի օր էլ, երբ նա մենակ էր դարձյալ,
Ոտնաձայն լսեց ու նայեց չորս դին,

Այդ պահին հանկարծ նրան մոտեցավ
Ծեր այգեպանի մինուճար որդին:

Թիկնապահ զորքում թագավորական
Տղան սպայի կոչման էր հասել,
Նրան լավ գիտեր և ինքը արքան՝
Որպես մարտիկի՝ քաջ ու տիրասեր:

Տղան մոտեցավ, կանգնեց նրա մոտ,
Շիկնած նայում էր ու ձայն չէր հանում.
Աղջիկը նայեց, ասաց վարանոտ,
— Խոսի՛ր վերջապես, ի՞նչ ես ցանկանում:

— Արքայադո՛ւստր, ես սիրում եմ քեզ,—
Շշնջաց տղան ու իջավ ծունկի,
Աղջիկը տեսավ, թե տղան ինչպես
Թաքուն սրբում էր շիթը արցունքի:

— Իսկ գիտե՞ս, թե քեզ ինչ է սպասում,—
Ասաց աղջիկը խանդաղատանքով,—
Ով որ ինձ սիրի, այդպես են ասում,
Նա կվճարի սեփական կյանքով…

— Արքայադո՛ւստր, դու ինձ մի՛ գթա,
Ինձ համար փույթ չէ, թե ով ինչ կասի,
Եթե պահանջվի, ես կյանքս կտամ,
Միայն թե քեզնից մի մազ չպակսի:

— Եվ վաղո՞ւց է, որ դու ինձ սիրում ես,—
Ասաց աղջիկը,— ես չեմ իմացել:
— Երեք տարի է՝ ես սիրում եմ քեզ,
Սերս անհույս էր՝ սիրտս չեմ բացել:

— Դե որ այդպես է,— աղջիկը ասաց,—
Դարձի՛ր ինձ եղբայր, ես դառնամ քեզ քույր,

Եվ թող այնպիսի դաշինք լինի սա,
Որը բացառի ամեն մի համբույր…

— Ինչ էլ կամենաս՝ ես համաձայն եմ,—
Մորմոքվեց տղան,— թող լինի այդպես,
Ինչ հրամայես՝ ես սիրով կանեմ,
Քեզ կծառայեմ հարազատի պես:

4

Աղջիկն այդ մասին երբ պատմեց մորը,
Թագուհի մայրը բարին ցանկացավ,
Դեմ չեղավ նաև հայր թագավորը,
Ու տղան նրանց որդեգիր դարձավ:

Դրանից հետո քույր ու եղբոր պես
Հանդիպում էին աղջիկն ու տղան,
Եվ անցնում էին օրերը անտես,
Ներքուստ՝ տագնապող, արտաքուստ՝ խաղաղ:

Ամեն ինչ նախկին հունի մեջ մտավ,
Պալատում նորից եռուզեռ տիրեց,
Բայց դաժան բախտը նյութում էր նոր դավ,
Արքայադուստրը տղային սիրեց:

Տղան վարվում էր եղբոր պես բարի,
Փորձում էր ցույց տալ, թե ոչինչ չկա,
Իրեն պահում էր ասպետավարի,
Բայց չէր դիմանում սիրտը աղջկա…

Մի օր էլ մոր մոտ իր սիրտը բացեց,
Ասաց, որ ինքը սիրում է նրան,
Իր սիրո մասին պատմեց ու լացեց՝
Գլուխը դրած մոր կրծքի վրա:

Մայրն էլ արտասվեց, բայց հորդոր կարդաց.
— Պետք է հասկանաս, թե ինչ ես անում…
Աղջիկը սրբեց խաժ աչքերը թաց,
— Ա՜խ, մայրի՛կ,— ասաց,— էլ չեմ դիմանում…

Այդ մասին հենց որ իմացավ արքան,
Կանչեց տղային ու խնդրեց, որ նա,
Հանուն փրկության սիրած աղջկա,
Թողնի երկիրը և շուտ հեռանա:

Տղան լուռ ու մունջ համաձայնվեց՝
Հոգում անթեղած անփարատ մի ցավ,
Իսկ արքան նրան մեծ գումար տվեց
Եվ բարի ճամփա ու բախտ ցանկացավ…

5

Այգում հանդիպեց տղան աղջկան,
Որ նրան տեսնի մեկնելուց առաջ,
Որպեսզի ցույց տար, թե ոչինչ չկա,
Մի կերպ զսպում էր արցունք ու հառաչ:

Մինչդեռ աղջիկը ամեն ինչ գիտեր,
Ինքն էր հետևել ու լսել թաքուն,
Բայց ցույց էր տալիս, թե միամիտ է,
Ասում–խոսում էր, նույնիսկ կատակում:

Արդեն իջնում էր երեկոն խաղաղ,
Ցերեկն իր հոգնած աչքը փակում էր,
Բաժանման ժամն էր մոտենում, ավա՜ղ,
Սակայն աղջիկը դեռ կատակում էր…

Այգում գնալով մութն էր խտանում,
Ջեփյուռի շնչից վարդենին բուրեց,
Աղջիկը հանկարծ կարոտով անհուն
Փարվեց տղային ու ջերմ համբուրեց:

Տղան չհասցրեց գոռալ. «Մի՛ անի»,
Երբ հանկարծ ճայթոց լսվեց ահագին.
Ո՞վ սարսափ, տղան մնաց կենդանի,
Եվ քար կտրեցին աղջիկն ու այգին…

Հենց որ քարացած տեսավ աղջկան,
Տղան լուր տարավ սևաբախտ մորը,
Շուտով մարդկանց հետ և այգի եկան
Դժբախտ թագուհին ու թագավորը:

Եկան, լաց եղան, հուռութքներ արին,
Բայց չվերացավ կախարդանքը չար,
Ու տղան հեծավ իր երիվարին,
Գնաց՝ գտնելու փրկության մի ճար:

6

Օտար վայրերի օտար ճամփեքով
Գնում էր տղան խիզախ ու անահ,
Գնում էր քաջի աննկուն կամքով,
Հույսը չէր լքում նրան գեթ մի պահ:

Փողը պրծել էր, ձին էր վաճառել,
Ստացած փողով գնել օրվա հաց,
Սակայն դա էլ էր արդեն սպառվել,
Այժմ քայլում էր ծարավ ու քաղցած…

Մի օր էլ ճամփին նա պառկած տեսավ
Մի խեղճ ծերուկի՝ լուռ արտասվելիս,
Մոտեցավ նրան ու գթոտ ասավ.
— Դու ո՞վ ես, պապի՛, ինչո՞ւ ես լալիս:

Ծերուկը փորձեց շշնջալ բառեր,
Սակայն ինչ–որ բան միայն թոթովեց,

Նա այնքան անզոր և ուժասպառ էր,
Որ հազիվ գլխով հեռուն ցույց տվեց:

Տղան ծերուկին իր շալակն առավ
Եվ քայլեց, պետք էր անհապաղ օգնել,
Սակայն ինքն էլ էր սոված ու ծարավ,
Ինքն էլ գնալով սկսեց հոգնել:

Ծերուկը մեկեն ծանրացավ հանկարծ,
Տղային թվաց, թե մեռնում է նա,
Ուստի շալակից զգույշ դրեց ցած,
Որպեսզի խեղճը հանգիստ մահանա:

Իրոք ծերունին դժվար էր շնչում,
Տղան նստել էր գլխահակ ու լուռ,
Թվում էր՝ ծերը իր շունչն է փչում,
Երբ հանկարծ շատ պարզ նա շշնջաց. «Ջո՜ւր»…

Տղան շփոթված շուրջը աչք ածեց,
Ջուրը կփրկեր, բայց որտեղի՞ց տար.
Ջուր չկար, տղան մի պահ մտածեց,
Ապա դուրս քաշեց դաշույնը սուրսայր,

Շտապ իր ձեռքի ափը խոր կտրեց,
Եվ արյուն ցայտող վերքը իր ափի
Ծերունու սմքած շուրթերին դրեց.
— Ջո՛ւր է, ջո՛ւր,— ասաց,— դե խմի՛ր, պապի՛:

Սակայն ծերուկը դեռ չարած մի կում՝
Հրաշք կատարվեց, վերքն առողջացավ,
Ապա մի ճայթյուն լսվեց երկնքում,
Եվ ծերուկն իսկույն ծեր դերվիշ դարձավ:

— Դու ո՞վ ես, ծերո՛ւկ, իսկույն ինձ ասա՛,—
Եվ տղան բռնեց դերվիշի թևից…

— Բարի կախարդ եմ,— դերվիշը ասաց,—
Վաղուց եմ գալիս ես քո ետևից…

Տղան զարմացած՝ աչքերն էր թարթում,
Երբ ծեր դերվիշը ասաց ժպտադեմ.
— Տղա՛ս, ես մարդկանց մտքեր եմ կարդում,
Թե ո՞ւր ես գնում, ես այդ էլ գիտեմ…

— Եթե այդպես է,— տղան տվեց հարց,—
Էլ ինչո՞ւ էիր խաղ սարքում ինձ հետ:
— Քեզ էի փորձում,— դերվիշը ասաց,—
Թե չար լինեիր, չէիր դառնա ետ…

Դե հիմա լսիր՝ ինչ եմ ասում քեզ,—
Դերվիշը հանգիստ խոսքն առաջ տարավ,—
Ես հաստատ գիտեմ, որ դու չգիտես,
Թե քո սիրելին ինչո՞ւ քար դարձավ:

Նա տուժեց, քանզի ողջ երկիրը ձեր
Բույն է չարիքի ու չարիքի տուն,
Ուր տառապում են բյուրավոր սրտեր,
Սակայն փրկության ուղի չեն գտնում:

Հիմա քեզ մի փակ արկղ կտամ ես,
Որի մեջ յոթը ծրար կա դրված,
Ամեն ծրարում, եթե բաց անես,
Մի մեծ չարիքի անուն կա գրված:

Դու ձեր երկիրը կվերադառնաս,
Մարդկանց կախարդված այգի կտանես,
Փակ ծրարները մեկ–մեկ կբանաս,
Այդ չարիքները ակներև կանես:

Ապա դու նրանց կասես բանավոր,
Որ քանի դեռ այդ չարիքները կան,

Ոչ ժողովուրդը կտեսնի լավ օր,
Ոչ էլ ժառանգորդ կունենա արքան:

Որ ժողովուրդը խոսքիդ հավատա,
Դրա համար էլ հոգ եմ տարել ես,
Կախարդված այգին ծաղիկներ կտա,
Երբ չարիքները դու հայտարարես:

Իսկ քո սիրելին կյանք կստանա լոկ,
Երբ համախմբես ուժերը բարի,
Անաչառորեն կգործես խելոք
Եվ կջնջես յոթ արմատը չարի…

Ապա դերվիշը իր թազբեհն առավ,
Ինչ–որ մոգական խոսքերով թովեց,
Թազբեհը իսկույն փակ արկղ դարձավ,
Ու կողքին թամբած նժույգ հայտնվեց:

Տղային տվեց նա արկղն ու ձին,
Ինքը ծուխ դարձավ ու անհայտացավ,
Իսկ տղան առավ նվերը անգին,
Նստեց նժույգին, դեպի տուն դարձավ…

7

Արքան կուչ եկած նստել էր գահին,
Երբ տղան հանգիստ նրա մոտ մտավ,
Բայց նա երբեմնի ահեղ արքային
Խիստ հուսահատ ու խեղճացած գտավ:

Տղան ողջունեց զինվորին վայել
Եվ լուռ սպասեց, որ արքան խոսի.
— Դու ուրախ լո՞ւր ես բերել մեզ, ջահե՛լ,—
Շշնջաց արքան,— լսում եմ, խոսի՛ր:

— Այո՛, բերել եմ ես փրկության ճար,
Եթե ինձ թույլ տա տիրակալը մեծ,
Ես ի չիք կանեմ կախարդանքը չար,—
Ու տղան մեկ–մեկ ամեն ինչ պատմեց…

Լուռ խորհեց արքան՝ մտքի ծովն ընկած,
Հիշեց քարացած հայացքն աղջկա,
— Ես համաձայն եմ,— ասաց ու փղձկաց,—
Արա՝ ինչ կուզես, ուրիշ ճար չկա…

8

Կանգնել է տղան կախարդված այգում
Սիրած աղջկա քար արձանի մոտ,
Նա լոկ մի բան է հիմա փափագում,
Բացել ու կարդալ ծրարները յոթ:

Այնտեղ հավաքվել հորձանք է տալիս
Մի հոծ բազմություն՝ համառ, անզիջում,
Մարդկանց նորանոր խմբեր են գալիս,
Հարցեր են տալիս, խոսում են, վիճում:

Մեկեն վերջ տրվեց զրույց ու վեճին,
Իսկույն դադարեց աղմուկն ահավոր,
Երբ տղան բացեց ծրարն առաջին
Ու բարձր կարդաց. «Ծույլ աշխատավոր»:

Այս երկու բառը հենց որ հնչեցին,
Ամբոխը իսկույն զարմանքից ճչաց.
Քանզի ջրերը մեղմ կարկաչեցին,
Եվ շատրվանը անուշ քչքչաց:

Երկրորդ ծրարը տղան բաց արեց,
Կարծես ամբոխը քարացավ մի պահ,
Շունչն իրեն պահած՝ ականջը լարեց.
Ու տղան կարդաց. «Չվաստակած շահ»:

Այգում ծառերը գունափոխվեցին,
Քարե գորշ գույնը մեղմացավ քիչ–քիչ,
Հավաքվածները դա նկատեցին,
Եվ օդը ճեղքեց զարմանքի նոր ճիչ:

Երրորդ ծրարը բաց արեց տղան,
Դարձյալ աղմուկի երախը գոցվեց,
Երբ տղան կարդաց. «Ամբոխ ինքնիշխան»,
Ամբոխը ոռնաց ու ալեկոծվեց:

Բայց տղան չորրորդ ծրարը բացեց
Ու հանգիստ կարդաց. «Դատավոր խտրող»,
Հավաքվածները տեսան, թե ինչպես
Ջեփյուռը բերեց սաղարթներին դող:

Տղան բաց արեց ծրարն հինգերորդ
Եվ բարձր կարդաց. «Տնտես խաբեբա»,
Բողբոջներ տվին ծառ, ծաղիկ ու որթ,
Ամբոխը դարձյալ աղմկեց մի պահ:

Բայց անմիջապես նորից սկվեց,
Երբ տղան կարդաց. «Օրենսդիր անմիտ»,
Այգին դալարեց ու շիվեր տվեց,
Եվ սոսափեցին սաղարթները խիտ:

Վերջին ծրարը արքային ձաղկեց,
Այնտեղ գրված էր. «Արքա ապիկար»,
Երբ տղան կարդաց, և այգին ծաղկեց,
Ծափահարում էր ամբոխը երկար:

Արքան մոտեցավ գլխահակ ու լուռ,
Տղային տվեց իր սուրն ու թագը.
— Հանուն իմ դստեր՝ դրանց վերջը տուր,—
Ասաց,— սա է իմ կամքն ու կտակը…

9

Համախմբելով ուժերը արդար՝
Տղան ջանք դրեց յոթը ձիգ տարի,
Գիշեր ու ցերեկ անքուն, անդադար
Քաղհանեց յոթը արմատը չարի:

Եվ մի իրիկուն, երբ տղան հոգնած
Այգի ներս մտավ ամեն օրվա պես,
Տեսավ աղջկան անվրդով քնած,
Ոչ մի կախարդանք չէր եղել ասես:

Տղան կարոտով լուռ իջավ ծունկի,
Համբուրեց փակված աչքերը նրա,
Եվ կաթիլները սիրո արցունքի
Ընկան աղջկա լույս դեմքի վրա:

Աղջիկը բացեց աչքերը վճիտ,
Մի պահ սկսեց շուրջը զննել,
Ապա հարց տվեց նա կասկածամիտ.
— Ի՞նչ է, երևի երկա՞ր եմ քնել…

— Այո՛, սիրելի՛ս, չափազանց երկար…—
Ու տղան պատմեց նրան ամեն բան,
Պատմեց, թե ինչպես նա դարձել էր քար,
Եվ ինչ դժվար էր փրկության ճամփան…

Թև–թևի տված նրանք տուն եկան,
Ցնծություն տիրեց պալատում նորից,
Տղան առաջարկ արեց աղջկան,
Եվ նրա ձեռքը խնդրեց ծեր հորից:

Ապա յոթը օր հարսանիք արին,
Երկրով մեկ տոն էր ու խնդության ծես…
Եկեք նաև մեզ ցանկանանք բարին
Եվ մեր հեքիաթը ավարտենք այսպես:

ԱՍՔ ԱՐԱՅԻ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

1

Շամիրամը, սաստիկ հուզված,
Գրեց վերջին նամակը իր,
Սուրհանդակի հետ սրընթաց
Նորից հղեց Հայոց երկիր.

«Ողջո՛ւյն, Արա՛, իմ սիրելի,
Ես չեմ կտրել դեռ հույսերս,
Քեզ նամակ եմ գրում էլի,
Անպատասխան մի՛ թող սերս:

Քո վարմունքը իմ նկատմամբ
Արդեն վեր էր նույնիսկ մահից,
Չէ՞ որ այս էլ քանի անգամ
Անգթորեն մերժում ես ինձ:

Շատերն արդեն ինձ չեն հարգում,
Վախենում եմ՝ նյութեն դավեր.
Գիշեր–ցերեկ աչք չեմ փակում,
Այս վիճակից եկ ինձ դո՛ւրս բեր:

Գեթ առերես, թե ինձ սիրես,
Թեկուզ հոգով չլինի դա,
Իմ զահին էլ դու կտիրես,
Երդվում եմ քեզ՝ ինձ հավատա:

Ծունկի կգան շատ արքաներ
Քո ուժի դեմ անպարտելի,
Դու կդառնաս աշխարհին տեր,
Եվ արժան ես, ի՛մ սիրելի:

Ավարտելով այս նամակը՝
Հղում եմ քեզ որպես պատգամ,
Մի՛ անարգիր դու իմ կյանքը,
Աղաչում եմ վերջին անգամ:

Իսկ եթե դու մերժես էլի,
Քեզ «հյուր» կգա իմ բանակը,
Խոհե՛մ եղիր, ի՛մ սիրելի,
Ուժեղինն է հաղթանակը…»:

2

Շամիրամը՝ սրտում վառ սեր
Ու մերժվածի ահեղ ցասում,
Փայփայելով տարտամ հույսեր՝
Պատասխանի էր սպասում…

3

Սուրհանդակը արագավազ
Նինվե հասավ ինչպես քամի,
Ծունկի իջավ գահի առաջ
Գեղեցկաթով Շամիրամի:

Գլուխ տվեց հեզ ու բարի,
Վառ ծիրանու փեշն համբուրեց,
— Արև՛,— ասաց,— մեր աշխարհի,
Ո՞վ թագուհի՝ արևից մեծ,

Ձեր նամակը՝ լեցուն սիրով,
Որպես անմար սիրո մասունք,
Ես հանձնեցի քաջակորով
Հայ արքային Արևազուն

Ճիշտ այն պահին, երբ նա նստած
Իր վեհապանծ գահին հզոր՝

Պատգամներ էր հղում վստահ,
Աստծո նման ամենազոր:

Կանգնած էին մերձ ի գահին
Վեհ այրերը հայ աշխարհի,
Խրոխտ քաջեր այնտեղ կային
Եվ գիտուններ՝ ծեր ու բարի:

Իսկ երբ արքան հենց նրանց մոտ
Կարդաց լուսե նամակը Ձեր,
Միանգամից որոտընդոստ
Ծիծաղեցին ջահել ու ծեր:

Ես իմ օրում լսած չկամ
Ծիծաղ այդքան ինքնավստահ,
Բայց այն լռեց, երբ որ արքան
Շուրջը հայացք նետեց մի պահ:

Ապա վրաս սևեռեց նա
Իր գեղեցիկ աչքերն անհուն,
«Ո՛վ սուրհանդակ,— ասաց,— գնա՛
Ու ողջո՛ւյն տար ձեր թագուհուն:

Ասա՛ նրան, որ շատ մեծ է
Իր հմայքը, Աստվա՛ծ վկա,
Որ իր սերը խիստ անկեղծ է,
Հավատում եմ, կասկած չկա:

Բայց ասա՝ թող ինձ չհիշի,
Ես թագուհի ունեմ ու սեր
Եվ չեմ կարող մեկ ուրիշի
Իմ Նուարդից գերադասել:

Վատ մարդ է նա, ստոր հոգով,
Ով որ նման բաներ կանի,

Շամիրամն էլ, իմ կարծիքով,
Չէր սիրելու դավաճանի…

Թող արևի կամքով անմար
Խոհեմ դատի թագուհին ձեր
Եվ իր համար ուրիշ հարմար
Մի այր ընտրի՝ կյանքի ընկեր…

Ինչ ուժին է վերաբերում՝
Դուք հզոր եք, ես լավ գիտեմ,
Որ հզորն է թույլին գերում,
Այդ ակնարկը միամիտ է:

Գնա՛, ասա՛ ձեր տիրուհուն,
Որ մեր մասին չէ դա ասված,
Մենք այրեր ենք Արևազուն,
Ունենք անպարտ Արև–աստված…»:

Էլ ի՞նչ պատմեմ, արևանո՛ւն,
Նա հպարտ է, բայց սաստիկ հեզ,
Որքան որ ես եմ հասկանում,
Նա չափազանց հարգում է Ձեզ…

Սուրհանդակը երբ ավարտեց,
Շամիրամը տվեց նշան,
Որ այս մասին իր խոսքն ասի
Քրմապետը աստղագուշակ:

Ծեր գուշակը անմիջապես
Առաջացավ մի երկու քայլ,
Ապա խոնարհ խոսեց այսպես.
— Ո՛վ դիցուհի արևափայլ.

Ե՞րբ է եղել, որ երկինքը
Չհոգա իր դստեր մասին,

Ձեզ սիրում է Արևն ինքը,
Հմայված են աստղ ու լուսին:

Աստղերն այսօր այն են ասում
Բախտի համար ձեր վեհաշուք,
Որ մեծ փառք է Ձեզ սպասում,
Եթե խոհեմ մտածեք Դուք:

Եվ աստղերը Ձեր մեծ գահին
Կսատարեն հար ու հավետ,
Թե Ձեր սերը աստվածային
Կապեք մի այլ արքայի հետ:

Ձեզ վայել չէ, թե լսեք ինձ,
Սիրել անմիտ, գոռոզ մեկին,
Որը հզոր գահ ու փառքից
Վեր է դասում չնչին մի կին…

— Բավակա՜ն է,— ցասկոտ ասավ
Շամիրամը գուշակին ծեր,—
Համբերանքիս վերջը հասավ,
Էլ ինձ պետք չէ խորհուրդը ձեր:

Նա իմ սերը մերժեց համառ,
Իմ զայրույթին սահման չկա,
Թեև, ավա՜ղ, նա ինձ համար
Մնում է քաջ այր ու արքա:

Բայց քանի որ նա ինձ մերժել
Ու տանջել է միշտ իմ հոգին,
Էլ չեմ կարող ես հանդուրժել,
Որ նա սիրի ուրիշ մեկին:

Կարգի բերեք իմ զորքերը,
Ես գնում եմ Հայոց երկիր,

Որ նրա այդ գոռոզ տերը
Չպարծենա մերժումով իր…

4

Անհավասար մարտում դաժան
Ընկավ արքան հայ աշխարհի,
Մնաց փառքից հար անբաժան,
Թողեց անուն՝ վեհ ու բարի…

5

Յոթը գիշեր ու յոթը տիվ
Շամիրամը աչք չէր փակում,
Իր սիրեցյալ Արայի դին
Նա դրել էր աշտարակում.

Աղոթում էր երկինքն ի վեր,
Հարալեզներ կանչում վերից,
Որ գան լիզեն արյուն ու վերք,
Եվ Արային կյանք տան նորից:

Բայց երբ մռայլ յոթ օրն անցավ,
Բացվեց ութի արշալույսը,
Ու մահվան չար քունը չանցավ,
Շամիրամը կտրեց հույսը:

Զգաց, որ էլ չկա Արան,
Լուռ համբուրեց աչքերը փակ՝
Հեղեղելով դեմքը նրա
Արցունքներով՝ անզուսպ ու տաք:

Արտասուքը անկեղծ լացի
Միշտ անդորր է բերում հոգուն.
Շամիրամը իր սիրածին
Խոր վիհի մեջ թաղեց թաքուն:

Եվ հաղորդեց ամենուրեք,
Լուրը թռավ բերնեբերան
Ու տարածվեց աշխարհով մեկ,
Թե՝ չի ընկել մարտում Արան:

Որ իբր թե հոժար կամքով
Շամիրամին կին է առնում
Եվ Ասուրի մեծ բանակով
Հայաստան է վերադառնում…

Ու երբ զորքը ասուրների
Հայ աշխարհի հողն էր դոփում,
Մեղկ թագուհին՝ սիրո գերի,
Իրեն այսպես էր սփոփում.

«Չնայած ինձ չհաջողվեց
Նրա հպարտ սրտին տիրել,
Բայց հպարտ եմ, որ ես մի մեծ
Ու կատարյալ մարդ եմ սիրել»:

6

Սիրեցյալի պատվի համար
Շամիրամը Հայաստանում
Շինել տվեց բերդ ու պարիսպ
Եվ մեծ ջրանցք մի լայնահուն:

Նրա հունը այսօր էլ կա,
Թեև լքված, անջուր ու սին,
Բայց խոսում է՝ որպես վկա,
Մեր վեհ նախնյաց վարքի մասին…

ՊԱՀՎԱԾ ՆԵՏԸ

Արքան անտառի նեղ արահետով
Անհաջող որսից ետ էր դառնում տուն,
Չէր կարողացել սեփական նետով
Այդ օրը որսալ թեկուզ մի թռչուն:

Նա ձին վարում էր լուռ ու տխրադեմ,
Ոչ մեկի հետ խոսք չէր փոխանակում,
Եվ շքախումբը չէր խոսում, գիտեր,
Թե ինչ ցասում կա արքայի հոգում:

Այդ պահին հանկարծ իր տղայի հետ
Հմուտ նետաձիգ Վիլհելմ Տելը քաջ,
Ձախ ձեռքին աղեղ, իսկ աջին՝ մի նետ,
Պատահմամբ ելավ արքայի առաջ:

Արքան ցասումով դիմեց որսորդին.
— Իմ անտառներո՞ւմ… իսկ դուք ովքե՞ր եք:
— Ես Վիլհելմ Տելն եմ, իսկ սա՝ իմ որդին,
Հուսով եմ, արքա՛, որ մեզ կներեք:

— Օ՜,— ասաց արքան,— շատ եմ լսել ես,
Որ հույժ անվրեպ նետաձիգ ես դու,
Ի դեպ, եթե դու ինձ էլ համոզես,
Չեմ պատժի ո՛չ քեզ, ո՛չ էլ քո որդուն:

— Ձե՛րդ մեծություն, հրամա՛ն տվեք՝
Մատանի կախեն այն կաղնու ճյուղից,
Եվ դուք կտեսնեք, որ նետս անթեք,
Շեշտակի կանցնի մատանու օղից:

— Ո՛չ, դա պայման չէ, ոչ մի մատանի,—
Հնչեց արքայի ձայնը խիստ ու չոր,—
Այնտեղ կկանգնի քո այդ պատանին,
Մենք նրա գլխին կդնենք խնձոր:

Եվ եթե դու քո սուր նետով անշեղ
Հարյուր քայլ հեռվից խնձորը խոցես,
Ես խոստանում եմ իսկույն, տեղնուտեղ,
Պատժի փոխարեն մեծ պարգև տալ քեզ:

— Տե՛ր իմ, խնդրում եմ ա՛յլ պայման դրեք,
Պատահել է, որ դիպուկ չեմ խփել,
Ձեր միակ որդու արևը սիրեք,
Չէ՞ որ կարող եմ հանկարծ վրիպել…

Տելի խնդրանքը իզուր էր սակայն,
Ու վախ երևաց աչքերում Տելի,
Քանզի քմահաճ ու դաժան արքան
Մնաց անողորմ ու անդրդվելի.

— Ուրիշ մի պայման չեմ ընդունում ես,
Պայմանը այն է, ինչ ես եմ ասում,
Եվ լա՛վ իմացիր, թե հրաժարվես,
Քեզ ու քո որդուն մահ է սպասում:

— Հայրի՛կ, մի՛ խնդրիր,— պատանին կանչեց,—
Ես չեմ ուզում քեզ տեսնել գլխահակ,—
Ապա համարձակ խնձոր պահանջեց
Եվ գլխին դրած՝ կանգնեց ծառի տակ:

Տելը արքային նայեց ակնդետ,
Նախ՝ ձեռի նետը գոտու մեջ խրեց,
Ապա՝ կապարճից հանեց մի նոր նետ
Եվ զգուշորեն աղեղին դրեց…

Նետը շառաչով առաջ սլացավ,
Շանթեց խնձորը և գամեց ծառին,
Օդի մեջ կախված տագնապը անցավ,
Ու մի խոր թախիծ իջավ անտառին…

— Կեցցե՛ս,— ծափ տվեց արքան հիացած,—
Դու քաջին վայել նետ արձակեցիր.
Բայց մի արարքդ ես չհասկացա՝
Առաջին նետը ինչո՞ւ պահեցիր:

— Այդ նետը պատրաստ պահեցի, արքա՛,
Որ եթե հանկարծ վրիպեի ես,
Ու որդիս ընկներ նետից հայրական,
Պիտի արժանին հատուցեի Ձեզ…

Իմացե՛ք, արքա՛, և հիշե՛ք ընդմիշտ,
Չար խաղ մի՛ արեք մարդկանց բախտի հետ,
Քանզի ով մարդկանց պատճառում է վիշտ,
Նրա համար միշտ պահված կա մի նետ…

ԲՈՆԱԿԱԼԻ ԳԻՆԸ

Հայոց հին Ջուղան ժրաջան գործով
Կուտակել էր կայք ու գանձեր անբավ
Եվ իր գարծարար ու ժիր մարդկանցով
Շատ երկրներում ուներ մեծ համբավ…

Շահ–Աբաս արքան՝ տերը Իրանի,
Հղանում է մի վայրագ ծրագիր.
Այն է՝ շեն Ջուղան տեղահան անի
Ու նրա մարդկանց տանի իր երկիր,

Որ նրանք իրենց գործերով ճարտար
Եվ ամենակար ձեռքերով հմուտ
Թմրած Իրանին շունչ ու կորով տան
Ու լուսավորեն նրա միտքը մութ:

Մի ըմբոստ տղա՝ հայ վաճառական,
Ուզում է շահին ծածուկ սպանել,
Սակայն մատնում են… Ու դաժան արքան
Վճռում է նրան կախաղան հանել…

— Մի՛ հանիր, ո՞վ շահ, նրան կախաղան,—
Աղաչում էին ծերերն իմաստուն,—
Քո երկրի համար պետք կգա տղան.
Մեծ խելքի տեր է, հապա փորձի՛ր դու.

Նա մի նայվածքով կարող է ասել
Գինը ցանկացած պատվական քարի…
Հաստատ չար մեկն է նրան համոզել,
Նա սխալվել է… Դո՛ւ եղիր բարի…

— Դե՛ լավ,— նենգամիտ փնչում է շահը,—
Որ իր արհեստում նա այդքան վարժ է,
Կներեմ նրան, վկա ալլահը,
Եթե որոշի, թե ես ինչ արժեմ…

Մարդկանց սրտերում սարսափ է ձգում
Չար ու քմահաճ պահանջը շահի:
Քաջասիրտ տղան ինքն էլ է զգում,
Որ դա պահանջ է՝ հավասար մահի:

Բայց նա առաջ է գալիս անվարան
Ու մի պահ շահին չափում վերից վար,
Ապա համարձակ ասում է նրան.
— Ես Ձեզ գին կտամ չորս հարյուր դինար…

— Մի՞թե,— ու շահը խնդում է քահ–քահ,—
Այդքան արժե լոկ մատիս մատանին.
— Ես էլ հենց այդ եմ ակնարկում, ո՜վ շահ,
Պատասխանում է ըմբոստ պատանին…

ՃԱՆԱՉՈՒՄ

Փարիզն հագել էր տոնական հանդերձ,
Արտասովոր էր այդ օրվա տոնը,
Վերադառնում էր արշավանքից մեծ
Իր դարի սարսափ Նապոլեոնը:

Զորավարական զգեստը հագին,
Դեմքին խստություն՝ սառն ու անզիջող,
Հենված իր կառքի շքեղ թիկնակին՝
Անցնում էր նա ծով բազմության միջով:

Փառք էր մատուցում ամբոխը նրան
Մի ճոխ հանդեսով ոչ սովորական,
Բայց գոռ հաղթողի գոռ դեմքի վրա
Չէր ցնցվում նույնիսկ մի չնչին մկան:

Խիստ այլայլվել էր շքախումբը ձիգ
Նրա անտարբեր վերաբերմունքից,
Երբ մի գեներալ ձին քշեց մոտիկ
Եվ զգուշորեն շշնջաց կողքից.

— Զարմանալի է Ձեր վարմունքը, տե՛ր,
Ժողովուրդը Ձեզ պատիվ է տալիս,
Իսկ դուք նայում եք լուռ ու անտարբեր,
Դիմավորումը Ձեզ դուր չի՞ գալիս:

— Այո՛, չեն հուզում ինձ նման բաներ,—
Նա քմծիծաղով տվեց պատասխան,—
Այս խառնամբոխը նույն բանը կաներ,
Թե ինձ տանեին դեպի կախաղան…

ԱՐԺԱՆԱՎՈՐԸ

1

Դարեր առաջ մի հին երկրում
Իր գործերով փառավոր
Իշխում էր մի շատ մարդասեր
Ու իմաստուն թագավոր:
Սակայն մարդս անցավոր է,
Թեկուզ ով էլ լինի նա,
Երբ օրն հասավ, այս աշխարհից
Պիտի թողնի հեռանա…
Երկու որդի ուներ արքան,
Երկուսն էլ կիրթ ու ջահել,
Բայց հայր արքան ցանկանում էր
Գահը նրան վստահել՝
Ով առավել իմաստուն էր,
Կամքով արի, մտքով սուր,
Որը գահին տիրանալով՝
Այն կպահեր միշտ ամուր:
Եվ նա մի օր կանչեց իր մոտ
Որդիներին սիրասուն.
— Ի՛մ արծիվներ,— ասաց նրանց,—
Դուք արդեն այր եք հասուն:
Ու լավ գիտեք, որ աշխարհում
Ոչ մի մարդ չի ապրել հար,
Ծերացել եմ, ես էլ շուտով
Գնալու եմ էն աշխարհ:
Ուստի, քանի դեռ ես ողջ եմ,
Կեր չեմ դարձել դեռ մահին,
Պիտի պարզեմ, թե ձեզանից
Ո՞վ է արժան իմ գահին…
— Խոսքդ օրենք է, թագավո՛ր հայր,

Հրամայի՛ր հենց հիմա,
Եվ կտեսնես, որ քո խոսքով
Մենք կգնանք դեպի մահ…
— Զավակնե՛րս,— ասաց արքան,—
Լա՛վ ուշ դրեք իմ խոսքին.
Ամեն մեկիդ կնվիրեմ
Յոթ ուղտաբեռ զուտ ոսկի:
Եվ կկարգեմ ամեն մեկիդ
Մի նահանգի տեր ու պետ,
Կտամ անչափ իրավունքներ
Եվ չորս տարի ձեզ ժամկետ:
Դուք պետք է, որ ձեր նահանգում
Մի այնպիսի գործ անեք,
Որ այդ գործով մեր հայրենի
Սահմանները պաշտպանեք:
Երբ լրանա չորսը տարին,
Անձամբ կգամ ձեզ այցի
Եվ կստուգեմ ամեն մեկիդ
Արած գործը առանձին.
Որիդ գործը երկրի համար
Լինի ավել շահաբեր,
Նա էլ գահին կտիրանա,
Կժառանգի թագը մեր:

2

Ավագ որդուն բաժին ընկավ
Հարավային մի նահանգ,
Որը բացի շեն լինելուց,
Ուներ նաև ոսկու հանք:
Շատ գոհ մնաց նա իր բախտից,
Երկնավորին տվեց փառք,
Հաջորդ օրը, անմիջապես,
Ոսկին առավ, նստեց կառք…
Երբ տեղ հասավ, էլ չսպասեց,
Իսկույն անցավ նա գործի,

Հարկադրեց ժողովրդին
Տալ գրաստներ, եզ ու ձի:
Ստիպեց տալ բյուր բանվորներ
Եվ վարպետներ որմնադիր,
Որոնք պիտի աշխատեին
Գիշեր ու զօր անխտիր,
Ամուր բերդեր կառուցեին
Եվ պարիսպներ անմատույց.
Աշխատանքը հիմնականում
Պիտի լիներ անհատույց:
Ու որպեսզի կառուցումը
Կատարվեր շուտ ու արագ,
Ժողովրդի վրա դրվեց
Ահագին հարկ ու պարհակ…
Ժողովրդին ծանր նստեց
Կառուցումի չորս տարին,
Ավագ որդու բռնած գործը
Աղետ բերեց աշխարհին.
Աղքատացան, ամայացան
Շատ քաղաքներ ու գյուղեր,
Եվ լքվեցին ու ամլացան
Սարեր, անտառ ու հողեր:
Աղքատությունն համատարած
Իր հետ բերեց սով ու ցավ,
Երբեմնի շեն երկրամասը
Թշվառության գիրկն անցավ:
Բայց արքայի ավագ որդուն
Դա այնքան էլ չէր հուզում,
Նա հպատակ ժողովրդից
Նոր հարկ ու տուրք էր ուզում:
Ժողովուրդն էլ անիծում էր
Առանց ահ ու երկյուղի
Ու որոնում այդ վիճակից
Դուրս գալու ելք և ուղի…

3

Կրտսեր որդուն արքան տվեց
Մի ցուրտ նահանգ հյուսիսում,
Որտեղ հողը անջրդի էր,
Ժողովուրդը՝ անուսում:
Մարդիկ այնտեղ բանում էին
Գիշեր–ցերեկ քրտնաթոր,
Սակայն միշտ էլ մնում էին
Սոված, ծարավ ու տկլոր:
Կյանքը կարծես մարդկանց համար
Դարձել էր մի ծանր բեռ,
Նրանք կրտսեր արքայորդուն
Ընդունեցին անտարբեր…
Սակայն տղան այդ ամենը
Չտեսնելու տեղ դրեց,
Իր մոտ կանչեց իշխաններին,
Վիշտ ու ցավից հարցրեց,
Անկեղծ ցավեց, երբ իմացավ,
Որ նահանգը չունի հաց,
Մտերմացավ իշխաններին,
Ապա խոսեց սրտաբաց.
— Ո՜վ իշխաններ,— ասաց նրանց,—
Բարեկամնե՛ր իմ անգին,
Թե ինձ օգնեք, մենք կյանք կտանք
Մեր այս աղքատ նահանգին:
Ես բերել եմ ինձ հետ ոսկի՝
Ուղիղ յոթը ուղտաբեռ,
Մենք այդ ոսկով մեր նահանգում
Կկառուցենք ջրանցքներ:
Եվ ջուր կտանք մեր անջրդի,
Բայց բարեբեր հողերին,
Աշխարհով մեկ հիմք կդնենք
Նոր բերքառատ գյուղերի:
Քաղաքներին նոր շունչ կտանք,

Ճանապարհներ կշինենք,
Մեր նահանգում ամենուրեք
Կրթարաններ կհիմնենք:
Ու եթե մենք լավ աշխատենք,
Անկեղծ գործենք իրար հետ,
Հարստությունը կհորդի
Ինչպես գարնան վարար գետ…
Եռուզեռում չորսը տարին
Անցավ որպես ակնթարթ.
Աշխատանքը պտուղ տվեց,
Հարստացավ ամեն մարդ:
Վիշտ ու կարիքը չքացավ,
Արդարությունը հաղթեց,
Երախտապարտ ժողովուրդը
Արքայորդուն կյանք մաղթեց:
Երդում տվեց, որ նրան միշտ
Հավատարիմ կմնա,
Պատգամները կկատարի,
Հետը մահվան կգնա…

4

Չորսը տարին ավարտվել էր,
Հինգի գարունն էր գալիս,
Ցիլը հողից ծիկրակում էր,
Ծառը բողբոջ էր տալիս,
Երբ արքայի ավագ որդին
Լուր ստացավ ծեր հորից.
Թե՝ «Շտապի՛ր, իմ քա՛ջ բազե,
Հին ոսոխները նորից
Խուժել են մեր արևելյան
Սահմանները բարեբեր
Եվ մահաշունչ խորշակի պես
Ավերում են հողը մեր:
Իմ զորքերը չեն դիմանում,
Օգնության են ծարավի,

Կկործանվեմ, թե չհասնես
Ուժերով քո հարավի…»:
Ավագ որդին իսկույն ընկավ
Դրության մեջ մի անել,
Անհնար էր բերդ ու պարիսպ
Հանել, ուրիշ տեղ տանել:
Ուստի դիմեց ժողովրդին,
Զորք հավաքել ցանկացավ,
Նահանգով մեկ կայծակի պես
Լուրը ծայրից ծայր անցավ:
Տանջահարված ժողովրդի
Հոգում նստած էր ցասում,
Միանգամից ըմբոստացավ,
Առիթի էր սպասում:
Նա ոչ միայն չցանկացավ
Արքայորդուն պաշտպանել,
Այլ փորձ արեց նրան բռնել
Եվ տեղն ու տեղն սպանել:
Արքայորդու բախտը բերեց՝
Շուտ կռահեց, հագավ քուրձ
Ու ծպտված ճողոպրեց,
Հոր մոտ հասավ մազապուրծ:
— Ո՞ւր են, որդի՛ս, քո ուժերը,—
Ասաց հայրը ցավագին,—
Յոթ ուղտաբեռ ոսկի տարար,
Սակայն քուրձ է քո հագին:
— Հայրի՛կ,— ասաց որդին մռայլ,—
Չեմ շռայլել ոսկին զուր,
Ես նրանով կառուցել եմ
Բերդ ու պարիսպ ամրակուռ:
— Գրոշ չարժեն քո բերդերը,
Թե այս պահին պետք չեն քեզ,—
Ասաց հայրը և խոժոռվեց
Կայծակնալից ամպի պես:

5

Կռիվ չկար, արքան ինքն էր
Դիտմամբ սարքել նման գուժ,
Գիտակցաբար կրտսեր որդուն
Նա կանչել էր մեկ օր ուշ:
Եվ ողջ գիշեր աչք չփակեց…
Բայց երբ օրը լրացավ,
Կրտսեր որդու զորքը եկավ
Պալատի դեմ ծովացավ.
Զորքը ուներ յոթը հազար
Սպառազեն այրուձի,
Յոթը հազար կտրիճ հեծյալ՝
Քանց կորյուններ առյուծի:
Տասը հազար քաջ հետևակ
Միայն կրում էր մկունդ,
Տապարակիր զինվորները
Կազմում էին հարյուր գունդ:
Զորքի մեջ կար չորսը հազար
Քաջակորով նետաձիգ,
Գումակն ուներ հինգ հազար սայլ,
Տասը հազար ուղտ ու ձի…
Երբ ծեր արքան կրտսեր որդու
Բերած զորքին ելավ տես,
Զորքը նրան որոտընդոստ
Ողջունեց մեկ մարդու պես:
Ամենուրեք հնչում էր գոռ
Զենքի շռինդ ու շառաչ,
Կրտսեր որդին իջավ ձիուց
Եվ խոնարհվեց հոր առաջ.
— Հայրի՛կ,— ասաց,— ես եկել եմ
Իմ զորքերով անվեհեր.
Հրաման տուր՝ գնամ ի մարտ
Եվ պաշտպանեմ հողը մեր:
— Կեցցե՛ս, որդի՛ս,— ասաց հայրը,—

Եկ՝ համբուրեմ, ի՛մ բազե,
Դու, իսկապես, արել ես այն,
Ինչ որ ես եմ երազել:
Դու տիրել ես ամենազոր
Այն մեծ ուժին հաղթական,
Որին եթե տիրանում է,
Անպարտելի է արքան.
Ժողովուրդն է այդ մեծ ուժը՝
Իր զորությամբ անթերի,
Նա է ամուր հենարանը
Ամեն տեսակ գահերի:
Քանզի, որդի՛ս, ամեն մի գահ
Ժողովրդով է հաստատ,
Ոչ թե բերդով ու պարսպով
Կամ թե զենքով ահասաստ:
Եկ՝ օրհնեմ քեզ, դու ես տերը
Այսուհետև իմ գահի,
Համոզված եմ՝ քեզ պես արքան
Գահը հաստատ կպահի…

✧ ✧ ✧

Հենց որ փոքրիկ այս հեքիաթը
Համարեցինք վերջացած,
Լուրթ երկնքից կախարդական
Երեք խնձոր ընկան ցած.
Մենք թողնում ենք՝ այն պատանին
Խնձորները բաժանի,
Ով իր կյանքում գործեր կանի
Հայրենիքին արժանի…

ՊՈԵՏՆ ՈՒ ԱՐՔԱՆ

Ես հուշարձան կան նեցրի ինձ անձեռակերտ,
Չի մամռոտվի դեպ այն տանող ժողովրդի ճամփան,
Անհնազանդ լխով նա ծառացավ ավելի վեր՝
Հուշասյունից Ալեքսանդրյան

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

Ցարը մի անգամ, ինչպես պատահեց,
Կարդաց Պուշկինի «Հուշարձանը» վեպ,
Կարդալուց հետո սաստիկ կատաղեց
Կարմիր շոր տեսած ահեղ ցուլի պես:

— Կանչեցե՛ք,— գոչեց վրդովված ցարը,—
Կանչեցե՛ք թող գա, պատասխան տա ինձ՝
Ինչո՞վ է բարձր իր «Հուշարձանը»
Գրանիտակերտ մեր հուշասյունից:

Երբ ներկայացավ պոետը ցարին,
Ցարը հեգնանքով խոսեց նրա հետ.
— Օ՜, բարով տեսանք, Ձեր գալը բարի,
Գիտեք՝ ինչո՞ւ եմ Ձեզ կանչել, պոե՛տ:

Հպարտ պոետը, որ գիտեր արդեն,
Թե ինչու է նա մոլեգնած այդքան,
Ինքն էլ հեգնանքով ասաց ժպտադեմ.
— Կանչել է, որ ինձ պարգև տա արքան:

Այլայլվեց ցարը, նա չէր սպասում,
Որ պոետն իրեն կառարկի համառ,
Ուստի մոլտաց՝ հոգու մեջ ցասում.
— Ե՞ս պարգև տամ քեզ, բայց ինչի՞ համար:

Ձե՛րդ մեծություն, շատ եմ արժանի,—
Խոսքն առաջ տարավ պոետն անվեհեր,—
Ինձ պարգև կտաք հանուն այն բանի,
Որ ես փրկել եմ հուշասյունը ձեր.

Երբ ժամանակի հողմերն անողոք
Ձեր հուշասյունը կդարձնեն փոշի,
Իմ «Հուշարձանի» մի հատիկ տողով
Մարդկությունը հար նրան կհիշի…

ԱՄԵՆԱՄԵԾ ՑԱՎԸ
(Արևելյան լեգենդ)

Լոխման–Հեքիմը մեծ անուն հանեց,
Համբավը գնաց երկրներ անցավ.
Ամենքն իմացան, որ բժիշկն այդ մեծ
Կարող է բուժել ամեն վերք ու ցավ:

Եվ անթիվ մարդիկ նրա մոտ եկան,
Մարդկային ծովը հորձանք էր տալիս,
Նոր եկողներին արդեն տեղ չկար,
Բայց գալիս էին ու անվերջ գալիս:

Մի հոծ բազմություն ցերեկ ու գիշեր
Հերթի էր կանգնած բակում Լոխմանի…
Լոխմանն ամենքին որպեսզի բուժեր,
Հազար տարին էլ հերիք չէր անի:

Բայց քանի որ նա մարդ չէր հասարակ,
Լավ էր ճանաչում ամբոխի խելքը,
Էլ չմտածեց երկար ու բարակ,
Իսկույն որոշեց դրության ելքը:

Նա երեկոյան կանգնեց մարդկանց դեմ
Եվ հանդիսավոր դիմեց ամենքին.
— Որ ձեր ցավերը իսպառ փարատեմ,
Ես պիտի զոհեմ ձեզանից մեկին.

Վաղը ձեր միջից կգտնեմ նրան,
Ում ցավը մեծ է այստեղ ամենքից,
Օձի թույն ու թուրմ կլցնեմ վրան,
Դեղ կպատրաստեմ այդ դժբախտ մեկից:

Եվ ձեզ կբուժեմ, շատ մի՛ մտածեք,
Այստեղից ոչ ոք չի գնա ցավոտ,
Իսկ այժմ քնե՛ք և հանգստացե՛ք,
Դե՛, բարի գիշեր… Մինչև առավոտ…

Երբ առավոտյան նա դուրս եկավ բակ,
Տեսավ ամբոխը թողել էր, փախել.
Նա մի պահ տխուր ժպտաց քթի տակ,
Ապա սկսեց դառը ծիծաղել:

Դեռ երեկոյան Լոխմանը գիտեր,
Որ մարդ չի մնա, մինչև օրը գա,
Չէ որ ամեն մարդ միշտ կարծում է, թե
Իր ցավից մեծ ցավ աշխարհում չկա…

ԱԹԻԼԼԱՅԻ ՄԱՀԸ

Հոների դաժան Աթիլլա արքան
Իր բանակներով խաժամուժ ու չար,
Տիրելով անծայր ափերը Վրկան,
Դեպի արևմուտք խուժեց վայրաբար:

Նա շատ երկրներ ոտքի տակ առավ,
Բյուր բերդ ու ոստան իր ճամփին ջնջեց,
Ամբողջ աշխարհի սարսափը դառավ,
Անունը որպես մահվան բոթ հնչեց:

Եղավ ժամանակ, որ էլ ոչ մի ուժ
Չէր կարող փակել նրա երթը չար.
Ուժեղը մորթվում, կորչում էր անհուշ,
Թույլը գլխահակ տալիս էր ավար:

Դրանից հետո զավթողի համար
Ողջ կյանքը դարձավ անիմաստ ու սին,
Գիշեր ու ցերեկ խորհում էր համառ
Իր արյունարբու արարքի մասին…

Նա, որ կարծում էր, թե ահեղ սրով
Աշխարհում հազար գաղտնիք կբացի,
Այսօր չէր կարող իր թույլ մտքերով
Պատասխան գտնել մի չնչին հարցի:

Ու նոր էր զգում, որ լոկ սուրը չէ,
Որ ամեն հարցի տալիս է լուծում,
«Հապա գոռ սրից հզորը ի՞նչ է…»,—
Նա մտածում էր ու խորունկ թախծում:

Սակայն մի օր, երբ արձակ դաշտի մեջ
Քնած էր նա իր վրանում մետաքս,
Մի երազ տեսավ անաղարտ ու պերճ,
Մի հոգեզմայլ դյութական երազ.

Իբր մանուկ է նա այդ երազում,
Ուրախ ու անհոգ առաջվա նման,
Ճիպոտը հեծած՝ վարգում է–վազում,
Եվ ընկերները չեն հասնում նրան:

Իբր քշում է նա իր ճիպոտ–ձին
Ու մտնում մի դաշտ՝ կանաչ, սիզավետ,
Այնտեղ տեսնում է նախշուն թիթեռին,
Ուզում է բռնել, խաղալ նրա հետ…

Բայց հանկարծ մեկը դրսում աղմկում
Ու ընդհատում է այդ երազը լավ,
Խոր ափսոսանքի կսկիծը հոգում՝
Զարթնում է խորունկ քնից Աքիլլան:

Զարթնում է, ու էլ քունը չի տանում,
Լուռ մտածում է երկար այն մասին,
Թե արդյոք բախտը ի՞նչ է խոստանում՝
Մի անվայել մա՞հ, թե փառք՝ մահից սին:

«Ինչո՞ւ եմ սփռում ես մահ ու ավեր,
Էլ ինչի՞ է պետք փառքն այս արյունոտ,
Որով ինչքան էլ մարդը ելնի վեր,
Դարձյալ մնում է միշտ լավին կարոտ:

Էլ ինչո՞ւ ապրել, երբ երիվարից
Մանկան ճիպոտ–ձին զորեղ է այդքան,
Երբ հզոր փառքից, գանձ ու ավարից
Ավելին արժե խաղը մանկական…»:

Այսպես մտածեց մինչև լուսաբաց,
Մինչ վրանն ընկավ շողն առավոտի,
Ընդոստ վեր կացավ Աքիլլան հանկարծ,
Հագավ ու կապեց զինավառ գոտին:

Ապա դուրս քաշեց ժանտ սուրը կրկին,
Սակայն այս անգամ… իր կուրծքը խրեց,
Եվ իր ողջ կյանքի արյունոտ գրքին
Սեփական արյամբ վերջակետ դրեց…

ՍԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԸ

Շուրջը սփռելով ավեր ու արյուն,
Ոտնատակ տալով գյուղեր ու ոստան՝
Լենկթեմուրը՝ ժանտ ու անագորույն,
Իր հորդաներով խուժեց Պարսկաստան:

Դալկանում էին ոսոխի շնչից
Շիրազի չքնաղ վարդերը շաղոտ,
Երբ որ գերեցին նրա մեծ երգչին
Ու տարան ահեղ Լենկթեմուրի մոտ…

Իրար դեմուդեմ կանգնած են, ահա,
Հար իրարամերժ սերը և սուրը՝
Շիրազի երգիչ Հաֆեզը անմահ
Եվ աշխարհակալ գոռ Լենկթեմուրը:

— Երգի՛ր,— ասում է Թեմուրը դաժան,—
Այն երգը, որով սրտեր ես գերել,
Երգի՛ր՝ իմանամ, որն է ուժը այն,
Որը քեզ այդքան հռչակ է բերել:

Աղքատ երգիչը լռում է մի պահ
Եվ մտածում է. «Արդյոք ո՞րն ասել…»,
Ապա ժպտալով, հպարտ ու անահ՝
Արտասանում է մի սիրուն գազել.

— Եթե Շիրազի դուստրը նրբիրան
Գրավի սիրտս իր սիրով անմար,
Ես Սամարղանդն ու շքեղ Բուխարան
Կընծայեմ նրա մի խալի համար…

— Ի՞նչ,— զայրանում է բռնակալը չար,—
Արյուն հեղելով՝ ես այսքան տարի
Այդ քաղաքների շինության համար
Ամբողջ աշխարհը ոտնատակ արի:

Իսկ դու ինչպե՞ս ես հանդգնում, ո՛վ մարդ,
Որ առանց վախի հանդես ես գալիս
Եվ, աղքատ տեղովդ, քաղաքները այդ
Սիրուհու միայն մի խալին տալիս:

— Ո՞վ աշխարհակալ, թո՛ւյլ տվեք ասել,
Եվ ինձ մի՛ նայեք դուք այդքան մռայլ,
Ես աղքատության այս օրն եմ հասել,
Քանզի եղել եմ միշտ այսպես շռայլ…

Ասում են՝ իբրև քարասիրտ զավթչին
Խիստ դուր է գալիս այդ պատասխանը,
Որի համար էլ ներում է երգչին
Դաժանաբարո բռնակալ խանը:

— Գնա՛,— ասում է,— կյանք եմ շնորհում,
Ես ներում եմ քեզ անհուն նախանձով,
Քանզի անցավոր այս մեր աշխարհում
Անանց են միայն քո գանձերը ծով:

Առանց շարժելու զենք ու բանակներ՝
Դու մեծ սիրով ես աշխարհին տիրել
Եվ դու կարող ես ոչ թե քաղաքներ,
Այլ ողջ աշխարհը խալի նվիրել…

ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՀԸ

Թագուհին վշտից մազերն էր պոկում՝
Մեռել էր նրա միանուագար որդին,
Անհուն տանջանք կար մայրական հոգում,
Նա խելացնոր նայում էր չորս դին:

— Չեմ ուզում ապրել,— հառաչում էր նա,
Մերթ ծառս էր լինում ու կուրծքը ծեծում,
Ջղաձգվում էր մերթ ուշագնաց,
Մերթ ուշքի գալիս, անհույս հեծեծում:

— Պիտի համբերես, անգի՛ն թագուհի,—
Հորդոր էր կարդում վեզիրն իմաստուն,—
Դեռ ոչ ոք ողբով չի հաղթել մահին,
Իզուր ես այդպես քեզ խոշտանգում դու:

— Ա՜խ, վեզի՛ր, դաժան մի՛ լինիր այդպես,—
Նա հառաչում էր ու խուլ հեծկլտում,—
Թե ինձ սիրում եք, աղաչում եմ ձեզ,
Միասին թաղեք ինձ ու իմ որդուն:

— Բայց, ի՛մ տիրուհի,— վեզիրը ասաց,—
Ինչ հիմա մեզնից պահանջում ես դու,
Օրենքին դեմ է, ճշմարիտն ասած,
Ոչ ոք չի թաղի կենդանի մարդուն:

— Եթե այդպես է,— թագուհին հուզվեց,—
Ես թույն կխմեմ կամ այլ մահադեղ,
Ինձ վրա կառնեմ ես հանցանքն այդ մեծ,
Միայն ինձ թաղեք որդուս հետ մեկտեղ:

— Դա անհնար է առավելապես,—
Ասաց վեզիրը դժգոհ երեսով,—
Քանզի օրենքը արգելում է մեզ,
Որ ինքնասպանին թաղենք նույն ծեսով…

— Ես նզովում եմ,— ճչաց թագուհին,—
Ողջ օրենքները բիրտ ու անհեթեթ,
Ես լոկ մի բան եմ տենչում այս պահին՝
Մեռնել ու թաղվել իմ տղայի հետ…

— Թե որ դու այդպես պնդում ես համառ,—
Ասաց վեզիրը լուրջ ու կիսաձայն,—
Քո նպատակին հասնելու համար,
Թագուհի՛, անչար մի ելք կա միայն.

Արի քեզ փակենք հենց այն սենյակում,
Որտեղ քո որդու դագաղն է դրված,
Դու գիշեր–ցերեկ կողբաս անքուն,
Որքան ի վերուստ քեզ կյանք է տրված:

Չգիտեմ այնտեղ որքա՞ն կմնաս,
Սակայն գիտեմ, որ չես ապրի երկար,
Քաղցից անպայման պիտի մահանաս,
Իհարկե, պարզ է՝ մահով բնական:

Դրանից հետո ամեն ինչ հեշտ է.
Մենք քեզ կթաղենք շուքով ու փառքով,
Հողն էլ քեզ վրա կլինի թեթև,
Քանզի կթաղվես ընդունված կարգով:

Երբ մորը որդու սենյակը տարան,
Վեզիրը մարդկանց լուրջ ապսպրեց.
— Այդ սենյակում կա մի մեծ պահարան,
Դուք նրա գլխին մի բոքոն դրեք:

Սակայն երբ մարդիկ նրան հարց տվին,
Թե այդ ամենը ո՞ւմ է հարկավոր.
— Մխիթարության միջոց է դա հին,—
Ասաց վեզիրը շատ խորհրդավոր…

Թագուհի մայրը ուղիղ երեք օր,
Ճակատը հպած որդու դագաղին,
Լացեց ու ողբաց կսկիծը իր խոր
Եվ ընդարմացավ վշտից դառնաղի:

Չորրորդ օրը նա թեթև քաղց զգաց,
Նրան համակեց ամոթալի ցավ,
Մի օր էլ իրեն զսպեց ու սգաց,
Սակայն գնալով՝ քաղցը սաստկացավ:

Հաջորդ օրն արդեն անկարող էր նա
Բոքոնի հանդեպ մնալ անտարբեր.
Քաղցը տանջում էր նրան անխնա,
Ու դիմանալը դառնում ուժից վեր:

Բայց երբ յոթերորդ օրը լուսացավ,
Թագուհու ներսում մոլեգնեց քաղցը,
Նա տանջող քաղցին էլ չդիմացավ,
Ելավ ցած բերեց մգլոտած հացը:

Նա կերավ քարթու բոքոնը իսպառ,
Եվ երբ հանգցրեց իր ներսի հուրը,
Մի պահ մտածեց դատողությամբ սառ,
Ապա մոտեցավ ու բախեց դուռը:

Դրսից բաց արին իսկույն դուռը փակ,
Թագուհին դեպի դուրս քայլեց կամաց,
Տեսավ վեզիրին, կանգնեց գլխահակ
Եվ ամոթահար, մի կերպ շշնջաց.

— Տարե՛ք որդուս դին, տվե՛ք հողին պահ,
Երևի ճիշտ է աշխարհի կարգը,
Ես որոնեցի, բայց չգտա մահ,
Ինձ դաժանորեն խանգարեց կյանքը…

— Հուսով եմ, որ դու չես պարսավի ինձ,—
Ասաց վեզիրն ու խոնարհվեց թեթև,—
Թագուհի՛, կյանքը հզոր է մահից,
Այլապես այն չէր լինի հարատև…

ԱՍՔ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

1

Ասում են, իբրև ապրել են հնում
Երկու եղբայրներ՝ ազնիվ ու արդար,
Եվ նրանց մասին մի ասք է մնում,
Որ ավանդվել է մարդկանց դարեդար:

Նրանք եղել են գեղջուկ եղբայրներ,
Անխոնջ մշակներ հողի ու ջրի,
Մեծն ունեցել է կին ու զավակներ,
Փոքրը եղել է ջահել ամուրի:

Ավագը փոքրին սիրել է այնպես,
Ինչպես սիրում է հայրը զավակին,
Փոքր եղբայրն էլ հնազանդ ու հեզ
Որդու նման է հարգել ավագին:

Բայց ավագն ուներ մի տղա շատ չար,
Որին կրտսերը մի օր ապտակեց.
Մայրը աղմկեց, դա եղավ պատճառ,
Եվ ընտանիքում գժտություն ծագեց:

Բանն այնտեղ հասավ, որ հավաքվեցին
Ազգ ու հարևան, սաներ ու քավոր,
Եվ եղբայրներին խորհուրդ տվեցին,
Որ բաժանվել է նրանց հարկավոր:

Նրանք էլ, հնոց կարգի համաձայն,
Ինչ որ ունեին՝ լուռ բաժանեցին,
Ամեն եղբայր իր բաժինն ստացավ,
Տնով ու տեղով դարձան առանձին…

2

Աշնան գիշեր էր՝ աստղոտ ու խաղաղ,
Խոնջացած գյուղը մտել էր խոր քուն,
Բայց չէին քնում եղբայրներն, ավաղ,
Տանջող մտքերից աչք չէին փակում:

«Թե չապտակեի եղբորս որդուն,—
Կրտսեր եղբայրը խորհում էր այսպես,—
Եղբորս կինը չէր դրդի մարդուն…
Չէ՛, իսկապես որ մեղավոր եմ ես…

Չէ՛, եղբորս հետ ես վարվեցի վատ,
Բնավ այս բանում մեղք չուներ ինքը,
Նա մնաց մենակ, երեխեքը՝ շատ,
Ո՞նց պիտի պահի իր ընտանիքը:

Երբ կիսում էին դեզերն ու կալը,
Ինձ թվաց՝ նրան քիչ բաժին ընկավ,
Չէ՛, պետք է շտկել գեթ այդ սխալը…»,—
Այսպես մտածեց ու շորերն հագավ,

Թաքուն կալ հասավ նա արագորեն,
Որտեղ իր դեզն էր եղբոր դեզի մոտ,
Իր դեզից առավ քսան խուրձ ցորեն
Եվ եղբոր դեզին հավելեց փութկոտ:

Ապա համոզվեց, որ ճիշտ է վարվել,
Վերադարձավ տուն, որ քնի հանգիստ…
Բայց ավագն էլ էր մտքերով տարվել
Եվ մտքում իրեն նախատում էր խիստ.

«Ես այս ի՞նչ արի,— մտածում էր նա,—
Փոքր եղբորս իրոք զրկեցի,

Ախր, մեն–մենակ ինչպե՞ս կապրի նա,
Նա ոչ ոք չունի ինձանից բացի:

Նրա բաժինն էլ քիչ եղավ կարծես,
Չէ՛, ես անխիղճ եմ, դաժան ու ագահ,
Գեթ այս սխալը պիտի շտկեմ ես…»,—
Այսպես մտածեց ու շորերն հագավ.

Թաքուն կալ հասավ նա արագորեն,
Որտեղ իր դեզն էր եղբոր դեզի մոտ,
Իր դեզից առավ քսան խուրձ ցորեն
Եվ եղբոր դեզին հավելեց փութկոտ:

Ապա համոզվեց, որ ճիշտ է վարվել,
Վերադարձավ տուն, որ հանգստանա,
Սակայն կրտսերի քունն էր խաթարվել.
«Ես քիչ տվեցի»,— մտածում էր նա:

Եվ շորերն հագավ, նորից կալ գնաց,
Տեսավ իր դեզից խուրձ չէր պակասել,
Սկզբում մի պահ զարմացած մնաց,
Հետո մտածեց՝ «Երազ եմ տեսել…»:

Ապա իր դեզից քսան խուրձ կրեց
Ու եղբոր դեզին հավելեց դարձյալ,
Իսկույն հետքերը խնամքով մաքրեց
Եվ անմիջապես տուն վերադարձավ:

Կրտսեր եղբայրը նոր էր տուն մտել,
Երբ որ ավագը տնից դուրս եկավ,
Նա էլ անկողնում հանգիստ չէր գտել,
Ուստի դուրս գալով՝ աճապարեց կալ…

Երկու եղբայրներ այսպես մինչև լույս
Գնացին–եկան ողջ գիշերն անքուն

Եվ ամեն անգամ քսանական խուրձ
Մյուսի դեզին դրեցին թաքուն:

Երբ առավոտյան արևը ծագեց
Ու եղբայրները կալը գնացին,
Տարակուսանքը նրանց համակեց,
Իրենց տեսածին չհավատացին.

Մեկը մյուսի հայացքից անտես
Լուռ նայում էին անխախտ դեզերին,
Որոնց հետ ոչինչ չէր եղել ասես,
Դա հո անսքող հրաշք էր վերին…

Հետո հրաշքն այդ մարդիկ ասք արին,
Որ սնվեն նաև ոգեղեն լույսով,
Որ կյանքում հաղթի արդարն ու բարին,
Եվ աղամորդին չզգա ոգու սով…

ԲԱԽՏՆ ՈՒ ԽԵԼՔԸ

1

Շատ վիճեցին Բախտն ու Խելքը,
Պարզել էին ջանում համառ,
Թե իրենցից ո՞րն է խիստ պետք
Ու կարևոր մարդու համար:

— Մարդը եթե բախտ չունենա,—
Ասաց Բախտը չար խնդալով,—
Ոչ մի բանի չի հասնի նա՝
Խելք ու մտքին հա զոռ տալով:

— Խելքը հիմքն է մարդկանց կյանքի,
Լուրջ առարկեց Խելքը պարկեշտ,—
Թե գանձ էլ տաս դու անխելքին,
Նա կվատնի շռայլ ու հեշտ:

Նրանց վեճը տևեց երկար
Ու երևի տևեր ընդմիշտ,
Բայց ի վերջո գրազ եկան,
Որ ստուգեն, թե ո՞վ է ճիշտ:

2

Ելան մի օր գնացին հանդ,
Որ մի աղքատ գեղջուկ գտնեն,
Ապա հերթով ու աննկատ
Նրա կյանքի մեջը մտնեն:

Իրոք մի մարդ տեսան ձորում՝
Հագին շորեր՝ հին, կարկատած,

Մի հին բահով հող էր փորում,
Որ վաստակի գեթ օրվա հաց:

— Հերթը քոնն է,— ասաց Խելքը,—
Հապա օգնի՛ր այս աղքատին,
Դու նրան տո՛ւր այն վայելքը,
Որ էլ չարքաշ նա չաշխատի:

Բախտը ժպտաց, աչքը ճպեց,
Անտես դեպի մարդը գնաց…
Հանկարծ մարդը բահը խփեց
Եվ տեսածից շշմեց–մնաց:

Բահն հանել էր ոսկի փողեր
Ու շաղ տվել հողի վրա,
Իսկ գեղջուկը գործը թողել,
Հիանում էր փայլով դրանց:

Քանի Խելքը չէր մոտենում,
Խաղ էր անում գեղջուկն անգետ՝
Չիմանալով, թե ի՞նչ անի,
Շուրջն էր նայում նա ակնդետ:

Մեկ էլ տեսավ՝ մոտիկ ճամփով
Հեծվորներ են գնում խաղաղ.
Թագավորն էր շքախմբով
Որսի գնում առավոտ վաղ:

Մարդը տեսավ ու ճանաչեց,
Ուրախացած կանգնեց ոտի,
Ամբողջ ուժով գոռաց, կանչեց,
Ձեռքով արեց, որ գան մոտիկ,

Որ գան տեսնեն իր գտածը
Ու նվիրեն իրեն մի բան:

Արքան ձգեց ձիու սանձը,
Իսկույն բռնեց արտի ճամփան:

3

— Գնանք տեսնենք ի՞նչ է ասում,—
Արքան ձիու սանձը ձգեց…
Բախտը դրան չէր սպասում,
Ծնկին տալով՝ դժգոհ թքեց:

Բախտը ինքն էլ արդեն գիտեր,
Որ եթե տեղ հասնի արքան,
Կդառնա ողջ փողերին տեր,
Մարդուն չի տա գրոշ անգամ:

Ուստի նայեց Խելքին մի պահ
Ու շշնջաց նա հուսաբեկ.
— Հերթը քոնն է, փորձի՛ր հապա
Օգնել մարդուն՝ քաղցած ու մերկ:

Խելքը թեթև գլխով արեց
Եվ գեղջուկին «հասավ» շուտով…
Գեղջուկն իսկույն աճապարեց
Ոսկիները ծածկել փութով:

Շքախումբը երբ մոտեցավ,
Ոսկու հետքը չկար արդեն,
Իսկ գեղջուկը առաջացավ
Ու խոնարհվեց արքայի դեմ:

— Հը՞, գյուղացի, ի՞նչ ես ասում,—
Ասաց արքան խոժոռատես,—
Գիտե՞ս՝ ինչ է քեզ սպասվում,
Թե պարզվի, որ մեզ խաբել ես…

— Ապրա՛ծ կենաս, ո՞վ մեծ արքա,—
Գեղջուկն ասաց աղերսալից,—
Իմ վայելքը մեծ է այնքան,
Որ չեմ զղջա, թե կախես ինձ:

Չէ՞ որ բախտս բերեց այսօր,
Ես խոսեցի արքայի հետ,
Եվ ամեն տեղ կպատմեն, որ
Դու ներել ես վարքն իմ անգետ.

Ինձ մոտ ունեմ ընտիր, պաղ թան,
Դրա համար կանչեցի ձեզ,
Ասի՝ խմեն, մի բան կտան,
Գնամ բերեմ, եթե կուզես…

4

Պատմությունը այս գեղջկական
Լսողներին այնպես հուզեց,
Որ հմայվեց նաև արքան
Եվ ժպտալով՝ թանը ուզեց:

Իրոք թանը հաճելի էր,
Արքան խմեց ու գոհ մնաց,
Երկու ոսկի տվեց նվեր
Եվ իր մարդկանց առավ–գնաց:

5

Հենց որ նրանք հեռվում կորան,
Խելքը Բախտին ասաց վստահ.
— Կուզե՞ս՝ էլի փորձենք նրան…
Իսկ Բախտը լուռ խորհեց մի պահ…

Գուցե նրանք շատ վիճեին,
Թե այդ պահին չհայտնվեր

Մորուքն հասած մինչև գոտին
Հեքիաթների պապիկը ծեր:

— Դուք իզուր եք վիճում այդպես,—
Ասաց պապը հանդիսավոր,—
Երկուսիդ էլ լավ գիտեմ ես,
Լսեք ասեմ՝ բանն այն է, որ

Թեև բախտն է այս աշխարհում
Տնօրինում մարդու կյանքը,
Սակայն խելքն է կառավարում
Ու միշտ կռում նրա կամքը:

Դուք երկուսով անջատ–անջատ
Մարդու համար չնչին բան եք,
Անջատ ուժով՝ ամենաշատ
Նրա կյանքը կպահպանեք:

Բայց չեմ կարող չասել իրոք
Ձեր միացյալ ուժի մասին.
Երնեկ նրան, ում որ սիրով
Կհանդիպեք դուք միասին,

Ձի համատեղ ձեր արժեքով
Դուք դառնում եք ամենազոր,
Չէ՞ որ կյանքում Բախտը՝ Խելքով,
Խելքն էլ Բախտով է միշտ հզոր…

ՎԱԽԿՈՏ ԽԱՆԸ

Մոնղոլների ժանտ արքա Թեմուչին
Ազգեր ու ցեղեր սրով նվաճեց,
Քանզի հաղորդ չէր նա գութ ու խղճին,
Բյուրավոր մարդկանց աշխարհից ջնջեց:

Աշխարհն անելով սմբակի կոխան՝
Խաժամուժ զորքով՝ բիրտ ու վայրենի,
Իրեն հռչակեց հզոր Չինգիզ խան
Ու վերադարձավ քյոշքը հայրենի:

Սփռելով զենքի շռինդ ու շառաչ՝
Նա մի մեծ զորքով հասավ իրենց տուն,
Մայրը դուրս ելավ, գնաց ընդառաջ,
Ապա գիրկն առավ զինավառ որդուն:

— Ա՜խ, իմ հե՛գ որդի,— ասաց մայրը ծեր,—
Թող քոռանային աչքերը քո մոր,
Որ նա քեզ երբեք այսպես չտեսներ՝
Չափազանց վախկոտ, չար ու հանցավոր…

Անսովոր էին մոր խոսքերն այնքան,
Որ Չինգիզ խանը ուսերը թոթվեց,
Ապա հետ քաշվեց գրկից մայրական
Ու տարակուսած նրան հարց տվեց.

— Դու այդ որտեղի՞ց հորինեցիր, մա՛յր,
Որ ես վախկոտ եմ, չար ու հանցավոր,
Աշխարհում արգելք չկա ինձ համար,
Ես զորավար եմ ու մեծ թագավոր:

— Իրավ է, որդի՛ս, ունես մեծ անուն,—
Թոնթորաց մայրը դառնացած հոգով,—
Սակայն որպես մայր ես չեմ ցանկանում,
Որ որդիս ման գա թիկնապահ զորքով:

Եթե զորքով ես մտնում մարդկանց մեջ,
Ուրեմն, որդի՛ս, վախենում ես դու,
Իսկ նա է կյանքում վախենում անվերջ,
Ով որ չարիք է պատճառել մարդուն:

ԾԱՂՐԱԾՈՒՆ ՈՒ ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐԸ

Հայտնի չէ, թե ե՞րբ և ո՞ր աշխարհում
Ապրում էր հզոր թագավոր մի ծեր,
Որը մի աղջիկ ուներ շատ սիրուն՝
Որպես իր գահին ժառանգորդ ու տեր:

Բայց արքան ուներ անփարատ մի վիշտ՝
Իր միակ դուստրը չէր ուրախանում,
Շրջում էր տխուր, թախծում էր նա միշտ.
Ոչ ոք նրանից գլուխ չէր հանում:

Երբ նա մի բան էր խորհում անձկալից
Կամ թե լավ բան էր իմանում մի նոր,
Հենց այդ նույն պահին միտն էին գալիս,
Մարդկային ցավն ու վշտերը բոլոր:

Ու նա լցվում էր տխրությամբ մի ծով,
Ալեկոծվում էր նրա նուրբ հոգին,
Ապա իր հոգու անհուն թախիծով
Վիշտ էր պատճառում նաև ամենքին:

Նոր էր բոլորել նա տասնութ տարին,
Հասուն էր, փարթամ ու գեղեցկատես,
Մեծ խելքի տեր էր, սիրտ ուներ բարի,
Աշխարհում չկար չքնաղ նրա պես:

Շատ թագավորներ, իշխան ու ասպետ
Ցանկանում էին նրան առնել կին,
Բայց գեթ մինչև վերջ խոսել նրա հետ
Դեռ չէր հաջողվել որևէ մեկին:

Նա ճանճրանում էր զրույցի կեսին,
Դառնում առավել տխուր ու մռայլ,
Կտրուկ մերժում էր խնամախոսին
Եվ հրաժարվում նվերից շռայլ:

Միշտ հորդորում էր հայրը ալեհեր
Եվ իր թախծանուշ դստերն համոզում,
Որ նա որևէ մեկին հավաներ
Կամ գոնե ասեր, թե ի՞նչ է ուզում:

— Հայրի՛կ,— արտասվեց աղջիկը մի օր,—
Ինչո՞ւ ես դու ինձ ստիպում այդպես,
Ես քմահաճ չեմ, ոչ էլ կամակոր,
Ոչ էլ անգետ եմ… Հասկանում եմ քեզ,

Դու սիրում ես ինձ և ուզում ես, որ
Ինձ կնության տաս այնպիսի մեկին,
Որ լինի քաջ ու զորեղ թագավոր
Եվ իր բռի մեջ առնի ամենքին:

Ու թագավորը, որը վաղ թե ուշ
Ինձ համար կյանքի ընկեր կդառնա,
Դաժանի մեկը պիտի լինի հույժ,
Որ մարդկանց վրա իշխել կարենա:

Եվ ես թագուհի կդառնամ ու տեր,
Կապրեմ բախտավոր, գոհ ու փառապանծ,
Երբ տառապալից աշխարհում այս մեր
Բյուրավոր մարդիկ կապրեն տառապած…

Հայրի՛կ, խնդրում եմ, դու մի՛ նեղանա
Եվ հայտնի՛ր բոլոր փեսացուներին,
Որ ընտրյալս կլինի լոկ նա,
Ով որ իմ սրտին հրճվանք կբերի:

— Թող կա՛մքդ լինի,— ասաց հայրը ծեր
Եվ իսկույն գրեց մի հրովարտակ.
«Ես նրա՛ն կտամ ձեռքը իմ դստեր,
Ով խինդ կվառի նրա կրծքի տակ…»:

Հրովարտակը հասավ ամենքին.
Փեսացուները չունեին հանգիստ,
Սակայն չէր բերում բախտը ոչ մեկի,
Արքայադուստրը համառում էր խիստ:

Սկզբում եկավ Հյուսիսի արքան,
Խոստացավ նրան իր գանձերը մեծ,
Սակայն աղջիկը ճանճրացավ այնքան,
Որ նրան անգամ լսել չփորձեց…

Հետո հայտնվեց արքան Հարավի,
Գովեց իր երկրի բնությունը պերճ.
— Արքայադո՛ւստր, մեզ մոտ հիրավի
Դու ընդմիշտ կապրես ճոխ դրախտի մեջ…

— Չի հրապուրում ինձ այն դրախտը,—
Պատասխան տվեց աղջիկը այսպես,—
Որտեղ չպիտի ժպտա ինձ բախտը,
Ու դարձյալ տխուր պիտի ապրեմ ես…

Եվ Արևմտյան երկրից հեռավոր
Եկավ արքայի ասպետ որդին քաջ,
Միակ ժառանգն էր նա իր արքա հոր,
Եկավ, խոնարհվեց աղջկա առաջ:

— Ո՞վ գեղեցկուհի,— ասաց սիրակեզ,—
Թե ինձ նվիրես քո սիրտը բարի,
Ամբողջ աշխարհը կնվաճեմ ես
Եվ քեզ կդարձնեմ դշխոն աշխարհի:

— Աշխարհը պիտի սրո՞վ նվաճես,—
Ասաց աղջիկը քամահրանքով,—
Գուցե դու քաջ ես, բայց ուզածս չես,
Չէ՞ որ արնոտ է այդ միջոցը քո…

Այսպես՝ ով եկավ՝ ձեռնունայն գնաց,
Բայց գալիս էին էլի ու էլի,
Սակայն աղջկա սիրտը փակ մնաց,
Եվ նա օրեցօր տխրեց ավելի:

Բայց ահա մի օր աղջկան լուր բերին,
Թե Արևելքի Անանուն արքան
Խումբ է ուղարկել պատվիրակների,
Որոնք ուզում են տեսնել աղջկան:

— Էհ, թող գան,— ասաց աղջիկը տխուր,—
Պետք չէ, որ նրանք երկար սպասեն,
Մանավանդ գիտեմ, որ եկել են զուր,
Պատվիրակները ի՞նչ պիտի ասեն…

Պատվիրակները իսկույն ներս եկան,
Բանագնաց չէր դա դիվանագետ.
Ծաղրածուին էր ուղարկել արքան
Մի զինվորական փոքրիկ խմբի հետ:

Ալեհեր արքան շատ էր գազազած,
Անակնկալից գժվել էր ասես,
Սակայն զայրույթը զսպելով՝ ասաց.
— Ո՞ւմ հետ խոսելու պատիվ ունեմ ես:

— Ինձ հետ, տե՛ր արքա, եթե հարկ լինի,—
Ասաց ծաղրածուն հանգիստ ու ազատ,—
Պետք է մատուցել նախ հաց ու գինի,
Չէ՞ որ մենք հյուր ենք՝ ամեն ինչից զատ:

— Գուցե հարսանյաց հանդեսը բացե՞նք,—
Խիստ հեգնեց արքան՝ նայելով խեթ–խեթ.
— Չէ՛, արքա՛, ինչո՞ւ, եկեք չշտապենք,
Նախ պիտի խոսենք մենք ձեր դստեր հետ:

Նախօրոք նրան հավանենք պիտի,—
Ասաց ծաղրածուն՝ հեգնելով արդեն,—
Գուցե նա համր է… կամ էլ, ո՞վ գիտի…
Ախր, իմ արքան շատ ընտիր մարդ է…

Ծեր թագավորի զայրույթը աճեց,
Հրաման տվեց, որ շուտ հեռանան,
Սակայն աղջիկը հորը աղաչեց.
— Հայրի՛կ, խնդրում եմ, թո՛ւյլ տուր՝ թող մնան:

— Արքայադո՛ւստր, շնորհակալ ենք,—
Ասաց ծաղրածուն և խոնարհվեց հեզ,—
Քո լավությունը չենք մոռանա մենք,
Մենք քեզ թագուհի կդարձնենք մեզ:

Գիտե՞ս, իմ արքան շատ է բախտավոր,
Նա քեզ պես խելոք դշխո կունենա,
Բայց, մեր մեջ ասած, վախենում եմ, որ
Քո չքնաղ դեմքին միշտ գերի մնա:

Արքայադուստրը գովեստից շիկնեց,
Հենց որ շիկնանքը տեսավ հայր արքան,
Գոհունակությամբ իր գահին թիկնեց
Եվ լուռ հետևեց վարքին աղջկա:

— Դու ձեր պալատում ի՞նչ դեր ես տանում,—
Աղջիկը նրան հարց տվեց հանկարծ:
— Ես արատներ եմ ակներև անում,
Արատներ, որոնք խեղում են մարդկանց:

Խեղում են երկրի վարք ու բարքերը,
Իսկ ես ծաղրում եմ դրանք անաչառ,
Եվ ինձ անսալով՝ իմ հզոր տերը
Վերացնում է դրանք անպատճառ:

Իմ թագավորը ինձ վստահում է,
Ես ծաղրում եմ և ի՛ր արատները,
Չնայած դրան՝ նա ինձ պահում է,
Սա է, տիրուհի՛ս, իմ համեստ դերը…

— Ուրեմն՝ ձեզ մոտ միշտ խնդությո՞ւն կա,
Ես չեմ հավատում,— ասաց աղջիկը:
— Հենց որ տիրուհին մի օր մեզ մոտ գա,
Սեփական աչքով կտեսնի ինքը:

— Բայց քո թագավորն ինչպիսի՞ մարդ է,—
Հարցրեց աղջիկը թեթև շիկնելով:
— Ա՛յ, սա գործնական զրույց է արդեն,—
Գոչեց ծաղրածուն՝ ուրախ ծափ տալով,—

Արքայադո՛ւստր, հավատա՛ դու ինձ,
Ծաղրածուները երբեք չեն ստել,
Արքաս՝ որպես մարդ, բարձր է բոլորից,
Նրան պի՛նդ բռնեք, հազիվ եք գտել:

— Իսկ քո արքայի տեսքն ինչպիսի՞ն է,—
Հարցրեց աղջիկը՝ ժպտալով արդեն:
— Չեմ ասի՝ նրա դեմքը լուսին է,—
Ասաց ծաղրածուն,— բայց տղամարդ է,

Իմ արքան որքան խիզախ է ու քաջ,
Նույնքան համեստ է ու խիստ համբերող,
Ծունկի չի եկել թշնամու առաջ,
Սակայն հաղթելիս եղել է ներող:

— Բայց ինչո՞ւ անձամբ ինքը չի եկել,—
Արքայադուստրը խոսեց վրդովված,—
Գուցե դեռ նոր է սկսում հեգել,
Կամ թե շատ ծեր է արքան ձեր գոված:

Թե չէ, ի՞նչ բան է, իրար չտեսած՝
Խնամախոս է ուղարկել ինձ մոտ,
Տարօրինակ է, ճշմարիտն ասած,
Գուցե ե՞ս եմ գեշ, բո՞ւթ կամ հիվանդո՞տ…

— Սիրո՛ւն ջան, դու քեզ մի՛ պարսավիր զուր,
Քո շնորհները մեզ շատ դուր եկան,
Դու այժմ արի սիրով մեզ խո՛նք տուր,
Քանզի այստեղ է հիմա իմ արքան:

Ասաց ծաղրածուն, ապա խոնարհվեց
Իր կողքին կանգնած զինվորին ջահել,
Որն առաջ եկավ ու գլուխ տվեց
Արքայադստերն՝ ասպետավայել:

Հիացքից ամբողջ դահլիճը գվվաց,
«Զինվորն» էն գլխից շատ էր դուրեկան,
Աղջիկը շիկնեց ու նրան թվաց,
Որ ինքը նրան արժան չի անգամ…

Ծեր թագավորը ցած իջավ գահից,
Ընդառաջ գնաց ջահել արքային.
— Ասպե՛տ,— ասաց նա,— թողությո՛ւն տուր ինձ,
Ես վատ վարվեցի զայրույթի պահին…:

— Օհո՜,— ծափ տվեց ծաղրածուն ուրախ,—
Ծեր թագավորից արդեն վախ չկա,
Իսկ մեզ մնում է, որ հիմա անվախ
Հարց տանք կամակոր նրա աղջկան.

Ասա՛, տիրուհի՛ս, այժմ ի՞նչ կասես,
Եթե չես ուզում, մենք թողնենք–գնանք,
Շատ գործեր ունենք իմ արքան ու ես,
Հո մենք օրերով չպիտի՞ մնանք…

Աղջիկն հուզմունքից կաս–կարմիր կտրեց,
Երբ տղան գնաց, կանգնեց նրա դեմ.
Նա ձեռքը մեկնեց, տղան համբուրեց,
Իսկ դա խոսք տալու նշան էր արդեն…

Ապա հարսանիք եղավ յոթը օր,
Ծաղրածուն անվերջ կատակներ արեց,
Արքան օրհնեց, որ լինեն բախտավոր,
Հարսնացուն ուրախ երգեց ու պարեց…

Ես էլ հյուր էի այդ հարսանիքում.
Ծաղրածուն էր իմ կողքի ընկերը.
— Կատակը ուժ է,— ասաց նա թաքուն,—
Դա չեն հասկանում լոկ հիմարները…

ՀԱՎԱՏԸ

Քաղաքի արձակ հրապարակում,
Ուր հավաքվել էր բազմություն մի հոծ,
Ուժեղ աղմուկը ականջ էր ծակում,
Գոռում–գոչում էր ամբոխն ալեկոծ:
— Չե՞նք ուզում,— նրանք զիլ կանչում էին.
Մե՛նք ջոկ խմբերով, մե՛նք միաբերան,
Վճռականապես համաձայն չէին,—
Չե՞նք ուզում, եղբա՛յր, չե՞նք ուզում նրան…

Հրապարակում կար բեմահարթակ,
Որի վրա մեծ մի խումբ էր կանգնած,
Նրանցից մեկը խոսում էր տաք–տաք
Եվ ինչ–որ բան էր համոզում մարդկանց:
Նա «վերևից» էր անշուշտ ժամանել,
Եկել էր՝ կարգեր նոր գավառապետ,
Որին ամբոխը չէր կարող տանել,
Քանզի ծանոթ էր նրա վարքի հետ:

Եվ ժողովուրդը իրարով անցած՝
Մերժում էր, գոռում, սպառնում, հուզվում.
Բյուրավոր մարդիկ միակամ դարձած՝
Աղմկում էին՝ «Նրան չե՞նք ուզում»:
«Վերևից» եկած մարդը նշմարեց,
Որ խառնվելով այնտեղ բոլորին՝
Նույն բանն էր գոռում չափազանց տարեց,
Իր կյանքն սպառած, պառաված մի կին:

— Շուտ այն պառավին այստեղ քա՛ղշ տվեք,—
Հրամայեց նա իր պահնորդներին:

Իսկույն ցած թռան մի քանի տղերք
Եվ խեղճ պառավին բռնեցին–բերին:
— Լսի՛ր, ա՛յ պառավ, քեզ ի՞նչ է եղել,—
Բարկացավ մարդը,— բա չե՞ս ամաչում,
Դու զառամ կին ես, նա քեզ չի նեղել,
Երևի նրան չես էլ ճանաչում:

Այսօր կաս, գուցե վաղը չլինես,
Քո ինչի՞ն է պետք՝ գոռում ես, հուզվում,
Ես համոզված եմ, որ դու չգիտես,
Թե մարդիկ այստեղ ի՞նչը չեն ուզում…
— Այո՛, որդի՛ ջան,— պառավը ասաց,—
Ես էլ չգիտեմ, թե սա ինչ վեճ է,
Բայց հաստատ գիտեմ, որ լուրջ վեճ է սա,
Եվ համոզված եմ, որ անտեղի չէ:

Քանզի ապրել եմ շուրջ հարյուր տարի,
Ինչե՞ր ասես, որ չեմ տեսել կյանքում,
Ես փորձով գիտեմ կարգն այս աշխարհի
Եվ գիտեմ, թե այն ինչո՞վ է կանգուն:
Օրինակ, որդի՛ս, ես քաջ գիտեմ, որ
Ժողովուրդը միշտ արդար է խոսում,
Դրա համար էլ, երբ տեսա այսօր,
Որ նա գոռում է, թե՝ «Մենք չենք ուզում»,

Ես էլ միացա ու գոռացի, թե՝
Նրան չենք ուզում, դուք մեզ մի՛ խաբեք…
Ախր, որդի՛ ջան, ես հաստատ գիտեմ,
Որ ժողովուրդը չի ստում երբեք…
Ես էլ չեմ ստում, հավատացե՛ք ինձ,
Քանզի փորձով եմ նրան հավատում,
Չէ՞ որ ելնելով դարավոր փորձից՝
Նա հաստատ գիտի, թե ինչ է ատում…

ՉԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

Այս հին զրույցը, որ պատմում եմ ձեզ,
Մի ծերունի է պատմել ինձ այսպես.

«Հնում եղել է մի չար թագավոր,
Իրեն վերմակ է պատվիրել միշտ նոր,
Ու երբ վերմակը տարել են նրան,
Նա այդ վերմակը քաշել է վրան,
Ապա հայտնել է, որ իր չափով չէ.
Մի դեպքում ասել, որ այն խիստ կարճ է,
Իսկ մի այլ դեպքում համարել երկար,
Այսպես շարունակ թագավորը չար,
Երկու դեպքում էլ ծախելով հոգին,
Գլխատել տվել անմեղ դերձակին…
Հերթը հասնում է մի դերձակի քաջ՝
Չափազանց սրտոտ, հաղթ ու լայնալանջ,
Սա մի վերմակ է կարում մի քիչ կարճ,
Տանում դնում է արքայի առաջ.
— Արքա՛,— ասում է,— վերմակ եմ կարել,
Չափերն էլ տեղին ու ճիշտ եմ արել:
Մտնենք ննջարան, փորձի՛ր՝ ես գնամ,
Ինձ թվում է, որ շատ գոհ կմնաս…
— Իսկապե՞ս,— ժպտաց արքան չարանենգ,—
Եթե այդպես է, դե գնանք փորձենք…
Նրանք իրար հետ մտան ննջարան,
Պարզ է, վերմակն էլ իրենց հետ տրան:
Դրանիկները խմբվեցին բակում
Եվ ննջարանի նախասենյակում,
Որ դիմավորեն զոհին հերթական,
Այդպես էր նրանց պատվիրել արքան…
Ճոխ ննջարանում մի մեծ մահիճ կար,

Արքան մոտեցավ ու պառկեց երկար,
Վերմակը առավ ու վրան փռեց,
Տեսավ, որ կարճ է, ոտքերը չռեց,
Ու դուրս թողնելով ոտքի թաթերը՝
Զարուքյամբ շարժեց տգեղ մատները:
— Սա՞ է կարածդ,— ասաց զայրագին,
Բայց չհասցրեց կանչել գեթ մեկին,
Քանզի դերձակը խիստ ժամանակին
Կոկորդին դրեց շեղբը դանակի.
— Չշարժվե՛ս,— ասաց,— կմորթեմ թափով,
Ոտքերդ էլ պարզի՛ր վերմակիդ չափով:
Իսկ հիմա ձայն տուր քո մարդկանց, ասա՛,
Որ հենց քո ուզած լավ վերմակն է սա,—
Ասաց ու շեղբը սեղմեց կոկորդին
Եվ ձևացրեց, թե պիտի մորթի…
Արքայի ներսում արյունը սառեց,
Ուստի սարսափած՝ նա հայտարարեց.
— Օ՜, սա իմ ուզած վերմակն է, որ կա,
Ամեն ինչ տեղին… Պակաս տեղ չկա…
Այդ դեպքից հետո թագավորը չար,
Ասում են՝ թեև ապրեց շատ երկար,
Բայց էլ վերմակներ կարել չէր տալիս,
Վերջին դերձակը միշտ միտն էր գալիս…»:

Հետո ծերուկը հին խրատի պես
Իր պատմությունը ավարտեց այսպես.
— Մինչև որ վատին չպատժես կարգին,
Նա վերջ չի դնի իր չար արարքին…

ԿԻՆԸ
(Ինդոնեզական լեգենդ)

Վիշնու աստվածը՝ կյանքը արարող,
Շրջում էր հովտում լուսնյակ գիշերին
Եվ՝ որպես աստված ամենակարող,
Մարմին էր տալիս իր ծով խոհերին:

Ու երբ մոտեցավ ծաղիկներին թաց,
Գերվեց լոտոսի պերճ ծաղկով փարթամ,
Եվ նրա գլխում մի վառ միտք շողաց.
«Արի՛ նրբագեղ այս ծաղկին շունչ տամ…»:

Բայց երբ լոտոսը մեկեն շունչ առավ,
Լուռ ալեկոծվեց արարչի հոգին,
Քանզի լոտոսի ծաղիկը դարձավ
Չքնաղ մի էակ, որին կոչեց կին:

Քնքուշ շուրթերը՝ հանց նորաբաց վարդ,
Խոստանում էին կենսատու համբույր,
Պերճ պարանոցն ու կուրծքը ակնազարդ
Խնկարկում էին լոտոսի թարմ բույր:

Ջրվեժ վարսերը և մեջքը ճկուն
Արարչի սիրտը դարձրին գերի,
Հավերժող կյանքի հուր էր բորբոքում
Դյութիչ ժպիտը վճիտ աչքերի:

— Ասա՛, սիրելի՛ս,— հարց տվեց նրան
Կնոջ հմայքից շփոթված Տերը,—
Կուզե՞ս բնակվել լեռների վրա:
— Օ՜, ոչ,— ասաց նա,— ցուրտ են լեռները:

— Ծովի տիրուհի արի դարձնեմ քեզ,
Ապրի՛ր ծովի մեջ՝ բյուրեղ դղյակում:
— Ծովի մութ խորքում ինչպե՞ս ապրեմ ես,
Արեգակ չկա ծովի հատակում:

— Ուրեմն՝ ապրի՛ր տոթ անապատում,
Ուր անպակաս է շունչն արեգակի:
— Տե՛ր իմ, ես տոթը նույնքան եմ ատում,
Որքան խավարը ծովի հատակի…

Կնոջ քմահաճ վարմունքից համառ
Վիշնուն խորհում էր՝ արդյոք ի՞նչ անի.
«Մի՞թե այս քնքուշ էակի համար
Չկա ապրելու մի վայր պիտանի…»:

Մինչդեռ խորհում էր Տերը շփոթված,
Հեգ տղամարդը նրանց մոտեցավ,
Նայեց կնոջը և նրան թվաց՝
Իր սիրտը խուժեց հաճելի մի ցավ:

Նա հանկարծ ընկավ ծնկների վրա
Ու խնդրեց Աստծուն դառնաղի լացով.
— Ի՛նձ տուր, տե՛ր Աստված, ի՛նձ տուր դու նրան,
Էլ չեն սփոփում ինձ ցամաք ու ծով…

Երբ կինը տեսավ արցունքը մարդու,
Ասաց՝ թողնելով իր քմայքները.
— Տե՛ր, սրա սրտում ինձ օթևան տուր…
— Դե լա՛վ, թո՛ղ լինի,— բարբառեց Տերը…

ՄԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՄԱՐԴՈՒ ԱՊԱԳԱՆ

«Մեր զորքը խաղաղ շարժվում էր առաջ.
Նա մարդկանց երեց ու տվեց մահի »
Վ. ԲՐՅՈՒՍՈՎ

1

Երբ քսաներորդ դարը մոլեգին
Ցնցեց աշխարհը՝ ապական ու հին,
Կրթված ազգերը կանգնեցին ոտի,
Կուրծքը դեմ տվին, պրկեցին գոտի,
Գիշեր ու ցերեկ մտքեցին անքուն,
Իրենց երկիրը պահեցին կանգուն,
Եվ այն, ինչ հին էր, մատնեցին հրին,
Նոր եռանդ տվին հողին ու ջրին…
Բայց ահեղ ցնցման պահին այդ հզոր
Մեր մայր Ռուսիան խռմփում էր խոր…
Նա պայթեց, երբ որ փշրվեց իր տունը,
Եվ ջանաց փրկել գեթ իր անունը
Ու քնաթաթախ ամբիոն բարձրացավ.
— Ուռա՜,— գոռաց նա,— տեսեք՝ արթնացա…
Բայց ի՞նչ արթանալ, նա խարխափում էր,
Անամոթաբար մարդկանց խաբում էր,
Նրանց աչքերին փոշի էր փչում,
Ջարկում էր, զարկվում, գոռում էր, ճչում,
Ջղաձգումով թմրած ուղեղի՝
Նա որոնում էր փրկության ուղի:
Եվ խարխափումի այդ տարաժամին
Իր խելքին փչեց Մարքսի չար քամին
(Չեմ կարող գրել առանց հուզմունքի).
Իբրև շատ հնում նախնիները մեր
Եղել են կապիկ, ապա՝ մարդակեր,
Ու թեև նրանք եղել են գազան,

Իրար կերել են միայն հավասար,
Նրանց մոտ ոչինչ չի ունեցել տեր,
Կամ ամեն ինչը եղել է անտեր,
Չի եղել նույնիսկ օրենք ու հավատ,
Մեկը չի ունեցել մյուսներից շատ,
Ճարպոտ չեն եղել նրանց փորերը,
Եվ շատ ուրախ են անցել օրերը,
Չեն եղել նույնիսկ կտուր ու տանիք,
Ամուսնական կյանք, տուն ու ընտանիք,
Խանդը չի տանջել հեգ ադամորդուն,
Միայն մի բան է հոգս եղել մարդուն՝
Ինչպե՞ս կուշտ պահի իր անտակ փորը…
Դա էր մեզ համար հենց կարևորը,
Ուստի ուսմունքը կոմունիստական
Մայր Ռուսիային հմայեց այնքան,
Որ երկար–երկար նա էլ միտք չարեց,
Այլ գործի անցավ ու հայտարարեց.
— Կեցցե՜ն կարգերը կոմունիստական,
Մենք կառուցում ենք մարդու ապագան…

2

Մեր մեջ էլ կային մարդիկ խելացի,
Որ ժամանակին հայտարարեցին՝
Հեգ մարդկությունը կկորչի հավետ,
Թե բան է հանկարծ փորձի նայել ետ…
Բայց մենք խեղդեցինք նրանց բանտերում
(Իհարկե, որքան մեր ուժն էր ներում)…
Այժմ մեր երկրում այդպիսիք չկան.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

3

Խլեցինք մարդուց այն, ինչ դարեդար
Նա վաստակել էր տքնանքով արդար,
Տիրազրկեցինք ապրուստն ու հողը
(Որ այն անարգել թալանի գողը),

Ու երբ գյուղացին փորձեց բողոքել,
Մենք սկսեցինք նրա գլուխը պոկել,
Այժմ բողոքող գյուղացիք չկան.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

4

Աստվածը մարդու բան չէր արել վատ,
Նա ներշնչել էր լոկ հույս ու հավատ,
Ուզում էր՝ մարդը միշտ խղճով ապրեր,
Բայց գիտե՞ք՝ խիղճը մեզ ձեռնտու չէր,
Քանզի խիղճը մեզ կարող էր դատել…
Մենք սկսեցինք մեր փորը պաշտել
Ու կուշտ չենք կերել այդ օրից սակայն.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

5

Մեզ ավանդում էր Մարքս մարգարեն
(Թող տերը փրկի մեզ նման չարեն),
Որ մարդն ապահով կապրի վերջապես,
Եթե բարիքներն հոսեն գետի պես:
Մենք այդ դասն առանք հանգիստ ու թեթև՝
Չմտածելով, որ ամուլ «եթե»–ն
Պտուղ չի տվել դեռ ոչ մի անգամ.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

6

Համաձայն անմիտ այդ սին ուսմունքի
(Չեմ կարող խոսել առանց հուզմունքի)՝
Ազատություն է տրված բոլորին,
Բայց լավ իմացեք՝ վա՜յ նրա օրին,
Ով որ ինքնուրույն բան կմտածի
Կոմունիստական պարտիայից բացի,
Սերն էլ է մեզ մոտ այսօր պարտիական.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

7

Իսկ ի՞նչ է պարտիան կամ ինչպիսի՞ն է՝
Ամուլ արգանդով նա պոռնիկ կին է,
Որը անպտուղ տռփանքով անսանձ
Իր գիրկն է առնում բազմաթիվ անձանց
Ու պղծում նրանց արդեն գարշ հոգին,
Կործանիչ ախտով նեխում ամենքին,
Մարդիկ դառնում են քսու, ինտրիգան.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

8

Մարդը դարեդար, Աստծուց բացի,
Կերտել էր Մաշտոց ու Նարեկացի,
Սրբացրել նրանց, Աստծու կարգ դասել,
Որ մարդը առներ մաքրության դասեր.
Բայց մենք մերժեցինք բոլոր սրբերին
Եվ ազատություն տվինք լրբերին,
Կյանքը դարձրինք պիղծ ու ապական.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

9

Մեր գործն ու խոսքը իրար չի բռնում.
Երկրում տուն չունենք, բայց Մարս ենք թռչում,
Հորն անվանում ենք ներքինի ու չար,
Որդուն՝ առնական, քաջ ու բարերար,
Անձին չենք պաշտում՝ ըստ մեր հավատի,
Բայց տեսեք՝ ի՞նչ ենք արել անհատին,
Չենք թաղել՝ իբրև նմաններ չկան.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

10

Առիթը եղավ, ասենք այս բանն էլ,
Խոսքով թագավոր չենք կարող տանել,
Բայց գործով (օ՜, Տե՛ր, մեր մեղքը ների՛ր)

Կյանքի կոչեցինք փարավոններին,
Մեր դարի դեմքին սև մուր քսեցինք
Ու մեր նմանին պինդ զմռսեցինք,
Պահեցինք՝ իբրև գալիքին վկա.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

11

Մեր արածները դևն էլ չի անում,
Սակայն արտաքուստ սուրբ ենք ձևանում,
Հորն անվանում ենք ներքինի ու չար,
Որդուն՝ առնական, նույնիսկ բարերար:
(Թո՛ւ մեր նամուսին բյուր–հազար անգամ,
Ներքինուց որդի՞, այն էլ՝ առնական),
Բայց սա դեռ ոչինչ, մեզ մոտ ինչե՞ր կան…
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

12

Օրինակ՝ մտեք դուք մեր սենատը,
Տեսե՛ք, թե ո՞վ է մեր դեպուտատը.
Նա լավ խառատ է կամ լավ երգիչ է,
Սակայն չգիտի, թե բյուջեն ի՞նչ է,
Բայց փույթ չէ, նա է հաստատում բյուջեն
(Թող հիմարության փողերը փչեն,
Քանզի կան մարդիկ, որ լավ պար կգան…)
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

13

Պատվազուրկ է մեր աշխատողն արդար,
Կուշտ չի ապրելու, թեկուզ ապրի դար,
Քանզի ամեն տեղ ստում են, խաբում,
Նրա վաստակը շորթում են, լափում
Ղեկավարները մեր ձրիակեր,
Ովքեր միշտ իրենց կոչում են *ընկեր*,
Բայց ի՞նչ սև ընկեր, ցեցեր են, որ կան.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

14

Փա՛ռք Արարչին, որ աշխատավորը
Լավ է զգացել արդեն բոլորը,
Արդ աշխատում է, ինչպես որ գիտի,
Այնքան չի դատում, որ ուրիշն ուտի,
Եվ պակասում է արդեն բարիքը,
Մի օր կհասնի դաժան կարիքը…
Այս օրվա փորձն է մեր վաղվա վկան.
— Մենք կառուցում ենք մարդու ապագան…

1962–1963 թթ., Երևան

ՁՈՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Հայրենիքս բարձրաբերձ է ու լեռնային,
Որպես պարգև՝ այն վերուստ է տրված հային,
Ուր լեռնային հորդ գետի պես մշտաշառաչ
Նա վեհորեն ընթանում է դեպի առաջ…
Ի՜մ ժողովուրդ, դու լեռնային զուլալ գետ ես,
Ջինջ ջրերից մի աննշան կաթիլն եմ ես:
Որպես որդիդ՝ խնդրում եմ քեզ սրտի դողով,
Թո՛ւյլ տուր՝ սերս հայտնեմ համեստ մի ներբողով:
Իմ տառապա՜ծ արարչագործ, ի՜մ աննման,
Դու լեռնային հավերժահոս գետի նման
Մե՛րթ ժայռեղեն կիրճերի մեջ հառաչելով,
Մե՛րթ ընդվզած, ըմբոստացած շառաչելով,
Բիրտ ու դաժան բազում դարեր հոսել–հոսել
Ու եկել ես մեր այս ահեղ դարին հասել:
Որքան ցավի հանդիպեցիր քո ճամփին մեծ,
Ի՜մ հարազատ, ի՜մ կարեվեր, ի՜մ բազմահեծ:
Երբեք հարթ չի եղել հունդ բազմադարյան,
Ամեն դարի ձեռքին հետք կա քո սուրբ արյան,
Արյուն տալով ու տոկալով անթիվ դարեր՝
Գիրք ես ծաղկել ու մագաղաթ, հղկել քարեր,
Շունչ ես տվել քո հայրենի քար ու հողին,
Արարելով ես միշտ հաղթել քո ոսոխին:
Բազում դարեր ու տարիներ կամքով համառ
Դու կռվել ես պատվի համար, սիրո համար,
Դու կռվել ես հանուն լույսի ու ճշմարտի
Եվ միշտ հանուն արդարության՝ ելել մարտի,
Ու մարտերում միշտ եղել ես արյունաքամ,
Բայց քո ոգին չի ընկճվել ոչ մի անգամ,
Քո կարեվեր սրտին հասած ամեն մի վերք
Մարգարտացել, դարձել է ասք, խրատ ու երգ:

Արդ՝ քո կյանքը մի վիպերգ է մարգարտաշար,
Ազնիվ խեցիդ միշտ կոչվել է Հայոց աշխարհ:
Եղել է, որ հանուն հացի կամ թիզ հողի
Դու երգել ես նաև երգը քո ոսոխի,
Լավդ թողած՝ ընդունել ես նրա թերին,
Դեռ այսօր էլ օտար երգ կա քո շուրթերին…
Բայց դու դրանք միշտ մերժել ես պատեհ ժամին,
Դու ապրել ես, անհետ կորել է թշնամին.
Այդ ամենին ժամանակն է այսօր վկա,
Շատերը քո ոսոխներից հիմա չկան,
Նրանց տեղը այժմ դաշտ է կամ այլ ոստան,
Սակայն դու կաս, հավերժ կանգուն ի՛մ Հայաստան:
Ինչպե՞ս գրեմ, ի՛մ ժողովուրդ, քո ներբողը,
Ո՞վ է ասել՝ մարդուց խլեն իր սուրբ հողը,
Նրան թողնեն չոր, անպտուղ ամուլ քարեր,
Իսկ նա ամուլ այդ քարերում ապրի դարեր:
Չէ, սիրելիս, ի՛մ անգինս, դու հերոս ես,
Այդ ասում է ողջ աշխարհը, այլ ոչ թե՝ ես:
Ես՝ քո որդին, հպարտանում եմ քեզանով,
Դու հերոս ես քո հանճարով, խոսք ու բանով,
Այն ժամանակ, երբ կիրթ ազգեր դեռ քիչ կային,
Հռչակված էր վարք ու բարքը քո մարդկային…
Ճշմարտության դեմ որպեսզի չմեղանչեմ,
Թո՛ւյլ տուր չքնաղ քո էպոսը ոգեկոչեմ…
Դու չարի դեմ ունեցել ես արդար ցասում,
Տուն ես շինել ու հայրենիք, կոչել Սասուն,
Ու այդ տան մեջ անհնազանդ բախտ ես կռել,
Շիտակության համար կոչվել Սասնա ծռեր…
Որ ոսոխը չտիրի քո ծով սարերին,
Դու ծովերից ծնել ես քո Սանասարին,
Դու ծնել ես Առյուծաձև–Առյուծ Մհեր,
Որ հավիտյան կանգուն մնա Սասունը մեր:
Եղել է, որ դու ծնել ես նաև Վերգո,
Բայց ծնել ես նաև Դավիթ՝ նրան հերքող,
Հսկա Դավիթ՝ որքան հզոր, նույնքան բարի,

Որ կարող է նույնիսկ հարգել մորը չարի,
Բայց չներել նրա որդուն՝ իր ոսոխին,
Որը իր պիղծ աչքն է տնկել մեր սուրբ հողին…
Որ ոսոխդ չհասնի իր նպատակին,
Դու միշտ պատրաստ պահել ես քո Թուր–Կեծակին…
Բայց շատ էին ոսոխները քո դժնադեմ,
Քանի անգամ դավ են նյութել մեր երկրի դեմ,
Ավար առել մեր մայր հողից՝ հանդ ու սարեր,
Փորձ են արել եղծել լեզուն, հավատը մեր…
Հե՜յ, դո՛ւք՝ իմ սո՛ւրբ հայրենիքի չա՛ր ոսոխներ,
Լսե՛ք, այսօր ինչ էլ լինի անունը ձեր,
Հայտնում եմ ես մեսրոպատառ իմ այս գրով՝
Ով հանդգնի այսօր հողս մտնել սրով,
Մենք նրա դեմ արդեն ունենք նոր Կայծակ թուր…
Մենք սովոր ենք գութաններից կռել հաղթ սուր,
Իսկ հաղթելիս՝ այդ սրերից կռել գութան,
Եվ հերկելով՝ անմար պահել լույսը մեր տան:
Դուք չկարծեք, որ մեր Դավթով մենք վերջացանք,
Ո՛չ, լսո՞ւմ եք, մենք եղել ենք ու հավերժ կանք…
Դեռ անառիկ ու երկնահաս լեռներում մեր
Ունենք բանտված հավերժ անմահ Ցասման Մեր,
Որ այրի մեջ, հեծած իր ձին, զրահն հագին,
Պատրաստ պահած վրիժառու Թուր–Կեծակին՝
Սպասում է նա անհամբեր այրի բացման,
Եվ դուրս կգա… Երբ որ հասնի ժամն հատուցման…

ԱՐՏԱՇԵՍ ՈՒ ՍԱԹԵՆԻԿ
(Պոեմ)

1

Ալանաց արքան՝ ավարի ծարավ,
Կազմեց հոծ բանակ լեռնականների,
Վրաց աշխարհը ոտքի տակ առավ
Եվ մտավ Հայոց աշխարհը բերրի:
Հայոց աշխարհում այդ նույն ժամանակ
Քաջ Արտաշեսն էր տեր ու թագավոր,
Որը հայերից կազմեց քաջ բանակ
Ու թշնամու դեմ ելավ փառավոր:
Հուժկու զարկերից հայոց քաջերի
Ոսոխի զորքը փախավ Քուռն անցավ,
Արքայի որդուն թողնելով գերի՝
Քուռի աջ ափին նորից ամրացավ:
Արտաշես արքան հաղթողին վայել
Իր բանակներով մոտեցավ Քուռին,
Նա արքայորդուն գերի է պահել
Եվ սպասում է արքայի լուրին:
Լուրը չուշացավ, առավոտյան վաղ
Երեք ձիավոր Քուռն այս կողմ անցան.
Պատվիրակների խումբ էր դա խաղաղ,
Որը գալիս էր տարտամ ու անձայն:
Հայ զինվորները ընդառաջ ելան
Եվ նրանց տարան արքայի վրան,
Արքան հյուրերին նախ լավ ընդունեց,
Ապա հարցրեց՝ ինչ է պետք նրանց:
— Մեծազո՛ր արքա,— խոսեց վարանոտ
Պատվիրակների մեծը ալեհեր,—
Անսահման հույսով եկել ենք Քեզ մոտ,
Որ դուք չմերժեք աղաչանքը մեր:

Երեկ, երբ ահեղ ճակատամարտում
Մեր զորքը ձերից պարտվեց չարաչար,
Դուք գերի առաք արքայի որդուն,
Որը ժառանգն է նրա մինուճար:
Մենք գիտենք, որ նա վերք ուներ ուսին,
Եթե նա ողջ է, կարող է ման գալ,
Արտաշես արքան ինչ էլ որ ուզի,
Ալանաց արքան խոստանում է տալ:
Միայն թե տանի իր մինիկ որդուն՝
Միակ ժառանգին իր անտեր գահի,
Նրա խնդրանքը թե կատարեք դուք,
Ինչ էլ պահանջեք՝ կանի այս պահին:
Արտաշես արքան մի պահ խոժոռվեց,
Պատվիրակներին նայեց ակնդետ,
Ապա զայրալից պատասխան տվեց.
— Այժմ վե՞ր կացեք ու գնացե՛ք ետ:
Գնացե՛ք, ասե՛ք արքային ձեր չար,
Ինչ որ ես հիմա կպատվիրեմ ձեզ,
Որ ողջ է նրա որդին մինուճար,
Բայց նրան ինձ մոտ պիտի պահեմ ես:
Եվ պիտի պահեմ այնքան ժամանակ,
Քանի դեռ արքան ձեր ավարառու
Լեռնականներից կկազմի բանակ
Եվ իր աշխարհից կմեկնի հեռու,
Որ ասպատակի երկիրն ուրիշի,
Նրա որդին միշտ կմնա գերի,
Որ նա մինչև իր վախճանը հիշի
Արդար ցասումը խաղաղ ազգերի…

2

Պատվիրակները ետ էին դարձել.
Ալանաց արքան, վշտից համրացել,
Գլուխը առել զույգ ափերի մեջ,
Գնում–գալիս էր վրանում անվերջ,
Աչքերից անզուսպ արցունք էր հորդում,

Նա ճար չէր գտնում, որ փրկի որդուն.
Թեև մեծ էր իր զորքի քանակը,
Բայց քաջ կռվող էր հայոց բանակը,
Նա ցույց էր տվել իր ուժը արդեն
Եվ ժայռի նման կանգնել նրա դեմ:
Իսկ հայոց ջահել Արտաշես արքան
Իր ուժի վրա վստահ էր այնքան,
Որ Քուռի ափին ազատ անվեհեր
Մեկ վար էր գնում ու մեկ՝ դեպի վեր,
Ու թշնամուն էր նա զննում հպարտ,
Որ թե հարկ լինի, տա ճակատամարտ…
Եվ հանկարծ տեսավ դիմադիր ափին,
Ինչպես նոր ծագած վաղորդյան արփին՝
Հայտնվեց չքնաղ մի դեռատի կույս,
Որի կուրծքն ասես արձակում էր լույս.
Մազերը փռած ուսերին մարմար,
Ճակատը՝ ճերմակ, աչքերը՝ պայծառ
Դրանիկներով խիտ շրջապատված՝
Մոտեցավ ափին՝ որպես կիսաստված,
Ու երբ բարձրադիր մի տեղի հասավ,
Նա իր թարգմանի միջոցով ասավ.
— Ո՜վ հայոց արքա, քաջ ա՜յր Արտաշես,
Լսի՛ր, թե հիմա ինչ եմ ասում քեզ՝
Գեղանի դուստրս քաջ ալանների.
Դու իմ եղբորը վերցրել ես գերի,
Բայց հնոց կարգը այսպես է ասում՝
Բնավ օրենք չէ, որ մի դյուցազուն,
Երբ այլ դյուցազնաց հաղթի մարտի մեջ,
Նրանց զավակաց կյանքին դնի վերջ
Կամ նրանց դարձնի նվաստ մի գերի,
Քանզի դա խիզախ երկու ազգերի
Կթշնամացնի հավիտենապես,
Չէի ցանկանա, որ դու այդ անես…
Արտաշես արքան ափին մոտ գնաց.
Խելոք էր խոսում կույսը ալանաց,

Սակայն իմաստուն խոսքերից բացի
Նա հասակ ուներ՝ նուրբ ու սլացիկ,
Եվ հոնքեր ուներ՝ հանց լարած աղեղ,
Աչքերում՝ ճաճանչ, հայացքը՝ անմեղ,
Թեև խոսում էր քաջ մարտիկի պես,
Բայց ձայնի մեջ կար քնքշություն մի հեզ,
Դեմքը չքնաղ էր՝ բոլորած լուսին…
Երբ արքան նայեց ալանաց կույսին,
Մի անուշ տագնապ սիրտը համակեց,
Հիացքից մի պահ աչքերը փակեց,
Խոսքեր չգտավ ասելու նրան,
Ուստի ետ եկավ, մտավ իր վրան:
Կույսը դյութել էր հայոց արքային,
Նա իր մոտ կանչեց իշխան Արգամին՝
Մուրացան երկրի նախարարին քաջ,
Իր սիրտը բացեց իշխանի առաջ
Եվ որպես դեսպան՝ հաջորդ առավոտ
Նրան ուղարկեց ալանների մոտ:
— Կգնաս,— ասաց,— իշխա՛ն իմ արի,
Եվ կհաղորդես իմ կամքը բարի.
Ալանների քաջ արքային կասես,
Որ խաղաղության ջատագով եմ ես,
Որ կյանք կբաշխեմ իր միակ որդուն
Եվ առոք–փառոք ետ կուղարկեմ տուն,
Եղբայր կդառնամ նրան այս պահից,
Եթե նա սիրով կնության տա ինձ
Սիրասուն դստերն իր գեղեցկատես,
Բարեկամության ձեռք եմ մեկնում ես,
Այնպես որ ոչ ոք չի մնա դժգոհ,
Նա իմ պալատում կդառնա դշխո,
Թշնամի էինք, կդառնանք ընկեր,
Կշենացնենք երկրները մեր…

3

Ալան արքայի մետաքս վրանում
Իշխան Արգամը զրույց էր անում.
— Ո՞վ ալանների տեր ու թագավոր,
Հավատա՛ դու ինձ, բանն այն է, որ
Իմ արքան քաջ է, ջահել է, հպարտ,
Մեր տերությունն էլ հզոր է, անպարտ,
Ձեզ համար բախտ է, որ եղավ այսպես,
Արտաշես արքան, համոզված եմ ես,
Կջնջեր իսպառ բանակները ձեր,
Եթե ձեր կույսին չսիրահարվեր…
Ես էլ զինվոր եմ և ուրախ եմ շատ,
Որ մարտադաշտի արյան համեմատ
Միշտ էլ հարգի է հարսնատան գինին,
Արքա՛, հաշտվեք, թող հարսանիք լինի…
Ալանաց արքան մի պահ մռայլվեց
Եվ քմծիծաղով պատասխան տվեց.
— Որտեղի՞ց պիտի Արտաշեսն արի
Հազար–հազարով ոսկիներ ճարի
Եվ բյուր ի բյուրաց քարեր–ակնեղեն,
Որ տա ալանաց կույսի փոխարեն:
Գնա՛, Արտաշես արքայիդ ասա՛,
Եթե ուզում է դառնալ իմ փեսան,
Թող տա ողջ գանձերն իր գանձարանի
Եվ քաջ ալանաց օրիորդին տանի…

4

Իշխան Արգամը ետ վերադարձավ՝
Սրտի մեջ ցասում ու զղջումի ցավ,
Եվ Արտաշեսից չծածկեց ոչինչ,
Ինչ որ լսել էր, պատմեց ամեն ինչ,
Ապա նա վերջում ժպտալով ասաց.
— Արքա՛, մոտիկից օրիորդին տեսա.
Իրոք չքնաղ է կույսն ալանների,

Հրաշք է, չունի ոչ մի բան թերի:
Եվ, որպեսզի դու այդ կույսին տիրես,
Ինչ էլ որ ուզեն, պիտի նվիրես…
— Բայց ոչ թե երկրիս ամբողջ գանձերը,
Ի՞նչ է, ցնդե՞լ է ալանաց տերը,—
Ասաց Արտաշեսն ու ոտքի ելավ,—
Եթե այդպես է, կտեսնեք, դե՛ լավ…

5

Գարնան երկինքը ամպեր է դիզում,
Վարարած Քուռը ափերն է լիզում,
Նրա այս ափին Արտաշես արքան
Դասավորում է զորքը հայկական,
Հպարտ նստել է իր սև նժույգին
Եվ հրաման է արձակում զորքին.
— Հայրենանվեր զինվորնե՛ր իմ քաջ,
Թշնամու զորքն է կանգնած մեր առաջ,
Մենք արդեն նրան ծունկի ենք բերել
Եվ որպես հաղթող՝ կարող ենք ներել,
Սակայն թշնամին մեր՝ խիստ կամակոր,
Ճակատամարտ է ցանկանում մի նոր,
Որը նա հաստատ երբեք չի շահի,
Բայց գիտակցաբար գնում է մահի,
Քանզի արքայի որդին մորեմեկ
Մեզ մոտ է այժմ, նրան գերել ենք:
Նորից կլինի արյուն ու նախճիր…
Բայց Ալան արքան ունի մի աղջիկ,
Ես ուզում էի նրան առնել կին
Եվ խաղաղություն հաստատել կրկին,
Բայց Ալան արքան չուզեց ինձ լսել,
Ես էլ չեմ ուզում երկար սպասել,
Ուստի՝ հարկ է, որ ուժով մեր բազկի
Պահենք պատիվն ու փառքը մեր ազգի…
Արքան իր խոսքը դեռ չէր ավարտել,
Երբ թշնամական բանակում արդեն

Զիլ դղրդացին գոռ թմբուկները.
Մարտի էր կոչում ալանաց տերը:
Արտաշես արքան լուռ նայեց նրանց,
Մի պահ տեսածից զարմացած մնաց.
Ալան արքայի դուստրը նրբիրան,
Հագած ու կապած կուռ զենք ու զրահ,
Նստած գեղեցիկ մի երիվարի,
Ասպետի նման հպարտ ու արի,
Քաջ ալաններին մարտի էր կոչում,
Քույրական հոգին վրեժ էր տենչում…

6

Քաջ Արտաշեսը հենց այդ իմացավ,
Իր սեգ Սևուկին իսկույն խթանեց,
Սրաթև արծվի նման գետն անցավ,
Թամբից շիկափոկ պարանը հանեց,
Նետեց ոսկեօղ պարանը թափով
Եվ գցեց մեջքը ալանաց դստեր,
Մինչև թպրտաց կույսը տագնապով,
Արտաշեսը քաջ իր գործը գիտեր.
Օրիորդի մեջքը շատ ցավեցնելով՝
Նրան առավ իր ձիու գավակը,
Նույն արագությամբ գետը անցնելով՝
Օրիորդին բերեց նա իր բանակը…

7

Երկու բանակներ՝ կանգնած իրար դեմ,
Վարարած Քուռն է մեջտեղով հոսում,
Ալանաց արքան չգիտի արդեն՝
Իր զավակներին ինչ է սպասում.
«Նոր պատերազմով ի՞նչ պիտի անեմ,—
Լուռ մտածում էր արքան վշտաբեկ,—
Նույնիսկ եթե ես հաղթանակ տանեմ,
Իմ զավակներին չեմ փրկի երբեք»:
Ապա նա կանչեց Փարսամանին ծեր՝

Իրեն դաշնակից վրաց արքային.
— Գնա՛,— ասաց նա,— հայտնի՛ր կամքը մեր
Այդ երիտասարդ դյուցազուն հային.
Որ ես՝ մեծ արքաս քաջ ալանների,
Պատրաստ եմ հաշտվել ու ետ գնալ տուն,
Եթե նա իր մոտ չպահի գերի
Իմ թագաժառանգ մինուճար որդուն
Եվ իմ դստերը՝ իմ Սաթենիկին,
Որի պատիվը միշտ թանկ եմ պահել,
Թող որ բռնությամբ նրան չառնի կին,
Հետը թող վարվի դյուցազնին վայել…

8

Փարսամանը երբ խոնարհ հաղորդեց
Ալան արքայի խնդրանքը նրան,
Արտաշեսն իսկույն հրաման տվեց,
Որ գերյալներին ներս բերեն վրան:
Չանցած քառորդ ժամ՝ նրանց ներս բերին,
Ծեր Փարսամանը շշմեց զարմանքից.
Նա դեռ չէր տեսել իր կյանքում՝ գերին
Որ արժանանար նման հարգանքի:
Ալան արքայի երկու զավակն էլ
Հագնված էին պերճ ու տոնական,
Որդին, որ երկար չէր կարող կանգնել,
— Թո՛ւյլ տվեք,— ասաց,— ես նստեմ, արքա՛:
Արտաշես արքան իսկույն պատվիրեց,
Որ նրանց շտապ մատուցեն բարձեր,
Վրանում մի պահ լռություն տիրեց,
Ապա նա դարձավ Փարսամանին ծեր.
— Լսի՛ր իմ կամքը, Փարսամա՛ն արքա,
Եվ այն հաղորդի՛ր Ալան արքային,
Եթե աշխարհում ազնիվ սրտեր կան,
Դրանցից մեկը քաջ սիրտն է հայի:
Հայը իր կյանքում չի նյութել դավեր
Եվ աչք չի տնկել ուրիշի հացին,

Երբեք չի սադրել ավար ու ավեր,
Այլ բաղձանք չունի կերտելուց բացի:
Ես այսօր սիրով ազատ կարձակեմ
Ալան արքայի մինուճար որդուն,
Եվ ձիակառքով, ինչպես որ հարգն է,
Ալան արքայի մոտ կտանես դու:
Եվ նրան կասես, որ Սաթենիկին
Ինձ մոտ եմ պահում ես ոչ թե գերի,
Այլ ուզում եմ, որ նա դառնա ինձ կին՝
Չքնաղ թագուհի՝ խիզախ հայերին:
Իսկ եթե կուզի արքան ալանաց
Հայրաբար օրհնել մեր միությունը,
Նրա առաջ միշտ իմ դռներն են բաց,
Մենք շատ ենք սիրում խաղաղությունը:
Մեր հարսանիքին, որպես դրացի՝
Քեզ էլ կկանչեմ, Փարսամա՛ն արքա,
Եղբայրներ են միշտ հայն ու վրացին,
Իրար չեն դավել դեռ ոչ մի անգամ:
Ծեր Փարսամանը գլուխ խոնարհեց՝
Ի նշան խորին գոհունակության,
Որպես պատվիրակ ու արքա տարեց՝
Նա պահանջեց, որ շտապ կառքը տան:
Կառքը տվեցին՝ շքեղ հարդարված,
Որ արքայորդին ապահով գնա,
Սաթենիկն եկավ եղբորը փարված՝
Եվ օգնեց նրան, որ կառք բարձրանա:
Ապա շշնջաց եղբոր ականջին.
— Դու մեր հայրիկին իմ կողմից կասես,
Որ երբ Արտաշեսն իրեն կկանչի,
Թող գա, չմերժի… Սպասում եմ ես…

9

Ալանաց արքան առավ զորքերն իր
Եվ փորուփոշման քաշվեց իր երկիր:
Իսկ հայոց զորքը, հաղթանակ տարած,

Հրաժեշտ տվեց Քուռին վարարած,
Ետ վերադարձավ փող ու թմբուկով,
Արտաշատ մտավ հաղթողի շուքով:
Բնակչությունը մայրաքաղաքի,
Ի պատիվ տարած մեր հաղթանակի՝
Փառքի մատուցման տոներ կատարեց
Եվ Արտաշեսին Մեծ հայտարարեց:
Երբ հաղթանակի տոներն ավարտվեց,
Արտաշես Մեծը հրաման տվեց,
Որ անմիջապես մայրաքաղաք գան
Հայոց տները նախարարական
Եվ մասնակցեն իր հարսանիքին
Եվ տեսնեն չքնաղ իր Սաթենիկին…

10

Իշխան Արգամը, նվերներ առած,
Անհապաղ մեկնեց երկիրն Ալանաց
Եվ ներկայացավ Ալան արքային
Ժողովրդական սովորույթով հին,
Ինչ որ տարել էր, սիրով նվիրեց,
Խոր գլուխ տվեց և հրավիրեց,
Որ նա Արտաշես արքային հյուր գա,
Որպես հարգարժան ծնող ու վկա՝
Մասնակից լինի հարսնահանդեսին,
Իր օրհնանքը տա հարսին ու փեսին:
Անակնկալ էր հրավերն այնքան,
Որ սաստիկ հուզվեց ալանաց արքան:
Ուրախությունից նախ լաց եղավ նա,
Ապա նախատեց իրեն անխնա…
Արգամ իշխանին հարգեց ու պատվեց
Եվ անմիջապես հրաման տվեց.
— Թամբե՛ք ձիերը, կառքերը լծե՛ք,
Մեզ հյուր է կանչում, այդ լա՛վ իմացեք,
Արտաշես արքան՝ վեհանձն ու բարի,
Դյուցազուն տերը Հայոց աշխարհի:

Նա ձեռք է մեկնում բարեկամության.
Ես այժմ նրան իմ կյանքն էլ կտամ,
Եվ Հայաստան եմ գնում այս անգամ՝
Արտաշես քաջին որպես բարեկամ…

✧ ✧ ✧

Հարսանիքը այնքան գերող,
Այնքան շռայլ է եղել,
Որ գուսանները երգելով՝
Այսպիսի ասք են թողել.

«Արտաշեսի հարսանիքին
Ոսկի անձրև էր մաղում,
Ի հարսնության Սաթենիկի
Մարգարիտներ էր տեղում…»:

ԶՈՐԱՎԱՐ ՖԻԴԱՅԻՆ

(Նվիրում եմ Անդրանիկ զորավարի ծննդյան 125–ամյակին)

1

Վառվում էր հողը Հայոց աշխարհի՝
Թուրք ասկյարների ոտքերի կոխան,
Հայը հերկվոր էր, հնձվոր էր բարի,
Թուրքը հայ երկրում սուլթան էր ու խան:

Հայը իր հողը վարում էր, ցանում,
Աճեցնում ցորեն ու պահում տավար,
Թուրքը գալիս էր, սրբում ու տանում,
Սուլթանի խարջը հայը պիտի տար:

Իսկ եթե չտար, կփտեր բանտում,
Քանզի կդիտվեր նա օրինազանց
Չէ՞ որ օրենքով միշտ թուրքն էր դատում,
Հայն համարվում էր իրավազուրկ անձ:

Քարը՝ գլուխը, խարջը թող տաներ,
Հայն աշխատող էր, խարջը կտար միշտ,
Բայց թուրքը հաճախ այնպես բան կաներ,
Որ հայի հոգում կմնար խոր վիշտ:

Օրինակ, հայը արդեն քանի դար
Գրքեր էր գրում՝ իմաստուն, բարի,
Կերտում էր շքեղ վանքեր ու տաճար,
Որ լուսավորեր միտքը աշխարհի:

Նա ադամորդուն տալիս էր դասեր,
Որ իր նմանին նա չհոշոտեր,

Դառնար իմաստուն, կիրթ ու մարդասեր,
Հակաբանական ոչ մի բան չաներ:

Իսկ թուրքը եկել տիրել էր նրան
Վայրենի ուժով իր անմարդկային,
Իրեն պահում էր խուժանի նման
Եվ անհավատ էր հորջորջում հային:

Եվ դա այն դեպքում, երբ ինքը՝ թուրքը,
Առաջնորդվում էր դեռ կրքերով մութ,
Նրա հավատը խարջն էր ու տուրքը,
Կրծքում ո՛չ սիրտ կար, ո՛չ խիղճ, ո՛չ էլ գութ:

Աշխարհում ոչինչ լավ բան չէր արել,
Լավի նկատմամբ միշտ եղել էր չար,
Ուիշի լավը թալանել, տարել,
Անվերջ այրել էր, ջնջել անպատճառ…

Թուրքի թալանը չափ չէր ճանաչում,
Հայն արդեն տեր չէր իր վաստակածին,
Սուլթանը անվերջ խարջ էր պահանջում,
Եվ հայը արդեն զրկվել էր հացից:

Մի օր էլ հայը, համբերանքն հատած,
Ցանկացավ պոկել լուծը իր վզի,
Վրեժի, ցասման մի երգ մռլտաց.
— Դե զարթնի՛ր, լառ՛, ես մեռնիմ քրզի…

Հայն իր զավակին խրատ էր երգում,
Կյանքն էր այդ երգը հային ներշնչել,
Քանզի սուլթանը խաբում էր, նենգում,
Ուզում էր հային աշխարհից ջնջել…

Երգը դղրդաց հայոց լեռներում,
Դա մի պարզ երգ էր, հույժ վրեժի կանչ.

Ամեն հայ կտրիճ զենք էր ձեռք բերում
Եվ բարձրանում լեռները կանաչ…

Ու շուտով թնդաց համբավը հայի.
Նա էլ առաջվա անքեն հայը չէր,
Նա հռչակել էր իրեն ֆիդայի[1]
Եվ ամուր կանգնել ճնշվածներին տեր:

Շուտով, շատ շուտով սեգ սարերը մեր
Ունեցան իրենց ֆիդայիները,
Մեկի տերն արդեն քաջ Արաբոն էր,
Երբ Կարոն դարձավ մյուսի տերը:

Աղբյուր Սերոբն էլ իր սարն ունեցավ,
Գևորգ Չաուշը նրան հետևեց,
Կորյունն էլ շուտով սարի տեր դարձավ.
Դրանից հետո երկար չտևեց.

Նոր ֆիդայիներ անուն հանեցին՝
Կայծակ Անդրեասը և Արծիվ Պետոն,
Սմբուլ Արշակն ու Շավարշ Բասենցին,
Հաջի Գևոն ու Մշեցի Սեյդոն:

Լավ անուն ուներ և Հաջի Լոլոն,
Պակաս անուն չէր Սարգիս Ճեպեճին,
Թուրք ասկյարների սարսափն էր Չոլոն,
Շատ լավ գիտեին նաև Տեր–Քաջին…

Ֆիդայիները աստիճանաբար
Կարող ուժ դարձան հայոց լեռներում,
Սուլթանի և իր չար մարդկանց համար
Նրանց անունն իսկ սարսափ էր բերում:

---

1. Ֆիդայի — արաբերեն՝ անձնազոհ մահապարտ:

Սուլթանն սկզբում պատժել ցանկացավ,
Զորք ու թնդանոթ նրանց դեմ շարժեց,
Բայց նրա ջանքերն ապարդյուն անցան.
Մի քաջ ֆիդային մի բանակ արժեր…

Բայց երբ նա զգաց, որ քաջ ֆիդային
Աննվաճելի զինվոր է մի քաջ,
Սկսեց կիրառել միջոցներն իր հին,
Դավադրաբար գնաց ընդառաջ:

Եվ հրամայեց ի լուր աշխարհի՝
Ոսկի ու պաշտոն խոստացավ ձեռաց՝
Նրանց, ովքեր որ գեթ մի ֆիդայի
Իր ձեռքը կտան ողջ–ողջ կամ մեռած:

Դավադրության պարարտ հողը կար,
Հունդն էր պակասում, այն էլ սերմանվեց,
Սկսեց գործել որոգայթը չար,
Դավն իր առաջին պտուղը տվեց.

Աղբյուր Սերոբը լեռները իջել
Եվ ձմեռում էր Տեր–Քաջի տանը,
Իսկ Ռես Ավեն, որը մատնիչ էր,
Թուրք ոստիկանին հասցրեց բանը…

Ոստիկանապետ Հուսեին աղան,
Որը իր զորքով նստում էր Մուշում,
Սկսեց դավադիր մի չար խաղ խաղալ,
Քանզի Սերոբին նա լավ էր հիշում.

Մի քանի անգամ հետապնդելով՝
Աղբյուր Սերոբին ծուղակ էր գցել,
Բայց ամեն անգամ, մեծ զոհեր տալով,
Հուսեինն ինքը հազիվ էր պրծել:

Եվ Հուսեինը չգտավ հարմար
Դուրս գալ նրա դեմ ճակատ առ ճակատ,
Չէ՞ որ այս անգամ գուցե իր համար
Այս հանդիպումը վերջանար շատ վատ:

Դա նրան պետք էր, որ արծիվ հային
Մի այլ հնարքով երկնից բերեր ցած,
Ուստի նա դիմեց Խալիլ աղային՝
Քուրդ ցեղապետին մուսուլմանացած:

Այս Խալիլ աղան, ընդդեմ հայերի՝
Թուրքերից վարձված մի չարագործ էր,
Սաստիկ ատում էր ֆիդայիներին,
Չի նրանց վախից չէր կարող գործել:

Երբ Խալիլ աղան լսեց, իմացավ,
Որ հարկավոր է Սերոբին զարկել,
Ժամանակ խնդրեց ու գործի անցավ,
Գիշեր ու ցերեկ գործեց անարգել.

Նա նախ իմացավ, որ Ռես Ավեն
Աղբյուր Սերոբին միշտ հաց էր տանում,
Խալիլի համար այդքանը բավ էր,
Որ նա մտածեր, թե ի՞նչ է անում:

Եվ նա մտածեց, միջոցը գտավ,
Որոշեց ոսկով Ավեին «առնել».
— Ավե՛,— ասաց նա,— շատ ոսկի կտամ,
Թե դու Սերոբի հացին թույն խառնես:

Ու ստորաբար Ավեն հանձն առավ.
Նա միշտ Սերոբին գնում էր այցի,
Ուստի, երբ Ավեն ուտելիք տարավ,
Սերոբը կերավ առանց կասկածի:

Տեր–Քաջի տանից Ավեն հեռացավ,
Երբ որ Սերոբը ընթրել էր արդեն,
Խալիլն այդ բանը իսկույն իմացավ,
Զինվորներ կանչեց, որ դավն ավարտեն:

Երբ լույսը բացվեց առավոտյան վաղ,
Շրջապատված էր Տեր–Քաջի տունը,
Սերոբը զենքի դիմեց, բայց, ավաղ,
Արդեն գործել էր մահաբեր թույնը:

Դավն զգաց մի պահ, աչքերը փակեց,
Քաջի մարմինը դարձել էր դողդոջ,
Մռնչաց, ապա գնդակ արձակեց.
— Ստորնե՛ր,— գոռաց,— ինձ չեք բռնի ողջ:

Սակայն իզուր էր ճիգեր լարում նա,
Նրա աչքերում արդեն լույս չկար,
Մի գնդակ եկավ, շանթեց անխնա
Ու ցած տապալեց մարմինը տկար:

Թուրք ասկյարները՝ հանց շնագայլեր,
Թաքստոցներից թափվեցին վրան,
Իսկ նենգ Խալիլի նպատակն այլ էր,
Քաջի գլուխն էր հարկավոր նրան:

Որպեսզի Խալիլն իր ոխը հաներ,
Ինքն էլ էր եկել դարանել թաքուն,
Քաջի գլուխը նա պիտի տաներ
Ու ցուցադրեր Բաղեշ քաղաքում:

Նա ուզում էր, որ բոլորն իմանան,
Թե իր՝ Խալիլի արածն արած է,
Քանզի դրանով ցանկանում էր նա
Հայերի սրտերում սարսափ տարածել:

Լուրն, իհարկե, իսկույն տարածվեց՝
Քաջի գլուխը տարվել էր գերի,
Խալիլի համար ասպարեզ բացվեց
Անարգել գործել՝ ընդդեմ հայերի…

2

Գարունը բացվեց ամեն տարվա պես,
Բայց լեռներն հայոց սուգի մեջ էին,
Արդեն ամեն ոք դիտվում էր լրտես,
Թվում էր՝ հայերն էլ հայեր չէին:

Թվում էր՝ չկա էլ ազնիվ հավատ,
Ամենքն են կյանքում դավից անբաժան,
Ամենքն են ստոր, ընչաքաղց ու վատ
Ինչպես, օրինակ, Ավեն դավաճան:

Ավեն սկսել էր բացահայտ գործել,
Պատրաստ էր փոխել և դավանանքը,
Խալիլ աղայից ոսկի էր կորզել
Եվ ապահովել իր ստոր կյանքը:

Թուրք Ալի փաշան, Բաղեշում նստած,
Սատար էր կանգնում նրանց գարշ կյանքին,
Որ նրանք գործեն ավելի վստահ
Եվ ծունկի բերեն հայոց քաջ ոգին…

Իրոք կասկած կար ամենքի սրտում,
Ֆիդայիներն էլ խեղճացան մի պահ,
Թափառում էին շվար ու տրտում՝
Խիզախ սրտերում վարանում ու ահ:

Բայց նրանց մեջ կար խելացի մի այր,
Լայնաթիկունք էր ու լայնաճակատ,

Խոսում էր հանգիստ, զուսպ ու հեզաբար,
Խոսելիս բառերն ասում էր հատ–հատ.

Անվանում էին նրան Անդրանիկ,
Նա ակամա էր դարձել ֆիդայի,
Առաջ նա ուներ արհեստ, ընտանիք,
Բայց արդ, կիսում էր չար բախտը հայի:

Ֆիդայիները խոսեցին երկար,
Տնտղեցին բոլոր դեպքերը մեկ–մեկ,
Վերջում բոլորն էլ համոզման եկան,
Որ կյանքն այսքան վատ չի եղել երբեք:

Անդրանիկը լուռ լսում էր նրանց,
Թվում էր, թե նա շատ է անտարբեր,
Բայց հանկարծ կանգնեց, զենքը վերցրած,
— Ամեն ինչ պարզ է,— ասաց,— տղանե՛ր:

Թե չարագործը իրոք չստանա
Իր գործած մեղքին պատիժ արժանի,
Նա է՛լ ավելի կլկտիանա
Եվ ավելի մեծ չարիքներ կանի:

Դավաճան Ավեն չպիտի շնչի
Սասնա լեռների անապակ օդը,
Ֆիդային նորից ազատ կշրջի,
Երբ երկրից ջնջվի Ավեի հոտը:

Իսկ պահնորդապետ Հուսեինը չար
Կամ թե Բաղեշի նենգ փաշա Ալին
Շատ շուտով պիտի տեսնեն անպատճառ
Կտրած գլուխը Բաղրե Խալիլի:

— Անդրանի՛կ,— ասաց Գևորգ Չաուշը,—
Մենակ մի՛ գնա, ինձ էլ հետդ տար,

Պետք է մեկտեղենք այսօր մեր ուժը,
Թե չէ, չենք հաղթի մեր ոսոխին չար,—

Ասաց Չաուշը և ոտքի ելավ,
Ֆիդայիները ճիշտ համարեցին…
— Եթե ուզում ես, ե՛կ ինձ հետ, դե՛ լավ,—
Անդրանիկն ասաց ու հեծավ իր ձին:

Չաուշն իսկույն, ընդունված կարգով,
Իր ձիուն ցատկեց անխոս ու թեթև
Ու Անդրանիկին հետևեց վարգով,
Եվ նրանք անցան լեռների ետև…

3

Բռնաշեն գյուղի խորխորատ կիրճով
Անցնում էր քարոտ ճանապարհ մի նեղ,
Գետն էր գալարվում այդ կիրճի միջով
Եվ շուրջը լցնում շառաչով ահեղ:

Այդ ահեղագոչ գետը հոսում է
Քարաժայռերի մոտով ահավոր,
Որոնց ետևում լուռ սպասում են
Դարանակալած երկու ձիավոր:

Շուտով աղմկոտ կիրճի աջ թևից
Մի խումբ զինավառ մարդիկ մոտեցան,
Խալիլն էր գնում նրանց առջևից,
Հանկարծ ճայթեցին երկու հրացան:

Խմբից երկու մարդ ընկան ձիերից,
Դես ու դեն փախան ձիերը խրտնած,
Զույգ հրացանը պայթեցին նորից,
Խալիլի խմբում լոկ մի մարդ մնաց,

Որն իր զենքը շպրտեց ձեռքից,
Երկու ձեռքերը պարզած վերևում՝
Սկսեց գութ հայցել անծանոթներից,
Որոնք դեռևս չէին երևում:

Խալիլն իսկույն ճողոպրեց ետ,
Բայց չհասցրեց, ձիուն խփեցին,
Նա ահաբեկված նետվեց դեպի գետ,
Սակայն նույն պահին նրան բռնեցին:

Բռնած բերեցին նաև այն մեկին,
Որը ծնկաչոք գութ էր հայցում դեռ,
Շուտով պարզվեց, որ այդ ստոր հոգին
Հայերին ատող մի թուրք պահնորդ էր:

Խալիլը անձամբ Չաուշին գիտեր,
Իսկ Անդրանիկին լավ չէր ճանաչում,
Դրա համար էլ ընկած ոտ ու ձեռ՝
Նա Չաուշին էր անվերջ աղաչում.

— Չաու՛շ աղա ջան, ինչ ուզես, կտամ,
Բան չեմ խնայի քաջիդ համար ես,
Շատ եմ աղաչում, եթե ինձ գթաս,
Կանխիկ հինգ հարյուր ոսկի կտամ քեզ:

— Մեր մեծը նա է,— Չաուշը խոսեց՝
Գլխով ցույց տալով նա Անդրանիկին,—
Խալի՛լ, եթե դու նրա հետ խոսես,
Թողություն կտա նա քո պիղծ մեղքին…

Խալիլի սիրտը սկսեց մարել,
Ֆիդայիներին լավ էր ճանաչում,
Մանավանդ զգաց՝ ինչի՞ համար են
Նրանք իրենից «հաշիվ» պահանջում:

Թուրք ոստիկանի գույնը թռել էր,
Նա էլ հույս չուներ ապրելու մասին,
Վախից աչքերը սաստիկ չռել էր,
Լուռ սպասում էր իր պիղծ օրհասին:

Անդրանիկն ասաց նրան այդ պահին.
— Կյանքդ կբաշխեմ, խոստանում եմ ես,
Եթե գլխատես Խալիլ աղային
Եվ այդ գլուխը քո պետին տանես

Ու նրան պատմես տեսածիդ մասին,
Սակայն կպատմես խիստ ճշմարտորեն,
Որ նա հետևի մեր տված դասին,
Այլևս ոճիր չգործի նորեն…

Խալիլը նորից ողբաց ու խնդրեց,
Ծնկներին ընկած՝ աղաչեց երկար,
Բայց Անդրանիկը վերջակետ դրեց,
Էլ սպասելու ժամանակ չկար.

Գլխի շարժումով նա նշան տվեց.
Չաուշի զենքը թնդաց որոտով,
Խալիլը անշունչ գետին տապալվեց,
Անդրանիկը դին շուռ տվեց ոտով:

Թուրքը Խալիլի գլուխը կտրեց,
Մազերից բռնած խցկեց պարկի մեջ,
Պարկը վախվորած իր ձիուն դրեց,
Հապշտապ հեծավ ու քշեց Բաղեշ,—

— Դե՛, հիմա գնանք,— Անդրանիկն ասավ,—
Ռես Ավեի դատաստանն անենք,
Ֆիդայիներիս հոգու պարտքն է սա՝
Պիտի Սերոբի վրեժը հանենք:

Երեկո չեղած՝ նրանք հասան գյուղ,
Բռնաշեն գյուղը միշտ մարդաշատ է,
Կանչեցին, Ավեն եկավ աներկյուղ,
— Ավե՛,— ասացին,— քեզ պիտի դատենք.

— Իրավունք չունեք,— Ավեն հոխորտաց,—
Ես կբողոքեմ Հուսեին աղին…
Բայց Անդրանիկի զենքը որոտաց,
Ու Ավեն անշունչ թավալվեց հողին:

Վրիժառուներն հեռացան գյուղից,
Նրանց արարքը հանեց մեծ աղմուկ,
Չարամիտները նրանց երկյուղից
Սողունների պես մտան ծակուծուկ:

Ֆիդայիները բռունցք կազմեցին,
Համախմբվեցին Անդրանիկի շուրջ,
Թուրք փաշաները ահաբեկվեցին,
Դա նրանց համար պատուհաս էր լուրջ:

Եվ Ալի փաշան պատժել ցանկացավ
Անդրանիկի քաջ խմբին փոքրաթիվ,
Սակայն շուտով նա ընդմիշտ հասկացավ,
Որ դա իր զորքին չի բերում պատիվ:

Քանզի ամեն մի նման ընդհարում
Խլում էր անթիվ ասկյարների կյանք,
Անընկճելի էր ասես լեռներում
Ֆիդայիների խումբը միակամք:

4

Խորը աշուն էր, լեռներում նորից
Ցմռան ցրտերը անխուսափ դարձան,
Ֆիդայիները իջան լեռներից
Եվ Առաքելոց վանքում կանգ առան,

Որ հետո գնան գյուղերը մտնեն,
Եվ հայ գեղջուկի տանը հյուրասեր
Ամբողջ ձմռանը ապաստան գտնեն
Եվ գարնանն էլի բարձրանան լեռներ…

Բայց մատնել էին… Ու փաշա Ալին
Բաղեշ քաղաքից մեծ զորք էր բերել,
Առաքելոց վանքն առել շուրջկալի,
Ֆիդայիներին ուզում էր գերել:

Սակայն շատ շուտով համոզվեց փաշան,
Որ վանքում նստած մի քանի հոգին
Կարող են վարվել իր հետ շատ դաժան,
Կարող են ջնջել իր ամբողջ զորքին:

Եվ բանագնաց ուղարկեց Ալին,
Ֆիդայիներին ցանկացավ խաբել.
Ասաց՝ վերջ կտա ինքը շուրջկալին,
Քանզի չի ուզում զուր արյուն թափել:

Ասաց, եթե գան զենքը դնեն ցած
Եվ մեծ Սուլթանից հայցեն գթություն,
Խոսք է տալիս, որ Սուլթանը նրանց
Պաշտոններ կտա, նաև տեղ ու տուն…

— Մենք չենք հավատում խոսքին Սուլթանի,—
Անդրանիկն իսկույն տվեց պատասխան,—
Մենք կապավինենք մեր հրացանին,
Քանի մեր երկրում կան սուլթան ու խան…

Հաջորդ օրն Ալին թնդանոթ բերեց,
Որ Առաքելոց վանքը կործանի,
Սուլթանի առաջ մնա պարզերես,
Ֆիդայիներից իր ոխը հանի:

Բայց իզուր էին նրա ջանքերը,
Ֆիդայիները արդեն չկային,
Նրանք առնելով իրենց զենքերը՝
Գնացել էին, որ հետո գային…

Ու եկան նրանք՝ մի նոր թափ առած,
Մարտեր տվեցին ողջ Հայաստանում,
Եվ սուլթանատի սարսափը դարձավ
Մի հերոսական Անդրանիկ անուն:

Եվ արյունախում սուլթանը այն նեռ
Հրաման տվեց իր բարակներին,
Որ հազար ոսկի կտա նա առձեռն,
Ով Անդրանիկի գլուխը բերի:

Քաջի գլուխը գնահատված էր,
Նա հալածված էր որսի շներից,
Շուտով տապալվեց նենգ սուլթանը ծեր
Ոչ պակաս խարդախ թուրք թուլաներից,

Որոնք բազմելով սուլթանի գահին՝
Մարդկանց խոստացան ապագա մի մեծ,
Բայց Անդրանիկը հենց այդ նույն պահին
Նրանց խոստումին հավատ չընծայեց.

— Թուրքը,— ասաց նա,— միշտ թուրք է մնում,
Շատ դարեր են պետք, որ նա դառնա կիրթ,
Նրանց այնպիսի մայրեր են ծնում,
Որոնք հարեմի հարճեր են անսիրտ:

Նրանցից ծնված զավակներն անշուշտ
Գայլի ձագեր են՝ արնաշուրթ ու գող,
Չար վախկոտներ են, ագահ ու անկուշտ,
Հարազատ քրոջ առագաստ պղծող:

Քանի դեռ նրանք այս երկրի վրա
Սփռում են իրենց բարքերն ապական,
Ես պիտի այրեմ արմատը նրանց,
Քանի ապրում եմ ու քանի դեռ կամ…

Ապա իմացավ, որ Բալկաններում
Թուրքերը նորից յաթաղանը սրբած՝
Ազնիվ ազգերին մորթում են, գերում,
Անցավ Բուլղարիա, միացավ նրանց:

Կռվեց քաջի պես, վաստակեց անուն,
Նրան սկսեցին սիրել ու հարգել,
Շուտով լսեց, որ Մայր Հայաստանում
Թուրքերը նորից եղեռն են սարքել:

Ահավոր վշտի ցասումը հոգում՝
Նա արծվի նման թռավ դեպի տուն,
Բայց, ավա՜ղ, տեսավ իր հայրենիքում
Ո՛չ հայ կար արդեն, ո՛չ էլ՝ հայություն:

Իսկ Հայաստանի ռուսական մասում
Կտրիճներ կային՝ սրտոտ ու արի,
Որոնց հոգում կար վրեժի ցասում,
Եվ ուզում էին ելնել պայքարի:

Ու նրանք ելան կամավորաբար
Գնդեր կազմեցին զենքերով արդի,
Քաջ Անդրանիկը դարձավ զորավար,
Թև տվեց նրանց ու տարավ մարտի:

Հայոց գնդերի հուժկու զարկերից
Թուրքերը փախան սարսափ ու ահով
Հայոց աշխարհը՝ բուժված վերքերից,
Հող պիտի հերկեր նորից ապահով:

Բայց, ավա՜ղ, կյանքը նորից խաթարվեց,
Բախտը մեզ լքեց նաև այս անգամ,
Մարդկության համար չարիք կատարվեց.
Թուրքերը դարձան «հեղափոխական»:

Հեղափոխական, բայց ոչ իսկական,
Նրանց պետք էր, որ խաբեին դարձյալ,
Ու լավ խաբեցին, դեռ փաստերը կան,
Նրանք հայ երկրին շուտով տեր դարձան:

Եվ Անդրանիկը, խռոված բախտից,
Թողած հայրենի երկիրն ու տունը,
Գնաց, որ փրկի աշխարհի ախտից
Գեթ հերոսական իր քաջ անունը:

Գնաց շաղ տվեց հողագնդով մեկ
Որպես ազնիվ հունդ՝ անունը հայի,
Որ հայի հույսը չմարի երբեք,
Եվ ապրի որպես ազնիվ ֆիդայի:

Տարիներ անցան, և այդ հունդերը
Ծիլեր տվեցին ողջ հողագնդում,
Եվ այդ հունդերի իմաստուն տերը
Մտքի լույսով է արմատներ նետում:

Նա իր հանճարի ճառագած փայլով
Ապացուցում է արար աշխարհին,
Որ հայն այսօր էլ իր ամեն քայլով
Հերքում է չարը՝ գործելով բարիք:

Նա մտքի լույսով իր ամենակար
Այսօր գերհզոր լազերը սանձել
Եվ շաղ է տալիս աշխարհում արար
Մարդուն փրկելու լուսեղեն գանձեր…

ՀԵԼԻԿՈՆԻ ԴՈՒՍՏՐԵՐՆ ՈՒ ԵՍ

Պատանության տարիներիս,
Երբ Էրատոն ինձ ճանաչեց,
Դրախտային փերի էր նա,
Իսկ ես՝ կոպիտ մի հողածին,
Նա սկզբում գերեց հոգիս,
Ապա անշեջ հուր պահանջեց,
Ու ես նրա կամքին հլու՝
Դեպի աստղերը սուրացի…

Բայց Մնեմեն՝ քույրը նրա,
Հենց սկզբից ինձ հավանեց,
Ուստի եկավ ինձ հետ երկինք
Եվ դարձավ ինձ հովանավոր:
Հետևում էր ամեն քայլիս,
Այստեղ էր, որ բախտս բերեց՝
Նա ձգտում էր, որ աշխարհում
Ինձ դարձնի հռչակավոր:

Սակայն, երբ ես հասակ առա,
Նա իր քրոջն ինձ նվիրեց՝
Լուրջ ու խոհուն Մելետեին,
Որին այնքան ես սիրեցի:
Որ սեգ դուստրը Հելիկոնի[1]
Սերս հարգեց ու ինձ սիրեց,
Ես էլ կյանքս ամբողջովին
Սրտանց նրան նվիրեցի:

Ու տարիք են գալիս–գնում,
Ես անցնում եմ մեծերի շարք,

Քույր Մնեմեն արդեն մեկ–մեկ
Չար կատակ է անում ինձ հետ…
Մելետեն իմ հավատարիմ
Ինձ բերում է պատիվ ու փառք,
Իսկ Էրատոն… Ստիպում է,
Որ աստղերում մնամ հավետ…

1. Հելիկոնի դուստրեր — Առասպելական մուսաներ՝ Էրատո (սեր), Մելետե (խոհ), Մնեմե (հիշողություն):

ԴԻՈԳԵՆԵՍՆ ՈՒ ԱՐՔԱՆ

Նա մարդ էր, ապրում էր տակառում,
Իմաստասեր էր նա մեծանուն,
Նա աշխարհին հոգս չէր պատճառում
Եվ աշխարհի հոգսը չէր տանում:
Կամքը ազատ էր, հոգին՝ բարի,
Դիոգենես անուն ուներ նա,
Ընչաքաղցներին այս աշխարհի
Իր վարքով ծաղրում էր անխնա:
Մի անգամ, երբ նրան այցելեց
Իր դարի արքան ամենակար՝
Ալեքսանդր Մեծը և հարց տվեց.
— Ի՞նչ կուզես, որ անեմ քեզ համար…
Գիտե՞ք, թե նա ինչ պատասխանեց
Հզոր տիրակալին՝ որպես դաս.
— Մի կո՛ղմ կանգնիր, եթե կարող ես,
Թող արևի շողն ընկնի վրաս…
Տիրակալն ինքն էլ իմաստուն էր,
Ուստի, խորհելով, ասաց այսպես.
— Թե կոչումս արքա չլիներ,
Կուզեի այս մարդը լինել ես…

✧ ✧ ✧

Այսպես է բանը, ի՛մ բարեկամ,
Համազոր է կյանքում վերն ու վարը.
Զույգ նժարներ են Կան և Չկան,
Անխաբ կշեռք է այս աշխարհը…

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱԿԱՃԱՌԸ

Ասուրական զորքը մեծ՝
Ասպատակող ու վայրի,
Հանկարծակի ներխուժեց
Սահմանները Նաիրի:

Երբ Բդեշխը Նաիրյան
Զորքով ելավ նրա դեմ,
Էլ հույս չկար փրկության,
Պաշարված էր բերդն արդեն:

Բայց բռնկվեց անհապաղ
Ճակատամարտը դաժան,
Եվ Նաիրյան զորքն, ավա՜ղ,
Նվազում էր ժամ առ ժամ:

Մարտը տևեց յոթը օր,
Ու երբ ընկավ բերդն ամուր,
Չէր մնացել մի զինվոր,
Որ մայր երկրին տաներ լուր:

Ծեր Բդեշխը փրկվեց լոկ
Տղայի հետ իր ջահել,
Որին հայրը նախօրոք
Թաքստոցում էր պահել:

Իսկ երբ եղավ իրիկուն,
Ստվերները թանձրացան,
Հայր ու որդի խիստ թաքուն
Բերդը թողին հեռացան:

Փախչում էին հալածված՝
Լուռ նայելով աջ ու ձախ,
Ամեն մեկը շալակած
Պարենով լի մի մախաղ:

Քայլում էին սարն ի վեր
Գաղտագողի ու անձայն,
Քանզի ոսոխն հսկում էր
Ամեն ուղի ու կածան:

Նրանք պետք է օր առաջ
Արքային լուր տանեին,
Որ արքան գար ընդառաջ,
Թշնամուն դուրս վանեին:

Գնում էին: Նրանց դեմ
Չոր տափաստան էր անծայր,
Խորը աշուն էր արդեն,
Շրջակայքում ջուր չկար:

Քայլում էին հոգնատանջ,
Պաշարն էլ էր վերջացել,
Իսկ Բդեշխը ժամ առաջ
Արդեն անզոր էր դարձել:

Ջահել որդին նրան լուռ
Քարշ էր տալիս շալակած՝
Երազելով մի կում ջուր
Եվ մի պատառ ցամաք հաց:

Շուտով նրանք հոգնաբեկ
Մի ձորակում իջան վար,
Որի կանաչ լանջով մեկ
Փռվել էր որթը դալար:

Որթը թովում էր անուշ
Ողկույզների իր հոտով,
Ճամփորդները մեր անուժ
Վրա պրծան կարոտով.

Երբ որ քաղցը հագեցրին
Ու մի քիչ էլ շունչ առան,
Մախաղները լիք լցրին
Ողկույզներով հյութառատ:

Քաղցր բեռը շալակած՝
Նրանք ընկան ճանապարհ,
Թեև չկար ջուր ու հաց,
Բայց սնունդը արդեն կար:

Եվ որպեսզի այն բավեր,
Ուտում էին չափավոր,
Սկզբում դա շատ լավ էր,
Բայց երբ անցավ տասը օր,

Քաղցր բեռը մախաղի
Տրորվելով ջուր դարձավ,
Փոխվեց համը խաղողի,
Անսովոր հոտ ստացավ:

Եվ սիրտ չարին խմել այն
Հայր ու որդի երեք օր,
Քաղցն ու ծարավը սակայն
Տանջում էին ահավոր:

Նրանք մի տեղ կանգ առան,
Էլ շարժվելու ուժ չկար,
Քաղցած էին ու ծարավ,
Իսկ մախաղում «սնունդ» կար:

— Պետք է փորձել վերջապես,—
Ասաց հայրը հուսաբեկ,—
Տո՛ւր, մի գավաթ փորձեմ ես.
Մեկ է՝ ուրիշ ճար չունենք:

— Այո՛, չկա ուրիշ ճար,—
Ասաց որդին մտազբաղ,—
Պետք է փորձել անպատճառ,
Բայց ես պիտի փորձեմ նախ…

— Ո՛չ, զավա՛կս, դու ճիշտ չես,—
Ասաց բդեշխը որդուն,—
Պիտի անենք մենք այնպես,
Որ մեզնից ողջ մնաս դու:

Դու ջահել ես, կտոկաս,
Լուրը պիտի դու տանես,
Ինձ մեծ բախտ է, որ դու կաս…
Ուստի պիտի փորձեմ ես:

Ասավ, գավաթը վերցրեց
Հայր բդեշխը ալևոր,
Բերնեբերան լիք լցրեց
Գորշ հեղուկով անսովոր,

Ապա դարձավ իր որդուն,
Լի գավաթը պարզեց վեր,
Ինչպես զինվորը մարտում
Ասաց խրոխտ, անվեհեր.

— Դե՛, զավա՛կս, ողջ մնաս,
Ես խմում եմ հանուն քեզ,
Որ լինես միշտ անվնաս
Եվ լուրը տեղ հասցնես:

Ասաց, խմեց մինչ հատակ,
Ներսը հանկարծ տաքացավ,
Նոր ուժ զգաց կրծքի տակ,
Հոգնածությունը անցավ:

Ու երբ անցավ մի կես ժամ,
Եվ ծեր հայրը զգաց, որ
Այդ հեղուկը դառնահամ
Կենսահյութ է կարևոր,

— Խմի՛ր, որդի՛ս,— ասաց նա,—
Մի գավաթ էլ խմիր դո՛ւ,
Խմողը ուժ կստանա,
Այն զորավիգ է մարդուն:

Ապա լիքը լցրեցին
Գավաթները երկուսով,
Ուրախ իրար զարկեցին՝
Ապագայի վառ հույսով.

— Քո կենացը, ողջ մնաս,—
Ասին մեկը մյուսին,—
Թող կենսատու հեղուկն այս
Սատար դառնա մեր հույսին…

Եվ քայլեցին անվեհեր,
Հյութը եռանդ էր դարձել…
Չգիտեին նրանք դեռ,
Որ գինի են գործածել…

ՀԱՅՈՑ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Երկնէր երկինք,
Երկնէր երկիր —
Հայոց ազգն էր աշխարհ գալիս,
Տրվեց նրան ճակատագիր՝
Փառավոր, բայց տառապալից:
Նա որպեսզի գոյատևեր,
Պիտի պաշտեր հող ու գութան,
Պիտի դասեր ամենից վեր
Ծխանի ծուխն հայրենի տան:

Երկնէր երկինք,
Երկնէր երկիր —
Արարում էր հայը ցորեն՝
Շրջապատված բախտախնդիր
Ցեղերով բիրտ ու անօրեն,
Որոնք թեև վայրի ու գայլ,
Բայց ունեին արդեն կացին,
Ձգտում էին դարանակալ
Տիրել հայոց արդար հացին:

Երկնէր երկինք,
Երկնէր երկիր —
Հայը գինի էր արարում,
Փառաբանում տքնանքը իր
Սուրբ տոների երգ ու պարում:
Դավանելով աշխատանքին՝
Ընթանում էր դարերն ի վեր,
Նոր իմաստ էր տալիս կյանքին,
Կյանքից առնում մտքի թևեր:

Երկնէր երկինք,
Երկնէր երկիր —
Գաղտնիքներ էր հայը բացում,
Որպես մտքի վեհ ջահակիր՝
Բարու սերմեր էր տարածում:
Լույս երկունքի այդ վեհ պահին,
Չունենալով միտք ու տաղանդ,
Ուզում էին ջնջել հային
Ցեղերը՝ պիղծ ու չարաղանդ:

Երկնէր երկինք,
Երկնէր երկիր —
Լույս էր ծնվում հայի հոգում,
Իր պատմությունը սեպագիր
Նա ժայռերին էր քանդակում.
Հետո պիտի տքներ համառ,
Սրբագործեր լեզուն իր պերճ,
Երկներ գիրը մեսրոպատառ,
Որ հայ հոգին մնար անշեջ:

Երկնէր երկինք,
Երկնէր երկիր —
Հայն է կռվում ընդդեմ չարի,
Արարելն է սուրբ զենքը իր,
Որը հիմքն է և աշխարհի:
Ու քանի որ աշխարհին այս
Հավերժ պետք է հաց ու գինի,
Իմ ժողովուրդը հանապազ
Նրա հերկվորը կլինի…

ԱՂՈԹՔ

Ցեղապետ էր Հաքամ Թային
Արաբական մի մեծ ցեղի,
Թեկուզ աշխարհն ի պահ տային,
Չէր դիպչելու ոչ մի ծեղի:

Հաքամ Թային ուներ անթիվ
Հոտ ու նախիր, գանձեր անբավ,
Ուներ ազնիվ այրի պատիվ
Եվ իմաստուն ծերի համբավ:

Ուներ յոթը քաջ տղաներ,
Յոթն էլ ուսյալ, խելոք ու կիրթ,
Ամեն մեկը յոթ գյուղի տեր՝
Հարուստ, հպարտ, արիասիրտ:

Ու անվախ էր Հաքամ Թային,
Սուլթանից էլ չէր վախենում,
Թեկուզ դահճի ձեռքը տային,
Նա իր խոսքն էր առաջ տանում:

Բայց ասում են՝ նա ամեն օր՝
Հենց արևի ծագման պահին,
Ծունկի կիջներ խորհրդավոր
Ու կաղոթեր աղոթքն իր հին.

— Տե՛ր, կաղաչեմ, զե՛րծ պահիր ինձ
Իմ սեփական արատներից…

ՀԻՆ ԶՐՈՒՅՑ

Այս զրույցը պատմել է ինձ
Մի ծերունի՝ շատ բան տեսած.
Խոսում էինք մարդկանց վարքից,
Այդ առիթով ծերուկն ասաց.

— Ասում են, թե ինչ–որ մի տեղ
Ճիրմաքար կա հետաքրքիր,
Որը ոչ թե շատ է շքեղ,
Այլ ունի լավ տապանագիր.

«Իշխան էի մեծահարուստ,
Ապրում էի ուզածիս պես,
Ինձ մեծ բախտ էր տրված վերուստ,
Ոչինչ պակաս չունեի ես:

Ձիուս պայտերն էին ոսկի,
Ապարանքս՝ մարմարակերտ,
Տերն էի իմ ասած խոսքի,
Ո՞վ կարող էր մրցել ինձ հետ:

Հաշիվ չուներ կայքս անգին,
Ես ունեի անբավ գանձեր,
Իմ անհամար ունեցվածքին
Թագավորը կնախանձեր:

Բայց թողեցի այդ ամենը,
Երբ մահը ինձ եկավ այցի,
Մի փոս տվին ընդամենը,
Եվ ձեռնունայն ես գնացի…

Մա՛րդ, չար գործեր դու մի՛ արա,
Վերջը մահ է՝ ինչ էլ անես.
Ես աշխարհից բան չտարա,
Մի՛ կարծիր, որ դու կտանես…»:

Ծերուկն այստեղ մի պահ լռեց,
Մտասևեռ դադար առավ,
Ծխամորճը հանգիստ վառեց,
Ապա խոսքը առաջ տարավ.

— Հապա, որդի՛ս, դատարկ բան են
Անօգտակար գանձերը ծով.
Մարդիկ, թեկուզ, ինչ էլ անեն,
Կհիշվեն լոկ բարի գործով:

Իշխանի ծով գանձերից լոկ
Մնացել է մի շիրմաքար,
Քանզի վրան գիր կա խելոք՝
Բարի խրատ մարդկանց համար…

ՕՐԸ

Հողագունդը
Մի անգամ էլ պտտվեց,
Եվ պտույտն այդ
Մարդկանց համար կոչվեց օր,
Ոչ ոք չզգաց,
Թե այդ պտույտն ինչ տվեց
Ադամորդու
Օրորոցին այս կլոր:

Մարդուց անկախ՝
Օրը եկավ ու անցավ
Իր լավ ու վատ
Խորհուրդներով անմեկին,
Հողագունդը
Մի նոր մանուկ ունեցավ,
Որը ճիչով
Բարի մաղթեց ամենքին…

1. Այգաբաց

Արևելքը
Ոսկեզօծվեց շողերով,
Թռչունները
Ճռվողում են եթերում,
Զարդարվել է
Դաշտը գոհար ցողերով,
Մեղմ հովիկը
Զով սարսուռներ է բերում:

✧ ✧ ✧

Եվ ես առույգ,
Գոտեպնդված պատանի,
Թեք կածանով
Բարձրանում եմ սարն ի վեր,
Զարթնող օրը
Ինձ դեպի վեր կտանի,
Ունեմ մտքի
Խոյանք, թռիչք ու թևեր…

2. Կեսօր

Ամռան օր է,
Ամռան կեսօր, ամռան տապ,
Հուր են խմում
Կանաչ հագած հանդ ու սար,
Արփին, գրկած
Ողջ աշխարհը ափեափ,
Լույս է բաշխում
Նա ամենքին հավասար:

✧ ✧ ✧

Եվ ես մի այր՝
Ջահել, հպարտ, հաղթական,
Հասած սարի
Բարձր ու վսեմ կատարին,
Նժարում եմ
Աշխարհի կան ու չկան՝
Չափանիշով
Իմ օրերի, իմ դարի…

3. Մայրամուտ

Արևմուտքում
Արփին հրդեհ է վառել,
Հրաժեշտի
Խոսք է հղում աշխարհին,
Նա աշխարհից
Իր կարոտը չի առել,
Մեծ սիրով է
Փարվել հողին ու ջրին:

✧ ✧ ✧

Ու ես դողդոջ
Մի ծերունի ալեզարդ,
Վար եմ իջնում
Իմ խոհերով թանկագին.
Լուռ խորհելով՝
Արդյոք որքա՞ն եղա մարդ,
Ի՞նչ բարի գործ
Նվիրեցի ես կյանքին…

ՎԵՐԱԴԱՐՁ

Երբ հայրենիքի սուրբ հողի վրա
Թշնամու ռազմի շեփորը շաչեց,
Քաջերը դեպի ռազմի դաշտ թռան,
Նրանց հետ նաև Միերյան Վաչեն:

Նա ընկերներին ու ծեր մայրիկին
Ճակատից մի շարք նամակներ գրեց.
Թե՝ երբ որ հաղթեն, տուն կգա կրկին,
Ու ապա մի օր առհավետ լռեց:

Սպասեց մայրը՝ վառ հույսը սրտում,
Մինչ պատերազմի արհավիրքն անցավ,
Շատերը նորից դարձան դեպի տուն,
Սակայն իր որդին չվերադարձավ:

Ով վերադառնում՝ պառավ մայրիկին
Սիրտը ամոքող մի հույս էր տալիս.
— Մի՛ տխրիր, մայրի՛կ, նա կգա կրկին,
Շատ անհայտներ կան, որ տուն են գալիս…

Երբ մեկը մի օր ակնարկել ուզեց,
Որ գուցե որդին ընկել է մարտում,
Մայրը այդ մտքից չափազանց հուզվեց,
Բայց ցույց չտվեց, այլ խոսեց տրտում.

— Մի ամիս առաջ գրեցինք գնդին,
Գունդն էլ վերցրել, էսպես գրել է.
«Իմացա՛ծ եղեք, մայրի՛կ, ձեր որդին
Կռվի ժամանակ անհետ կորել է…»

Ախր, բալա՛ջան,— լացակումեց նա,—
Ուզում եմ՝ մեկը մի ճիշտ բան ասի,
Մինչև մոր սիրտը ճիշտը չիմանա,
Գերեզմանում էլ դարձյալ կսպասի…

Եկան ու անցան էլի տարիներ,
Կյանքը խաղաղվեց ու երջանկացավ,
Բայց որդեկորույս պառավ մայրը ծեր
Սպասում էր միշտ՝ սրտում մի խոր ցավ:

Նա ամեն անգամ՝ ճաշի նստելիս,
Իր որդու համար «բաժին» էր հանում
Կամ հանկարծ դռան թակոց լսելիս
Սիրտը խփում էր՝ ո՞վ է իմանում…

Հետո անամոք կսկիծը հոգում՝
Սկսեց թերթերում որոնել որդուն,
Եվ մի օր հանկարծ թերթերից մեկում
Կարդաց մի հոդված՝ «Մահ–անմահություն»:

Հոդվածագիրը՝ մի հին պարտիզան,
Այսպես էր գրել մի քաջի մասին.
«Պարթևահասակ այդ տղան խիզախ
Քաջ պարտիզան էր մեզ հետ միասին:

Ինքը կովկասցի, մի կտրիճ հայ էր,
Ազգը՝ Մհերյան, անունը՝ Վաչե,
Ընկավ նա մի օր, բայց դա ի՞նչ մահ էր,
Այդպիսի մահը հասարակ մահ չէ:

Հանձնարարեցինք այդ օրը նրան
Վառել թշնամու զինապահեստը,
Գնաց կատարեց հերոսի նման,
Բայց ափսոս ինքն էլ այրվեց հետը…»:

Մայրը փղձկաց. հարազատ անուն…
Ու դողդողացող շուրթերով կարկամ,
Մայրական սրտի կարոտով անհուն
Հոդվածը կարդաց մի քանի անգամ:

Ապա հպելով շուրթերին իր ծեր՝
Թերթը համբուրեց ու շշնջաց նա.
— Ախր, գիտեի, սիրտս ասում էր,
Որ անգին բալաս կվերադառնա…

ՀԻՄՆ ԱՐԵՎԻՆ

Ա

Նորից գարուն է,
Ելնեմ դաշտ գնամ,
Շնչեմ բուրմունքը մայրացած հողի,
Արևի առաջ
Իմ սիրտը բանամ,
Որ նա իմ հոգին լույսով ողողի:

Իղձերս դնեմ
Բացվող բողբոջում,
Ծլարձակումին խառնեմ հույզերս,
Նորոգ Արևին
Մատուցեմ ողջույն,
Նրա հետ կապեմ բոլոր հույսերս:

Տանջող հոգսերս
Տամ գարնան հովին,
Ծանր մտքերս ինձանից վանեմ,
Հայացքս հառած
Երկնքի մովին՝
Ըղձամ Արևին ու փառաբանեմ…

Բ

Արև՛, սիրում եմ քեզ
Ոչ թե նրա համար,
Որ դու կյանք ես տալիս
Մեր այս հողագնդին,
Այլ սիրում եմ, որ դու՝
Անաչառ ու համառ,

Կեղծը չես հանդուրժում,
Թշնամի ես ստին.

Ամեն անշունչ էակ
Քո հուր շնչի ներքո,
Որպես կեղծ գոյություն՝
Քայքայվում է, փտում,
Ոգեպաշտ է միայն
Կենարար շունչը քո,
Փա՛ռք հզորիդ, Արև՛,
Դու երբեք չես ստում…

Գ

Իմ նախնիները
Քեզ երկրպագել,
Երգեր են ձոնել քո լույս պատկերին,
Ջերմ աղոթել են,
Երբ դու ես ծագել,
Որ հոգու լույսը դառնա անթերի:

Քեզնից են առել
Զորություն ու կամք,
Քո սիրով են միշտ երազներ հյուսել,
Քո շնորհիվ է,
Որ ապրում ենք, կանք,
Դու՝ անհասի տենչ ու մշտաբուխ սեր:

Փա՛ռք քո զորության,
Լո՛ւյս ամենակար,
Մտքի վառ ակունք, հիմն աշխատանքի,
Անբիծ ու մաքուր
Հավատ մեր անմար,
Հար մշտաբորբոք արարիչ կյանքի:
Ի սկզբանե,
Այժմ և հավետ,

Արև՛, քեզնով ենք ապրում անվարան.
Մեր հոգին վերուստ
Կապված է քեզ հետ,
Դու հեգեմաքրիչ սո՛ւրբ աղոթարան…

Դ

Ամեն ծագելիս
Արևը անշեջ
Այնքան եռանդ է
Լցնում հոգուս մեջ,
Որ ես ուզում եմ
Արևին փարվեմ,
Նրա պես շողամ,
Նրա պես վառվեմ,
Լույս տամ ամենքին՝
Անհատույց, շռայլ,
Եվ ցրեմ կյանքի
Ամպերը մռայլ:
Ամենուր ծաղիկ
Ու կանաչ փռեմ,
Ձայրույթիս պահին
Եվ շանթեր կռեմ,
Շանթեմ անհավատ
Ճակատներն այն բութ,
Որոնք նյութում են
Լոկ կեղծիք ու սուտ:
Մարդկանց հոգու մեջ
Մտքի ջահ վառեմ,
Դրանով չարին
Կորուստ պատճառեմ:
Ու երբ համոզվեմ,
Որ նրանք անցան,
Խաղաղված հոգով
Դառնամ սերմնացան.
Սրտիս ավյունը

Պարգևեմ հողին,
Արդար վաստակով
Հերքեմ գռփողին,
Ապա փառք հղեմ
Դեպի լույս–վերև.
Հանուն ճշմարտի՝
Ինձ ո՛ւժ տուր, Արև՛…

Ե

Ժամանակի ընթացքի մեջ
Ես՝ ակնթարթ.
Դու՝ լուսածին կրակ անշեջ.
Դու՝ հուր, ես՝ մարդ:
Գիտեմ՝ դու ես ինձ արարել
Հող ու ջրից,
Իմ հոգու մեջ դու ես դրել
Մաս քո հրից:
Քեզանով է մտքի լույսը
Վառ իմ հոգում,
Դու ես գոյիս միակ հույսը
Տիեզերքում:
Եվ անհունում քանի կաս դու՝
Կլինեմ ես.
Սրբագործի՛ր հոգին մարդու,
Հավերժ փա՛ռք քեզ…

Զ

Հոգուս գավաթը լցրած քո լույսով՝
Ես դիմացել եմ
Հազար տանջանքի,
Խավարն հերքելու անսասան հույսով՝
Հպարտ եմ անցել
Ճամփան իմ կյանքի:

Եվ եթե կրած իմ տառապանքից
Կյանքս չի փոխել
Իր ազնիվ հունը,
Դու ես զորավիգ եղել կյանքում ինձ,
Հույս է ներշնչել
Ինձ քո անունը:

Արև՛, քեզնով է իմ արյունը տաք,
Քեզնով է լեցուն
Էությունս ջինջ,
Դու ես բաբախում անվերջ կրծքիս տակ,
Առանց քեզ կյանքս
Կդառնա ոչինչ:

Արդ, ես քո առաջ ծունկի եմ իջել
Եվ աղոթում եմ
Մարդկության համար,
Դու գիտես ցրել էությամբ քո ջերմ
Մեր մութ կրքերը
Եվ մտքերը չար:

Արտոնի՛ր խմել կենացդ մաքուր,
Թող պայծառ մնա
Լույսդ հավիտյան,
Քեզ հար պաշտելու ինձ զորություն տուր՝
Դու խիղճ հաստատող
Հրեղե՛ն ատյան…

Է

Քո այգաբացին
Շեփորահար դառնամ,
Մարդկանց ավետեմ
Քո լուսաբացը,
Քեզ աղոթելով՝
Մեղքերս բառնամ,

Քեզանով հունցեմ
Նշխարիս հացը:

Դու եղել ես, կաս
Ու կմնաս հար՝
Որպես էություն
Անվերծանելի.
Ինչ որ էիր դու
Իմ նախնյաց համար,
Այսօր ինձ համար
Դու նույնն ես էլի:

Թեև ես այսօր
Իմ մտքի լույսով
Չգտում եմ հասնել
Հեռու աստղերին,
Սակայն ապրում եմ
Միայն քո հույսով,
Դու ես ինձ պահում
Քո շնչով վերին:

Դու ես միշտ եղել
Աղբյուրը վարար
Հանապազօրյա
Կենարար հացի,
Ողջ տիեզերքը
Իմ հոգու համար
Խավար է՝ առանց
Քո այգաբացի:

Առանց քեզ, Արև՛,
Կյանքը ունայն է,
Այս հողագնդում
Կչքվի կյանքը.
Դրա համար էլ

Ճշարիտն այն է,
Որ մարդն ունենա
Քո դավանանքը:

Ինչ լավ է, որ քո
Փեշերին մաքուր
Չի քսվի ոչ մի
Տիեզերակառք.
Դու անմատչելի՛,
Դու սրբազա՛ն հուր,
Դու անմա՛ր բազին.
Փա՛ռք քեզ, հավերժ փա՛ռք…

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Հրաչիկ Եզեկիմի Սևոյանը՝ բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, ՀՀ գրողների միության անդամ, մասնագիտությամբ՝ տնտեսագետ, մանկավարժ, ծնվել է 1931 թվականի սեպտեմբերի 27–ին ՀՀ Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղում: Կրթությունը ստացել է գյուղի միջնակարգ դպրոցում: 1950 թվականին ավարտել է դպրոցը և 1951–ին ընդունվել Երևանի ֆինանսական տեխնիկումը: Նույն տարում զորակոչվել է Խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը և տեխնիկումն ավարտելուց հետո՝ 1954–ին ընդունվում Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1959–ին, երբ ավարտում է համալսարանը, ամուսնանում է և կազմում մի հրաշալի հայկական ավանդական ընտանիք: Ունենում է երեք զավակ՝ մեկ որդի և երկու դուստր, որոնց նվիրվում է անմնացորդ:

1959–ին աշխատում է ՀՍՍՀ ֆինանսների նախարարությունում՝ որպես ավագ տնտեսագետ, այնուհետև Շինարարության նախարարությունում՝ որպես ֆինբաժնի, ապա՝ պլանբաժնի վարիչ: Ճիշտ է, մասնագիտությամբ տնտեսագետ էր, սակայն ոգով և սրտով բանաստեղծ ու մանկավարժ էր Հ. Սևոյանը: 1969 թվականից սկսվում է նրա մանկավարժական գործունեությունը: Սկզբում դասավանդում է Երևանի ֆինանսական տեխնիկումում և կատարում վերջինիս հեռակա ուսուցման բաժնի վարիչի պաշտոնը: Այդ տարիներին ստանձնում է նաև «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրի պատասխանատու քարտուղարի պաշտոնը: 1970–1975 թթ. աշխատում է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում՝ որպես քաղտնտեսության ամբիոնի դասախոս, միաժամանակ քաղտնտեսություն է դասավանդում Երևանի պետհամալսարանում, ժողովրդական տնտեսության և Գեղարվեստաթատերական ինստիտուտներում: Նա եղել է նաև գիտաշխատող ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում: 1978–1980 թթ. աշխատել է Հայհրատպետկոմում, սկզբում որպես ավագ, ապա՝ առաջատար խմբագիր: 1980 թվականից «Սովետական գրող» հրատարակչության պլանավորման բաժնի վարիչն էր:

Չնայած իր աշխատանքային ծանրաբեռնվածությանը՝ Հ. Սևոյանը թողել է հրաշալի գրական ժառանգություն, որի մի մասը այսօր ընթերցողին է մատուցվում այս ժողովածուով: Նրա բազմաթիվ ստեղծագործությունները, որոնք լույս են տեսել տարբեր գրքերով, թարգմանությունները, Սայաթ–Նովայի կյանքին վերաբերող գրականագիտական աշխատությունը, նույնիսկ դիսերտացիայի թեման վկայում են այն մասին, որ Հ. Սևոյանը կոչումով բանաստեղծ էր:

Ծանր հիվանդությունը ընդհատեց նրա կյանքը 62 տարեկան հասակում: Աճյունը ամփոփված է Երևանում: Նա իր կյանքի ուղին անցավ անբիծ՝ մաքառելով ազնվության, արդարության ու բարու հաղթանակի համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԵՆԱՑ ՍՐՏԻՍ 5
«Նորից թամբած խոհերիս ձին...» 6
«Իմ քնարի լարերը...» 7
«Ա՜խ, որքան եմ ուզում այսօր...» 8
«Կյանքը՝ ձգտում, կյանքը՝ հույս...» 8
ԸՆԹԵՐՑՈՂԻՍ 9
«Ես չեմ վախենում...» 10
«Պոետն աշխարհ է գալիս...» 11
«Ես դրել եմ երգերիս մեջ...» 12
«Իմ խոհերի խոլ ձին...» 13
«Թափառեցի...» 14
«Օ՜, կեցցեմ ես...» 15
«Իմ ողջ կյանքում, երբ իջել եմ օրորոցից...» 15
«Ես բանաստեղծ եմ, ինչ էլ որ անեք...» 16
ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ 17
«Որ ահեղ շնչից իմ հզոր դարի...» 17
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ 18
«Թե մի օր հանկարծ ես մեկից լսեմ...» 19
«Երգերիս կավը առել եմ կյանքից...» 20
«Իմ հոգում որքա՜ն երազներ կային...» 21
«Ո՞ւր է հեքիաթի հավքը հազարան...» 22
«Ես լեռնային զուլալ գետ եմ...» 23
«Իմ ճամփան քարոտ...» 25
«Այս աշխարհում...» 26
«Նմանը չունի իմ ինքնությունը...» 27
ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 28
«Ես համոզված եմ ընդմիշտ ու լրիվ...» 29
«Ծննդյան օրից մեր մահը մինչև...» 30
«Լամանչեցի ասպետի պես...» 31
«Մարդ՝ Մեծատառով...» 32
«Թեև ստորիդ չեմ կարող տանել...» 33
ԴԵՐՎԻՇԻ ԵՐԳԸ 34

«Տիեզերքում անծայրածիր...» 35
«Իզուր եք համառ մեզ ապացուցում...» 35
«Թե հողի մեջ սնունդ չկա...» 36
«Ի՞նչ է դարը...» 38
«Եթե կյանքում դժվարության հանդիպես...» 39
ԵՐԳԸ 40
«Խրատ չեմ կարդում...» 41
«Լույսը ծնվում է միայն այրումով...» 42
«Մեր օրերի թոհուբոհում...» 43
«Ունայնություն ունայնության...» 44
«Ուրիշ պատճառ չփնտրեմ...» 45
«Բանաստեղծի աչքերով եթե նայեք աշխարհին...» 46
ԻՆՉՈ՞Ւ 47
«Աշխարհի բոլոր մերժվածների պես...» 48
«Որքան էլ որ ես վառվեմ ծարավից...» 49
«Ամեն ինչի մեջ ես չափ եմ փնտրել...» 50
ԱՆԹԵՂ 51
«Բյուրեղ երազներս փշուր–փշուր եղան...» 53
ՎԵՐՀՈՒՇ 54
«Գիշերն ի լույս ցող էր իջնում կանաչներին...» 56
«Գարուն է նորից, հողը ծոցվոր է...» 57
«Երբ ես մի օր աշխարհ եկա ակամա...» 58
«Սիրտս թափուր է, երազներս՝ մերկ...» 59
«Ասում եմ՝ քանզի գիտության դար է...» 60
«Օ՜, ո՛չ, մարդը միշտ չէ, որ անհագ է եղել...» 61
ԲԵՐԿՐԱՆՔ 62
«Մեռնում էր թփին...» 63
ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ 64
«Հողի բույր է գալիս...» 65
«Փոփոխուն է կյանքն ամենուր...» 67
«Սիրում եմ Գեղամա...» 68
ՔԱՆԶԻ ՍԻՐՏՍ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է 69
«Ա՜խ, ինչ ազնիվ է կյանքը հեքիաթում...» 70
«Այս աշխարհում հարատև է միայն բարին...» 71
«Ինձ համար ուրիշ դավանանք չկա...» 72
ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ 73
«Գարնանն իմ այգում ծառ էի տնկում...» 74
«Մարդը մասնիկն է կապույտ անհունի...» 75
«Իմ բարեկամ նկարիչը...» 76

«Երբ ես ոտքս հողին դրի...» . . . 77
«Երազում տեսա՝ հնձվոր էի ես...» . . . 78
«Գիտեմ...» . . . 79
ԻՄ ՄՈՒՍԱՅԻՆ . . . 80
ՀԱՅՐԵՆԻՔԻՍ . . . 81
ՍԵՎԱՆ . . . 83
«Մեր Մշո դաշտը չեմ տեսել երբեք...» . . . 84
«Ո՞վ կհավատա...» . . . 85
«Անմար հավատով...» . . . 86
«Թողնեմ գնամ այս ժխորից...» . . . 87
«Ծովերից այն կողմ, լեռներից անդին...» . . . 88
«Ես նվիրեցի սիրտս հրացայտ...» . . . 89
Մ–Ի ԱԼԲՈՄՈՒՄ . . . 89
«Առավոտյան շողաթաթախ ալ վարդ ես...» . . . 90
«Անձրևից հետո արևը շողաց...» . . . 90
«Լուռ տանջվեցի քեզ համար...» . . . 91
«Աստղերի նման, աստղերի պես վառ...» . . . 91
«Քսան տարի, ուսը ուսիս...» . . . 92
«Հիշո՞ւմ ես գարնան երեկոն այն տաք...» . . . 93
ԿԱՏԱԿ . . . 94
ԱՐԵՎԻԿԻՍ . . . 95
ԻՄ ԱՆՆԱՅԻՆ . . . 95
«Եթե ուզում ես...» . . . 96
ՕՐՈՐՈՑԱՅԻՆ . . . 97
ԿՏԱԿ . . . 98
«Ասի՝ նստեմ ու գոգալի գովքն անեմ...» . . . 99
«Այսօր տղայիս տվեցի ապտակ...» . . . 100
ԱՐԹՈՒՐԻԿԻՍ . . . 101
ՆԵՐՇՆՉԱՆՔ . . . 102
ՀՈՂԻ ԲՈՒՅՐԸ . . . 103
«Երբ Արարիչը մարդուն արարեց...» . . . 104
«Ազնվությունը...» . . . 105
ԱՆԱՀԻՏ . . . 106
«Ես Ֆիրդուսի չեմ, ոչ էլ Հոմերոս...» . . . 107
«Ո՛չ, ես չեմ ստում...» . . . 108
«Ես հացի համար երբեք չեմ երգել...» . . . 109
«Մարդակործան աղետներով հաջորդել է դարը դարին...» . . . 110
«Ժամանակի խոտոր քայլին չգնացի համընթաց...» . . . 110
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈԼՈՎՆԵՐՈՒՄ . . . 111

ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻՆ 112
«Եկեք սրտանց հպարտանանք...» 114
«Ես սիրում եմ այն հզորին...» 116
«Հին ժամանակ ամեն արքա...» 117
«Իմ հոգում կար...» 118
«Օ՜, ես բարի եմ, դուք չգիտեք ինձ...» 119
ԱՆՃՈՌՆԻ ՃՈՒՏԻԿԸ 120
«Մանկությանս կարոտել եմ...» 121
«Ի՞նչ ասեմ նրանց...» 122
«Գարնանս ցրտեր եղան...» 123
«Երբ ծնվել եմ այս աշխարհում...» 123
ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ 124
«Փառաբանեց գինու գավը...» 125
ԵՐԱՇՏ 127
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ 128
ՄԵՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ 129
«Հոբի տառապանք...» 131
«Իմաստո՛ւն, ոչինչ չես կարող անել...» 132
ԳՈՒՍԱՆԱԿԱՆ 133
«Վաթսուն տարիս կլրանա շուտով, ավա՜ղ...» 135
«Վերադարձա բանակից տուն...» 136
ՍՈՆԵՏ ՊԱՆԴՈՐԱՅԻՆ 137
ՍՈՆԵՏ 138
«Մայր բնությունը ինձ ի՞նչ է տվել...» 139
ՏԵՆՉԱՆՔ 140
ԱՍՔԵՐԻ ԱՍՔԸ 141
ՊԱՏԳԱՄ 142
«Երազիս մեջ մի անգամ ես...» 143
ՓՉԵՔ ԶՈՒՌՆԱՆ 145
ԳԱԶԵԼ ԶԱՐԹՈՆՔԻ 147
ՀՈՐԴՈՐ 148
ՄԱՂԹԱՆՔ ԱՄԱՆՈՐԻՆ 149
«Հին Արաբիայում շատերը կային...» 150
«Ինչքան էլ լավ լինի՝ ես ձմեռ չեմ սիրում...» 151
«Հուզվում եմ հիմա ամեն բանից...» 152
«Մեր նախնիները իմաստուն էին...» 153
«Երբ ես ծնվեցի, մայր բնությունը...» 154
ԻՄ ՍԵՐՈՒՆԴԸ 155
ՍԵՐԸ 156

«Հետաքրքիր է, այն երկրներում...» 157
ԱՂՈԹՔ՝ ՀՈՂԻՆ 158
«Դու երբեք մարդուն...» 159
«Բաց է հոգիս ամենքի դեմ...» 160
«Օ՜, երանի թե կյանքը լիներ բարդ...» 162
«Շատ դաժան բախտ մեզ վիճակվեց...» 163
ՄԻ ՊՈՎԵՏԻ 165
«Ասում են, թե...» 166
ԸՍՏ ԱՐԺԱՆԱՎՈՒՅՆ 167

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

«Էլ մարդկանց չեմ սիրում...» 168
«Ճեղքում են ատոմը...» 168
«Խելագար վագքի մեջ...» 169
«Հոգու մեջ ձեր տարտամ...» 169
«Նյութապաշտ սրտերում...» 170
«Արև կա երկնքում...» 170
«Կգան նոր սերունդներ...» 171

ՔԱՌՅԱԿՆԵՐ 172

ԷՊԻԳՐԱՄՆԵՐ 180

ԱՌԱԿՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՄԱՑԱՌՆ ՈՒ ԲԱՐԴԻՆ 188
ՄԵՇՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ 189
ԽՐԱՏ ԹԱԳԱՎՈՐԻՆ 190
ԱՆՁՈՐ ՊԻՏԱԿԸ 191
ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ՕՁԸ 192
ԲՈՍՏԱՆ ՄԻՐՈՒՔԸ 193
ԳՈՐՏԵՐԻ ԿԱՐՇԻՔԸ 194
ԵՐԲ ԼՈՒՆ Է ԱՐՔԱՆ 195
ԱՐՋՆ ՈՒ ՔՈԹՈԹՆԵՐԸ 196
ԲՅՈՒՐՈԿՐԱՏԸ ՓՈՂՈՑՈՒՄ 197
ԳՆՉՈՒՀԻՆ՝ ԹԱԳՈՒՀԻ 198
ՍՈԿՐԱՏԵՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ 199
ԱՌՅՈՒՇՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ 200
ՈՒՂՏԸ ԴՐԱԽՏՈՒՄ 201
ԷՇԱՅԻՆ ՀՐԵՎԱՆՔ 202

ՏՂԱՆ ՈՒ ԽԱՆԸ 203
ԱՆՀԻՄՆ ՔԱՐՈԶ 204
ԾՈՎԱՀԵՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ 205
ՀԱՄԲԱԼ ԱՐՔԱՆ 206
ՄՈՂԵՍՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ 207
ՄԵՂՔԻ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ 208
ԱՐԵՎՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ 209
ԽՐՏՎԻԼԱԿԸ 210
ԳՈՐՏԵՐԻ ԱՐՔԱՆ 211
ԱԳՌԱՎԻ ՃՈՒՏԸ 212
ԿԱՔԱՎԻ ԽՐԱՏԸ 213
ՈՒՂՏԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ 214
ՀԱՎԵՐԻ ՁԱՐՄԱՆՔԸ 215
ԽՈՍՔԻ ՁԵՎԸ 216
ԼՈՒՍՆԱՀԱՉԸ 218
ՇՎԱՔԻ ՏԱԿ 219
ԱՌՅՈՒԾԻ ՎԱԽԸ 220
ԱՂԵՏ 221
ԾԱՆՐԱԿՇԻՌ ԹԵԿՆԱԾՈՒՆ 222
ԼԱՎԱՏԵՍ ԳՈՐՏԸ 224
ԾԱՆՐ ՊԱՏԻՎ 225
ԽՈՆԱՐՀ ԳԼՈՒԽԸ 226
ՊԱՐԾԵՆԿՈՏ ԷՇԸ 227
ՉՈՐԱՑԱԾ ԿԱՂՆԻՆ 228
ԿՌՈՒՆԿՆԵՐՆ ՈՒ ՀԱՎԵՐԸ 229
ՍԱՌՈՒՅՑԻ ՈՒԺԸ 229
ՊԱԼԱՏԱԿԱՆ ԷՇԸ 230
ԱՌԱԿ ԷՇԵՐԻ ՄԱՍԻՆ 231
ԱՆՏԱՌՆ ՈՒ ՔԱՄԻՆ 232
ԹՈՒՅԼԵՐԻ ՁԵՆՔԸ 233
ԿԱՂՆԻՆ ՈՒ ՍՈՒՆԿԸ 234
ՁՐԱՂԱՑՆԵՐԸ 235
ՊԱՊԻ ԽՐԱՏԸ 236
ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋԸ 237
ԽՈՓՆ ՈՒ ՍՈՒՐԸ 238
ՈՒՍՈՒՑԻՉԸ 240
ԱՆԿԵՂԾ ՎԻՇՏԸ 242
ԻՐ ԳՈՐԾԻ ԱՐՔԱՆ 243
ԱՄԵՆԱՊԱՏԻԺ 244

ՍՈԽԱԿՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ 245
ԳԵՏՆ ՈՒ ԱՌՈՒՆ 246
ՀՈՎԱՋՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ 247
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ 248
ՁՆՇԱՊԻԿԸ 250
ԷՇԻ ԴՐԱԽՏԸ 251
ԱՆՆԵՐԵԼԻ ԱՐԱՐՔ 252
ԳՈՂԻ ԸՆԿԵՐԸ 253
ՍՈԽԱԿԻ ՑԱՎԸ 254
ԷՇՆ ՈՒ ՇՈՒՆԸ 255
ՑԱԽԱՔԼՈՐՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ 257
ԱՂԲՅՈՒՐՆ ՈՒ ՍԵԼԱՎԸ 258
ՓՇԻ ԱՐՏԵՐԸ 259
ՊԱՌԱՎԻ ԱՅՇԸ 261
ԽԼՈՒՐԴԻ ՉԱՓԱՆԻՇԸ 262
ԽԻԿԱՐԻ ԴԱՍԸ 262
ՀԱՎԱՏԸ 263
ՊԱՏԳԱՐԱԿԻ ՃԱՌԸ 265
ԱՆԱՊԱՏՆ ՈՒ ԱՐԵՎԸ 266
ԱՐՇՎԻ ՎԻՇՏԸ 266
ԴԱՍԸ 267
ԳԱՋԱՆԸ 269
ՈՉԽԱՐՆԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԵՐԸ 270
ԲՈՒԻ ՈՂԲԸ 271
ՄՈԼԱԽՈՏԸ 272
ԳԼՈՒԽՆ ՈՒ ՈՏՔԵՐԸ 273
ԱՐԴԱՐ ՄԱՀԱԿԸ 274
ԿԱՏՎԻ ԵԼՈՒՅԹԸ 275
ԱՐՋԻ ԴԱՏԸ 277
ՆԱՊԱՍՏԱԿՆ՝ ԱՐՔԱ 278
ԱՐԺԱՆԻ ՊԱՐԳԵՎ 280
ՔԱՄՈՒ ԲԵՐԱՇԸ 281
ՅՈԹ ԴԱՅԱԿ 282
ԽԱՂԱՂԱՍԵՐ ԳԱՅԼԸ 283
ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ 284
ՓՈՒՉ ԿԱՐՇԻՔ 285
ԿԱՏՎԻ ԿՈԴԵՔՍԸ 285
ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ 286
ՏԱԿԱՌԻ ԼՈՂԸ 287

ՀԻՆ ԱՌԱԿ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՑ 288
ՀԱՄՈԶԻՉ ՓԱՍՏԱՐԿ 289
ՀԱՐԲԱՇՆԵՐՆ ՈՒ ՇՈՎԸ 290
ՔՆԱՇ ԹԱԳԱՎՈՐԸ 291
ԴԻՎԱՅԻՆ ՄԻՋՈՑ 293
ՀԱՆԴՈՒԳՆԻ ՎԵՐՋԸ 295
ՊՈՒՂԻՆ ՈՒ ԱՄԲՈԽԸ 297
ՀԻՄՆԱՎՈՐ ՀԱՄՈԶՄՈՒՆՔ 298
ԱՐԺԱՆԻ ՔԵԼԵԽ 299
ՉԳՐՎԱԾ ՕՐԵՆՔ 301
ՎԱՏԻ ԱՐՄԱՏԸ 302
ՀԻՄԱՐ ԱՔԼՈՐԸ 303
ՓՈԽԸՄԲՌՆՈՒՄ 304
ՈՍԿԵ ԼՈՒԾԸ 305
ԱԶՆՎԱՑԵՂ ԱՎԱՆԱԿԸ 306
ԺԼԱՏԻ ՔՈՒՆԸ 306
ԱՆԵՇՔ ՎԱՏԻՆ 307
ԼԻԲԵՐԱԼԸ 309
ԱՄԲՈԽԻ ԱՐՔԱՆ 310
ԽԻԿԱՐՆ ՈՒ ԱՐՔԱՆ 311
ՍԱՅԼՆ ՈՒ ՃԱՄՓԱՆ 312
ԿՅԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԸ 314
ԱՆՄԵՂ ՔԵՌԻՆ 315
ՏԱԿԱՆՔԸ 316
ԱՆՍՓՈՓ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ 317
ԸՄԲՈՍՏԱՑԱԾ ՄԵՂՈՒՆԵՐԸ 318

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ՊՈԵՄՆԵՐ

ՀԱՏՈՒՑՈՒՄ 319
ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԳԱՆՁԵՐԸ 320
ՊԱՀԱՆՋԻ ՉԱՓԸ 323
ՄԱՐԴԸ 328
ԻՆՔՆԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՂԹԱ 331
ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՎԿԱՆ 340
ԱՊՐԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ 346
ԸՄԲՈՍՏՆ ՈՒ ՄԱՀԸ 351
ՀԱՎԵՐԺՈՂ ՁԻՆԱՆՇԱՆ 353
ԴԵՐՎԻՇԸ 357
ՇԱՀՄԱՐԸ 363

ԱՎԱՋԱԿՆԵՐԸ 373
ԽՈՍՔԻ ՁԵՎԸ 380
ԿԱԽԱՐԴՎԱԾ ԱՅԳԻՆ 382
ԱՍՔ ԱՐԱՅԻ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ 397
ՊԱՀՎԱԾ ՆԵՏԸ 404
ԲՈՆԱԿԱԼԻ ԳԻՆԸ 407
ՃԱՆԱՉՈՒՄ 409
ԱՐԺԱՆԱՎՈՐԸ 410
ՊՈԵՏՆ ՈՒ ԱՐՔԱՆ 418
ԱՄԵՆԱՄԵԾ ՑԱՎԸ 420
ԱԹԻԼԼԱՅԻ ՄԱՀԸ 422
ՍԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԸ 425
ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՀԸ 427
ԱՍՔ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ 431
ԲԱԽՏՆ ՈՒ ԽԵԼՔԸ 435
ՎԱԽԿՈՏ ԽԱՆԸ 440
ԾԱՂՐԱԾՈՒՆ ՈՒ ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐԸ 442
ՀԱՎԱՏԸ 450
ՉԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ 452
ԿԻՆԸ 454
ՄԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՄԱՐԴՈՒ ԱՊԱԳԱՆ 456
ՁՈՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ 462
ԱՐՏԱՇԵՍ ՈՒ ՍԱԹԵՆԻԿ 465
ԶՈՐԱՎԱՐ ՖԻԴԱՅԻՆ 476
ՀԵԼԻԿՈՆԻ ԴՈՒՍՏՐԵՐՆ ՈՒ ԵՍ 492
ԴԻՈԳԵՆԵՍՆ ՈՒ ԱՐՔԱՆ 494
ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱԿԱՃԱՌԸ 495
ՀԱՅՈՑ ՃԱԿԱՏԱԳԻՐ 500
ԱՂՈԹՔ 502
ՀԻՆ ԶՐՈՒՅՑ 503
ՕՐԸ 505
ՎԵՐԱԴԱՐՁ 508
ՀԻՄՆ ԱՐԵՎԻՆ 511

Հեղինակի մասին 518

Հրաչիկ Եզեկիմի Սևոյան
ԿԵՆԱՑ ՍՐՏԻՍ

•

Грачик Езекимович Севоян
ЗДРАВИЦА МОЕМУ СЕРДЦУ
(стихи, на армянском языке)
Изд. «Зангак–97», Ереван, 2003 г.

Հրատարակչութ. տնօրեն՝ Մ.Վ. Մնացականյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Ա.Հ. Սևոյան
Գեղ. խմբագիր՝ Ա.Ա. Բաղդասարյան
Համակարգչ. ձևավորող՝ Գ.Ա. Հարությունյան
Համակարգչ. մուտքագրող՝ Ս.Ս. Ավետիսյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 33 տպ. մամուլ, 20.34 հրատ. մամուլ, 30.69 պայմ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8, հեռ.՝ (+3741) 54–89–32, 54–05–17,
ֆաքս՝ (+3741) 54–06–07, էլ. փոստ՝ zangak@arminco.com, URL: www.zangak.am